



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>


A 1,040,724



CN
806




RECEIVED IN EXCHANGE
FROM
St. Louis Public Library



891.558
C43

5 21



**ԱՄԵՐԻԿԱՅ
ՆԱՄԱԿԱՆԻ**

**ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ, ՅՈՐԴՈՐԱԿԱՆ, ԵՆՈՐ-
ՀԱՒՈՐԱԿԱՆ, ՅԱԻԱԿՑԱԿԱՆ, ՀԱՐՍԱՆԵԿԱՆ,
ՍԻՐԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ՆԱՄԱԿՆԵՐ**

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Յ. Յ. ԶԱԳՄԱԳՃԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ի. Ա. ԵՐԱՆ

**ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ
ԳՕՍԹԸՆ**

ԱՄԷՆ ԻՐԱՆՈՒՆՔ ՎԵՐԱՎԱՀՈՒՆԱԾ Է

Ի. Ա. ԵՐԱՆ, ՊՕՍԹԸՆ

ARMENO-AMERICAN Letter Writer

Containing a Large Variety of Model Letters Adapted to All Occasions: Letters of Friendship, Letters of Congratulation and Condolence, Letters on Love, Business Letters.

Examples from Great Authors

transcribed
BY
H. H. CHAKMAKJIAN

Boston
C. N. CASPAR CO. 454 East Water St.
MILWAUKEE, WISCONSIN.

Copyright, 1914, by
E. A. YERAN,

All rights reserved



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամերիկահայը նամակագրութեան ճիւղը անհրաժեշտօրէն մշակելու ամէն պատճառ ունի, այնպէս որ առանց անոր ոչ մեր մարդկային զգացումներու գոհացում կրնանք տալ, ոչ ալ նախանձելի յաջողութեան մը կրնանք հասնիլ: Մենք մեր երկրի մէջ թողուցած ենք մեր ծնողքները, եղբայները, քոյրերը, ազգականները, և բարեկամները՝ որոնց կարօտը կը քաշենք և որոնց հետ կ'ուզենք գոնէ նամակներով խօսիլ և մեր կարօտակէզ սրտին մասամբ զովութիւն տալ: Մենք ստիպուած ենք Ամերիկայի զանազան անկիւնները գործի պատեհութեանց մասին տեղեկութիւններ հաւաքել և վերջապէս գործատէրերուն մեր գոյութիւնը տեղեկացնել և մեր կարողութիւնները բացատրել անոնց:

Ուստի «Ամերիկահայ նամականին» ամենէն կարևոր պահանջի մը գոհացում տալու կոչումով երևան կուգայ, և ունի ծառայութեան երկու տեսակէտ. նախ՝ նամակագրութեան ձևը, եղանակը, և պատշաճ ոճը սորվեցնել, երկրորդ՝ երկրին տիրող լեզուին, Անգլիերէնի, աւելի ճիշտը անգլիերէն նամակագրութեան ուսուցումի միջոց մը հայթայթել: Ամէն նամակի դիմացը անգլիերէն գրեթէ բառացի թարգմանութիւնը դրուած է, իր պատշաճ ձևով ու ոճով: Բառացի թարգմանութեան համար, սակայն, լեզուի ինքնատիպ ոճերը չենք ուզած զոհել:

02-5-310 15

Նամակագրութեան կանոններու վրայ շատ չճանրացանք, որովհետև կանոնները յոգնեցուցիչ կը դառնան շուտով և յիշողութեան մէջ ալ մեծ հետք մը չեն ձգեր: Օրինակները աւելի պերճախօս են քան կանոնները. և այս ճշմարտութիւնը մեր մտքի առջև ունենալով՝ աշխատեցանք ամէն կարգի նամակներու բազմաթիւ օրինակներ տալ: Անդին մինակ չոր օրինակներով չբաւականացանք, այլ ընտրեցինք այնպիսի նամակներ՝ որ միւսնոյն ատեն ընթերցողներու ճաշակին և զգացումներուն գոհացում տան և ընթերցումը հաճելի դարձնեն: Բայց զգացումներու գոհացում տալու համար չուզեցինք մշակել այն լալկան գրականութիւնը՝ որուն համար մենք հայերս այնքան ցաւալի հակում ունինք: Լալկան գրականութիւնը բարոյական լքումի կ'առաջնորդէ և ընդհանրապէս մարդը կեանքի պայքարին անյարմար կը դարձնէ:

Նամակագրութեան գրեթէ ամէն ճիւղերու առատ օրինակներ տուած ենք, յաճախ նշանաւոր դէմքերու նամակներէն հրահանգիչ ու հետաքրքրական նմոյշներ ընտրելով: Մեծ դէմքերու նամակները շատ մը տեսակէտով օգտակար կ'ըլլան. մէկ տեսակէտը՝ որ կ'ուզենք շեշտել հոս՝ ոճի և նիւթի պարզութիւնն է:

Նամակները հետևեալ խումբերու բաժնած ենք. բարեկամական, ընտանեկան, յորդորական, շնորհաւորական, ցաւակցական, հարսանեկան, սիրային, և առևտրական: Տեղ խնայելու համար շատ անգամ նամակներէն զանց ըրած ենք հասցէն, թուականը, անունը և ստորագրութիւնը՝ քանի մը կատարեալ օրինակներ տալէ ետք:

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատշաճ ձևով գրուած նամակի մը առաջին մասն է նամակագլուխը, այսինքն գրողի հասցէն և նամակի թուականը: Հասցէն թուականէն առաջ պէտք է ըլլայ, այսպէս՝

Պօսթոն, մէս.

Մայիս 2, 1914:

Միայն քաղաքի անունը բաւական չէ, պէտք է նաև գրել փողոցին անունը և թիւը:

Նամակագրին հասցէն թուղթին վերևի կողմը, աջ անկիւնը պէտք է գրուի ամենէն առաջ, անոր տակ թուականը, այսպէս՝

27 Elton Ave.,

East Watertown, Mass.

Ապրիլ 20, 1914:

Երբեք մի ենթադրեր թէ բարեկամդ կամ այն անձը՝ որուն կը գրես՝ արդէն հասցէդ ունի. անպատճառ հասցէդ նամակիդ գլուխը պէտք է գտնուի:

Եթէ փողոցի մը անունը հարիւրէ նուազ թիւ մըն է, տան թիւէն զանազանելու համար կարելի է բաւերով գրել, ինչպէս

85 Twenty-third Street

Հասցէդ և թուականը գրելէ ետք՝ քանի մը տող վար, թուղթին ձախ կողմէն մէկ մատնաչափ կամ քիչ մը աւելի, թուղթին մեծութեան

Համաձայն, եզր մը թող և գրէ անունը առևտրական այն տան կամ այն անձին՝ որուն նամակդ կ'ուղղես: Անունին տակը՝ երկրորդ տողին վրայ՝ գէպի աջ իր հասցէն. երրորդ տողին վրայ՝ անունին ուղղակի տակը ուղերձը, հոգ տանելով կիտադրութեան. Բուն նամակը կ'սկսի տող մը վար՝ ուղերձի վերջաւորութեան տակէն, այսպէս

Mr. A. L. Temple,
Philadelphia, Pa.

My dear sir:

I have your letter of August 21. Allow me to say in reply that. . . .

Նամակը վերջացնելէ ետք, առանձին տողի մը վրայ, քաղաքավարի փակումը պէտք է տրուի պատշաճ ձևով մը: Առևտրական նամակներու համար այսպէս.

Yours truly,

կամ

Yours respectfully,

Բարեկամական նամակներու համար.

Yours very truly.

կամ

Yours sincerely,

Փակումը պէտք է սկսի գլխագիրով:

Փակումին նախաբան արտայայտութիւնը բուն նամակին շարունակութիւնը պէտք է ըլլայ, ինչպէս.

Accept my congratulation upon your graduation; and believe me

Yours sincerely,

H. Johnson.

Մակդիրներէն հետեւեալ կրճատումները միայն կը գործածուին :

Mr. (Mister), Esq. (Esquire), Messrs. (Messieurs), Mrs. (Mistress), Dr. (Doctor). Օրինակ ,

Messrs. Johnson and Martin,
New York City.

Gentlemen:

Please send me.....

Dr. F. H. Peabody,
Boston, Mass.

Dear sir:

.....

Esq. մակդիրը Mr.ի տեղ կրնայ գործածուիլ .
Esq. անունէն ետքը կը դրուի և անունէն առաջ
ուրիշ մակդիր չգործածուիր , օրինակ .

W. H. Hart, Esq.

Հայերէնի մէջ մինչև վերջերս սովորութիւն էր, և տակաւին է թիւրքիոյ և մասամբ կովկասի մէջ, մակդիրներ չռայլել . ինչպէս , մեծապատիւ , վսեմաշուք , ազնուաշուք , ևն : Այդպիսի մեծահնչիւն մակդիրներու գործածութիւնը բոլորովին անհարկի և նոյն իսկ տգեղ շռայլութիւն է . Համեստ մակդիր մը ոչ տուողին ետք կը պզտիկցնէ և ոչ ալ ստացողին համեստութիւնը կը վիրաւորէ, եթէ ինքզինքը յարգող անձ է :

Եթէ մտերմիդ գրես իր առաջին անունին հետ «սիրելի» ածականը ամէնէն ընդունելի ուղերձն է որ կրնաս ընել : Եթէ դրես ոչ մտերիմ անձնաւորութեան մը՝ իր մականունէն առաջ Պարոն

կամ Տիար մակդիրը բաւական պիտի ըլլար, Ամերիկեան սովորութեան համաձայն, բայց քանի որ մենք մինչև հիմա վարժուած ենք չափազանց շրջալուծեան՝ թերևս այդպիսի փափաքելի պարզութիւն մը մենէ շատերու ճաշակին տնհաճոյ և կամ դիտումնաւոր արհամարհանք մը պիտի թուէր: Ուստի, մասամբ տեղի տալով արմատացած ունակութեան, կարելի է ուղերձը սկսիլ «Յարգելի պարոն»ով, միևնոյն ատեն յուսալով որ վերջնական պարզութիւնը՝ ժամանակի ընթացքով՝ մեր մէջ ալ ընդունուի:

Պաշտօնական մակդիրներն են հետեւեալները.

His Excellency, Նորին Բարձրութիւն, որ կը տրուի Միացեալ Նահանգներու նախագահին, նահանգներու կառավարիչներուն, և դեսպաններուն:

Honorable (կրճատուած ձևով Hon.), Յարգոյ, որ կը տրուի Միաց. Նահանգներու փոխ-նախագահին, Դաշինքի և Քօնկրէսի անդամներուն, նահանգներու փոխ-կառավարիչներուն, նահանգային ծերակուտականներուն և ներկայացուցիչներուն, դատաւորներուն, քաղաքապետներուն:

Բանակի և նաւատորմի պաշտօնեաները իրենց պաշտօնի անունով կը կոչուին:

Նամակագրութեան մեղանը պէտք է մութ կապոյտ և կամ սև ըլլայ: Կարմիր կամ ուրիշ բաց գոյն մեղան մի գործածեր:

Նամակի թուղթը պէտք է ճերմակ ըլլայ և միածալ՝ չորս երեսով: Առևտրական նամակագրութեան մէջ նախընտրելի է պարզ, մեծադիր թերթ մը՝ երկու երեսով: Գծաւոր թուղթը անպատշաճ կը նկատուի Ամերիկայի մէջ:

Տողերը պէտք է որ չափազանց խիտ ըլլան, որովհետեւ թէ գէշ կ'երևին և թէ իրար խառնը-ւելով անընթեռնելի կը դառնան: Մէկ թերթէ բաղկացած նամակին մէկ երեսին վրայ գրելու է:

Չորս երեսնոց նամակաթուղթին ետևը կարելի է գրել: Բայց եթէ գրելիքդ երկու երեսէ աւելի չէ, գործածէ առաջին և երրորդ երեսները: Եթէ չորս երեսները պիտի լեցուին, գրէ ընկան կարգով, 1, 2, 3, 4 երեսներու վրայ, ոչ թէ 1, 3, 2, 4 կարգով:

Չորս երեսնոց նամակաթուղթերը կրնան գործածուիլ ամէն կարգի նամակներու համար, ինչպէս բարեկամական, ընտանեկան, առևտրական, ևն: Առևտրական նամակներու համար նախընտրելի է մեծադիր թերթ մը թուղթ:

Նամակի մը գեղեցկութիւնը կը պահանջէ որ ձախ կողմէն գոնէ կէս ինչ եզր մը տրուի:

Չորս երեսնոց թուղթի վրայ գրուած նամակը իրեն յատուկ պահարանին մէջ պէտք է դնել. այսինքն պահարանը ըլլալու է այնպիսի ձևով և մեծութեամբ որ նամակը մէջտեղէն մէկ անգամ ծալլելով ճիշտ յարմարի անոր: Նամակը այնպէս ծալլէ որ առաջին երեսին վերի և վարի ծայրերը իրարու դէմ դիմաց գան: Այդպէս ծալլուած նամակը երբ բացուի առաջին երեսի ծալքի գիծը իբրև ակօս պիտի երևնայ, իսկ երկրորդ և չորրորդ երեսներու ծալքի գիծերը իբրև կատար:

Նամակը բացատրուած ձևով ծալլելէ ետքը պահարանին մէջ դիր, այնպէս որ ծալքի հորիզոնական գիծը պահարանին յատակը գայ. իսկ նամակը երեսներու բաժնող ծալքի ուղղածիդ գիծը՝

որ հորիզոնական ծալքով երկու հաւասար մասերու բաժնուած էր՝ ձախ կողմը պէտք է մնայ, երբ պահարանի փակուած կողմէն նայիս :

Եթէ նամակը պզտիկ թերթի մը վրայ գրուած է (մօտաւորապէս 6X8 ինչ) կրնայ առևտրական սովորական պահարանի մէջ (մօտ 3½ X 6½ ինչ) դրուիլ՝ շիտակ ծալլելէ ետք: Շիտակ կը ծալլուի հետևեալ կերպով. երբ նամակը սեղանին վրայ տարածուած է՝ գրուած երեսը վեր ըլլալով, վարի ծայրը վերցնելով թուղթի մէկ երրորդ մասին վրայ ծալլէ: Ետքը վերի ծայրը վերցնելով թուղթի մէկ չորրորդ մասին վրայ ծալլէ: Այսպէս ծալլուած նամակը պահարանին մէջ կը դրուի՝ ազատ ծալքերը պահարանին փակուած կողմը դարձած և ոչ թէ երեսին կողմը, և պզտիկ ծալքը վեր այնպէս որ նամակին ամենավերի ծայրը դէպի վար դարձած ըլլայ:

Բուն առևտրական մեծութեամբ թերթ մը (մօտ 8X11 ինչ) թուղթի վրայ գրուած նամակները առևտրական սովորական պահարաններու մէջ կը դրուին: Այդպիսի նամակ մը կը ծալլուի հետևեալ կերպով. երբ թուղթը սեղանին վրայ տարածուած է՝ գրուած երեսը վեր՝ վարի ծայրը դէպի վեր դարձուր և ծալլէ կեդրոնէն քիչ մը վար. ետքը աջ կողմը ծալլէ դէպի ձախ մէկ երրորդ լայնութեան վրայ, և ամէնէն վերջը՝ ձախ կողմէն դէպի աջ ծալլէ թուղթի լայնութեան մէկ չորրորդին վրայ:

Այսպէս ծալլուած նամակը պահարանի մէջ կը դրուի պզտիկ ծալքը մեծին վրայ և պզտիկ ծալքի վերի ծայրը կը նայի դէպի վեր:

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Բարեկամական նամակի մը նպատակն է բարեկամի մը հաղորդել հեռաւոր միջավայրի մէջ մեր ունեցած փորձառութիւնները, յաջողութեան կամ ձախողութեան լուրերը, զանազան խնդիրներու և պատճառներու հետեանքով մեր մէջ յուզուող զգացումներն ու խորհուրդները :

Այս կարգի նամակներու մէջ զգուշանալու է մեր անձով չափազանց զբաղելէ, լալկան ոճէ, խոշոր փիլիսոփայութիւններ հրամցնելու միտումէ կամ ուէ արուեստակութենէ ու սեթեթ ոճէ : Զափազանց անձնասիրութեան ու տկար կամքի նշաններ են «խա ու վախ»ի տողերը որ մենէ շատերուն այնքան հրապուրիչ կը թուին : Մարդ պէտք է աշխատի իր անհատական ցաւերէ աւելի բարձր ու զօրաւոր ըլլալ : Եթէ մէկը ցաւալի պարագաներու մէջ կը գտնուի, աւելի լաւ է որ հեգնել սորվի ձախորդութիւնները՝ արհամարհանքի ենթարկելով կամ կատակի վերածելով գանոնք : Զախորդութիւնները կարելի է տալ իբրև տեղեկութիւն, առանց խոշորացոյցով նայելու անոնց վրայ : Զախորդութեան կամ անյաջողութեան մէջ գտնուող անձ մը իր ցաւը աշխարհի ամենէն մեծը ըլլալ կը կարծէ և երբեմն անգիտակցաբար կը չափազանցէ՝ սպասելով որ ամէն մարդ իր վիշտով զբաղի. այդպիսի տկարութենէ զգոյշ պէտք է ըլլալ : Մարդ աշխատելու է գոնէ նամակ գրած ատենը զուարթ ըլլալ : Անշուշտ ծանր վշտի չափաւոր արտայայտութիւնը բնական է, բայց աւելին ձանձրացուցիչ կը դառնայ :

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՆԱՄԱԿԱՆԻ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՕԳՏԱԿԱՐ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Սիրելի Արամ,

Իմ ջերմ բաղձանքս է ապրիլ իբրև լաւ Հայ
և ըլլալ Միաց. Նահանգներու լաւ քաղաքացի:
Հայերէնը կը սիրեմ Հայու խանդաղատանքով,
իսկ Անգլիերէնը կը սիրեմ սորվիլ թէ քաղաքա-
ցիական պարտականութեամբ և թէ իր արժանի-
քին համար: Քեզի ասկէ վերջ Անգլիերէն նամակ
պիտի գրեմ և կը փափաքիմ որ դուն ալ Անգլիե-
րէն պատասխանես. օգտակար կ'ըլլայ թէ քեզի
և թէ ինծի: Դուն դպրոցի մէջ կանոնաւոր դաս
առած և սորված ես, ես ալ այս տեղ կեանքի
դպրոցին մէջ, քիչ մը գործարանին մէջ, քիչ մը
երեկոյեան դպրոցներու մէջ, և քիչ մըն ալ եկե-
ղեցիներու մէջ, ևն: Անգլիերէն լեզուը ուժ մըն
է և յաջողութեան միջոց մը: Իբրև գործաւոր
զայն լաւ սորվելու և կատարելագործելու դիւ-
րութիւն չունիմ, բայց քանի որ միտքս դրած եմ
ձեռքէս եկած ջանքը թափել լեզուին տիրանալու
համար՝ ամէն պատեհութիւն սիրով պիտի ող-
ջունեմ: Ուստի քեզի հետ թղթակցիլ ոչ միայն
մտերմական առանձին հանոյք մը պիտի ըլլայ ին-
ծի, այլ նաև ուսումնական միջոց մը: Այս նամակս
առաջին փորձը թող ըլլայ այդ ուզողութեամբ:

Սիրալիր բարեկներով

Քուկդ՝

ՏԻՐԱՆ ՅՈՎԱՍԷՓԵԱՆ:

ARMENO-AMERICAN
Letter Writer
LETTERS OF FRIENDSHIP

A Useful Proposition.

Dear Aram:

It is my ambition to remain a true Armenian and yet to become a good citizen of the United States. I love our language with the warm heart of an Armenian, and I like to learn English for its own sake and as my first duty of citizenship.

I shall henceforth write to you in English and I want you to answer me in the same language. It will be good practice for both of us.

You have learned it in regular schools, and I have learned it in the school of life, picking up a little in factories, a little in the evening schools, and a little in churches.

English is a source of power and a means of success. Being a workingman I lack facilities for improving my knowledge of it and gaining a command of good style; but I have decided to welcome any opportunity which may help me to attain my desired object.

Therefore my correspondence with you will be not only a great pleasure to me but also a means of self-education.

Let this letter be the first attempt of

Yours truly,

Diran Hovsepian.

Երկար Լռութիւնը Խզող Նամակ մը

Սիրելի Ջաւէն ,

Ամբողջ երեք տարի է որ քեզի չեմ գրած : Կը յիշես անշուշտ որ երբ Ամերիկա նոր հասայ յաճախ և երկար կը գրէի : Նոր աշխարհի նորութիւնները անսահման նիւթ կը մատակարարէին գրելու , և ես զօրաւոր փափաք մը կ'զգայի քեզ հաղորդակից ընելու՝ բոլոր այն բաներու նկատմամբ որ , մերինէն բոլորովին տարբեր այս աշխարհի մէջ , իմ ուշադրութիւնս կը գրաւէին : Բայց կեանքը ահաւոր դառնութիւններ ունի այս երկրի մէջ , դառնութիւններ՝ որոնց դիմագրաւելու են բոլոր այն օտարականները որ այս սոսկալի եռուզեռին մէջ կը նետեն իրենք զիրենք , ապրուստ մը հայթայթելու , կամ իրենց արկածախնդրութեան բնազդին գոհացում տալու , և կամ երազած իսէալներն հետապնդելու ազատութիւնը գտնելու համար : Կարդացե՞ր էք Էտկար Ալէն Փօի «Էլտօրատօն», այն սիրուն ոտանաւորը , որուն մէջ կը նկարագրուի զուարթ ասպետ մը՝ որ կը ծերանայ իխոյզ էլտօրատօին , առասպելական հարստութեան երկրին : Բազմաթիւ ասպետներ , բարոյական կամ նիւթական հարստութեան իուզարկուներ , յուսալից և զուարթ , կուգան այս էլտօրատօն , կ'իյնան հոսանքի մը մէջ . ոմանք կը կորսուին , իսկ ոմանք , երբ իրենք զիրենք գտնեն , արդէն ծերութեան ստուերը պատած կը տեսնեն իրենց շուրջ :

Երեք տարիներ այդ հոսանքը զիս ալ տարաւ , նետելով զիս մէկ քաղաքէն միւսը , մէկ գործա-

Breaking a Long Silence.

Worcester, Mass., Oct. 5, 1913.

Dear Zaven:

I have not written to you for three whole years. You remember that when I first came to America I wrote you oftener, and lengthy letters. The novelty of the new world supplied me with unlimited material, and I had a strong desire to communicate to you all the things which attracted my attention in this continent—altogether different from our own. But life is full of deep distress, which must be faced by most of the foreigners who subject themselves to the vicissitudes of fortune to earn a livelihood, or to satisfy their adventurous instincts, or to find freedom to pursue their cherished ideals. Have you read the *Eldorado* of Edgar Allen Poe, a pretty poem in which a gallant knight is described as growing old in search of a land of fabulous wealth?

Many knights, searchers for moral or material wealth, come to this country, and fall into a current; some are lost, and others who survive their difficulties feel the shadow of old age in their hearts.

For three years such a current carried me, throwing me from one city to another, from one

րանէն միւս, գործարան, անգործութենէն՝ տա-
ժանելի բայց չվճարող գործերու յուսախաբու-
թիւնը: Երեք երկար տարիներ այդ հոսանքին
մէջ կորսնցուցած էի ինքզինքս, որով գրելու ոչ
միտք ոչ ալ սիրտ մնացած էր վրաս: Եթէ չեմ
սխալիր ամենավերջին նամակիդ քարտով մը պա-
տասխանեցի, յոյս յայտնելով քիչ ատենէն երկար
նամակ մը գրել. բայց ահա յանկարծ կը տեսնեմ
որ երեք երկար տարիներ անցած են անկէ ասդին
և ես տակաւին նոր կ'սկսիմ գրելու: Երբ այդ
քարտը գրեցի, արդէն ինկած էի այդ անկայուն
վիճակի մէջ, բայց յոյս ունէի լաւագոյն օրերու
արշալոյսին, որ մինչև այսօր չէր բացուած:

Այսօր տակաւին ի վիճակի չեմ զգար երկար
գրելու. այնքան բաներ ունիմ ըսելիք որ չեմ գի-
տեր ինչպէս սկսիմ և ինչպէս վերջացնեմ: Երկու
օրէ ի վեր կ'աշխատիմ միտքս ամփոփել և որոշ
կարգով մը պատմել երեք տարուան կեանքս,
բայց չեմ յաջողիր որոշ եզր մը գտնելու: Ան-
շուշտ միտքս իր բնականոն վիճակը կ'ստանայ և
մինչև այս նամակիս պատասխանը առնեմ ընդու-
նակ կըլլամ գրելու բոլոր այն փորձառութիւննե-
րը՝ որոնց մէջէն անցայ: Այս նամակը կը գրեմ
քեզի ըսելու՝ թէ քեզ չեմ մոռցած, հին օրերու
յիշատակները չեն մարած յիշողութեանս մէջ, և
թէ՛ վերջին տարիներու դառնութիւնները թօթ-
ուելով վրայէս՝ մանկութեան օրերու քաղցրու-
թիւնները կուզեմ վայելել:

Առ այժմ սա չափ ըսեմ որ երկու շաբաթէ
ի վեր իբրև հաշուակալ կ'աշխատիմ երկաթի մեծ
գործարանի մը օֆիսին մէջ: Գործս հաւանու-

ARMENO-AMERICAN LETTER WRITER 19

factory to another, from idleness to the disappointments of underpaid drudgery. I was almost lost; I had neither heart nor peaceful mind to write. If I am not mistaken I answered your last letter by a card, expressing my hope of writing a long letter soon. But now I realize that three years have elapsed since that time. When I wrote that card I had already fallen into that unsettled life, but I had hopes for better days, which have not dawned until now.

I do not feel equal to going into details. I have so many things to say that I do not know how to begin or how to end. For the last two days I have been trying to concentrate my mind upon my three years' life in order to tell you of it, but I cannot find my way through. I am confident that my mind will take its normal course and, by the time I receive the answer to this letter, I shall be able to write about all my past experiences. I write this letter just to tell you that I have not forgotten you, the memory of the good old days has not gone, and that I want to put away from me these bitter feelings of hardship and enjoy the sweet memory of our boyhood.

At present let me inform you that I have been working for the last two weeks as a bookkeeper in the office of a great iron foundry. They like

Թիւն կը գտնէ և կը յուսամ քիչ ատենէն աւելի լաւ վարձատրուիմ : Իրիկուան դպրոցները պիտի շարունակեմ մեքենական չափագիտութիւն սորվելու : Գրէ ինծի երկար, վստահ եմ որ քու միտքդ աւելի թարմ է և աւելի դիւրութեամբ կրնաս գրել երեք տարուայ կեանքիդ ու կատարած գործերուդ մասին : Ի՞նչ կ'ընես Հիմա և ի՞նչ վիճակի մէջ կը գտնուիս : Գրէ մանրամասնութեամբ. պէտք է գիտնաս որ ամէնաաննչան գէպքերը կամ խօսակցութիւնները մեծ հաճոյքով պիտի կարդացուին իմ կողմէ : Ես ալ կը խոստանամ երկար ու երկար գրել : Հիմա ինծի կը թուի որ չպիտի կրնամ գրել մինչև որ կարօտակէզ սիրտս ամոքող նամակ մը չստանամ քենէ : Հայրենի լուրերուն այնքան անօթի կ'զգամ որ բամբասանքներն անգամ պիտի լափեմ : Ուրեմն գրէ ինծի ամէն բան, բամբասանք թէ բանն ասանկ :

Կարօտի համբոյրներով,
Սեդրակ Միքայէլեան

ՊԱՏԱՍԽԱՆ

Սիրելի Սեդրակ,

... Թուակիր նամակդ գեղեցիկ անակնկալ մը եղաւ թէ՛ ինծի և թէ՛ ամբողջ ընտանիքին : Յաճախ կը խօսէինք քու մասին և կը զարմանայինք որ քենէ ուէ նամակ չէինք ստանար : Երեք տարի առաջուան քարտդ իսկ պահած եմ. երբ նամակդ կարդացի, փնտռեցի և գտայ գայն. վրան ոչ հասցէ կար ոչ ալ թուական, միայն նամակատան դրոշմէն յայտնի էր որ պօսթօնէն ղրկուած

ARMENO-AMERICAN LETTER WRITER 21

my work and I hope I shall get better pay very soon. I shall continue attending evening schools to learn mechanical engineering.

Write me a long letter; I am sure that your mind is brighter and more capable of writing all that you have done in these last three years. How are you now? and what are you doing? Write every detail; I can assure you that I shall read with great pleasure details that may seem most insignificant to you. I myself promise to write a very long letter. It seems to me that I shall not be able to write any description until I hear from you.

I am so hungry for home news that I shall relish even gossip. Write soon to

Yours truly,

Setrak Michaelian.

The Answer.

Nov. 10, 1913.

My dear Setrak:

Your letter of October 5th was a pleasant surprise both to me and to all our family. We had talked about you frequently and wondered that we did not hear from you. I had even kept your last card; after receiving your letter I found it, bearing neither date nor address. It was evident from the post office stamp that it was sent from Boston. Many times, after long waiting

էր: Երկար ատեն սպասելէ և ակնարկուած նամակը չստանալէ ետք, քանի քանի անգամ կ'ուզէի ինքս գրել, բայց հասցէ մը չունէի: Հին հասցէդ չէի կրնար գործածել, որովհետև Պօսթօնէն հեռանալիքդ յայտնած էիր:

Թէև այսչափ ատեն լուռ մնացիր, ես երբեք յոյս չէի կորսնցուցած քենէ լսելու մասին: Գիտէի որ նոր աշխարհի աննպաստ պայմաններու մէջ կը մաքառէիր, և վստահ էի որ երբեք կորովդ ու քաջութիւնդ չպիտի կորսնցնէիր, ու վերջապէս պիտի ապահովէիր այնպիսի վիճակ մը՝ որուն մէջ խաղաղ կերպով պիտի հետապնդէիր նպատակդ: Քանի նամակ չէի ստանար այնքան պայքարին սաստկութիւնը կը գուշակէի:

Երբ երէկ նամակդ ստացայ, ուրախութեանս սահման չկար. շուտով վազեցի տուն և լուրը անհամբերութեամբ հաղորդեցի. օրը մեզի համար տօնախմբութիւն մը եղաւ: Եթէ ձեր ընտանիքը քաղաք եղած ըլլար անպատճառ հացկերոյթ մը կ'ունենայինք միասին: Ասկէ գրեթէ տարի մը առաջ միայն ձեր հայրը քաղաք եկած էր, երկու օր մեր տունը անցուց, միշտ ձեր վրայ կը խօսէինք: Հասցէդ ինք ալ չէր գիտեր, որովհետև միշտ քարտերով լուր տուած էիր թէ մնայուն հասցէ մը չունէիր: Անշուշտ այս անգամ ինչպէս ինձի նոյնպէս իրենց գրած ես: Եթէ գիւղ գացող մէկը ըլլայ նամակ ստանալուս ուրախութեան լուրը կը հաղորդեմ:

Նամակդ թէև անակնկալ մըն էր և շատ ուրախացուց մեզ, բայց մեր փափաքած չափով երկար չէր. կրկին ու կրկին կը կարդամ, միշտ

and failing to obtain the letter alluded to, I wanted to write you, but I had no address. I could not use the old one, because you had written that you were about to leave Boston.

Although you were silent for so long I never lost my hope of hearing from you. I knew that you were struggling under unfavorable circumstances in the new world, and I was confident that you would not lose your vigor and your courage, and that in the end you would secure a position which would enable you to pursue your ideals. The more you delayed writing the more certain I was of the intensity of the struggle.

Yesterday when I received your letter my joy was great, and I was so impatient to impart the news to the folks that I ran home quickly. We celebrated the day with delight. Had your people been in the city without doubt we would have had a dinner party.

About a year ago your father was in the city. He spent a couple of days with us. Most of the time we talked about you. He did not know your address himself, because you had informed him by cards that you had no permanent address. Doubtless by this time you must have written to him as well. If I know of any one going to the country I will send the news by him.

Although your letter was a surprise and it gave us joy, it was not long enough to satisfy us. I read it and reread. It does not take more than a

րոպէէ մը կը լիննայ: Ուստի այս նամակը այսօր անմիջապէս կը գրեմ՝ քեզի գրելու հաճոյքը նորէն վայելելու, այնքան երկար ատեն անկէ զըրկուելէ ետք, և խոստացած երկար նամակդ կարելի եղածին չափ շուտ ստանալու:

Տեական գործ մը գտնելէ անմիջապէս ետք ինծի գրելը կը գնահատեմ, որովհետև գիտես որ ես և ամբողջ մերինները որչափ ուրախ կըլլանք յաջողութեանդ լուրէն: Շնորհակալ եմ որ մեզ այսպէս կ'ուրախացնես: Բայց հայրս և մայրս ինծի հետ կը բողոքեն նեղ օրերուդ ցաւերուն մեզ մասնակից չընելուդ համար: Գիտեմ որ քեզի չէինք կրնար օգնել, բայց մեր համակրանքի և սիրոյ բառերով թերևս վհատեցնող պարագաներուդ մէջ բարոյական ուժ մը տայինք: Գիտեմ նաև որ կան ժամանակներ՝ երբ մարդ տրամադիր չզգար անզօր բառերու ունկնդրելու. ինչ ալ ըլլայ, մեզ տեղեակ պահելու էիր գիմագրաւած պայմաններուդ մասին:

Անշուշտ հիմա ինձմէն լուրեր կ'ակնկալես: Մեր քաղաքական կացութեան մասին, անտարակոյս, թերթերու մէջ կը կարդաս: Տնտեսական վիճակը աւելի ետ կ'երթայ, բայց հօրս և իմ աշխատութիւնը ընտանիքը կենդանի կը պահէ: Ես կը շարունակեմ նախկին գործս: Եթէ ընտանիքը ինձմէ կախում չունենար, ես ալ իմ բաղդս կը փորձէի եանքիներու աշխարհին մէջ. բայց ատոր մասին խօսիլ աւելորդ է: Քաղաքը գրեթէ նոյն վիճակի մէջ է. դուն ուրեք նոր տուն մը կը շինուի: Երկու տարի առաջ բաւական մեծ հրդեհ մը պատահեցաւ վարի շուկային մէջ. դեռ մինչև

minute or two. Now I hasten to write this letter to enjoy the pleasure of writing to you, of which I was deprived for so long, and to obtain from you that promised answer as quickly as possible.

I appreciate your writing right after finding permanent work. You know how glad we all are to hear of your success. I thank you for the joy you gave us. But Father and Mother join me in complaining that you failed to communicate with us about your hard condition. I know that we could not help you, but our words of sympathy and love might have given you some comfort in your discouraging circumstances. I am aware that there are times when a fellow does not feel disposed to listen to powerless words; nevertheless, you ought to keep us well informed about your condition.

Now, of course, you expect some news from me. I don't know what to say. I am sure that you read the papers in regard to our political situation. Financial conditions are rather going backward. But, thanks to hard work, Father and I keep the family alive. I am continuing my previous work. If the family did not depend upon me I would like to try my fortune in the Yankee World myself, but there is no use of talking about that. The city is in the same condition. A house is seldom built.

Two years ago a big fire destroyed the downtown market: until four months ago part of the

չորս ամիս առաջ աւերակներու մաս մը լքուած մնացած էր, որովհետեւ տէրերը կարողութիւն չունէին շինելու: Ոմանք գետինը ծախեցին դրամ ունեցողներուն, և այս կերպով նոր խանութներ շինուեցան, որոնք հիններուն վրայ հազիւ թէ առաւելութիւն մը ունենան: Այդ տեղի փողոցը քիչ մը աւելի լայնցաւ: Դպրոցները գրեթէ նոյն վիճակի մէջ են, նոր ուսուցիչ-տնօրէնը կարող մարդ մըն է, ընդհանրապէս ժողովուրդը կը սիրէ զինք: Անցեալ տարի ուսուցիչներու մէջ այլանդակ անհամաձայնութիւն մը կար. պատճառը դարձեալ Մ.ն էր, որ մարդու հետ ապրիլ չգիտեր: Այս տարի ինք ուրիշ գործով կ'զբաղի և դպրոցը խաղաղ է: Վերջին կաղանգի առթիւ դպրոցի սրահին մէջ լաւ ներկայացում մը տրուեցաւ որ շատ յաջող անցաւ: Մեր Սեդրակն ալ մէջն էր և անառակ զաւակին դերը հրաշալիօրէն լաւ կատարեց: Սեդրակը իր դերին մէջ անառակ էր, բայց իր դպրոցական և ընտանեկան կեանքին մէջ լաւ է: Իր կարգին մէջ միշտ առաջին է կամ երկրորդ: Մեւքոնենց սրամիտ լաճը իր զօրաւոր մրցակիցն է, որ ատեն ատեն առաջնութիւնը կը խլէ իրմէ: Երկուքը ընդհանրապէս հաւասար են կարգի մէջ: Մեւքոնենանը այդ ներկայացումին մէջ ծեր վաճառականի դերը ստանձնած էր, որ նոյնպէս յաջողութեամբ կատարեց:

Մեր դասընկերներէն վեց հոգի միայն մնացած են քաղաքի մէջ. մէկը, Յակոբեանը՝ ուսուցիչ է, Հիւսնեանը իր հօրը կ'օգնէ, Սարգիսը Մատթէոսեան վաճառատան մէջ գրագիր է, իսկ Վոցեան եղբայրները իւղի, ներկի, և մեքենական

ruins were left abandoned because the owners could not have them rebuilt. Some of them sold the ground to those who could afford to build new stores; but the new ones have hardly any advantage over the old. The street there was broadened a little. The schools are the same as ever. The new director is an able man, liked by people in general. Last year there was considerable discord among the teachers. The reason was again Mr. M., who can't agree with anybody. This year he is in a different profession and the school is in peace. In celebration of New Year a drama was played by the school boys in the school building, which was fairly successful. Our Setrak was among the actors. He played the role of a prodigal son very well. Although he was prodigal in his role, he is good in school and at home. The bright son of Melkonentz is his strong competitor, who often snatches the first place from him. Generally the two are equal in the class. In the play Melkonian successfully represented the part of an old merchant.

There are only six of our classmates in the city: Hagopian is a teacher, Husnian helps his father, Sarkis is bookkeeper in the firm of Mateosian, and the Vautzian brothers have opened a hardware store and are doing pretty

գործիքներու նոր խանութ մը բացին, որ բաւական յաջողակ է: Ասոնց մէջէն միայն Հիւսնեանը ամուսնացած է՝ գրեթէ մէկ ու կէս տարի առաջ: Իր սիրային պատմութիւնը գիտես, հայրը միշտ կը պնդէր այդ ամուսնութեան դէմ, բայց վերջ իվերջոյ տեղի տուաւ: Ամուրը այս պահուս եօթը ամսուան մանչ զաւակի մը ծնողքն է: Երկու ընտանիքներու յարաբերութիւնները շատ լաւ են հիմա:

Պզտիկ Սուրէնը այս տարի սկսաւ դպրոց երթալ. եթէ մանկապարտէզ մը ունենայինք անցեալ տարի պիտի ղրկէինք: Հիմա գրերը կը ճանչնայ: Հիմա պատմեմ թէ ինչպէս անցուցինք երէկ իրիկունը: Իրիկուան համար մայրս քու սիրած կերակուրներդ պատրաստեց, քոյրս Նուարդ վարդազոյն ժապաւէններով զարդարեց պատկերդ, իբր թէ քու անուանդ տօնը կը տօնէինք: Սեղրակը ջութակ ածել սորված էր և կերակուրէն ետք քու սիրած երգերդ նուագեց: Չեմ գիտեր թէ Սուրէնը քեզ կը յիշէ՞, որովհետև հազիւ երկուք ու կէս տարեկան էր երբ թողուցիր: Բայց պատկերդ կը ճանչնայ, և քու անունդ կուտամ երբ հարցնենք:

Առ այժմ այսչափ:

Մեր ամէնուն ջերմ բարևներով,

Քուկդ միշտ

ԶԱԻԷՆ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ARMENO-AMERICAN LETTER WRITER 29

well. Among these only Husnian is married, almost a year and a half now. You knew his love affair. His father opposed the marriage for a long time, but finally yielded. The couple are now the parents of a boy of nearly seven months. The relations of the two families are agreeable at present.

Little Souren began to go to school this year. If we had a kindergarten we would have sent him last year. Now he knows the alphabet.

Let me tell you now how we spent last evening at home. Mother prepared for supper the dishes which you like. My sister, Nevart, framed your picture with pink ribbons, as if it were your birthday celebration. Setrak has learned to play on the violin, and after supper he played the songs which you like best. I don't know whether Souren can really recollect you, because he was only two and a half years old when you left. But he knows your picture and gives your name when it is asked for.

With best wishes from us all, I am,

Yours as ever,

Նորեկի մը Ցպաւորութիւնները

Սիրելի Սամուէլ,

Ահա ամիսէ մը իվեր Ամերիկայ կը գտնուիմ և սենեկակից կ'ապրիմ միակ ծանօթ և բարեկամս Գրիգորին հետ: Ճամբորդութեան ահագին նեղութիւններէն և տանջանքներէն ետք, երբ այս տեղահասայ գրպանիս մէջ մնացած էր միայն երեք ուկէս սօլար: Այդ գումարը չբաւեր ժինչև իսկ մէկ շաբթուայ ապրուստին, չհաշուելով սենեակի վարձքը: Առ այժմ Գրիգորը կը վճարէ թէ՛ սենեակիս վարձքը և թէ՛ ճաշարանի ծախքերը: Բայց քանի կը տեսնեմ իր օրական տասը ժամերու ծանր աշխատութիւնը և իր խնայողութեան չափազանց համեստութիւնը՝ շեմ կրնար չտառապիլ: Ան ալ ունի սիրելիներ, որոնց ապրուստը իր վրայ կը ծանրանայ, և ահա ես եկայ նոր բեռ մը ըլլալու: Ինքը շատ ազնիւ է և միշտ կը մխիթարէ զիս, քոյս յայտնելով որ շուտով գործ մը կը գտնուի: Բայց իմ կերածս զիս կ'ուտէ: Եթէ ինք հարուստ ըլլար, և կամ մեծ շարաթավճար մը ապահովող, այնքան հոգ չէի ըներ. այսչափ մարդիկ կուգան, մէկ կամ միւս ձևով գործ մը կը գտնեն, անշուշտ մինակ ես բացառութիւն չպիտի ըլլամ. բայց կը վախնամ մինչև գործ մը գտնուի՝ այնքան պարտքս շատնայ որ իրեն վճարումս չափազանց ուշանայ, և ինք անկարող ըլլայ իր սիրելիներուն օգնելու:

Սիրելիս, կ'ըսեն թէ գործերը շատ ծանր են. ես տակաւին գաղափար մը չունիմ անոնց վրայ. որովհետև անգործներուն ներելի չէ գործարանէն ներս մտնել ու գործը և գործողները դիտել:

Impressions of a Newcomer.

86 Arlington St.,

E. Watertown, Mass.

Sept. 20, 1911.

Dear Samuel:

Here I have been in America for a whole month and living as roommate with my only friend and acquaintance, Krikor. When I arrived here—after a hard journey and much fatigue—I had in my pocket only \$3.50, a sum which is not sufficient for even a week's board, without counting the rent of a room. At present Krikor is paying both my room rent and my expenses at the restaurant. But as I see his daily ten hours' hard work and the meagerness of his savings I cannot help feeling badly. He has his own dear ones dependent upon him, and now I have come to be a new burden to him. He is very kind and always comforts me by expressing hope that I shall find work soon. But I am in constant anxiety. I would not care if he were rich, or a man obtaining high wages. So many men come to this country and find work in some way or other. I should not be an exception. But I am afraid that by the time I find work my debts will have increased so much that Krikor will be embarrassed in not being able to help his parents.

They tell me that the work is very hard. I have no idea of it, because it is not allowed us, the idle, to go into the factory and see the work.

Բայց գործի ծանրութեան վրայ գաղափար մը կը կազմեմ խեղճ գործաւոր հայրենակիցներու երեսը տեսնելով : Գրեթէ ամէնքն ալ դալկացած և նիհար են : Թերևս ժամագործի աշկերտ Յակոբը ճանչնաս, իրեն հետ երկրէն ծանօթութիւն չունէի, բայց դէմքով զինք կը ճանչնայի. որչա՛փ գեղեցիկ պատանի մըն էր, հիմա տոգոյն և տկար է ու բոլորովին փոխուած : Այդպիսի դէմքերու տեսքը սիրտս կը լեցնէ և չեմ կրնար արցունքս զսպել :

Երկիր եղած ատենս կ'ըսէի. ա՛հ, մէյ մը Ամերիկա հասնէի, ճամբան դարձեալ ահ կը քաշէի և օր մը առաջ հասնիլ կը տենչայի : Բայց այս անգործ վիճակը աւելի գէշ է քան ծովախտը և ճամբու ուրիշ նեղութիւնները : Ազատութիւնը մէյ մը տեսնել կը բաղձայի. և ահա ազատ երկրի մը մէջ կը գտնուիմ, բայց ազատութիւնը չեմ տեսներ : Եթէ անգործ ես, քիչ մը փողոցներու մէջ կը պտտիս աննպատակ. բազմաթիւ դէմքեր կը տեսնես՝ խոժոռ կամ զուարթ բայց միշտ անտարբեր, և ահագին բազմութեան մը մէջ քեզ միայնակ ու տրտում կը գտնես : Հայրենաբաղձութեան տարտամ զգացում մը տեսակ մը նուազում կուտայ քեզ, և քնաչըջիկի մը պէս կը քալես : Երբ գործ առնես՝ ժամերը այնքա՛ն երկար են որ այլևս պէտք է հրաժեշտ տաս օրուայ լոյսին և արևոտ երկնակամարին : Առտուն կանուխ գործարան և իրիկուան մութին սենեակ : Ու՛ր են այն զուարթ պտոյտները՝ որ քաղաքէն դուրս կրնէինք առօրեայ գործերնիս աւարտելէ ետք :

Մեզ՝ օտարականներուս համար միակ ազա-

But I can get some idea of the hardness of the work by looking at the faces of my poor countrymen. Almost all of them are pale and thin. Perhaps you remember Hagop, the apprentice of a jeweler. I had no personal acquaintance with him, but his face was familiar to me. What a nice looking young fellow he was! He is entirely changed now. Such faces make me sad and feel like crying.

When I was at home I wished so much to be in America. Even during the journey I longed for a quick arrival. But this condition of lack of work is worse than seasickness and the fatigue of the journey. I was eager for the land of liberty, and now I fail to see freedom. If you are without work, you may wander aimlessly in the streets. You will see hundreds of faces, stern or cheerful, but always indifferent toward you, and among the great multitude you will feel lonely and sad. Some vague feeling of homesickness creeps into your heart, making you weary, and you walk like a somnambulist. If you get work, the hours are so long that you must say good-bye to the daylight and sunny sky. What pleasant walks we used to take out of town when the day's work was done!

The only freedom for foreigners like ourselves

տուժիւնը գործարանի մը դերուժիւնն է, որ ահա այդ ալ ձեռքս չանցնիր: Ես պատրաստ եմ հպարտութիւնս կուլ տալ և գետինը աւելլ, բայց մեզի պէս գերիներուն համար այդ «առածնաչնորհումն» ալ շատ կը տեսնեն: Լեզու չեմ գիտեր որ երթամ բան մը ըսեմ: Ամէն առտու մեծկակ բազմութեան մը հետ ես ալ կ'երթամ գործարանին առջև պատեհութեան մը սպասելու: Երբեմն կ'ըսպասենք ու ոչ ոք կը նայի մեր վրայ: Երբեմն «պօս»ը դուրս կուգայ, մէկ կամ երկու հոգի առնելով ներս կը տանի. որչա՛փ բարեբաղդ են այդ ընտրուած հոգիները: Եւ մենք ափ իբերան ետ կը դառնանք:

Չեմ գիտեր այս վիճակը որչափ պիտի տևէ: Վրաս վհատութիւն մը կուգայ, քանի կը խորհիմ որ ուրիշի վրայ բեռ մըն եմ: Կը ցաւիմ որ նամակս այնքան տաղտկալի եղաւ և այնքան զուրկ զուարթ բառերէ: Բայց յուսանք աւելի պայծառ օրերու համար:

Տաքուկ բարևներով

ԱՆԳՈՐԾ ՄՆԱՑՈՂԻ ՄԸ ԼԱՄԱԿԸ

Սիրելի... ,

Օրերը կ'անցնին, շաբաթները իրարու կը յաջորդեն և ահա վեց ամիսներ կը համրեմ այս տարօրինակ աշխարհին մէջ: Միլիոնաւոր բազմութեան մէջ ես միակ եմ և կ'ապրիմ անմխիթար: Գործ չկայ, ապրուստի յոյս չկայ: Լեզուն մի քիչ սորվեցայ, սխալ ուղիղ միտքս կը բացատրեմ. թշուառութիւնը զիս աներես և ճարպիկ ըրաւ, կ'երթամ զանազան տեղեր գործ ուզելու, բայց

is drudgery in a factory, and now I cannot get even that. I am ready to swallow my pride and sweep the floor; but I am not allowed to enjoy that privilege (?) I do not know the language and cannot express myself. Every morning with many others I loiter before the gates of the factory. Sometimes we wait for hours and no one looks at us. Sometimes the boss comes and picks out one or two men. What happiness for the chosen ones! And the rest of us turn away disappointed.

I don't know how long this state of affairs will last. I feel very much discouraged as I think that I am a burden to someone else. I am sorry for writing a letter that is so tiresome and so lacking in words of joy. But let us hope for better days.

Yours truly,

The Letter of a Man Without Work.

Feb. 1, 1914.

Dear _____:

The days go by, one week succeeds another and I already count six months in this strange land. I am lonely among millions of people and live without comfort. No work and no hope of a living. I have learned the language a little, and now I can, right or wrong, express myself. Hard life has made me bold and smart; I go to different places to apply for work, but in vain,

ապարդիւն: Չխնդաս վրաս երբ ըսեմ որ գործ գտնել կը յաջողիմ երբ ձիւն գայ. տուներու առջև դիզուած ձիւնը կը մաքրեմ և ժամը քսա՞ն սէնթ վարձք կ'ստանամ: Բայց՝ դժբաղաբար ամէն օր ձիւն չգար... Մայրայեղ աղքատութեան և ծայրայեղ հարստութեան հակադրութիւնը որքա՞ն ահաւոր է այս երկրի մէջ: Երբ քաղաքին փողոցները պտտիմ կը տեսնեմ վիթխարի ապարանքներ, որոնք հպարտօրէն կանգնած վեր կը բռնեն իրենց հսկայ ճակատը, կարծես երկինքի ամպերուն հասնիլ ուզէին: Կ'սկսիմ մեքենաբար համրել ապարանքներուն յարկերը. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, և՛ տասնին չհասած կը շուարիմ: Կրկին կը համրեմ և կը հասնիմ տասնը-չորս կամ տասնըհինգի: Տասը յարկանի չէնքերը գրեթէ սովորական են: Ուրիշ քաղաքներու մէջ կրկնակի բարձրութեան չէնքեր անսովոր չեն:

Անգամ մը աննպատակ քալելով արուարձաններէն մէկուն մէջ, գացի դէպի մօտակայ բլուր մը՝ ուր առաջին անգամ ըլլալով լայնատարած հորիզոնը դիտեցի: Քաղաքը և արուարձանները անսահման տարածութեան մը վրայ կը սփռէին առջևս. անյագաբար դիտեցի մարդկային աշխատութեան հրաշակերտերը՝ որ լուռ կը տարածուէին: Կը տեսնէի անհամար ծխնելոյզներ, որոնք՝ իրենց գագաթը տնկած երկինքին մէջ՝ բարդ բարդ ծուխի ամպեր կը դիզէին, ամպեր՝ որոնք հետզհետէ կը լուծուէին մթնոլորտի ընդարձակութեան մէջ և կ'անհետանային: Նուրբ, մշուշանման քող մը կը ծածկէր ամբողջ քաղաքը: Նշան էր որ քաղաքակրթութեան կրակը կը վառէր հոն, քա-

Don't laugh at me if I tell you that I succeed in finding some work when it snows. I clear the sidewalks of snow and get twenty cents an hour! Unfortunately it doesn't snow every day. What a contrast between extreme poverty and extreme wealth in this country! When I walk in the streets of the city I see enormous buildings that stand with pride, their roofs high in the sky as if they would touch the clouds. Mechanically I begin to count the stories: one, two, three, four, five, six: and before I reach the tenth I confuse the windows. I begin to count again and I go as far as fourteen and sixteen. Constructions of ten stories are common. Other cities have buildings twice as high.

One day while walking aimlessly in one of the suburbs, I went to the top of a nearby hill, from which, for the first time I saw the horizon far and wide. The city and its suburbs were before me in their broad expanse. I eagerly gazed at the monuments of human labor which lay silently outspread. I could see countless chimneys pointing their tops to the sky and puffing up volumes of black smoke, piles of clouds which gradually dissolved and disappeared in space. A hazy atmosphere covered the whole city. It was a sign that the fire of civilization was burning

ղաքի մէջ, մեքենաներ կը դարձնէր, հազարաւոր բազուկներ՝ հարկադրուած ունակութեամբ մը՝ մեքենաներու հետ զուգընթաց կը շարժէին, կ'արտադրէին: Բայց բոլոր այդ եռուզեռի մէջ ինծի ոչ տեղ կար, ոչ բաժին: Գլխիկոր դիտեցի այդ տեսարանը ամբողջ ժամեր. մտածել, խորհիլ կը փորձէի, բայց չէի յաջողեր. կ'արծես երազի մը մէջ կ'ապրէի: Այն օր վրաս տիրող լքումը աւելի զօրաւոր էր: Վերադարձայ այնպիսի դառնութեամբ մը՝ որ չեմ կրնար նկարագրել: Ճամբան կը տեսնէի մարդիկ՝ ուր օթօմօպիլներով արագ կ'անցնէին. որչա՛փ ինքզինքս պզտիկցած կը գտնէի այն տեղ, կ'արծես անպէտ գոյութիւն մըն էի և ինկած այս կողմեր կը քաշքշուէի:

Կը վախնամ նամակս չափազանց անձնասէրի կնիք մը կը կրէ. փոխանակ քեզի տեղեկութիւն աալու, իմ ցաւերս բացատրեցի: Բայց ներէ ինծի, սիրելիս, սիրտս լեցուած է ու նամակս գրած ատեն կը կարծեմ քեզի հետ կը խօսիմ, ու քիչ մը թեթեւութիւն կ'զգամ: Գրէ ինծի աւելի յաճախ. այս միայնութիւնս քու նամակներով միայն կը փարատեմ:

Միշտ քուկդ,

ՆՈՐԵԿԻ ՄԸ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Սիրելի...

Անշուշտ ինձմէ տեղեկութիւններ կ'ակնկալես Ամերիկայի նկատմամբ: Նախորդ նամակիս մէջ խոստացած էի և ահա երեք ամսուան դիտածս ու քննածս կուգամ քեզի հաղորդել:

in the city, turning machines, while thousands of hands in unison with the machines were habitually moving and producing. But in all these activities there was neither room nor a share for me. I gazed at this view for hours. I tried to think, but could not. It seemed to me I was living in a dream. That day my discouragement was greater. I returned with a bitterness which I cannot describe. On my way I saw men passing fast in automobiles; I felt myself reduced to such insignificance that I thought I was a useless existence crawling around.

I am afraid my letter is full of selfishness. Instead of giving you information I have described my difficulties. Pardon me. My heart was full of things which I had kept to myself. Now, in writing them to you, I feel relieved. Write me oftener. Your letters comfort me in my loneliness.

Yours as ever,

Impressions of a Newcomer.

164 W. 90th St.,
New York City, U. S. A.
Nov. 21, 1911.

Dear _____:

Of course you are expecting some information about America. In my previous letter I promised to write, and now I will tell you what I have observed in these three months.

Ես շատերէն աւելի բարեբաղդ էի այս տեղ եղբայր մը ունենալով, որ իրեն անկախ պզտիկ գործը ունի, ուստի և գործ գտնելու դժուարին խնդրին դէմ առ դէմ շատայ ինքզինքս: Եղբայրս չուզեց որ անմիջապէս փակուիմ խանութը, և թոյլ տուաւ որ բոլորտիքս դիտեմ և նոր միջավայրս ուսումնասիրեմ. ուստի ժամանակս անցուցի միշտ գրատուն և թատրոն երթալով, պատեկով, միւզիլմները այցելելով, ևն:

Նիւ Եօրքի ժողովուրդը աշխարհի ամենէն տարօրինակ մէկ խառնիճաղանճը կը ներկայացնէ, ճարպիկ, աշխոյժ, ժրաջան, տոկուն, և փութկոտ: Երբ երկիրն էի, Ամերիկան աշխարհագրապէս Թիւրքիոյ հակոտնեան կը կոչէինք. այդ իմաստով անշուշտ Թիւրքիան Ամերիկայի հակոտնեան պիտի կոչեմ: Բայց ինչ հակադրութիւն երկու հակոտնեաներու միջև: Մեր երկիրը ամէն բան դանդաղ կ'ընթանայ՝ եււաւ եււաւ թրքական սկզբունքին համաձայն. իսկ այս տեղ ամէն բան արագ, Ամերիկեան «աճապարէ՛», hurry up նշանաբանով: Տեսնելու բան է՝ թէ ինչպէս ժողովուրդը կ'աճապարէ, կը վազէ, այր թէ կին, մեծ թէ պզտիկ: Փոխադրութեան միջոցները յարմարցուած են պահանջին. ելեկտրական կառքեր, օթօմօպիլներ, ևն. շարունակ կ'երթեկեն միշտ լեցուն: Ելեկտրական կառախումբերը բարձրէն, գետնի տակէն, Հըտսոն գետի ներքեւէն ահագին ժխորով կ'երթան կուգան շարունակ, և մարդիկ միշտ կը վազեն առաջին կառքը կամ թրէնը բռնելու: Սակայն ինչ ներգայնակութիւն և կարգապահութիւն այսօրան եռուզեռի մէջ. մարդ կը զարմանայ որ օրը

I am more fortunate than a great many others in having a brother here who has his own independent work, and therefore I did not have to face the hard problem of finding a job. My brother did not want me to shut myself up in the store at once, and allowed me to look around and study my new surroundings. Consequently I spent my time in going to the library and to the theaters, in visiting museums, etc.

The people of New York are the most extraordinary mixture in the world. They are smart, lively, studious, strenuous, and hustling. When I was at home we used to call America the antipode of Turkey from a geographical point of view; now, in the same sense, I must call Turkey the antipode. But what a contrast between the two antipodes! There everything goes slowly, in accordance with the Turkish motto of *Yavash yavash*. But here everything goes very fast, in compliance with the American slogan of **Hurry up**.

It is worth while seeing how people, men and women, old and young, hurry and even run. The means of transportation are adjusted to the demand of haste: electric cars, trains, automobiles, etc., run full of people. The elevated trains run constantly, with awful noise, above the streets, in subways, in the tunnel under the Hudson River, and yet people always run to catch the first car or the first train. But what wonderful order in this hurly-burly! It is surprising that

Հարիւրաւորներ չեն կ'ոխկոտուիր ոտքի տակ, կամ չեն ճգմուիր կառքերու տակ: Հըտսըն գետի տակէն—որ Ատլանտեանի բերանը ըլլալով խիստ լայն է—ելեկտրական կառախումբեր, իսկ գետի վրայէն շոգենաւեր կ'երթեկեն: Ամէն տեղ, թէ՛ թիւնէլի կառախումբեր և թէ՛ նաւեր լեցուն են միշտ երթեկողներով: Անդին՝ Իսթ (Արևելեան) գետին վրայ, նոր դարու հրաշակերտներէն չորս առկախեալ կամուրջներ կան՝ որ Պրուքլինը Նիւ Եօրքի հետ կը կապեն, անոնց վրայէն կ'անցնին, երկու ուղղութեամբ ալ, ելեկտրական թրէններ, ելեկտրական կառքեր, սովորական կառքեր, օթօմօպիլներ հետիոտն անցորդներ, ևն. իսկ գետին վրայէն ֆէրը՛ նաւերը միշտ իրար կը խաչաձևեն, և միշտ ալ ժողովուրդով լեցուն: Ուսկի՛ց կուգան այսչափ բազմութիւն և ուր կ'երթան: Առաւօտները և իրիկունները մանաւանդ, երբ մարդիկ գործի կ'երթան կամ գործէ կը վերադառնան, եռուզեռ, վազվզուքները աննկարագրելի են: Մենք կ'ըսենք՝ աճապարողը շուտ չի հասնիր, բայց մեր դանդաղութեամբ երբեք չենք հասնիր: Ամերիկացին կ'ըսէ՝ աճապարէ՛, և շուտ կը հասնի: Ամերիկացին բաւականացած չէ աճապարէ ըսելով, այլ անոր հետ մեկտեղ շուտ հասնելու գաղտնիքը գտած ապահով կը գործադրէ:

Հիմա պիտի հարցնես թէ ո՞վ է Ամերիկացին. Եանքի՞ն, Անգլիացի՞ն, Հրեա՞ն, Գերմանացի՞ն, Իտալացի՞ն թէ՛ Իրլանտացի՞ն: Հարցումը բաւական կնճռոտ է: Եթէ՛ Նիւ Եօրքի ազգաբնակչութիւնը կազմող գանազան տարրերու թիւը քննենք՝ խիստ հետաքրքիր պատկեր մը կը տեսնենք: Կա-

hundreds of people are not trampled every day under the feet of the travelling crowd or smashed under the wheels of the cars. Beside the trains in the tunnel under the Hudson—which, being so near the ocean, is very wide—steamships or ferryboats cross the water all the time. Everywhere both in the tunnel and above the water passengers are crowded. On the other side, over the East River, four huge suspension bridges join Brooklyn with New York. Electric trains, cars, automobiles, etc., always full of people, cross these bridges in both directions, and ferryboats are likewise in activity. Where do these people come from and where do they go? Especially in the morning and in the evening, when people go to or come from work, the rush is indescribable.

We are taught that those who hurry do not arrive quickly, but we never arrive by our slowness, while the American is taught to hurry, and he arrives quickly. The American has not been satisfied by saying, "Hurry up;" he has found the secrets of quick arriving, and he uses them safely.

Now, you will ask me, Who is the American? Is he the Yankee? The Englishman? The Jew? The German? The Irishman? Or the Italian? The question is not so simple. If we examine the respective numbers of the different elements composing the population of the city of New York we shall find interesting figures. It is not

րեւի չէ ստուգել թէ նիւ Եօրքի մօտ հինգ միլիոն ժողովուրդէն որչափը յեղափոխական սերունդի յաջորդներն են, որոնք իսկապէս պէտք է նկատուին ամերիկացիներ: Կան մօտաւորապէս մէկ միլիօն հրեաներ, երկու հարիւր հազար սպանիացիներ, թերևս նոյնքան իտալացիներ և Ֆրանսացիներ, հարիւր հազարներով իրլանտացիներ, անգլիացիներ, գերմաններ, Սքանտինաւեան ժողովուրդներ, ռուսեր, լեհեր, սուրիացիներ, նոյն իսկ հազարաւոր չինացիներ—որոնք ամերիկացի չեն կրնար ըլլալ—, պատկառելի թիւով սեւամորթեր, ևն., ևն: Հայերու թիւը բաղդատմամբ միւս տարրերու շատ աննշան է, այսու հանդերձ հինգ հազարէ աւելի է: Բոլոր այս զանազան տարրերէն ամերիկացի են ամէն անոնք որոնք քաղաքացի են, մանաւանդ այն քաղաքացիները՝ որոնք այս երկրին մէջ ծնած են: Տեսականօրէն գոնէ Ամերիկայի հողին վրայ ծնած հրեան, իտալացին, գերմանը, հայը ևն. զանազանութիւն չունի յեղափոխական սերունդի յաջորդներէն, որոնք սակայն արդար հպարտութիւն մը իրենց կը վերապահեն, և կը ներկայացնեն եթէ ոչ տիրող՝ գէթ առաջնորդող տարրը:

Ինչ ալ ըլլայ, Անգլիոյ ճնշող իշխանութեան դէմ ըմբոստացող փիւրիթըններ և նիւ Եօրք քաղաքի հիմնադիր հոլանտացիներ, որոնք ձուլուեցան ամերիկեանութեան մէջ, սկսած են նոր կեանք մը այս նոր աշխարհին մէջ, որուն համակերպած են բոլոր նորեկներ: Ուրեմն, ամերիկեանութիւնը արիւնի խնդիր ըլլալէ աւելի որդեգրութեան կամ յարմարեցումի խնդիր մըն է: Ամերիկացի ըսելով

possible to ascertain what proportion of nearly five million inhabitants of New York are descendants of the Revolutionary generation, which proportion should be considered the real Americans. There are about one million Jews, two hundred thousand Spaniards, and perhaps as many Italian and French people, the rest are Irish, English, Germans, Scandinavians, Russians, Poles, Syrians, and even several thousand Chinese (who cannot be Americans), a considerable number of negroes, etc. The number of Armenians is very small compared with other elements and yet there are at least five thousand of them.

Of all these elements Americans are those who are citizens; especially those citizens who were born in this country. In theory, at least, the Jew, Italian, German, Armenian, etc., who is born on the soil of the United States is equally an American with the descendants of the Revolutionary generation: but the latter preserve for themselves a just pride and represent, if not the ruling, at least the leading element.

At any rate, the Puritans who resisted English rule and the Dutch who first inhabited New York were assimilated into Americanism. These started a new life in this new world to which all newcomers have adapted themselves. Therefore, Americanism is a matter of adaptation, rather than a question of blood. By the word Ameri-

չենք կրնար հասկնալ որոշ ցեղ մը, ինչպէս պիտի հասկնայինք հայ, յոյն, պուլկար, ևն. ըսելով: Հին աշխարհէն նոր աշխարհ թափուող հոսանքը հիանալիօրէն կը ներդաշնակէ ինքզինքը տիրող պայմաններուն հետ, և երկրին քաղաքական ըսկզբունքը և քաղաքակրթութեան ուժը շուտով կ'որդեգրեն զայն: Առաջին եկող սերունդը բնականօրէն պայքարի աննպաստ կացութեան մէջ կը գտնուի, բայց իր զաւակները տեղացիի առաւելութիւնները կը վայելեն:

Այս տեղ չեմ կրնար կանգ առնել դասակարգային կռիւի խորունկ վերլուծումին վրայ, որ իր էութեամբը նոյնն է ինչ որ է ուրիշ երկիրներու մէջ: Միայն կ'ուզեմ մատնանշել ժողովուրդ մը, աշխատող և աշխատցնող, որ՝ հակառակ իր տարօրինակ խառնուրդին՝ նախկին գաղթականներու լեզուն որդեգրած և արտադրած է այնպիսի հրաշակերտներ որոնք դժուար է տեսնել ուրիշ երկիրներու մէջ: Այս հրաշագործութիւնները կատարուած են աշխատցնող դասակարգի խորամիտ վարչագիտութեամբ և թաքթիքով, իսկ աշխատող դասակարգի միտքով և մեքենայի պէս գործող բազուկով: Աշխատցնող տարրը գործի դրած է մարդոց թէ միտքը և թէ բազուկը, և մարդ չկրնար չապշիլ անոր արդիւնքին վրայ:

Նիւ Եօրք քաղաքը երկու գետերու — Հըտսոն և Իսթ — միջև ամփոփուած և մէկ կողմէն ալ Ատլանտեանով սահմանուած ըլլալով՝ տարածուելու միայն մէկ ուղղութիւն ունի, և մղոններով կը տարածուի այդ ուղղութեամբ. ասոր հետ մէկտեղ դիրքը իր դերին մեծութեան քաղդաստ-

cans we cannot conceive of a nation of a single race or tribe, as we do by the words Greek, Bulgarian, Armenian, etc.

The stream of emigrants that pours into the new world harmonizes itself wonderfully with prevailing conditions; and the political principles of the country and its power of civilization adopt them into Americanism. Naturally the newcomers are in unfavorable conditions, but their children enjoy the advantages of the native.

I do not want to stop here to analyze the class struggle, which is the same in its essence as in other countries; but I want to point out that a people, employers and employees, in spite of the extraordinary mixture, have adopted the language of the first emigrants and have produced wonders which hardly can be seen in other countries. Great wonderworks are accomplished by the administrative power and tact of the employers, and by the skill and quick-working hands of the laborers. The employers have put to work the brains and the hands of different classes of working people and one cannot help admiring the result.

The City of New York, being situated between two rivers, the East and the Hudson Rivers, and being bounded on another side by the Atlantic Ocean, has only one direction in which to grow, and it extends for miles in that one direction: and yet its area is too small for its greatness. And

մամբ շատ պզտիկ է, այնպէս որ հողը շատ նեղ կուգայ: Եւ որովհետեւ գետնին վրայ տեղ չկայ՝ մարդիկ որոշած են երկինքը աշխարհակալել: ու շէնքերը, մանաւանդ սոււտրական շէնքերը, հօթէլները, երկինք կը բարձրանան 15, 20, 30 և աւելի յարկերով: Մարդ հազիւ թէ կրնայ անոնց յարկերը համրել: Բարձր շէնքերը մեծութիւն, երբեմն հրէշային մեծութիւն ունին, բայց ոչ գեղարուեստ: Պատուհաններով ծածկուած վիթխարի պատեր կը տեսնես ամէն կողմ. և եթէ անոնց գազաթէն վար նայիս՝ մարդկային բազմութիւնը վխտացող մրջիւններու տպաւորութիւնը կը թողու վրադ: Այդպիսի հսկայ շէնքերու քով տասն յարկանի ապարանքները գաճաճներ կ'երևնան. և այդ իսկ պատճառով Նիւ Եօրքի ընդհանուր փանորաման շատ խառնակ և աններդաշնակ է: Շէնքերուն մէջ տիրող մաքրութիւնը հրաշալի է: Յատակը մարմարիոն, սանդուխները, պատերը մարմարիոն կամ ճենապակի: Այդպիսի շէնքերու վերի յարկերը ելնել՝ գործի համար՝ սանդուխներով թէ չափազանց յոգնեցուցիչ պիտի ըլլար և թէ այսպէս աճապարոզ երկրի մը մէջ ժամանակի մեծ կորուստ: Սանդուխները կարծես գեղեցկութեան համար դրուած են աւելի. որովհետեւ մարդ հազիւ թէ պէտք ունենայ զանոնք գործածելու: Ելարանները գիշեր ցորեկ կը բանին, և մէկ վայրկեանէն մինչև գազաթը կը հանեն քեզ:

Այս ամէնուն մէջ գեղարուեստի հրաշակերտներ չէ որ կը պակսին: Գրադարանը, թատրոնները, երկաթուղիի կայարանները, միւզիքմը, ևն, ևն. մէյ մէկ գլուխ-գործոցներ են:

because there is no room on the ground men have decided to conquer the heavens. The buildings, especially commercial buildings and hotels, rise into the firmament fifteen, twenty, thirty stories. One can hardly count them. Most of the high buildings have gigantic greatness but not art. Everywhere you see huge walls covered with windows, and if you look down from the top windows the human multitude below will give the impression of swarming ants. A ten story building appears a dwarf in the presence of twenty or more story buildings, and for this very reason the general panorama of New York looks very confused and unharmonious.

A thorough cleanliness prevails in those big buildings. The basements, floors, staircases, and walls are either of marble or of tile. To climb up the flights for business would be very tiresome and a waste of time. The staircases are made for decoration rather than for use. The elevators run day and night and, in a minute, they can take you to the top.

Masterpieces of art are not wanting. The Public Library, the theaters, railroad stations, and museums are splendid specimens of architecture.

Ահա այսպիսի աշխարհի մը մէջ է որ նոր կեանք մը կ'սկսիմ: Ինծի պիտի վիճակուի՞ որոշ դիրք մը գրաւել այս կարգապահ Բաբելոնի մէջ: Չեմ գիտեր, բայց պիտի աշխատիմ: Ահաւասիկ քեզի երկար նամակ մը: Գրելով կարելի չէ բացատրել ամէն բան. ուրիշ նամակներու մէջ դարձեալ կը հաղորդեմ նոր տեղեկութիւններ կամ մանրամասնութիւններ: Գրէ ինծի յաճախ և երկար:

Քուկդ,

ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԱՄԵՐԻԿԱ ԳԱԼՈՒ ԲԱՂՁԱՆՔ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Սիրելի....

Նամակդ անհամբերութեամբ կսպասէի որ վերջապէս հասաւ ու մեծ ուրախութիւն տուաւ ինծի: Մէկ շնչով կարդացի այդ ամէնը, և քանի անգամներ ալ կրկնեցի ընթերցումը: Անիկա շատ բաներ ըսաւ ինծի և միտքս ողողեց զանազան խորհրդածութիւններով: Չգացումներս չեմ կրնար զսպել և պէտք է բացատրեմ քեզ:

Եղբայր, կ'արժէ՞ այս չոր երկրին երկար կպած մնալ. երկիր մը՝ ուր ոչ մէկ ազատութիւն կայ, ոչ մէկ հանգիստ, ոչ մէկ ապահովութիւն, և ոչ մէկ հեռանկար: Ամէն բանի հետ տնտեսական վիճակն ալ քայքայուած է: Երկու ոսկի ամսականով մարդ ի՞նչ ապագայ կրնայ պատրաստել: Ես ալ կը բաղձամ այդ ազատութեան և մեծագործութեան երկրի օդը շնչել, ապրիլ ու տեսնել բոլոր իր հրաշագործութիւնները, և ատով աւելցնել այն խեղճ դաստիարակութիւնը որ մեր դպ-

It is in such a world that I begin a new life. Shall I be able to secure ground in this orderly Babylon? I don't know. But I will try. Here is a long letter for you. It is not possible to describe everything. I may write in the future some new details and give further information. Write oftener and long letters to

Your friend as ever,

The Answer.

Showing a Desire to Come to America.

Dear _____:

I was looking impatiently for a letter from you. But it came at last and gave me great pleasure. I read it almost in a breath, and reread it several times. It stimulated me greatly, and filled my mind with many thoughts. I can no longer restrain myself. I must tell you what I think and feel.

Is it worth while to stay in this dreary country where there is no liberty, no peace, no security and no prospect? Moreover, the financial situation is growing worse. What can a fellow do with a salary of two pounds a month? I myself desire to breathe the air of that land of liberty and progress. I want to see all its wonderworks, and in that way improve the poor education that our

րոցը տուած է ինծի: Անշուշտ գեղեցիկ երազ մըն է նաև այնտեղ Համալսարանական կրթութիւն մըն ալ առնել. բայց եթէ հոն ըլլամ ու անկարող այդպիսի կեանքի մը առանձնաշնորհումը վայելել, երկրին միջավայրը և միջնոլորտը բաւական են ուսանելու բուռն բաղձանքով լի և աշխատելու յօժար մէկուն աւանդելու լայն պաշարներ:

Հայրենասիրութեան պակասը չէ որ այս բաղձանքը կուտայ ինծի: Երբեք մտադրութիւն չունիմ մեր երկրէն ընդ միշտ հեռանալու: Կուզեմ Հայրենիքէս ատեն մը հեռանալ զայն աւելի սիրելու: Որովհետև Հայրենիքը ի՞նչ կրնայ ակնկալել ինձմէ, երբ խանութպանի մը տոմարը բռնելէ զատ ուրիշ ոչ մէկ ծառայութիւն կրնամ ընել:

Բայց ի՞նչ ընել և ինչով երթալ: Այսպէս եթէ տասը տարի ալ աշխատիմ ճամբու ծախք մը չեմ կրնար պատրաստել: Կը փորձուիմ քենէ խնդրելու որ ինծի՝ իբրև պարտք՝ հարկ եղած գումարը և ուղևորութեան անհրաժեշտ ծանօթութիւնները աւանդէիր. բայց գիտեմ որ դուն ալ դեռ նոր ես այդտեղ և իվիճակի չես: Ի՞նչ կ'ըսես, ի՞նչ խորհուրդ կուտաս ինծի: Իմ Ամերիկա գալուս կարելիութիւն կայ: Կը վախնամ այս նամակս քեզ մտահոգ պիտի ընէ: Առ այժմ ճիշտ քու կարծիքդ կ'ուզեմ, ուրի ոչինչ: Գրէ ինծի շուտով և երկար: Ես ոչ մէկ լուր, ոչ մէկ նորութիւն ունիմ տալու. ամէն բան սովորական տափակութեամբ կ'երթայ:

Քուկդ

school gave me. Of course, it is also a pleasant dream to think of obtaining a college education. If I were there and unable to enjoy the privileges of college life I should think the environment and the very atmosphere of the country would be enough to supply considerable knowledge to those who have an earnest desire to learn.

My desire to leave the country is not due to lack of patriotism. I have no intention to leave our land for ever. I want to be absent for some time in order to grow in love of the fatherland. Because what service can our country expect from me when I am nothing but a bookkeeper of a small dealer?

But what to do and how to go I do not know. Even if I work ten years, with my present earnings I cannot save enough for the expenses of the journey. I am tempted to ask you to give me the necessary sum as a loan; but I know that you are new there and not in condition to comply with my request. What do you say? What is your advice? Is there any possibility of my coming to America? I am afraid my letter will give you worry. At present I want your opinion and nothing else. Write me soon and long! I have no news, nothing of interest to give you. Life moves along with its usual uneventfulness.

Yours truly,

Յուսատեղոյ Պատասխան մը

Սիրեւի

Նամակդ ստացայ ուրախութեամբ . բայց կարդալով մի քիչ տրամեցայ : Ես կ'ակնկալէի որ ինծի երջանիկ տողեր գրէիր և հաղորդակից ընէիր զիս այն զուարթ տրամադրութեան որ քեզի յատուկ է : Արդեօք իմ նամակս կը պարունակէր այնպիսի զգացումներ որ բարձր առաւելութիւն վայելող մարդու հպարտութիւնը մատնանշէին : Արդեօք իմ նամակս արթնցուց վիճակիդ մասին այն տգողութիւնը :

Քեզ չեմ մեղադրեր այստեղ գալու փափաք յայտնելուդ : Քանի որ ես այստեղ եմ չեմ կրնար քեզ յորդորել անպատճառ երկիր մնալ՝ գաղթականութեամբ երկիրը չպարպելու համար : Երբ ես հարկ եղած դիրքը ձեռք անցնեմ և վերադառնամ հայրենիք, այն ատեն իրաւունք պիտի ունենամ գաղթականութեան դէմ խօսելու :

Ես իսկապէս գաղթականութեան դէմ եմ, մանաւանդ խեղճ հայ գործաւորներու կեանքը տեսնելէ ետքը : Ինչպէս նախորդ նամակիս մէջ գրեցի, ես բարեբաղդ էի այդ կեանքի մէջ չիյնալուս, շնորհիւ իմ եղբօրս : Թէև աննպատակ կը գտնեմ հայերու Ամերիկա գալը, միևնոյն ատեն չեմ ուզեր խափանել իտէալի մը հետապնդողը : Թերևս օր մը մեր երկիրը շատ օգտուի այդպիսի երիտասարդներուն վերադարձով :

Քանի որ այնքան տգող ես երկրի կացութենէն և քեզ տուայտող իտէալներ ունիս, որոնց ազատօրէն հետամտիլ կը յուսաս այստեղ գալով, ես

An Encouraging Reply.

Dear _____:

I was glad to receive your letter but I felt rather sorry when I read it. I expected you would write cheerful lines and communicate to me that jolly disposition which is yours. I wonder if my letter contained such sentiments as to indicate the pride of a man enjoying unusual advantages. Did my letter arouse in you that dissatisfaction with your condition?

I don't blame you for your desire to come here. As long as I am here I have no right to exhort you to stay at home in order not to vacate our country by emigration. When I return home myself, then I shall be justified in speaking against emigration.

In fact, I am against emigration, especially after seeing the life of poor Armenian workingmen. As I wrote you in my previous letter, I am very lucky in being exempt from such a life, thanks to my brother. Although I think it is useless for many Armenians to come to this country, I would not hinder a man who has some ideals to pursue. Some day our country may gain a great deal by the return of such young men.

Since you are so much dissatisfied with the conditions at home and have cherished ideals, which you hope to pursue freely if you come to this country, I agree that you should come and

Համաձայն եմ սր գաս և փորձես . բայց ճիշտ Հիմա քեզ օգնելու կարող վիճակի մէջ չեմ : Եղբայրս սկսաւ ինծի շաբաթական տասներկու տօլար վճարել՝ իրեն օգնելու : Իրեն Հետ ապրելով ծախքերս շատ չեն , երկիր մնացողներուն ալ ինք կ'օգնէ , այնպէս որ շաբաթը առ նուազն վեց տօլար կրնամ խնայել : Մօտ \$150ի պէտք պիտի ունենաս . ես այդ գումարը կրնամ վեց ամիսէն պատրաստել , թերևս քիչ ատենէն ուրիշ պատեհութիւններ ալ ունենամ կամ պարտք ընեմ քեզի օգնելու : Հիմա արդէն ձմեռն Հասած է . մինչև ես իվիճակի ըլլամ քեզի օգնելու ամառը կուգայ՝ որ ճամբորդութեան ամենէն Հաճելի եղանակն է :

Ուրեմն, սիրելիս, քաջութիւնդ մի՛ կորսնցնէր : Դուն ալ քու բաժինդ կ'ունենաս այս կեանքէն , և թերևս գլուխ գլխի տալով բան մը ընենք Հոս : Հիմակուրէն սկսէ պատրաստութիւններ տեսնել և մի մոռնար ինծի ուրախ զուարթ նամակներ գրել :

Այս անգամ տեղեկութիւններ չպիտի կրնամ տալ , բայց կը խոստանամ մէկ երկու շաբաթէն գրել ու կարգ մը տեսածներս պատմել :

Ուրեմն ցտեսութիւն :

Քուկդ անկեղծօրէն ,

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սիրելի . . .

Չեմ կրնար բացատրել որչա՛փ երջանկութիւն բերաւ ինծի նամակդ : Կը ցաւիմ որ նախորդ նամակս մի քիչ տխուր տպաւորութեան տակ գրած եմ , որ երբեք չէի ուզեր : Այդ բանը դարմանելու

ARMENO-AMERICAN LETTER WRITER 57

try. But just now I am not in a position to help you. My brother has begun to pay me twelve dollars a week for my services. Living with him, my expenses are little, and as I do not help the folks at home, I can save at least six dollars a week. You will need about \$150. I can make that sum ready in six months. I may soon have other chances to earn or I may borrow a little to help you. Now it is winter. By the time I am able to help you it will be summer, which is the most pleasant season for travel.

Now, dear fellow, don't lose your courage. You shall have your share of this life, and we may do something by working together. Begin your preparations now, and don't forget to write me cheerful letters.

At present I cannot give you any new information, but I promise to do so within a couple of weeks. Now I close, saying good-bye.

Yours very truly,

The Answer.

Dear _____:

I can't describe what happiness your letter brought me. I am sorry that I wrote my previous letter under the influence of troubled thoughts, which I never meant to do.

Համար ահա զուարթ նամակ մը կը գրեմ: Այն խոստումը որ ինձի կ'ընես կը փարատէ տարտամ կեանքի բոլոր ամպերը և նոր հորիզոն մը կը բանայ իմ առջև: Ե՛ս Ամերիկա գա՛մ. երազ մը կը թուի ինձ. և հազիւ կրնամ ինքզինքիս հաւատալ: Բայց ոչ, նամակդ հոս է, գիրը՝ քու գիրդ. կը կարդամ կրկին և կրկին: Քիչ ատենէն ես ալ Ատլանտեանի ալիքներու վրայէն պիտի անցնիմ և դամ քեզի հետ նոր երկիրը տեսնելու:

Բառ չեմ կրնար գտնել այս ազնուութեանդ համար իմ շնորհակալութիւնս յայտնելու. սաչափ միայն ըսեմ որ եթէ դամ և յաջողութիւն գտնեմ, այդ քեզի պարտական պիտի ըլլամ. իսկ եթէ չի յաջողիմ, ոչինչ կորսնցուցած պիտի ըլլամ. այդ պարագային քաղաքակիրթ երկրի մը մէջ ապրելու ինքնաբաւականացու մը պիտի ստանամ:

Նամակդ հօրս և մօրս կարդացի: Հայրս քիչ մը մտածելէ ետք հաւանեցաւ. մօրս աչքերը արցունքով լեցուեցան, բայց երբ հայրս իր հաւանութիւնը տուաւ, ինքն ալ աւելցուց թէ չուզեր ինձի խոչնդոտ ըլլալ:

Երջանկութենէս աւելի երկար չեմ կրնար գրել. անհամբեր կ'սպասեմ խոստացած նամակիդ: Նամակս գոցելէ առաջ կը պարեմ, կը ցատկեմ ուրախութեամբ, և՛ իբրև հաւաստիքը իմ երջանկութեան՝ քեզի կ'իմացնեմ:

Միշտ քուկդ՝

ARMENO-AMERICAN LETTER WRITER 59

Your promise dispels the gloomy clouds of an uncertain life and opens a new horizon before me. I shall come to America! It seems to me a dream, and I can hardly believe myself. But here is your letter, your own autograph letter; I read it again and again. Then, by and by, I shall cross the waves of the Atlantic, and I shall see the new world with you.

I can find no words to thank you for your kindness. I'll tell you this, that if I come and succeed I shall owe it to you. If I don't succeed, I shall have lost nothing, and shall have the satisfaction of living in a highly civilized country.

I read your letter to my father and mother. My father, after a thoughtful silence, consented, while mother's eyes filled with tears. But when father assented she said that she would not be an obstacle in my way.

I am so happy that I cannot write any longer. I shall be waiting impatiently for your promised letter. Before ending my letter I dance, I jump with joy, and, as an assurance of my happiness, I write to you of these acrobatic performances.

Yours very truly,

Բարեկամին Դրամ կը Ղրկէ

Սիրելի....

Ձմեռը արդէն անցած է: Փոթորիկներու և անձրևներու յաջորդեցին պայծառ և երկար օրեր: Ձմեռ ատեն արևու լոյսին կարօտը կը քաշէի, որովհետև դրեթէ արև չծագած գործի կ'երթայի և իրիկուան մութին կը վերադառնայի: Հիմա առաւօտեան զուարթ լոյսը կը վայելեմ՝ խանութ երթալէ առաջ. և իրիկունները երբեմն մթնելէ առաջ ծովեզերք կ'երթամ:

Քեզի խոստացած էի այս տեղ գալու պէտք եղած ճամբու ծախքը ղրկել, և ահա այսօր երջանիկ վիճակի մէջ եմ այդ խոստումս կատարելու: Աւելի նախանձախնդիր ըլլալով նամակիս ժամ առաջ հասնելուն՝ չպիտի փորձեմ երկար նամակ դրելով փօթի օրը կորսնցնել: Ուրեմն նամակիս մէջ կը գտնես փոխ-գիր մը քառասուն անգլիական ոսկիի որ լիուլի կը բաւէ հանգիստ և երկրորդ կարգով ճամբորդելու: Երբ նիւ Եօրք հասնիս, պէտք եղած կարգադրութիւնը կ'ընենք քեզ դուրս հանելու: Ճամբան ուր որ ելնես, քարտով մը իմացուր: Մարսէյլ գալու հարկ եղած կարգադրութիւնը ընել այն տեղ դիւրին է: Իսկ Մարսէյլէն ասդին պէտք է զգոյշ ըլլալ: Երբ Մարսէյլ ելնես մաքուր պանդոկ մը գնա: Դժբազդաբար հայ պանդոկները այնքան նախանձելի մաքրութիւն մը ցոյց չեն տար: Անչուշտ ճամբայ ելնելէ առաջ աչքերդ քննել կուտաս՝ ապահով ըլլալու համար: Ես հայ գործակալներէն Պն. Ք.ին կը գրեմ որ քեզի համար հարկ եղածը ընէ:

Sending Money to His Friend.

Dear _____:

The winter has already gone. Sunny and long days have succeeded stormy and short days. In winter I longed for sunshine, because I had to go to my work before the sunrise and stay there until dark. Now I enjoy the cheerful morning light before I go to the shop, and in the evening I often go to the seashore before it gets dark.

I promised to send you money for your journey to America, and now I am happy in keeping my word. I am very anxious to send this letter to you, therefore I shall not lose time in attempting to write a long one. You will find enclosed a check for forty English pounds, which is more than enough for a comfortable trip in the second cabin. When you arrive at New York we shall take care of you. Wherever you land on your way drop a line to me. It is easy for you to arrange your trip for Marseilles. But you must be careful after that. At Marseilles go to a clean hotel. Unfortunately Armenian hotels have left a good deal to be desired. Of course you will have your eyes examined before you start to be sure that there is nothing wrong. I shall write to Mr. X., one of the Armenian agents, to help you in every way.

Այս պզտիկ գումարը քեզի կը Ղրկեմ ոչ թէ քեզ պարտքի տակ ձգելու, այլ ընկերական պզտիկ պարտականութիւն մը կատարելու: Ուստի երբեք մտահոգութիւնը մի ունենար պարտք ունեցած ըլլալու մասին: Ուէ ատեն որ իվիճակի ըլլաս առանց նեղուելու վճարելու, այն ատեն կը վճարես: Եթէ քու իտէալներուդ հասնիս, ես շատ աւելի վարձատրուած պիտի զգամ՝ քան քեզ անոնցմէ զրկուած տեսնելով դրամս ետ ստանամ:

Ուրեմն ցտեսութիւն, սիրելիս:

Քուկդ,

ԶԲՕՍԱՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Սիրելի...

Ամառուան տաք օրերը արդէն եկած են: Շաբաթ կէսօրերը դադար կ'առնենք, ուստի ես հիմա պատեհութիւն կ'ունենամ բոլորտիքս դիտել մի քիչ: Պօսթօն թէն ծովեզերեայ քաղաք է, բայց ամբողջ ձմեռ ծովի եզերք չտեսայ, կամ աւելի ճիշտը միջոց չունեցայ տեսնելու: Ճամբորդութեանս ատեն երբ մեծ ալեկոծութիւն տեղի ունենար կը փափաքէի դիտել տեսարանը, սակայն ծովախտը թոյլ չէր տար այն հպարտ զդացումը՝ որ մենք իրբև մարդ կը տածենք ականատես ըլլալով քաղաքակրթութեան յաղթանակներուն, որոնցմով մարդիկ կը հեզնեն նոյն իսկ ամեհի կոհակները:

Միտքս դրած էի ցամաք ելնելէ ետք փոթորիկի ատեն թաւալող ալիքներու վայրագ տեսարանը դիտել: Այդ մտադրութիւնս չկրցայ իրա-

In sending you this little sum I do not intend to make you my debtor. My purpose is to help you as I think it my duty to do. So don't worry about having a debt. Whenever you are able to pay it without vexation you may. If you succeed in your pursuit and fail to pay me this sum I shall feel more rewarded than to have you pay it back and see you deprived of your ideals.

Hoping to see you very soon, I am,

Yours,

A Letter About Amusement.

Dear _____:

The warm days of summer have already come. We stop work at Saturday noon, so I have a chance to look around. Boston is situated on the seashore, but all the winter I could not, rather, I had no chance to see the water. During my journey when there was a big storm I wanted very much to watch the waves of the ocean. However, seasickness would not permit me that proud feeling which we, as human beings, entertain at the sight of the victories of civilization which bridle even the huge billows.

I had determined that after arriving at my destination I would go to the ocean during a storm and watch the wild view of the rolling waves. I could not carry that plan into effect. Now,

գործել: Հիմա անոր փոխարէն, ամէն շաբաթ կէսօրէ վերջ և ամէն կիրակի, կը վայելեմ խաղաղ ովկիանոսի անսահման կապոյտը, ոչ միայն իբրև երազուն դիտող մը, այլ նաև իբրև զբօսասէր լուսորդ մը: Բիվլիր Պիչի մէջ նահանգային բաղնետուն մը կայ՝ որ լողանալու հազուստ և հանուելու խցիկ կը հայթայթէ: Այր թէ կին՝ իրենց յատուկ բաժինը կ'երթան, կը հադուին իրենց լողալու հազուստը և կուգան բաց ծովի մէջ: Տեսարանը շատ հետաքրքրական է մէկէ աւելի տեսակէտով. համեստութեան դէմ ոչ մէկ մեղանչանք:

Ես ալ իմ բաժինս կ'ունենամ այդ դեղեցիկ զբօսանքին մէջ: Ովկիանոսի մէջ լողա՞նք կառնեմ, բայց ինքզինքս կը կորսնցնեմ, ոչ թէ կապոյտ ջուրի անսահմանութեան մէջ, — որու ապահու-
թեան համար կառավարութիւնը ամէն հոգ տարած է, — այլ երկու սեռէ հազարաւոր լողցողներու ահագին բազմութեան մէջ: Ոչ մէկը կը ճանչնամ որպէսզի՝ իբրև ապրող էակ մը՝ գոնէ բացազան-
չութիւն մը ուղղեմ անոր և կուտակուած ու զսպուած զգացումներուս պզտիկ ելք մը տամ: Որչա՛փ կը փափաքիմ որ քովս ըլլայիր, մէկտեղ վայելէինք այս զուարճութիւնը, և կարենայինք արտայայտուիլ իրարու:

Ժամանակը ուշ է: Առ այժմ մնաս բարով:

Քուկդ միշտ,

instead, I enjoy, every Saturday afternoon and Sunday, the immense blue of the peaceful ocean, not only as a dreaming observer but also as a sporting swimmer. There is a State Bath House at Revere Beach, which provides bathing suits and cells in which to undress. Men and women go to their respective sections, put on their bathing suits and come into the open sea. The sight is very interesting for more than one reason. There is nothing against modesty. I myself have my share in that delightful amusement. I take a bath in the ocean! I lose myself, not in the immensity of the sea—for the safety of which the government has provided—but in a multitude of swimmers of both sexes. I know no one to address in order to give vent to my joyful feelings. How I wish you were here with me so that we could enjoy such sport together and express ourselves to each other!

Yours as ever,

Ամերիկայի Մասին Նոր Տեղեկութիւններ

Սիրելի . . .

Առաջ քեզի գրած էի թէ Ամերիկան սոսկալի նիւթապաշտ երկիր մըն է , ուր ամբողջ եռուզեռը , վազվուտուքը են . միայն մէկ նպատակ ունին , այն է ամենակարող սուլարներու թիւը բարդել : Ասիկա մեծ մասով ճշմարիտ է : Ամերիկայի ժողովուրդը դրամ վաստկելու ետեւէ է մեծ եռանդով , բայց այդ ժողովուրդը կեանքը վայելել ալ գիտէ , և գործի երթալ գալու վազվզուքէն զատ՝ միւսնոյն աշխուժութիւնը ցոյց կուտայ ուրիշ ուղղութեամբ ալ : Տեսնելու բան է թէ ինչպէս գեղեցիկ Հագուած օրիորդներ , կիներ , և երիտասարդներ կը լեցնեն թատրոնները՝ որոնք կիւսական մէյ մէկ աշխարհներ են իրենց ներքին դեղեցկութիւնով և մեծութիւնով : Այդ երևոյթը սովորական է :

Այս ժողովուրդը դրամէն աւելի պաշտող է նաև մարդկային Փիզիքական կարողութիւններու և միշտ սիրահար ողիմպիական , պէյսպօլ են . խաղերու : Օրաթերթերը ամէն օր երեսներ կը լեցնեն զանազան տեղեր կատարուած խաղերու նկարագրութեամբ : Երբ միջգօլէճական պէյսպօլի եղանակը բացուի , այլևս ոգևորութեան չափ ու սահման չկայ : Թերթ ծախող տղաները միշտ կը պոռան խաղի արդիւնքի մասին , որու մանրամասնութիւններով լեցուն են թերթերը :

Հարվըրտ Համալսարանը մեծ դաշտ մը ունի այդ կարգի խաղերուն Համար , և աշնան ու գարնան մէջ , ամէն Շաբաթ կէսօրէ ետք , մէկ կամ միւս գօլէճի ուսանողներուն հետ կը խաղան :

Information in Regard to American Ideals.

Dear _____:

I wrote you that America is an intensely materialistic country, where all the activities, rush, etc., have only one purpose, to increase the number of "almighty" dollars. This is true to a great extent. The American people pursue moneymaking with great zeal; but the same people also know how to enjoy life and show similar, even more animation in other directions than in hurrying to and from work. It is worth while seeing how prettily dressed misses and mistresses, and young men in their best attire fill the theaters of a city, theaters which are fairylands in splendor. It is an everyday affair.

Americans adore physical perfection in human beings more than wealth; they are very fond of Olympic, baseball and other games. The daily papers devote several pages to the description and account of games in various parts of the country. When the intercollegiate baseball season opens the popular enthusiasm and ardor pass all bounds. The newsboys always shout the results of the games to sell their papers, which are full of descriptions. You can hear everywhere "Baseball Extra!"

Harvard University has a large field dedicated to such games; and in the spring and fall the students play every Saturday afternoon with

Դաշտի մէջ մեծ ամփիթատրոն մը կայ՝ որ 40,000 հոգի կաննէ. երբեմն ամբողջովին կը լեցուի այն : Տարուան մէջ օր մը յատկացուած է Հարվըրտ և ԵՆԼ համալսարաններու ուսանողներու միջև կատարուած խաղին : Այդ օրը կարծես տօնի օր մըն է ամբողջ երկրին համար : Մասնաւոր կառախումբեր ժողովուրդը Պօսթօն կը թափեն Նիւ Եօրքէն և ուրիշ բազմաթիւ մեծ ու պզտիկ քաղաքներէն՝ խաղին ներկայ ըլլալու համար : Իւրաքանչիւր տոմսի գինը երկու տալէր է, բայց մեզի պէս մահկանացուները չեն կրնար գնել, որովհետև եթէ ամէն ուզողին ծախել հարկ ըլլար, դաշտի մէջ կենալիք տեղ չպիտի մնար : Ուսանողները միայն՝ չափաւոր թիւով կրնան գնել, իրենց աղքականներուն և բարեկամներուն տալու :

Հակառակ տոմսակ ստանալու դժուարութեան՝ երջանիկ ստացողներու աննման բազմութիւնը շարան շարան կ'երթան դէպի խաղի թատերավայրը. կ'երթան ելեկտրակառքերով, օթօմօպիլներով, ոտքով, և հեծանիւներով : Տեսնելու բան է բոլոր այդ մարդկային բազմութիւնը հոյակապ և շնորհալի հագուստներով : Ուսանողները թափորներ կը կազմեն երաժշտական խումբերով և կը պատին : Ոգևորութիւնը ուսանողներու մէջ շարաթներ առաջ կ'սկսի, և երբ խաղի օրը մօտենայ գիշերները թափօր կը կազմեն և անհամար ջահերով, զանազան տարազներով կը պատին փողօցներու մէջ, երգելով և զուարթ բացազանշութիւներով :

Ժողովուրդ մը որ բարոյական դաստիարակութեան հետ այնքան ուշադրութիւն կուտայ Քի-

athletes from other colleges. There is an amphitheater in the field which provides about 40,000 seats: sometimes it is full to its utmost capacity. One day in a year is reserved for a baseball game between Harvard and Yale. That day seems like a holiday for the whole country. Express and extra trains pour people—eager to see the game—into Boston from New York and many other cities. Each ticket is two dollars. But mortals like ourselves cannot buy them, because if they sold to everyone wishing to buy there would be no room in the field to stand. Students can buy only a limited number of tickets for their relatives and friends.

In spite of the difficulty of getting tickets an unusual multitude of happy ticket-holders go to the stadium in long rows of packed electric cars, automobiles, bicycles, etc. It is very interesting to see such a crowd of people in their best attire. Students march in parade, headed by a band of music. The excitement among the students begins weeks before, and as the day of the great game approaches they have parades in the evening with songs and cheers and a beautiful display of torches and colors.

Do not a people that pay so much attention to physical as well as moral education deserve

զիջական դաստիարակութեան հիացումի արժանի չէ՞: Որքա՞ն միօրինակ և տխուր է մեր դպրոցական կեանքը, և որքա՞ն վառվռուն ու երջանիկ ասոնցը:

Միշտ քուկդ,

ԶՈՒԱՐԹԱԳԻՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Սիրելի....

Երանի թէ քովս ըլլայիր ու կուշտ ու կուռ խօսէինք եւ խնդայինք: Քանի մը տարի առաջ կօշիկներդ հագնելուդ պէս կը վազէիր քովս, հիմա ինչո՞ւ ատանկ փորձ մը չես ըներ: Պիտի ըսես թէ շատ հեռու է եւ մէջտեղ ջուր կայ: Այդ մասին իրլանտացիի մը պատմութիւնը ընեմ քեզ, կրնաս միջոց մը սորվիլ: Այդ իրլանտացին իր հայրենի երկիրը միշտ կ'աշխատէր բայց չէր կրնար ծայրը ծայրին բերել, եւ անդին միշտ կը լսէր որ Ամերիկա ոսկի կը բուսնի փողոցներու մէջ եւ ծառերուն վրայ: Այդ բանը այնչափ կը կրկնուի որ վերջապէս կը հաւատայ եւ կը վճռէ երթալ այդ ոսկիի երկիրը: Ամէն ունեցածը կը ծախէ, ճամբու ծախք մը կը հանէ և առաջին նաւը առնելով կ'ելնէ Նիւ Եօրք: Անոք և անդրամ երբ ինքզինքը այս նոր աշխարհի մէջ կը գտնէ, բոլորովին յուսախաբ կ'ըլլայ. ոչ փողոցներու մէջ ոսկի կը տեսնէ, ոչ ալ ծառերու վրայ: Տրտում տխուր գլուխը կախած. ովկիանոսի անվերջ ալիքները կը դիտէ. յանկարծ իր աչքին առջև սուզակ մը ջուրին մակերեսը կ'ելլէ: Դժբաղդ միամիտը ինքզինք յանդիմանելով կ'ըսէ. «Որչա՛փ յիմար

admiration? How monotonous and unattractive our school life is and how lively and happy that of Americans!

Yours sincerely,

A Humorous Letter.

Dear ————:

I wish you were with me and that we could have happy talks and laughs together. Ten years ago you would run to me as soon as you put your shoes on. Why don't you do it now? You may say that it is too far and there is water between. Let me tell you an Irish story which may give you a hint.

An Irishman, who was always working hard at his old home and yet could not make both ends meet, constantly heard that in America gold grew in the streets and on the trees. He heard it repeated so often that he finally believed it and decided to go to that land of gold. He sold everything he had, procured the money for the journey, and, boarding the first steamship, soon arrived at New York. When he found himself in this new world without friends and money he became very much disheartened. He saw gold neither in the streets nor on the trees. Sad and gloomy he stood on the beach hanging his head down and gazing over the endless waves. Presently a diver emerging from the water attracted his attention. The poor simple-minded man began to scold himself and exclaimed: "How

եղած եմ ես . եթէ գիտնայի թէ ծովին տակէն գալ հնար էր , դրամս այդպէս չէի վատներ նաւառնելով :

Հիմա դուն ալ մէկ շնչով կրնաս Մարսէյլ ելնել . անկէ մինչև Հավր ցամաք է . իսկ երբ Հավրէն սուղիս , նիւ Եօրքի առջեւ կանգնած ազատութեան դիցուհիին ջահը ճամբադ կը լուսաւորէ . ուղղակի եկուր այդ լոյսին : Ծովին եզերքը հագուստներդ չորցնելէ ետք , եկուր ուղղակի 50րդ փողոցը , ուր պիտի գտնես զիս ինչպէս միշտ

Քուկդ ,

ՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ

Սիրելի

Շարժական պատկերներու թատրոնները Ամերիկայի կարեւոր զբօսավայրերը դարձած են : Ժամանակի և նիւթականի տեսակէտէն աժան ժամանց մը հայթայթելով ահագին ժողովրդականութիւն գտած են անոնք : Յաճախ ինչ որ լաւ թատրոն մը յիսուն սէնթով կամ տալէրով մը եւ երկու երեք ժամուան վատնումով կուտայ , շարժական պատկերներու թատրոնը տասը սէնթով կուտայ կէս ժամուան մէջ : Աժանութիւնը անպայման կերպով տգեղութիւններու դուռ կը բանայ : Այդ կարգի թատրոններէն շատեր անիմաստ բաներով կ'զբաղեցնեն իրենց փոքրիկները եւ կը մեռցնեն անոնց ճաշակն ու լաւագոյն ձգտումները . բայց կան նաեւ այնպիսիներ՝ որոնք իսկապէս շինիչ տեսարաններ կը հայթայթեն : Իբրեւ օրինակ կը յիշեմ Դամօնի և Փիթիասի պատմութիւնը՝ որուն

foolish I was! If I had only known that it was possible to walk under the water I would not have spent my money to take a steamship."

Now, you may take your first breath at **Marseilles**: after that as far as **Havre** it is land. You may dive at **Havre**. The Goddess of Liberty in **New York** harbor will light your way with her torch; come to the light. After drying your clothes at the beach, come directly to **50th Street**, where you will find me.

Yours as ever,

Information About Moving Picture Shows.

Dear _____:

Moving picture theaters have become important resorts for amusement. Providing an inexpensive pastime—inexpensive in point of view both of time and money—they have found great popularity. Often what a theater of high standing gives at the cost of a dollar or more and two or three hours of time, a moving picture theater gives for ten cents and in half an hour. Cheapness usually brings unpleasant consequences. Most of such theaters amuse their patrons by nonsensical shows and destroy among them good taste and higher tendencies; but there are those which provide really edifying pictures. For example, let me mention the story of **Damon and Pythias**, the representation of which I saw

ներկայացումը տեսայ անցեալ օր շարժական պատկերի թատրոններէն մէկուն մէջ :

Դիոնէսիոս Սիրակուսի բռնաւոր թագաւորն էր : Կաշառակեր ծերակոյտի մը հմայքը շահած կը տիրէր երկրին վրայ՝ բոլորովին անպատասխանատու : Փիթիաս ծերակոյտի մէջ միակ պարկեշտ մարդն էր՝ որ յայտնապէս դէմ էր բռնաւորին : Այս վերջինը ձերբակալել տուաւ զայն և մահուան դատապարտեց :

Փիթիաս մեռնելէ առաջ կը փափաքէր իր պզտիկ զաւակը եւ գեղեցիկ կինը տեսնել ու իր գործերը կարգադրել : Իր բարեկամը Դամօն յօժարեցաւ՝ իրրեւ երաշխաւոր՝ բանտ երթալ մինչև որոշ օր մը, երբ Փիթիաս պիտի վերադառնար իր մահուան պատիժը կրելու, հակառակ պարագային բարեկամը իր գլուխը պիտի կորսնցնէր :

Փիթիաս զնաց իր տունը եւ հրածեշտ տուաւ իր ընտանիքին . բայց երբ պատրաստ էր վերադառնալու, գտաւ որ իր ծառան — պարզամիտ ազնուութենէ մղուած — իր ձին սպաննած էր վերադարձը արգիլելու համար : Փիթիաս կայծակնահար եղաւ գրեթէ այս դժբաղդութեան առջեւ, որովհետեւ իր բարեկամը պիտի գլխատուէր իր տեղը, եւ կատաղութեամբ մը բռնելով ծառան գահավէժէ մը վար նետեց զայն : Անկէ ետք՝ խենթի պէս սկսաւ վազել անտառներու մէջէն . յանկարծ նիզակով ու սուսերով զինուած ձիաւորի մը հանդիպեցաւ : Ձիաւորը ինքզինքը պաշտպանելու միջոց ունենալէ առաջ Փիթիաս վար գլորեց զայն եւ ցատկելով ձիուն վրայ արշաւեց առաջ :

Անդին Դամօն որոշուած օրը ահագին բազ-

the other day in one of the moving picture theaters.

Dionysius was the despotic king of Syracuse. Having gained the sympathy of a corrupt senate, he was ruling over the country with no feeling of responsibility whatever. Pythias was the only honest man in the senate who opposed the tyrant. The latter arrested him and condemned him to death.

Pythias wished to see his little child and pretty wife and arrange his affairs before his death. His friend Damon consented to go to prison in his place until a specified day, when Pythias should return to bear his punishment by execution. Otherwise his friend would lose his head.

Pythias went home and took leave of his family; but when he was ready to return he found that his servant had, out of simple-minded kindness, slain his horse to prevent his going back. Pythias was shocked at the sight of this misfortune, because his friend would be beheaded in his place; and, in a fury, seizing the servant, he threw him down a precipice. After that he began to run madly through the forest and came across a horseman armed with sword and spear. Before the latter could resort to self-defense Pythias knocked him down, jumped on the horse's back, and galloped forward.

In the meantime, on the appointed day Damon

մութեան առջև տարուած էր պատժի հրապարակը եւ իր գլուխը՝ վեհ համակերպութեամբ մը՝ դրած դահիճի կոճղին վրայ։ Երբ դահիճը վեր կը բարձրացնէր իր դանակը՝ սոսկալի հարուածը տալու, քառասմբակ վազող ձիու մը քայլերը լուռեցան և յանկարծ ժողովուրդը ահագին իրարանցումով մը կեցուցին դահիճին ձեռքը։ Փիթիասն էր որ կը վազէր իր բարեկամը փրկելու և խոստումը պատուաւոր կերպով կատարելու համար։ Վայրկեանի մը մէջ վար ցատկեց ան եւ ինքզինք նետեց դահիճի առջև։ Դիոնէսիոս ծպտուած ներկայ կը գտնուէր․ երբ այս հոյակապ մտերմութեան հիանալի օրինակը տեսաւ, այնքան ապշեցաւ որ նետեց իր ծպտազգեստը եւ իբրեւ թագաւոր առաջ գալով սեղմեց երկու բարեկամներուն ձեռքերը եւ, իբրև հաւաստիք իր հիացումին, ներեց Փիթիասին։

Կ'ըսուի թէ շարժական պատկերները պիտի գործածուին դաստիարակչական նպատակներու։

Սիրալիր բարեւներով,

ՆԱՄԱԿ ԳՈՐԾԷՆ ԳՈՂ ԱՆՁԷ ՄԸ

Սիրելի ,

Սանֆրանսիսկօ երթալէդ ի վեր միայն քարտ մը ստացած եմ քենէ եւ ուրիշ ոչինչ։ Ու՞ր ես եւ ի՞նչ կ'ընես։ Ինչո՞ւ լուր մը չես հաղորդեր։

Գիտես որ ես մեքենագիտութեան որչափ սիրահար էի։ Արհեստը սորվելու համար կանոնաւոր դպրոց չէի կրնար երթալ, որովհետեւ ո՛չ մուտքի քննութիւնները տալու ի վիճակի էի եւ

was brought before the public to the place of execution. He had put his head in solemn submission on the block. Just as the executioner raised his knife to give the terrible blow the steps of a galloping horse were heard, and suddenly the people, with an awful rush, stopped the hand of the executioner. It was Pythias who was hastening forward to save his friend and honorably fulfill his promise.

Instantly he jumped down and threw himself before the executioner. Dionysius was present disguised. Witnessing the wonderful example of devoted friendship, he threw aside his disguise and, coming forward as the king, he shook hands with the two friends and pardoned Pythias in token of his admiration.

It is said that moving pictures will be introduced for educational purposes.

Yours truly,

— — —

Letter of a Man Who Is Satisfied With His Work.

Dear _____:

Since you went to San Francisco I have had only one letter from you, nothing more. Where are you? And what are you doing? Why don't you send a word?

You know how much I always liked mechanics. I could not go to a regular school to specialize in the subject, because I was not in a condition either to pass the admission examinations or to

ոչ ալ ծախքերը հոգալու : Այս տեղ մասնաւոր խանութներ կան որ իբր դպրոց գործնականօրէն արհեստը կը սորվեցնեն հարիւր տօլարով : Ուստի ճար ճարակ ըրի այդ գումարը պատրաստեցի և քիչ մըն ալ պարտք ըրի քանի մը շաբաթ ապրելու եւ գացի արհեստը սորվելու : Ինծի մասնագիտութիւն ըրի օթօմօպիլի նորոգումը : Երկու ամիս չտեւեց արհեստը ըստ բաւականին սորվեցայ, վկայական մը ստանալու և նահանգային քննութենէն անցնելու չափ, եւ հիմա երեք շաբաթէ իվեր մեքենական խանութի մը մէջ կը գործեմ : Շաբաթական 15 տօլարով սկսայ, գալ շաբաթ 18ի պիտի բարձրացնեն, իսկ տարեգլխին 25ի : Ուրեմն ես իմ գործէս գոհ եմ :

Մենք հայերս երբ Ամերիկա կուգանք աչքերնիս չենք բանար, մեր մէկ ծանօթը գործարանի մը մէջ կը տեսնենք և մեզի նպատակակէտ կընենք նոյն գործարանին մէջ գործ մը հայթայթել՝ շաբաթական 7 կամ 8 տալերով, իսկ երբեմն աւելի վար : Կը կարծենք որ ամբողջ Ամերիկան այդ գործարանին մէջ է : Կաշխատինք տարիներ եւ ոչ մէկ արդիւնք ձեռք կը բերենք, գործի տեսակէտէ միշտ անապահով և միշտ դժգոհ : Կամաց կամաց դառն զգացումները մեզ կը պաշարեն, ատելութեամբ կը լեցուինք ամէն բանի դէմ. կ'անիծենք մեր այս բազդը, կ'ատենք պօսերը, գործարանատէրը, եւյն, եւյն : Որչափ մեր ատելութիւնը աճի եւ դառնութիւնը սաստկանայ, նոյնքան ետ կ'երթանք և անընդունակ կը դառնանք առաջդիմութեան, ոչ միայն օտարները չեն ուզեր մեր թթու երեսը նայիլ, այլ մեր բարե-

pay the expenses. There are special shops where the practical manipulation of machines is taught for a hundred dollars. I worked hard to save that sum and borrowed money to live for a few weeks while I went to learn the business. I took up repairing and driving automobiles. In less than two months I gained enough skill to obtain a certificate and pass the state examination, and now for the last three weeks I have been working in a machine shop. I began with fifteen dollars a week. Next week they will raise it to eighteen, and at the end of the year to twenty-five dollars. I am satisfied with my work.

When we Armenians come to America we don't open our eyes. We see one of our acquaintances or a relative working in a factory, and we make it our ambition to get some job in the same factory for seven or eight dollars' pay, and sometimes less than that. We act as if the whole of America was in that factory. We work for years and gain nothing, always insecure and unhappy in the work. Gradually bitter feelings get hold of us, we begin to hate everything, curse the "bad luck," hate the bosses, employers, etc. The more our hatred and bitterness grow the more we retrograde and become unfitted for progress. Not only Americans dislike to see our cross expression, even our friends show coldness in their relations with us. We turn against the

կամներն անգամ մենէ կը պաղին : Ամբողջ աշխարհի դէմ կը սրդողինք եւ բնականաբար այդ տրամադրութեան տակ մենք մեզ կը սահմանափակենք գործարանի մը եւ մեր սենեակին : Այսպէսով աւելի եւ աւելի կախում կունենանք այն գործէն ու պօսէն որ կ'ատենք ամբողջ հոգուով : Ոմանք այս դժգոհութիւնը դասակարգային գիտակցութիւն կը կարծեն, մինչդեռ ոչ միայն դասակարգային գիտակցութիւն չէ այդ, այլ նոյն իսկ անձին գիտակցութիւնը չէ : Մարդ մը որ իր դառն զգացումներէն կուրնալով իր ուժերը չի կրնար չափել եւ չի կրնար հասկնալ իր ընդունակութիւնները, բնականաբար չի կրնար յաջողիլ : Յաջողութեան գաղտնիքը, ըստ իս կը կայանայ զուարթ անտարբերութեան մը մէջ դէպի դժուարութիւնները :

Ի՞նչ եւ է, կը վախնամ քեզի երկար քարոզ մը տուի : Գրէ ինձի շուտով եւ քու մասին տեղեկութիւն տուր, երկրէն լուր կառնե՞ս : Հիմա ի վիճակի եմ իմ արհեստս բարեկամի մը սորվեցնելու : Երանի թէ այս տեղ ըլլայիր, եթէ լաւ գործ չունիս, անմիջապէս եկուր, այս տեղ քեզի գործ կրնամ առնել, եթէ լաւ գործ ունիս շուտով գրէ որ ուրիշ հայու մը պատեհութիւնը տամ :

Բարեկամդ

whole world and naturally, with such a disposition, we limit ourselves to a corner of a factory and to our room. In that way we become more and more dependent upon the bosses and work which we hate with all our might.

Some people confuse this kind of dissatisfaction with class consciousness; in fact, it is not even self-consciousness. A man who becomes so blind on account of his bitter feelings that he cannot measure his own power and aptitude naturally cannot succeed. The secret of success, in my opinion, is to be found in a cheerful indifference toward hardships.

I am afraid I have given you an unnecessary sermon. Write me soon and inform me about yourself. Do you hear from home? I am now in a position to teach my work to some friend. I wish you were here. If you have not satisfactory work come at once. I can get a job for you within the next few days. If you have good work let me know immediately so that I may be able to give the chance to another fellow Armenian.

Your friend,

**Ամերիկա Գալու Մասին Բարեկամին Կարծիքը
Խնդրող Նամակ**

Սիրելի . . . ,

Այս նամակով կուզամ կարեւոր խնդրոյ մը մասին քու կարծիքդ հարցնել եւ վստահ եմ որ չես մերժեր:

Հօրս մահուանէն ի վեր ամբողջ ընտանիքին ապրուստը իմ վրայ ինկած է եւ ես սիրով յանձն առած եմ այդ նուիրական պարտականութիւնը կատարել: Ձեռքս դրամագլուխ մը չըլլալուն ստիպուեցանք մեր տունը ծախել եւ հասոյթով պզտիկ խանութ մը բանալ: Այդ խանութին համար գիշեր ցորեկ աշխատելէ ետք հազիւ հազ ապրուստ մը հանելու չափ շահ ձգել սկսաւ, բայց բաւական ատենէ ի վեր այդքանն ալ չի բերեր: Հիմա պզտիկ եղբայրս դպրոցը աւարտեց եւ քովս կաշխատի գործը սորվելու: Ան առեւտուրը սորվելէ ետք կրնայ խանութը առանձինն դարձնել եւ իրեն զբաղում մը ընել: Իսկ ես կը խորհիմ Ամերիկա գալ, աշխատիլ եւ ընտանիքին ապագան բարւոքել եւ օգնել եղբօրս որ իր գործը ընդարձակէ: Շարաթներ մտածելէ ետք որոշեցի քու կարծիքդ հասկնալ այդ մասին՝ ոեւէ քայլ առնելէ առաջ:

Քանի որ այսչափ տարի Ամերիկա կը գտնուիս և փորձառութիւն ունիս այն տեղի պայմաններուն կատմամբ, պիտի խնդրէի որ այս նամակս առնելուդ պէս ինձի գրէիր քու կարծիքդ: Ձեռքս ճամբու ծախք մը ունիմ եւ սպառելէ առաջ կը փափաքիմ ճամբայ ելնել:

**Asking the Opinion of a Friend About Coming
to America.**

Dear _____:

I want to ask your opinion in regard to an important question, and I am sure you will not refuse it.

Since the death of my father the support of the whole family has fallen upon me, and I have gladly undertaken to discharge this sacred duty. Having no capital at hand I was obliged to sell our house and open a little store with the proceeds. After the hard work of days and nights it began to yield a bare living, but for some time it has not brought even that. Now my younger brother has graduated from school and has begun to work with me to learn the business. After a little experience he will be able to manage the store by himself and make it his chief occupation. And I am thinking of coming to America to work there in order that I may secure the future of the family and help my brother to enlarge his business. After meditating upon the subject for weeks, I have decided to ask your opinion before taking any step.

Since you have been so many years in America and have gained acquaintance with the conditions of the country, I would ask you to write me soon your opinion of my plan. I have at hand enough money for the expenses of the journey and I want to start before I spend it.

Մայրս և ամէնքը ինծի հետ կը բարեւեն քեզ .
մայրս միշտ հաճոյքով կը յիշէ քեզ :

Սպասելով քու պատասխանիդ՝ կը մնամ,
Քուկդ ճշմարտիւ ,

ՊԱՏԱՍԽԱՆ

Սիրելի ,

Վերջին նամակովդ Ամերիկա գալու մասին
կարծիքս հարցուցած էիր : Ահաւասիկ թէ այդ
մասին ինչ կը մտածեմ :

Ամերիկա որչափ ալ հարստութեանց ու պա-
տեհուութեանց երկիր մը ըլլալու համբաւը վայելէ ,
իրականին մէջ այդպէս չէ , գոնէ ներկայիս մէջ :
Անշուշտ անցեալին մէջ այդ համբաւը իրապէս
ունեցած է , բայց հիմա նոյնը չէ , պարագաները
չատ փոխուած են : Երկրի մէջ հարստութիւն
չատ կայ , եւ հսկայական հարստութիւն , բայց
թէ անկէ մեզի դիւրին բաժին կը հանուի , այդ
չատ սխալ է :

Հիմա Ամերիկա եկողներէն ո՞վ հարուստ է ,
կամ գոնէ իրեն բարեկեցիկ վիճակ մը ապահո-
ված : Կ'աշխատինք քիչ մը , քանի մը ամիս ,
40—50 տալէր կը խնայենք , բայց յանկարծ գոր-
ծերը կը թուլնան , կամ կէս օր կ'աշխատինք եւ
կամ շաբաթներ անգործ կը մնանք , ու այդ մի-
ջոցին խնայածնիս կը ծախսենք : Գործի շրջանին
մէջ եթէ կրցինք տուն 10—20 տալէր մը ղրկել ,
այդ կըլլայ ամբողջ օշափելի արդիւնքը : Երբէք
անսովոր չէ այնպիսի անգործութիւն մը՝ որու

Mother and all join with me in sending you greetings. Mother always remembers you with pleasure.

Hoping to hear from you soon, I am,

Yours truly,

The Answer.

Dear _____:

In your last letter you asked my opinion in regard to your intention of coming to America. Here is my idea of the matter.

Although America enjoys the reputation of being a country of wealth and opportunity, it is not so in fact, at least, at the present time. I am sure the reputation was not unfounded in the past, but things are different now. There is wealth in the country and immense wealth, but it is not true that we can easily get a share of it. Who among the immigrants is rich now? Or who has secured a well-to-do condition? We work a little, for a few months, and save forty or fifty dollars; but suddenly business slackens and we are laid off for weeks, meanwhile spending all of our savings. If we have sent home from ten to twenty dollars during the period of work, that is all our tangible gain. It is not uncommon during a long period of lack of work

երկար ընթացքին մէջ մարդիկ իրենց բոլոր ունեցած չունեցածը ծախսելէ ետք ծանր պարտքերու տակ իյնան, եւ անոնցմէ ազատելու համար տարիներու աշխատանքին ենթարկուին: Յաջողութիւնները հազուադէպ են հիմա այս երկրին մէջ եւ պատահական: Անոնք որ երկրին մէջ պարզ ապրուստ մը կրնան հայթայթել շատ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ են քան անոնք որ այս տեղ շարժական \$15 կ'ստանան:

Ուրիշ պարագայ մը կայ որ երբեք թոյլ չտար ինծի հոս գալուդ համամիտ ըլլալու, և այդ է՝ նախագահական ընտրութեան տարին: Ընտրութիւններու շրջանին ընդհանրապէս գործերը թոյլ կ'ըլլան, մանաւանդ երբ ընտրական պայքարին էական խնդիրն է մաքսային վերաքննութիւնը: Տնտեսական հաւասարակշռութիւնը մաքսէն կախում ունի: Ամէն մէկ փոփոխութիւն կամ փոփոխութեան ծրագիր առեւտուրը կը կասեցնէ եւ ժողովուրդը անհնարին կացութեան կը մատնէ: Հիմակուայ գործերը արդէն զգալիօրէն թոյլ են, եւ վախ կայ որ քիչ ատենէն շատ մարդիկ անօթի մնան անգործութենէ, եւ կառավարութիւնը ըստիպուի ձրի ճաշարաններ բանալ:

Ուրեմն այս տարի տեղէդ մի շարժիր, իսկ գալ տարուան համար նայինք բաղդը ինչ կը բերէ:

Կը յուսամ նամակս քեզ չվհատեցներ: Եթէ միտքդ դրած ես գալ, օր մը կուգաս, ժամանակ շատ կայ: Թուրքին «եավաշ եավաշը» հոս շատ կը յարմարի: Սիրտդ ամուր պահէ եւ համբերէ:

for men to spend not only all their savings but also to incur heavy debts. Consequently they are subjected to years and years of labor to get rid of their debts. Now the chances of success are few and incidental in this country. Those who can earn a simple livelihood at home are in a more advantageous condition than those who work here for fifteen dollars a week.

There is another reason which prevents my consenting to your coming, namely, that this is the year of the presidential election. During such a period business is apt to be bad, especially when the issue of the campaign is the revision of the tariff.

The financial condition of the country is too dependent upon the tariff; every change or program of change stops business and throws people into difficulties. Things are palpably bad now, and there is fear that many will be left hungry from lack of work, and the government will be obliged to open free soup houses.

The conclusion is, that you should not budge this year, and we shall see how things will turn out next year. I hope my letter does not discourage you. If you have coming here in your mind, you will come some day. There is plenty of time yet. The Turkish motto *yavash yavash* (slowly) fits well in this case. Keep up your courage and be patient. Give my sincere thanks

Իմ անկեղծ շնորհակալութիւններս յայտնէ մայրիկիդ եւ ըսէ իրեն որ չեմ դադարած զինքը սիրելէ, ինչպէս կը սիրեմ իմ մայրիկս:

Նամակներդ մի ուշացներ:

Սիրալիւր բարեւներով

ԿԷՍ ՃԱՄԲԷՆ ԲԱՐԵԿԱՄԷՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈՂ

Սիրելի....

Երկրէն վերջին նամակովս Ամերիկա գալու ճամբայ ելնելս յայտնած էի քեզ: Նիւթական այնպիսի պատրաստութիւն մը տեսած էի որ բոլոր ծախքերէ զատ Ամերիկա հասնելուս տասը անգլ. ոսկի մնար քովս: Բայց բաղդը տարբեր բերաւ: Ծովային ճամբորդութեան վարժուած չըլլալուս ծովախտը զիս այնքան յոգնեցուց որ երբ Մարսէյլ հասայ, գրեթէ անզգայ տարուեցայ հայ գործակալներու կողմէն տեղ մը՝ որ իրենք հօթէլ կը կոչեն, ուր երկար ատեն քնացած մնացի: Այդ միջոցին մաս մը դրամ կորսնցուցի: Անկէ զատ բժիշկի քննութենէն հասկցուեցաւ որ աչքերս երեք շաբաթի չափ դարմանի կը կարօտին: Կորսուած գրամը մէկ կողմէն և այս անակնկալ ծախքերը միւս կողմէն զիս անել վիճակի մը մէջ ձգած են: Ոչ ետ կրնամ երթալ, ոչ ալ ճամբաս շարունակել: Ի՞նչ ընեմ, որո՞ւ դիմեմ: Երկար վարանումէ ետք ուզեցի քեզի յայտնել այս կացութիւնս: Այս տագնապալի վիճակս ուրիշի յայտնել ոչ միայն կ'ամշնամ, այլ չունիմ մէկը որ յայտնեմ:

Այս տեղ հասնող գաղթականներուն վիճակը

to your mother and tell her that I have not ceased loving her as I love my own mother. Write me oftener.

With best wishes, I remain,
Yours truly,

**An Emigrant Asking for Help When Midway on
His Journey.**

Dear _____:

I informed you that I had started to come to America. I had prepared myself financially so that, after all expenses, I should have ten sterlings left upon my arrival there.

But circumstances changed things. Being unused to sailing, seasickness weakened me so much that I was almost unconscious when we arrived at Marseilles. Armenian agents took me to a place (they call it their hotel) where I was left to sleep for a long time. In the meantime I lost some money. Later I learned from the doctors that my eyes needed treatment for about three weeks. The lost money on the one hand and these unexpected expenses on the other left me in a helpless condition. I could neither return nor go forward; I didn't know what to do. After long hesitation I decided to let you know of my difficulties. I am ashamed to tell my story to anyone else. I have no one else to tell it to anyway.

The Armenians who come here are in a miser-

չատ ողբալի է : Ոմանք բոլորովին անդրամ կ'իյնան հոս , իրենց արժանապատուութիւնը և բաղդը շորս հովերու հաւատարիմ պահպանութեանը յանձնելով . իսկ ոմանք կուգան իրենց բարեկամներուն վատահելով , ու ամիսներ կ'սպասեն ամէն տեսակ անախորժ յուսավրիպումներու և անարգանքի մատնուելով : Ոմանք դրամ ունին , լեզու չունին , ուստի և մինչև յետին ստակը կը քամուին : Հիմա ես ալ եղայ անոնց վիճակակից : Սիրելիս , այս թշուառութենէն ազատուելու համար քեզի միայն դիմում կրնամ ընել : Երբեք մտքէս չէր անցներ քեզի բեռ ըլլալ : Կրնա՞ն ինձի անմիջապէս նաւու տոմս մը ղրկել եւ այնչափ դրամ որ՝ երբ Ամերիկա հասնիմ՝ օրէնքի պահանջած գումարը քովս ունենամ : Նաւային ընկերութեան բժիշկը կ'ըսէ որ աչքս երկու շաբաթէն լաւ կ'ըլլայ , այնպէս որ մինչև քենէ նամակ ստանամ բոլորովին իվիճակի կ'ըլլամ ճամբորդելու : Անշուշտ այս նեղ օրերը շուտով կ'անցնին եւ հոն հասնելէս ետք պարտքերս կը գոցեմ : Աշխատելու թէ ուժ ունիմ և թէ յօժարութիւն :

Անհամբեր պատասխանիդ կ'սպասեմ եւ կը մնամ՝

Ձերմագին բարևներով ,

ՆԱՄԱԿ ԳԷՇ ԳՈՐԾ ՈՒՆԵՑՈՂԷ ՄԸ

Սիրելի

Ինձմէն նամակ կ'սպասես և տեղեկութիւններ կ'ակնկալես : Չեմ գիտեր ինչ գրեմ և ինչ տեղեկութիւն տամ քեզ : Ամերիկա գալէ առաջ շատ

able condition. Some come without any money, giving their sense of honor to the winds; some come depending upon the good will of some friend in America and wait for months, subjected to disgrace and disappointments; some have money, but have no knowledge of French and therefore are cheated out of every cent. Now I myself share in their condition. My dear old friend, I have only you to whom I may turn to help me out of this misery. I never meant to be a burden to you. Could you send me a ticket for America and enough money to satisfy the authorities? The doctor of the steamship company assures me that my eyes will be cured in two weeks, so that by the time I hear from you I shall be in condition to travel. I am sure that better days will come after my arrival there, and I shall be able to pay my debts. I have both the strength and the will to work.

Waiting for your speedy answer, I am,

Yours sincerely,

The Letter of a Disappointed Man.

Dear _____:

You are waiting for a letter and some news. I do not know what to write about or what information to give. Before I came to America I felt

բանի հետաքրքիր էի, հիմա ոչ մէկ բանի համար սիրտ ունիմ : Այս տեղի կեանքս անյաջողութեան և լքումի շարք մը եղաւ :

Հոս հասնելէ ետք ամիսներ պարապ մնացի, ետքէն ինկայ գործարանի մը մէջ՝ ուր տարի մը աշխատելով հազիւ պարտքս գոցեցի և գործարանը կանգ առաւ : Գործը շատ վարժութիւն չէր պահանջեր, ուստի դեռ անարհեստ աշխատաւոր մըն եմ եւ կը տեսնեմ որ գործ գտնել շատ դժուար է : Բարեկամներէս ոմանք ինծի խորհուրդ տուին որ փորագրութիւն, Ինկէյլէնկ, սորվիմ, յուսալով որ վեց ամսուան վարժութենէն ետք կրնայի քսան տալէր շաբաթական շահիլ : Ուստի խիստ մեծ դժուարութեամբ կրցայ գտնել տեղ մը՝ ուր մարդը յօժար էր արհեստը մէկ տարիէն սորվեցնել : Իր պայմաններն էին. առաջին երկու ամիսներուն մէջ առանց վճարումի, երրորդ և չորրորդ ամիսներուն շաբաթական երեք տօլար, իսկ մնացած ութը ամիսներուն միջին հաշուով եօթը տօլար : Հաւանեցայ և գացի. նոր պարտքեր ըրի ծախքս փակելու, իսկ չորս ամիսէն ետք առած դրամս հազիւ ծախքերս կը գոցէր, ամենախնայող կերպով ապրելով : Տարի մը ետք մարդը յօժար չէր ութնէն աւելի վճարել. ուստի ձանձրացած գործը թողուցի : Ուրիշ տեղերէն գործ փնտռեցի, ամբողջ ամիսներ մէկ քաղաքէ միւսը թափառեցայ, սորվածս մոռցայ. տեղ տեղ փորձելու համար պատեհութիւն տուին, բայց այնպիսի ճիւղեր էին որ սորված չէի, և թողուցին զիս : Հինգ վեց ամիս այդպէս երթալէ ետք,

curiosity about everything, but now I have no interest in anything. My life here has been a series of failures and disappointments.

After arriving here I was without work for several months. Then I was given a chance in a factory, where I worked about a year. I had hardly paid my debts when the factory closed. The work did not require much training, so I am still an unskilled laborer and find it hard to get work. My friends advised me to learn engraving, hoping that after six months' training I might earn twenty dollars a week. With great difficulty I found a place where the man at the head was willing to teach me the business in a year. His conditions were: no pay for the first two months, three dollars a week during the third and fourth months, and during the remaining eight months seven dollars a week in average. I agreed and began my work, incurred some new debts to meet my weekly expenses, and after four months' experience could hardly support myself, although living in a most economical way. At the end of the year the man was not willing to pay more than eight dollars a week, so I gave up the work. I looked for a job in other places and wandered for months from one city to another. Meanwhile I forgot what I had learned. In a few places they took me in for a trial, but the work they gave me was in branches of engraving which I had not learned, so they discharged me. After five or

տեղէ մը լուր եկաւ որ գործի պատեհութիւն կայ շաբաթական 15 աւլէրով և քիչ ատենէն 20ի բարձրացնելու խոստումով: Բայց շուտով հասկցայ որ այդ տեղ գործադուլ կար և զիս իբրեւ «ի՛նչ գործածել կ'ուզէին», մինչեւ որ իրենց նեղ օրերը անցնէին: Սիրելիս, ես թէև աղքատ բայց հպարտ էի: Ինծի համար պէտք չէր այն պատառ մը հացը որ ուրիշի ձեռքէն պիտի խլուէր: Աւելի նախընտրեցի անօթի մեռնիլ քան ուրիշի դատին դաւաճանել: Այդ տեսակ ցածութեան մը ընդունակ չէի:

Վերջապէս պատեհութիւն գտայ երկաթուղիի ճամբուն վրայ գործելու: Հարիւր իտալացիներու մէջ միակ հայը ես էի: Շահածս մեծ բան մը չէր: Սահմանուած օրական ինն ու կէս ժամէն երեք ժամ աւելի աշխատելով՝ շաբաթական 16 տօլար կը վաստկէի: Քանի մը ամիսներ աշխատեցայ, պարտքերս վճարեցի, և երբ գործը վերջացաւ՝ գրպանս հազիւ 30—40 տալէր մնացած էր: Հիմա դարձեալ պարապ եմ. Ինչեյվնի գործին կը նայիմ, բայց չկայ: Այս անգամ մտադիր եմ կօշիկի ճիւղ մը սորվիլ:

Հիմա որչա՛փ կը զղջամ հայրենի երկիրս թողուցած ըլլալուս: Գաղթելու դէմ գրուած յօդուածները կ'անգոսնէի: Ո՛րչափ երջանիկ պիտի ըլլայի եթէ կարենայի ետ երթալ, կրկին բահ ու բրիչ առնել, և հայրերէս մնացած պզտիկ արտին մէջ ճակտիս քրտինքով հացս հանել և մօրս ու

six months' wandering word came from a place that there was an opening at fifteen dollars a week, with the promise of raising to twenty dollars in a short time. But I soon learned that there was a strike there and they wanted to employ me as a scab until they were out of their difficulties. Dear —, although poor I am proud. I did not want the piece of bread which I must snatch from some one else's hand. I preferred dying of starvation to betraying the cause of others. I had no aptitude for such baseness.

Finally I got a chance to work on railroads. I was the only Armenian among a hundred Italians. There wasn't much money in it. The work day was nine and a half hours. By working three hours overtime, twelve and a half hours a day, I could make sixteen dollars a week. I worked a few months, cleared away my debts, and when we got through with the work I had about forty dollars left in my pocket. Now I am again without work. I am still looking for a position in engraving, but can't find any. I intend now to learn a branch in shoe manufacturing.

How I regret leaving the old home! I looked with contempt upon the articles against emigration. How happy I would be if I could go back, take the old spade and hoe, work on that little piece of land left from my forefathers, and earn a livelihood enjoying the tender affection of my

խանդակաթ գուրգուրանքը վայելել: Այլևս ինձի
երազ կը թուին անոնք:

Կը յուսամ քենէ լաւ նամակներ կ'ստանամ:
Դժբաղդարար ես ոչ ինչ լաւ ունիմ գրելիք:

Սիրալիր բարեկներով,
Քուկդ,

ԱՆՅԱԶՈՂ ԲԱՅՑ ՔԱՋ ՊԱՆԴՈՒՅՏԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Սիրելի . . . ,

Քեզի երկար ատենէ ի վեր չեմ գրած: Երբ
վերջին նամակդ ստացայ տակաւին գեղեցիկ յոյ-
սերով կ'օրօրուէի: Անկէ ասգին աւելի քան երեք
ամիսներ անցած են եւ տակաւին ոչ մէկ գեղե-
ցիկ հեռանկար կը տեսնեմ: Քեզի այսքան ատեն
չգրեցի, որովհետեւ կուզէի յաջող լուրեր գրել:
Ինձի համար աւելի դժուար է անյաջողութեան
լուր տալ քան թէ կրել զայն: Ուստի լռութիւնը
կը խզեմ պարզապէս զայն աւելի չերկարելու
համար:

Անյաջողութեան համար չեմ ցաւիր, եւ չեմ
հաւատար որ թշնամի ճակատագիր մը զիս կը
հալածէ: Պարագաները նպաստաւոր չեղան: Ես մա-
սամբ ինքզինքս կը մեղագրեմ պայքարին մէջյաղ-
թական չելնելուս, սակայն իմ մասին դատապար-
տելի անկարողութեան մը համոզումը գոյացու-
ցած չեմ տակաւին: Երբ կը վերլուծեմ իմ դէմս
ելած դժուարութիւնները՝ պարտութեանս համար
հպարտ կզգամ: Չեմ զղջար նաև ձեռնարկներուս

mother and sister! That life seems to me a dream.

I expect a good long letter from you. I am sorry that I could not write a more cheerful letter than this. But we will hope for the best.

Yours as ever,

The Letter of an Unsuccessful but Brave Man.

Dear _____:

I have not written you for a long time. When I received your last letter I was still entertaining bright hopes. Three years have passed since, and I fail to see any good prospect. I did not write to you for so long, because I wanted and waited to write some news of success. It is harder for me to inform you of failure than it is to bear it. Now I break the silence simply because I do not want to prolong it any longer.

I am not bitter at my lack of success. I do not believe some hostile fortune persecutes me. It is simply that circumstances have not been favorable. I rather blame myself for my failure to come out victorious. However, I have not yet come to the conclusion that I owe my failure to my incapacity. When I analyze the difficulties that I have had to confront I feel proud of my failure. I do not regret my enterprises either.

համար, ինչ որ ըրի պարտաւոր էի ընել եւ ջանացի լաւը ընել: Ուստի ես իմ պարտութենէս այնքան հպարտ կզգամ, որքան պիտի զգար պատերազմը կորսնցնող քաջամարտիկ զինուոր մը՝ իր վէրքերէն:

Ուժս գիս լքած չէ տակաւին, ուստի պիտի շարունակեմ կռիւս մինչեւ իր կարելի վախճանը:

Կը յուսամ կը ներես իմ երկար լռութեանս համար և ինձի կը գրես նամակներ՝ լի հին օրերու գուլարթութեամբ և կատակներով:

Բարեկամդ ,

ՀԻՒԱՆԴԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Սիրելի Բարեկամ ,

Կեանքի մէջ ինձի բաժին ինկած վիճակը — սովորականէն քիչ մը աւելի աննախանձելի — անտրտունջ համակերպութեամբ ստացած էի եւ գուլարթ անտարբերութեամբ կը կրէի: Հաւատալով իմ Ֆիզիքական տոկունութեան եւ քիչ մըն ալ պէտքին անսալով՝ ծանր աշխատեցայ առանց մերժելու գիշերային յաւելուածական աշխատանքները: Եւ հիմա ստոյիկեան անտարբերութեամբ կ'իմանամ որ մեր քիչ մը խիստ դատաւոր բնութիւնը լուրջ պատիժի մը նախանշանը զրկած է ինձի, գոնէ այս է բժիշկին վկայութիւնը: Արդ իմ խոնարհ համակերպութեան հաւաստիքը տալու համար այս նամակը կը գրես քեզի և կը խոստանամ որ մինչև դրամս հասնի ուրախ գուլարթ պիտի պտտիմ, ու բնութեան

What I did I ought to have done, and I tried to do well. Therefore I feel as proud over the unsuccessful outcome as a brave soldier would feel of his wounds after a hard but lost fight. My strength has not yet deserted me; I will continue the fight to the very end.

I hope you will forgive me for my long silence and that you will write good long letters, full of the fun and cheerful jokes of the old days.

Your old friend,

The Letter of a Sick Man.

Dear _____:

I was bearing my somewhat adverse lot in life with uncomplaining patience and cheerful indifference. Believing in my physical endurance and impelled by the pressure of need I worked hard, not refusing overtime night work. And now I learn with stoical indifference that nature, that rather severe judge of ours, has given me warning of serious punishment. At least, this is the testimony of the doctor. Now, in order to give the assurance of my humble submission, I write this letter and solemnly promise that I shall cheerfully rest and walk until I consume my money, and I shall pay my daily devotions at the

տաճարին մէջ իմ ամենօրեայ պաշտամունքս պիտի կատարեմ: Բնական է իմ այս յանցանքին համար ծնողքս պիտի տուժեն, որովհետև չպիտի կրնամ կանոնաւոր օժանդակութիւնը զրկել իրենց:

Բժիշկը կը վստահացնէ որ հինգ վեց շաբաթ բացարձակ հանգիստէ, բացօդեայ պտոյտներէ և զուարթ զրօսանքներէ ետք ամէն վտանգ պիտի հեռանայ, և անկէ ետք կարող պիտի ըլլամ օրական աշխատութիւնս վերստին շարունակել որոշ զգուշութիւններով: Թուաբանական պարզ հաշիւով կը գտնեմ որ բնութեան դրած տուգանքը ճիշդ կը հաւասարի գիշերային աշխատանքներէ շահածիս: Այդ տուգանքը վճարելու չափ դրամ ունիմ հիմա: Ուստի ինքզինքս միլիոնատէրի մը տեղ դնելով վրաս դրուած բացօդեայ քաղցր ապաշխարանքը կը քաշեմ: Մտահոգ ըլլալիք բան մը չկայ: Ամենախոնարհ հպատակութեան այս բացարձակ ապացոյցէն ետք եթէ դատաւորը մերժէ ինծի ներել, ինչ որ խիստ անհաւանական է, այն ատեն ծնողքս միսիթարելու դժուարին գործը քեզի կը թողում: Առ այժմ բան մի ըսեր իրենց, ես դրամ չզրկելս կը բացատրեմ անգործութեան պատրուակով:

Կը տեսնես որ իմ զուարթութիւնս չեմ կորսնցուցած: Եթէ նոյն իսկ վտանգաւոր սահմաններուն հասած ըլլայի չպիտի տրտնջայի: Ուրեմն սիրտդ զով պահէ և ինծի աղուոր նամակներ գրէ որ՝ կը վստահացնեմ քեզ՝ բացօդեայ զրօսանքիս գլխաւոր հրապոյրը պիտի կազմեն:

Ձերմ բարեկերով,

Հին Ընկերդ

ARMENO-AMERICAN LETTER WRITER 101

temple of Nature. Of course, my parents will suffer on account of this sin of mine, because I shall not be able to give them my regular assistance.

The doctor assures me that after five or six weeks of absolute rest, walks in the open air, and pleasant recreation all danger will be passed and I shall be able to resume my daily work with certain precautions. By simple arithmetic I find that the penalty imposed upon me by nature will be just equal to my earnings from overtime night work. I have money enough to pay the penalty. Therefore, considering myself a millionaire, I will observe that sweet penance of open air—which is imposed upon me. There is nothing to worry about. If, after this positive evidence of my most humble submission, the judge refuses to forgive me—which is not probable—then I shall leave to you the difficult task of consoling my parents. Don't say anything to them yet. I shall explain my not sending money with the excuse of lack of work.

You see that I have not lost my cheerful disposition. I would not complain even if I had reached a dangerous stage. Therefore cheer up yourself and write me good letters, which, I assure you, will supply the chief charm of my open air exercises.

Greetings of love from

Your old chum,

Պատասխանք

Սիրելի . . . ,

Նամակդ ինձի սոսկալի ցնցում մը տուաւ նախ, բայց այդ քաղցր տրամադրութիւնը որ ծայրէ ի ծայր կը տիրէր նամակիդ մէջ ինձի մեծ վստահութիւն ներշնչեց և ետքէն անդորրութիւն պարգևեց: Այն առնական ոգին և 'վեհ հպարտութիւնը՝ որ քեզի թոյլ չտար հիւանդ եմ ըսելու՝ ինձի հիացում կ'ազդէ: Ապահով ըլլալով որ այնքան արի և զուարթ հոգի մը չկրնար ունէ հիւանդութեան զոհ երթալ քու ցնծութեանդ մասնակից կ'ըլլամ: Կեանքի այս ելեէջին մէջ ամենաանպաստ պարագան թերևս նիւթական կորուստը ըլլայ, բայց այդ բանը քեզի համար ունէ նշանակութիւն չունի, իսկ ծնողքիդ մասին հոգ մի՛ ըներ, քեզի հիացող բարեկամներ ունիս, որոնք հարկ եղած օժանդակութիւնը սիրայօժար կը բերեն:

Նամակդ մեր բարեկամներու շրջանակին մէջ կարդացի, և ամէքն ալ միևնոյն հիացումը կը յայտնեն և թախանձագին կը պահանջեն որ հանգիստի շաբաթներդ աւելի երկարին, որպէսզի—ինչպէս գեղեցիկ սրամտութեամբ կ'որակես—բացօրեայ աշխատանքդ աւելի քան ընդունելի ըլլայ դատաւոր բնութեան:

Քեզի համար աղուոր երգեր երգեցինք, արիութիւնդ գովեցինք և սրտերու անթեւ հեռագրով շատ բարեմաղդութիւններ ղրկեցինք: Մենք մեր ուրախութիւնը քու պայծառ տրամադրութեանդ կը պարտինք: Ես բառ չեմ կրնար գտնել մեր բոլոր զգացումները բացատրելու:

The Answer.

Dear _____:

At first your letter gave me a terrible shock, but that sweet disposition which showed itself throughout your letter comforted me and gave me the assurance of your recovery. I cannot help admiring the manly spirit and noble pride which prevent you from calling yourself a sick man. Trusting that such a brave and cheerful spirit cannot be overcome by any sickness, I share your gayety with you. The only disquieting circumstance for you in this case may be the financial loss; but you do not care for that, and must not worry about your parents. You have your friends who admire you and will gladly give you any assistance that they can.

I read your letter in the circle of our friends. All express the same admiration and urge with solicitude that you prolong the period of your rest in order—as you wittily remark—to make your penance of open air more acceptable to “judge nature.”

We sang sweet songs for you, praised your bravery, and sent many good wishes by the wireless telegraphy of hearts. We owe our joyful reunion to your sunny letter. I can find no words to convey all our thoughts, but as a weak expres-

Իբրև տկար արտայայտութիւնը մեր ընկերական սիրոյն հաւաքաբար և անհատաբար կստորագրենք յարակից «օփ-ֆանը՝ որ մեր իւրաքանչիւրէն մէկ մէկ տող կը պարունակէ :

Սպասելով ուրախ լուրերուդ , կը մնամ
Ձերմ համբոյրներով
Քուկդ ,

ԿԱՂԱՆԴԻ ՆԱՄԱԿ ՄԸ

Սիրելի . . . ,

Այս իրիկուն կաղանդի իրիկուն է , և ես առանձին նստած սենեկիս մէջ կը մտածեմ անցեալ կեանքիս վրայ : Մանկութեան օրերս մէկիկ մէկիկ աչքիս առջևէն կանցնին , և կը յիշեմ այն երջանիկ ժամերը որ մէկտեղ կանցնէինք խաղալով և դբօսնելով : Կը յիշեմ բոլոր այն պտոյտները և սրտազեղ կատակները՝ նոյն իսկ չարաճիճիութիւնները որ մեր մանկական երևակայութեամբ կը հնարէինք : Ի՛նչ երջանիկ օրեր էին անոնք , որոնց գիտակցութիւնը չունէինք պէտք եղածին չափ : Որչա՛փ տարբեր է կեանքը հիմա , չոր հացի մը համար անողոք պայքարի այս կեանքը : Կեանքը ներկայիս այնչափ դառն չպիտի թուէր , եթէ իտէալներուս հասնելու ապահովութիւնը ունենայի :

Հանգստի այս ժամուն , երբ բոպէի խորհրդաւորութիւնը առջևս կը նկարէ անցեալի այն չքնաղ օրերը , որքա՛ն զօրաւոր փափաք կ'ըզամ ետ երթալ այդ կեանքին և վերստին գտնել մանկութիւնս ու մանկութեանս ընկերը : Ահա այս

sion of our comradeship and love we sign collectively and severally the adjoining document, which bears a line from each of us.

Waiting for happy news, I am,

Yours very truly,

A New Year's Letter.

Dear _____:

This is New Year's evening. Sitting alone in my room I am thinking of my past life. I remember the days of my childhood, the happy hours that we spent together playing and amusing ourselves. All those walks, merry jokes, and talks, even the little games which we invented with our childhood's imagination come back to me now. What happy days they were, which we could not appreciate. How different life is now, the life of intense struggle for a little bread. It would not seem to me so gloomy if I had the assurance of success in my pursuit of some cherished ideals.

At this hour of rest, when the mystic moment brings back to me those delightful days of the past, I feel a strong desire to return to that life and find again my childhood and the chum of

տպաւորութեան տակ երջանկութիւն կը գտնեմ
քեզի գրելով :

Կը յուսամ նոր տարին նոր հեռանկարներով
կը ծագի քեզի համար և երջանիկ օրերու նոր
պաշար մը բերէ :

Բարեմաղթութիւններս և բարեներս հաղորդէ
բոլոր պարագաներուդ և ապահովցուր ամէնքը որ
զիրենք մուցած չեմ : Ըսէ իրենց որ հոգւով եւ
սրտով ես նոյն անձն եմ, թէև տարիներ ու ծովեր
բաժնած են մեզ :

Կարօտի՛ համբոյրներով՝

Ընկերդ ,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 107

my childhood. In this mood I find happiness in writing to you.

I hope the New Year begins with brighter prospects for you and will bring a new store of happy days. Give my best wishes and greetings to every member of the family and tell all of them that I have not forgotten them, and that I am, in heart and spirit, the same person, although time and space have separated us.

Best wishes from

Your old chum,



ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Ընտանեկան նամակները ընտանիքի անդամներուն եւ կամ մօտիկ ազգականներուն գրուած նամակներն են և էութեամբ նոյնը ինչպէս բարեկամական նամակները: Սէրը և կարօտը ներշնչումի միակ աղբիւրներն են՝ որոնցմով կրնանք մեր նամակներուն համ ու հոտ տալ: Ծնողաց և մեծերուն գրուած նամակները թէև պէտք է խիստ ընտանի և մտերմական ոճ մը ունենան, բայց երբեք կորսնցնելու չեն յարգանքի բնական արտայայտութիւնը: զգուշանալու է նաեւ կեղծ ու անբնական պոռթկումներէ, բացազանչութիւններէ և աղմուկէ. մաքուր և սիրուն զուարթութիւն մը պէտք է փայլի մեր զգացումի բոլոր արտայայտութիւններուն մէջ:

Շատեր կը շուարին եւ չեն գիտեր թէ ինչ գրեն իրենց ծնողաց, եղբայրներուն, քոյրերուն, և այլն: Այդ շուարումը բոլորովին անհարկի է, որովհետև առօրեայ կեանքի ամենապզտիկ մանրամասնութիւններն անգամ հետաքրքրական են հեռաւոր սիրելիներուն համար: Կարելի է տեղեկութիւններ տալ մեր առողջութեան, գործի, բարեկամական տեսակցութիւններու, հաւաքոյթներու, ժողովներու մասին, և այսպէս անսահման նիւթ մատակարարել:

Վիքթօր Հիւկօի և Հէնս Էնտըրսընի ընտանեկան նամակներէ առնուած նմոյշները թէ հաճելի են և թէ պարզութեան օրինակներ՝ որոնք նոյնիսկ մանուկներու ուղղելիք նիւթեր կուտան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՆՈՐԵԿԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՀՕՐ

Սիրելի Հայրիկ,

Երկար ճամբորդութեան անխուսափելի յոգ-
նութիւններէն ետք երէկ ապահով հասայ այստեղ
և ահա առաջին պատեհութեամբ ձեզի կը գրեմ:

Քեռիս զիս դիմաւորելու եկած էր և առանց
դժուարութեան զիս դուրս հանեց: Շնորհիւ քե-
ռիս օտարութեան դժուարին վիճակէն ազատ եմ,
միայն ձեր կարօտը ունիմ սրտիս մէջ: Այսօր այս
նոր տունը տարօրինակ կը թուի ինծի՝ առանց հօր
և մօր. անշուշտ եթէ քեռիս չըլլար դիմանալը
դժուար պիտի ըլլար:

Սիրելի Հայրիկ, թէև հիմա ձեռնէ այսքան հե-
ռու եմ, բայց այն կարօտը որ սիրտս կը լեցնէ
պիտի առաջնորդէ զիս միշտ ձեզի արժանի զա-
ւակ մը մնալու եւ ձեր երջանկութեան համար
աշխատելու:

Գիշերուան հանգիստէն ետք արդէն ուժերս
վերադարձած կ'զգամ եւ պատրաստ գործելու:
Քեռիս կ'ապահովցնէ որ գործերը կարծուածին
չսփ ծանր չեն եւ եթէ մէկը իր առողջութեան
հոգ տանի երբեք չփնասուիր: Քեռիս կ'ըսէ որ
գոնէ երկու շաբաթ պէտք է հանգիստ ընեմ եւ
անկէ ետքը գործի երթամ: Ինքը կը կարծէ որ
գործ առնելը դժուար չէ: Թէև ես անհամբեր
եմ ժամ առաջ գործ մը առնելու, բայց քեռիս
խորհուրդին համաձայն պիտի սպասեմ:

Ասկէ ետք պիտի աշխատիմ գոնէ երկու շա-
բաթ անգամ մը նամակ գրել ձեզ:

Ձեր երախտագէտ զաւակը,

FAMILY LETTERS.

Letter From a Son to His Father.

Dear Father:

After a long and tiresome journey I arrived here safely yesterday, and now, at my first opportunity, I am writing to you.

Uncle came to meet me and helped me out without any difficulty. Thanks to him I am free from the hardships of a strange country. I only miss you. Today this new house seems strange to me without Father and Mother. I have no doubt that I could not stand it without my uncle.

Dear Father, although I am so far from you now, the love for you that I have in my heart will always lead me aright to be a son worthy of you and to work for your happiness.

After the rest of last night I feel that I have recovered my strength and am ready to work. Uncle assures me that the work is not as hard as is thought, and that if a man takes good care of his health it does not do any harm. Uncle advises me to rest at least a couple of weeks and then go to work. He thinks it is not hard to get work. Although I am impatient to go to work, I shall wait in accordance with Uncle's advice.

After this I will try to write you at least once every other week.

Your grateful son,

Նոյճը իր Մօրը

Սիրելի Մայրիկ ,

Իե՞ռ նոր հասած ըլլալով կարօտի զօրաւոր զգացումները թող չեն տար երկար նամակ գրելու : Այս նամակս գրելու նպատակս է ձեզ տեղեկացնել ապահով ժամանումիս և գոհացուցիչ առողջութեանս մասին : Ձեր իրատները երբեք չպիտի մոռնամ և միշտ պիտի աշխատիմ ձեր բաղձանքին համաձայն լաւ զաւակ մը ըլլալ : Թէև ձեր գուրգուրանքէն զուրկ եմ, բայց վստահ եմ որ զիս կը սիրէք միշտ և այդ վստահութիւնը իմ միտքարութիւնս պիտի ըլլայ :

Այստեղ գալուս՝ քեռիս լաւ և առողջ վիճակի մը մէջ չգտայ : Կ'ըսէ որ իմ իր քով տպրիլը տեսակ մը ընտանեկան յարկի տպաւորութիւնը կը թողու իր վրայ :

Իմ Ամերիկեան կեանքի մասին միշտ տեղեկութիւններ պիտի տամ ձեզ և պիտի գրեմ կանոնաւորապէս երկու շաբաթ անգամ մը : Շաբաթ մը հօրս եւ շաբաթ մը ձեզ, այնպէս որ ամէն եօթնեակին ինձմէ նամակ մը ստանաք : Բոլոր ազգականներուս սիրալիր բարեներս կը զրկեմ : Ամէնուն մէկիկ մէկիկ չեմ կրնար գրել, բայց կ'ապահովցնեմ որ միշտ հաճոյքով պիտի յիշեմ զիրենք :

Ներքիակ պիտի գտնէք քեռիս նամակը :

Մնամ ձեր հնազանդ զաւակը ,

ՄԵԼԻՔՈՆ

To His Mother.

Dear Mother:

Having just arrived, I am in the grip of home-sickness and cannot write very long. I only want to notify you by this brief letter of my safe arrival and good health. I shall not forget your advice and shall always try to be a good boy. Although I am now deprived of your caresses, I know that you love me and that knowledge will be my comfort.

Upon my arrival here I found Uncle in good health. He says that my being with him makes him feel at home.

I shall always keep you informed about my life in America, writing you regularly once in two weeks; one week to you, and the next week to Father, so that you will get a letter from me every week. Remember me to all our relatives. I cannot write to them all individually, but they may be sure that I shall always remember them with pleasure.

You will find a letter from Uncle enclosed.

Your obedient son,

Melkon.

Իր Գրոզը

Սիրելի քոյրս Վարդուհի,

Այսօր առաջին անգամն է որ բոլորովին օտար աշխարհէ մը կը գրեմ քեզի: Ինծի բոլորովին տարօրինակ կը թուի առանց հօր, մօր կամ քրոջ գտնուիլ: Այնտեղ եղած ատենս միշտ կը փափաքէինք մեր քեռին տեսնել: Հիմա ես այդ փափաքիս գոհացում գտած եմ, բայց որչա՛փ երջանիկ պիտի ըլլայի, եթէ ամէնքս մէկտեղ ըլլայինք և մեր իրիկուները ընտանեկան քաղցր ղուարձութեամբ անցնէինք:

Երբ ընտանեկան յարկի տակ էի չէի կրնար երևակայել թէ որչափ դժուար էր քրոջմէ զուրկ ապրիլ: Շատ բաներ ունիմ քեզի ըսելիք, շատ բաներ քեզի պատմելիք իմ տեսածներէս. բայց քովս չես, և չեմ կրնար անոնք գրի առնել: Անմիջապէս որ քիչ մը վարժուիմ այս նոր կեանքին, քեզի երկար նամակներ պիտի գրեմ:

Այս նամակը գրած ատենս սենեակի մէջ բոլորովին մինակ եմ, քեռիս գործի գացած է: Սենեակի մէջ կը պտտիմ, սուռնէն քիչ մը դուրս կ'ելլեմ. բայց հեռուն չ'երթալու կը վախնամ ու նորէն կուգամ սենեակ: Գոնէ շարունակ քեռիիս հետ ըլլայի, այնքան միայնակ չպիտի զգայի: Երբ ես ալ գործել սկսիմ՝ այս ձանձրոյթէն և միայնութեան առթած մեղամաղձոտութենէն կ'ազատիմ: Իմ երջանկութիւնս պիտի ըլլայ միշտ քու և ամբողջ ընտանիքի մասին խորհիլ: Գրէ ինծի շուտով: Երկար նամակներ կ'սպասեմ քենէ: Ես ալ կը խոստանամ երկար գրել:

Մնամ միշտ կարօտով՝

Եղբայրդ,

To His Sister.

Dear Sister:

This is my first letter to you from a far-away land. It seems strange to me to be without Mother, Father and Sister. When I was with you we wished so much to see Uncle; now I am happy in that respect, but I would be much happier if we were all together and could spend our evenings in our family games and recreations.

While at home I could not imagine how hard it would be to be deprived of my sister. I have many things to tell you, many things that I have seen to describe to you, but you are not with me and I cannot write all of them. As soon as I get used to this new life I will write you long letters.

As I write this letter I am all alone in the room, Uncle being at his work. I walk a little in the room; I go out from the house, but not daring to go far, I come back to the room. If I could be with Uncle all the time I would not feel so lonely. When I begin to work I shall be free from this restlessness, and this melancholy caused by loneliness. It will be my happiness to think of you and of all. Write me soon. I am looking for long letters from you. I myself promise to write longer.

Your affectionate brother,

Իր Հօրեղբոր

Սիրելի Հօրեղբայր,

Ահա քանի մը օր է որ Ամերիկա եկած եմ և կ'աշխատիմ ինքզինքս յարմարցնել այս երկրի պայմաններուն: Այս օրեր հանգիստ կ'ընեմ քեռիս մօտ: Բայց երբեք չեմ կրնար մոռնալ հայրենի երկրի քաղցր յիշատակները: Հոն եղած ատենս այնքան չէի կրնար գնահատել այն երջանկութիւնը որ ծնողքներու ներկայութիւնը եւ աղգականներու մօտաւորութիւնը կուտային: Կը յիշեմ օրջա՛փ ուրախ եւ երջանիկ կ'զգայի երբ մեր տունը գայիք հօրս հետ խօսակցելու: Մէկիկ մէկիկ կը յիշեմ բոլոր այն փայփայանքները որ ինծի կ'ուտայիք, և գուրգուրանքով կը պահեմ այն թանկագին նուէրները որ ինծի տուած էք:

Կարօտի զգացումները դեռ զօրաւոր են իմ մէջս և չեմ կրնար ընդդիմանալ զիս գրաւող հայրենաբաղձութեան: Ուստի այս օրերուն միակ սփոփանքս կը գտնեմ ձեզի գրելով: Որչա՛փ անտանելի պիտի ըլլար այս կեանքը եթէ քեռիս մօտ չըլլայի: Իրիկունները քեռիս հետ միշտ ձեր վրայ կը խօսինք և այդ կերպով մեր ժամերը կը քաղցրացնենք:

Սիրելի Հօրեղբայր, ձեզ կը վստահացնեմ որ երբեք մտքի կատարեալ անդորրութիւն չպիտի ունենամ մինչև որ ատեն ատեն չգրեմ ձեզ: Եւ եթէ ձեռնէ երբեմն նամակ ստանամ երջանիկ պիտի զգամ: Կը մնամ սիրոյ բարեկներով

Ձեր եղբորորդի,

To His Uncle at Home.

Dear Uncle:

I have been in America now for several days and am trying to adapt myself to the conditions of the country. At present I am resting at my uncle's. I can never lose the memory of home. When I was there I could not realize the happiness that one enjoys with parents and among relatives. I remember how happy I was whenever you came home to see us and to converse with Father. I remember all the caresses you gave me, and I keep with tenderness your gifts, which are precious to me.

I miss you so much that I cannot resist a homesick feeling. I find some comfort now in writing. I could not endure this life if I were not with my uncle. In the evenings we talk about you all and thus we make our leisure hours a thorough resting time.

Dear Uncle, I assure you I shall never have peace of mind without writing you once in a while. And if I receive letters from you I shall be very happy.

With love,

Your nephew,

Քեռիին նամակը Իր Գրոջ

Սիրելի Գոյր իմ,

Մեղքոնը արդէն իր ժամանումի մասին կը գրէ քեզ. ես մինակ երկու տողով կ'ուզեմ քեզ վստահացնել որ իմ ձեռքէս եկածին չափ պիտի օգնեմ իրեն, որպէսզի այս օտարութեան կեանքը գոնէ մասամբ տանելի ըլլայ: Ես դժբաղդարար յաջող մէկը չեմ որ իրեն համար լաւագոյն ասպարէզ մը ապահովէի: Բայց վերջապէս պիտի աշխատիմ որ լաւ արհեստ մը սորվի և քանի մը տարիէն ձեզի վերադառնայ թէ՛ իր արհեստով և թէ՛ իր դրամագլուխով: Այն ատեն թերևս ես ալ հրաժեշտ տամ այս տեղի գործաւորական կեանքին եւ գամ սիրելիներուս ու բարեկամներուս հետ մնացած կեանքս անցնելու:

Տարակոյս չունիմ որ Մեղքոնին ձեռնէ հեռանալը շատ դժուար կուգայ ձեզ: Ինծի համար իր ներկայութիւնը հոս տեսակ մը ընտանեկան յարկի տպաւորութիւնը կը ձգէ. ցորեկը աշխատութեան ատեն՝ գիտեմ որ քրք իրիկունը վերադառնամ սենեակս, միայն չորս պատեր չէ որ պիտի գտնեմ, այլ նաև սիրելի քեռորդիս: Կը յուսամ որ իր գալը բարիք մը պիտի ըլլայ թէ իրեն և թէ ձեր ամէնուն: Ինքը վառվռուն և ուշիմ երիտասարդ մըն է և վստահ եմ որ շուտով իր յաջողութեան ճամբան կը գտնէ:

Իմ սիրալիր բարեններս հաղորդէ քեռայրիս, վարդուհիին և բոլոր ազգականներուս:

Եղբայրդ,

Uncle's Letter to His Sister (the Mother).

Dear Sister:

Melkon is already writing you in regard to his arrival. I only want to assure you by this note that I shall give him all the assistance in my power and try to make his life as comfortable as possible. Unfortunately I am not a successful man to secure for him a good position; but I shall try anyhow to help him learn some useful art so that in a few years he may return to you with skill and with a little capital. If my plans work well I myself may leave my work and return to spend the rest of my life among my relatives and friends.

I have no doubt that you find it very hard to have Melkon away from home. His presence here gives me some feeling of home. Now, while working in the daytime, I know that upon my return to my room I shall not find the walls only, but also my dear nephew. I do hope that his coming may prove beneficial both to you and to himself. He is a lively and bright fellow and I am sure he will soon find his way to success. Give my love to my brother, to my dear niece Vartouhi, and all relatives.

Your affectionate brother,

Քրոջ Պատասխանը իր Եզրօր

Սիրելի Եղբայր ,

Նամակդ ուրախութեամբ ստացայ , որ մեր ամենուն մխիթարանք մը եղաւ : Մեկքոնը Ամերիկա Ղրկեցինք իր բունն փափաքին գոհացում տալու եւ իր ապագան մեր սիրոյն չզոհելու համար : Բայց երբեք չէինք կրնար հաւանիլ , եթէ քու պաշտպանութիւնդ և հսկողութիւնդ իրեն համար ապահովուած չըլլար :

Սիրելի եղբայր , կ'ըսես որ Մեկքոնին այնտեղ ըլլալը քեզի տեսակ մը ընտանեկան յարկի տպաւորութիւնը կը թողու : Այդ տողերը աչքերէս արցունք խլեցին : Տասը տարիէ իվեր հեռացած ես հայրենի երկրէն և տակաւին վերադարձի խօսքերը նոր կ'ընես , այն ալ սպասելէ ետք , մինչև որ Մեկքոն իվիճակի ըլլայ իր հօր և մօր գիրկը վերադառնալու : Սիրելիս , տակաւին երիտասարդութիւնդ չես կորսնցուցած , ես վստահ եմ որ դեռ կտրիճ տղայ մարդ մըն ես , որովհետեւ տարիքդ հազիւ երեսունը հինգ է : Ինչո՞ւ համար չես մտածեր կարգուելու եւ սուն տեղ ըլլալու մասին : Եթէ մտուսնանաս և քանի մը տարի ետք Մեկքոնին հետ վերադառնալ ուզես , ինչ որ մեր ամենուս ալ սրտագին բաղձանքն է , կը բերես նաև հարսդ և ամենքս այստեղ երջանիկ կ'ըլլանք : Եթէ անգամ մը այդ ուղղութեամբ մտածես՝ քեզի յարմար ընկերուհի մը կրնաս գտնել կամ հող և կամ հոս : Մեր քաղաքի մէջ քեզի յարմար աղջիկներ շատ կան և անոնցմէ շատերը կը ճանչնաս : Եթէ սիրտդ ընտրութիւն մը ընէ՝ ես վստահ եմ որ յուսախար չես մնար : Ուրեմն լրջօրէն մտածէ այս ըսածներուս վրայ և ուրախացուր քոյրդ՝ լապատասխան մը տալով :

Սիրով և կարօտով

Քոյրդ ,

ՄԱՔՐՈՒՀԻ ԱՐՍԷՆԵԱՆ

The Answer.

Dear Brother:

I was glad to receive your letter, which gave all of us comfort. We sent Melkon to America in order to satisfy his desire and not to sacrifice his future to our love. But we could never have consented to it if your protection and care for him were not secure.

Dear Brother, you say that Melkon's presence gives some feeling of home. Those lines filled my eyes with tears. You have been away from home for ten years, and this is the first time that you have spoken of returning, and that after waiting until Melkon is ready to come back to his parents. My dear brother, you have not yet lost your youth; you are still a strong young man, for you are hardly thirty-five years old. Why don't you think of marrying and settling down? If you marry and desire, after a few years, to return with Melkon—which is our heartfelt wish—you will bring your wife with you and we shall all be happy here. If you once begin to think of this you will be able to find a companion either there or here. There are many suitable girls in our town, most of whom you know; if your heart makes a choice, I am sure you will not be disappointed. Then take this seriously and rejoice your sister by writing a good approving letter.

With love from us all,

Your affectionate sister,

Makrouhi Arsenian.

Հօրք Պատասխանք

Սիրելի զաւակս,

Ողջ առողջ հասնելուդ լուրը անհամբեր կ'ըսպասէինք և վերջապէս նամակներդ՝ ինծի, մայրիկիդ, եւ քրոջդ՝ եկան փարատելու մեր բոլոր մտահոգութիւնները: Ուրախ եմ որ քեռիիդ հետ ես և իր ազնիւ հոգածութիւնը կը վայելես:

Անշուշտ մեզի համար շատ դժուար է քենէ զրկուած ապրիլ. քու բացակայութեամբ տունը պարպուած կը թուի մեզ. բայց քանի որ ես բողաւոր չկրցայ ըլլալ՝ իմ զաւակներուս ապագան ապահովելու, չէի կրնար քեզ անպատճառ մեր քովը պահելով քու հետապնդումներէդ զրկել քեզ: Փափաքեցար Ամերիկա երթալ եւ մենք, մայրդ և ես, հաւանեցանք արգելք չըլլալ քեզ: Հիմա քանի որ արդէն հասած ես, մեզի կը մնայ մաղթել որ բոլոր փափաքներուդ իրագործումը ստանես: Զաւակս, եթէ հայրդ այսպէս աղքատութեան մատնուած չըլլար, փոխանակ Ամերիկա գործի համար ղրկելու քեզ՝ ուսմունքի համար պիտի ղրկէր: Ինչ որ մենք չկրցանք ընել՝ կը յուսամ դուն քեզ կ'ընես: Ինքզինքիդ լաւ հոգ տար. յիշէ որ մեր միակ հարստութիւնը և մխիթարութիւնը դուն ես: Դեռ երիտասարդ ես և ամբողջ կեանք մը ունիս առջևդ. սրտի ամբողջեամբ գործդ առաջ տար:

Տա՛ր Երկինք որ չմեռած քեզ անգամ մըն ալ տեսնէի իբրեւ զօրաւոր և բարգաւաճ մարդ:

Մեր սիրոյ բարեկները քեզ և քեռիիդ,

Հայրիկդ,

Father's Answer.

My dear son:

We were waiting impatiently for the news of your safe arrival, and at last your letters to me, to your mother and sister came to dispel all anxiety. I am glad that you are with your uncle and enjoy his kind protection.

Of course it is very hard for us to be deprived of you. In your absence the house seems empty, but as I have not been fortunate enough to secure the future happiness of my children I could not insist upon your staying here and thus deprive you of your pursuits. You wished to go to America, and your mother and I decided not to oppose you. Now, as you are in America, all that is left for us is to pray that you may realize your cherished ideals. Dear son, if your father were not so poor he would have sent you to America for study and not for work. What your parents could not do I hope you may be able to do for yourself. Take good care of yourself. Remember that you are our only wealth and comfort. You are a young fellow and have a whole life before you. Carry on your work with courage.

May Heaven permit us to see you again before death as a strong and successful man!

With love from us all to you and your uncle,

Your affectionate father,

K. G. Arsenian.

Մօր Պատասխանք

Սիրելի Ջաւահար ,

Ամերիկա մեկնելէդ իվեր մեր տունը սգաւոր տուն մը դարձած էր . նամակներդ առաջին անգամ ըլլալով զուարթութիւն բերին : Իբրև մայր՝ ես չկրցայ իմ արցունքս զսպել . բայց այդ արցունքը այրող չէր , այլ զովացուցիչ արցունք մը . վիշտերս անոնցմով դուրս թափեցի : Նամակդ գոհարի պէս կը պահեմ և ատեն ատեն կը կարդամ :

Վստահ եմ որ քեռիդ քեզի պէտք եղած հոգը կը տանի և կ'ապրիս հոգիով ու մարմնով զօրաւոր : Սիրելի զաւակս , շատ մի՛ աշխատիր , առողջութեանդ խնամք տար թէ քու և թէ մեր սիրոյն համար :

Մեր ամէնուն ալ միակ երջանկութիւնը պիտի ըլլայ քենէ շարունակ լուրեր ստանալ եւ առողջութեանդ մասին տեղեակ մնալ : Իթէ կարելի էր ամէն օր գրէիր , բայց չեմ ուզեր որ այդ ձևով ինքզինքդ յոգնեցնես կամ մտմտուք ունենաս : Եթէ շարաթը անգամ մը ես կամ հայրդ կամ քոյրդ նամակ ստանանք՝ ուրախ պիտի ըլլանք և մխիթարուինք :

Սիրելիս , ամբողջ սրտովս կը մաղթեմ որ Ամերիկա քեզի համար բարգաւաճումի և երջանկութեան աղբիւր մը ըլլայ , և օր մը դառնաս քու կարօտդ քաջող ծնողացդ՝ բոլոր այն յաջողութիւններով որոնց համար կը տենչաս :

Մնամ կարօտի համբոյրներով՝

Մայրդ ,

ՄԱՔՐՈՒՀԻ ԱՐՍԷՆԵԱՆ

Mother's Answer.

My dear boy:

After you left for America our home was almost a mournful one. Your letter brought us cheering sunshine for the first time. As a mother I could not restrain my tears, but they were refreshing rather than burning tears. I poured off my sorrow with them. I am keeping your letter as a precious object and reading it every little while.

I am confident that your dear uncle takes good care of you and that you live strong in body and mind. Dear boy, do not work very hard. Take care of your health for your sake and for our sakes.

The only happiness for all of us will be to hear from you constantly and to be informed about your health. I would like, if it were possible, to hear from you every day, but I do not want you to tire yourself in that way or to worry about it. If one of us, your father, sister and myself, get a letter from you alternately every week, we shall be satisfied and comforted.

My dear, I wish with all my heart that America may become a source of prosperity and happiness to you, and that some day you may return to your loving parents with all the successes for which you long.

Your loving mother,

Makrouhi Arsenian.

Քրոջ Պատասխանք

Սիրելի եղբայրս ,

Որչա՛փ ուրախ եմ որ զիս ալ յիշեր ես այդ օտար աշխարհի մէջ քեզ պաշարող մտմտուքներու մէջ : Չես կրնար երեւակայել թէ մեր տունը որչա՛փ տրտմութեամբ լեցուած էր : Հայրիկս միշտ քու վրայ կը խօսէր իրիկունները և հառաչելով կ'ըսէր . «Արդեօք հիմա տղաս ու՞ր է և ինչ վիճակի մէջ , արդեօք ծովը կը նեղէ՞ զինք» ևն : Մայրս յաճախ պատկերիդ կը նայէր և կուլար , իսկ իմ սիրտս թախիժով կը լեցուէր ինքզինքս միակ եղբօրմէ զրկուած տեսնելով և մտածելով որ մօրմէդ և հօրմէդ հեռու կեանքը որչափ ծանր ըլլալու է . Ամէնքս ալ ուրախ ենք որ այնտեղ սիրելի քեռիիս հետն ես հիմա , երանի թէ ես ալ զինքը տեսնէի . Թէև ես շատ պզտիկ էի երբոր ինք հեռացաւ , բայց միշտ զինքը կը յիշեմ և կը սիրեմ :

Սիրելի եղբայր , չես կրնար երեւակայել թէ որչափ ուրախ զգացի այն տողերուն համար որոնցմով կը խոստանաս ինձի երկար նամակներ գրել : Վստահ եղիր որ այդպիսի նամակներ զիս քոյրերէն ամենէն երջանիկը պիտի ընեն : Ես ալ պիտի աշխատիմ քեզի երկար գրել և այստեղ անցած դարձածներու մասին տեղեկութիւն տալ : Հօրեղբայրս և իր հարսը աւելի յաճախ կուգան՝ մեզ առանձին չթողլու համար : Հօրաքոյրս և Գոհար անցեալ իրիկուն եկան եւ քեզի շատ բարեկներ ըրին : Ուրիշ մասնաւոր նորութիւններ չկան :

Մնամ սիրով և կարօտով՝

Քոյրդ ,

Sister's Answer.

Dear Brother:

I am very happy, because you remembered me in the midst of your worries in a far-away land. You cannot imagine what sorrow filled our house after you left. Father always talked about you in the evenings and often said with a sigh: "I wonder where my boy is now, if the sea affects him," etc. Mother frequently went to your picture and cried, looking at it, and my own heart was filled with sadness at being deprived of my only brother and thinking of the hardships which you might have to bear far away from us all. We are all glad that you are now with Uncle Vartan. How I wish that I could see him myself! Although I was little when he left us, I always remember him and love him.

Dear Brother, you can't realize how glad I was for those lines in which you promised to write me a long letter. You may be sure that such letters will make me the happiest and proudest among sisters. I will try in my turn to write long letters and give you home news. Uncle and his bride come oftener in order not to leave us alone. The night before last Aunt E. and Koharig came. Both send you love. At present I have no other news.

Your loving sister,

Vartouhi.

Հօրք Գրամ Կը գրկէ

Սիրելի Հայրիկ,

Ամերիկա գալէս իվեր այսօր ամէնէն աւելի երջանիկ կ'զգամ, որովհետեւ այսօր պատեհուութիւնը ունիմ որդիական սիրոյս մէկ պզտիկ հաւաստիքը ցոյց տալ ձեզի: Այսօր չորս շաբաթէ իվեր կը գործեմ և իմ խնայողութեանս առաջին արդիւնքը, երկու անգլիական ոսկի, ձեզի կը ղրկեմ ներփակ փոխ-գիրով՝ որ կրնաք գանձել Օսմ. Պանքայէն:

Գործս այնքան դժուար չէ. միայն թէ շարունակ ոտքի վրայ ըլլալով՝ քիչ մը կը յոգնիմ եւ ոտքերս կը ցաւին: Եթէ քալել ըլլար մինչեւ իրիկուն աւելի կրնայի դիմանալ. ինչ ալ ըլլայ հիմա բաւական վարժուած եմ: Քեռիս կ'ըսէ որ երկու ամիս չանցած բոլորովին կը վարժուիմ: Առ այժմ շաբաթական երկու տալէրէն քիչ մը աւելի կրնամ խնայել: Կը յուսամ որ գործը լաւ սորվելով շաբաթական վաստակս կրկին չափով կ'աւելցնեմ: Գործին վարժուելէ ետքը իրիկունները դպրոց պիտի երթամ Անգլիերէնս սորվելու համար. Քեռիս շուզեր որ հիմա երթամ, քանի որ դեռ գործին յոգնութիւնը կ'զգամ եւ ոտքիս ցաւը չէ փարատած:

Սիրալիր բարեկներս ամբողջ ազգականներու:

Ձեր երախտագէտ զաւակը,

ՄեկՔոն

Sending Money to His Father.

Dear Father:

This is my happiest hour since I came to America, because I now have an opportunity to send you a little token of my filial affection. I have been working for the last four weeks, and now I enclose my first savings, a check for two English pounds, which you may cash at the Ottoman Bank.

My work is not very hard; only, being always on my feet, I get tired and my ankles ache. If I were walking until evening I could stand it better. But I am getting used to it. Uncle tells me that before the end of two months I shall be entirely accustomed to it. At present I can save a little over a couple of dollars a week. I hope that after learning the work well I shall be able to double my earnings. After I am accustomed to the work I shall go to evening school to learn English. Uncle does not want me to go now as I still feel the fatigue of my work and my feet have not stopped aching.

Give my love to all relatives.

Your grateful son,

Melkon.

Նամակ մը եւս Քրոջը

Սիրելի քոյրս Վարդուհի,

Ամերիկեան կեանքի մասին քեզի քանի մը տեղեկութիւններ տուած եմ ասկէ առաջ: Ես կը սիրեմ քեզ հաղորդել ինչ որ կը տեսնեմ եւ ինչ որ իմ ուշադրութիւնս կը գրաւէ: Դեռ նորեկ ըլլալով այս երկրին մէջ և օրական բաւական երկար աշխատութիւնով պարապած՝ շուրջս նայելու միջոց չունիմ: Շաբաթէ մը իվեր սկսած եմ գիշերային դպրոց երթալ եւ Անգլիերէն շարադրութեան դասեր առնել, միևնոյն ատեն խօսելու ալ կը վարժուիմ: Լեզուն իւրացնելէն ետք կը յուսամ աւելի աղէկ պիտի հասկնամ Ամերիկեան կեանքն ու բարքը և կարող պիտի ըլլամ աւելի լաւ տեղեկութիւններ տալ քեզ: Առ այժմ ինչ որ կը գրեմ արտաքին երևոյթներն են միայն:

Այս տարի Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութեան տարին է: Թէեւ ականջս այնքան վարժուած չէ լեզուին, բայց ամէն անգամ որ քաղաքական ատենախօսութիւններ եղան զացի լսելու: Անոնցմէ շատ բան չէի կրնար հասկնալ, բայց յաջորդ օր թերթերու մէջ հրատարակուած տեսնելով՝ բառարանի զօրութեամբ կը կարդայի և գաղափար մը կը կազմէի:

Քաղաքական կուսակցութիւնները եօթն են. անոնցմէ նկատողութեան արժանի են՝ իրենց զօրութեան կարգով. Ռամկավարականները, Հանրապետականները, Յառաջդիմականները, և Ընկերավարականները: Յառաջդիմականները դեռ նոր կազմուած են Հանրապետականներէ բաժնուելով: Քաղաքական պայքարը շատ բուռն եղաւ, լրա-

Another Letter to the Sister.

Dear Sister Vartouhi:

I have already given you some information in regard to American life. I like to write you of whatever I see or whatever attracts my attention. Being still a newcomer and busy with a long day's work I have no chance to look around. For a week I have been attending evening school to take lessons in English composition. At the same time I am practicing speaking. After learning the language I hope I shall be able to better understand American ways and manners and give you more information. At present whatever I write you has to do with the outward aspects of life.

This year is the presidential election year in the United States. Although my ears are not very familiar with the language, I have gone to listen to every political speech. I have not been able to get much out of them, but when I have seen them published the next day in the daily papers I have been able to read them with the help of a dictionary and get some idea of them.

There are seven political parties. Those which deserve attention are the following in the order of their strength: Democratic, Republican, Progressive, and Socialist. The Progressive has been recently organized after separating from the Republican party. The political campaign has

գրական յօդուածներով, ատենախօսութիւններով, թափօրներով, ևն: Գիշերուան մէկ երկու թափօրները տեսնելու գացի. իսկապէս կ'արժէր տեսնել: Գիշեր մը ուսանողական թափօր մը կար: Չանազան գօլէճներու ուսանողներ իրենց համակրած կուսակցութեան թեկնածուին համար ահագին թափօր մը կազմած էին, և երաժշտական խումբերով, ջահերով, դրօշակներով և բազմազան տարազներով պօսթօնի փողոցները կը շրջէին: Չահերը հեռուէն բոցերու հեղեղի մը տպաւորութիւնը կը թողէին, իսկ երբ թափօրը կը մօտենար՝ անոնք ցորեկի պէս կը լուսաւորէին փողոցը: Մարդոց եւ կիներու անսահման բազմութիւն մը ահանատես կ'ըլլար այս գեղեցիկ տեսարանին եւ հուրրաններով կ'ողջունէր թափօրականները: Երբեմն իրենց դրօշներուն վրայ սրամիտ ակնարկութիւններ կային, և երբ գնահատող ժողովուրդը տեսնէր զանոնք ցնծութեան աղաղակներով կ'ողջունէր: Այդ աղաղակները թափօրին հետ կը յառաջանային: Երբ թափօրը կը հասնէր տեղ մը՝ ժամանումի ողջոյնը կը բարձրանար. երբ թափօրի լուսազարդ արձանագրութիւններէն սրամիտ բան մը տեսնուէր՝ նոր հուրրաններ կը բարձրանային: Եւ նոյն աղաղակները յաջորդաբար կը կրկնուէին յառաջապահ հանդիսատեսներու կողմէն:

Որչա՛փ փափաքեցայ որ դուն ալ քովս ըլլայիր և տեսնէիր անոնք ինծի հետ: Ես գրելով չեմ կրնար նկարագրել:

Ընտրութիւնները երէկ վերջացան: Երէկ գիշեր դարձեալ Պօսթօն գացինք տեսնելու համար ընտրութեանց արդիւնքը՝ թերթերու խմբագրա-

been intense, with newspaper discussion, public speeches, parades, etc.

Some night parades were worth seeing. One night I saw a students' parade. The students from several colleges had formed a huge parade in honor of the candidate with whom they had party affiliation, and, with bands of music, torches, flags, and varied costumes, they marched in the streets of Boston. The torches from a distance gave the impression of a mass of flames, and when the parade came nearer they illuminated the streets like daylight. A multitude of men and women were spectators of this beautiful scene and cheered the paraders with prolonged "Hurrays." Sometimes there were witty allusions on their banners, and when appreciating spectators saw them they responded with cheers. Greeting and cheering clamor advanced with the parade. When the parade approached a place an outcry of greetings filled the air; and when something witty on the brilliant banners was read an uproar of cheers and laughter echoed everywhere. Such shouts and noise were continuously repeated by the successive crowds.

How I wished that you were with me to see and enjoy these with me! I cannot describe all of them.

Last night the elections were over. In the evening we went to Boston in order to see the results of the elections in front of the newspaper

տուներուն դիմացը: Ամէն թերթի իմբագրութիւն իր շէնքի ճակտին վրայ պատկերացոյցով ընտրութեանց մասին տեղեկութիւններ կուտար: Այս առաւօտեան թերթերէն արդէն կը հասկցուի որ ռամկավարականները յաղթական ելած են եւ Ուիլսընի ընտրութիւնը ապահովուած է: Նախագահը ուզողակի ժողովուրդի քուէով չընտրուի: Ժողովուրդը կ'ընտրէ ամէն նահանգի մէջ կարգ մը մարդիկ՝ որոնք յունվարի մէջ օր մը կը հաւաքուին իրենց պատկան նահանգի մայրաքաղաքին մէջ և կը քուէարկեն նախագահի համար: Ամերիկացիները այս երկրորդ կարգի ընտրողներու ժողովը կը կոչեն Ընտրական Գօլէճ: Նախագահը այսպէս թէև Ընտրական Գօլէճէ կ'ընտրուի, բայց իրապէս ժողովուրդէն կ'ընտրուի. որովհետեւ Ընտրական Գօլէճի անդամները իրենց կուսակցութեան թեկնածուին միայն քուէ կուտան: Ուրեմն այսօր ընտրուած ընտրողներէն յայտնի կ'ըլլայ թէ ո՛վ պիտի ըլլայ նախագահը:

Այս տեղեկութիւնները քաղեցի գիշերուան դպրոցի ուսուցիչէն՝ որ քանի մը անգամ անգլիերէն կրկնեց մինչև որ ըսածները բաւական հասկցայ: Կը յուսամ դուն ալ գոհ կ'ըլլաս իմանալով թէ Ամերիկացիները ինչպէս կ'ընտրեն իրենց նախագահը:

Քեռիս քու տողերդ կարդալով շատ ուրախ եղաւ և ինքն ալ քեզի պիտի գրէ:

Իմ սիրալիր բարեկներս հաղորդէ բոլոր ազգականներուն: Այս անգամ ուրիշ նամակ չպիտի կրնամ գրել:

Կարօտով եղբայրդ,

buildings, where the outcome was represented by moving pictures. This morning the papers announce that the Democrats have come out victorious and that the election of Mr. Wilson is secured.

The President is not elected by the direct vote of the people. The latter elect, in their respective states, a number of men who come together on one day in January in the capital of their state and vote for the president. Americans call the meetings of these electors the Electoral College. The president is thus nominally elected by the Electoral College, but in fact by the people; because the members of the Electoral College vote for the candidate of their respective parties. Therefore today they can tell by the elected electors who will be the next president.

I obtained this information from the teacher in the evening school who repeated it to me several times until I understood what he said. I hope you will be glad to know how Americans elect their president.

Uncle was glad to read your letter. He will write to you himself. Remember me to all our relatives. I shall not be able to write another letter today.

Your affectionate brother,

Քրոջ Պատասխանք

Սիրելի Եղբայր ,

Մեծ ուրախութեամբ և հետաքրքրութեամբ կարդացի Նոյեմբեր 6 թուակիր նամակդ , որուն մէջ Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութեան մասին տեղեկութիւններ տուած էիր : Ծնորհակալ եմ , եղբայր , այն աղուոր զգացումներուն համար՝ որ ինծի հանդէպ կը տածես : Կ'ըսես որ մեծ փափաք զդացիր զիս քովդ ունենալու : Կը գնահատեմ այդ զգացումդ . ես ալ կը տենչամ քու քովդ ըլլալ . և քանի որ չեմ կրնար քովդ ըլլալ քեզ օգնելու և հետդ վայելելու Ամերիկեան կեանքի գեղեցկութիւնները , նամակներէդ կը քաղեմ բոլոր այն տեղեկութիւնները որ ինծի կու տաս : Սիրելի եղբայր , չես կրնար երևակայել թէ այդպիսի նամակներ որչա՛փ երջանիկ կ'ընեն հայ աղջիկները՝ որ կը վախնան տունէն դուրս ելնել . իսկ տան մէջ գոնէ կարդալու համար գիրքեր չեն կրնար գտնել : Նամակներդ իմ առջեւ ամբողջ աշխարհ մը կը պարզեն և պատմութեան պէս կը կարդամ զանոնք : Անոնք տան մէջ դպցոց մը կը բանան ինծի համար : Նամակներդ կարդացի նաև իմ բարեկամ աղջիկներուն՝ որոնք ըսին . « Երանի քեզի որ այդպէս եղբայր մը ունիս » :

Քեզի համար բարձի երես մը կ'ասեղնագործեմ իբրև յիշատակ , լրանալուն պէս պիտի դրկեմ քեզ : Սիրալիր բարեներս հաղորդէ քեռիս :

Մնամ սիրով և կարօտով՝

Քոյրդ ,

The Sister's Answer.

Dear Brother:

I read with great joy and interest your letter of Nov. 6th, in which you gave information in regard to the elections in the United States. I thank you, dear brother, for your kind consideration. You say that you wish I were with you. I appreciate that brotherly thought; I myself desire very much to be with you. But, as I cannot be with you to help you and enjoy American life with you, I get from your letter interesting information and knowledge.

Dear Brother, you cannot imagine how happy such letters make us, the Armenian girls, who are afraid to go out of the house and cannot find books at home to read. Your letters give me an outlook on the world and I read them just like stories. They make home a school for me. I read your letters to my girl friends and they said that I must be very happy in having such a brother.

I am embroidering a sofa pillow cover. I will send it to you as a keepsake as soon as I get through. Give my love to Uncle.

Your loving sister,

Մօրք Դրամ Կը զրկէ Կաղանդէն առաջ

Սիրելի Մայրիկ ,

Ամիս մը միայն մնաց Կաղանդին . այդ առթիւ իմ սիրազեղ սրտի մաղթանքները ժամանակին ձեզ թղթով մը կը ղրկեմ : Ձայնս չիհասնիր ձեզ , իսկ թուղթը շատ ծանր կ'երթայ : Այսօր այս նամակը կը գրեմ Կաղանդի պատրաստութիւն տեսնելու համար : Ձեզի կը ղրկեմ հօրս անունով երեք ոսկիի փոխ-գիր մը , որպէսզի ձեզի համար պատրաստէք գեղեցիկ հագուստ մը՝ որ կարող ըլլաք հագուել Կաղանդի օրը , երբ մեր ազգականները կ'ընդունիք հայրենի յարկի վառարանին շուրջ : Անշուշտ ես այն ատեն ներկայ չեմ կրնար ըլլալ , բայց հոգիովս ձեր մօտ պիտի ըլլամ . ես վստահ եմ որ հարսի մը պէս գեղեցիկ պիտի երևնաք այդ նոր հագուստին մէջ , և նոր տարուայ առաջին օրը երջանկութեան օր մը պիտի ըլլայ ամբողջ գերդաստանին համար : Պիտի ուզէի նաև ձեր լուսանկարը ունենալ սեղանիս վրայ : Ուստի , եթէ յարմար առիթով մը ձեր նոր հագուստով լուսանկարնիդ առնել տաք և ինծի ղրկէք՝ երջանիկ պիտի ընէք զիս :

Ձերմ համբոյրներով՝

Ձեր զաւակը ,

A Christmas Present to the Mother.

Dear Mother:

Today is about a month before Christmas. I shall send you my best wishes at the proper time. My voice does not reach you and a letter goes very slowly. I send you this letter now to have you get ready for Christmas. I enclose for you a check for three pounds in Father's name, and I want you to make yourself a pretty dress to wear on Christmas day when you receive our relatives around the hearth fire at home. I cannot be there, but I shall be present in spirit. I am sure that you will look just like a young bride in that dress, and that that day will be a day of happiness for the whole family. I want also to have your photograph on my table. You will make me very happy if you will send me a picture taken in your new dress.

Your loving son,

Կաղանդի Նամակ

Սիրելի Հայրիկ,

Այս առաջին կաղանդն է որ ձեռն է հեռու օտար երկրի մը մէջ կ'անցնեմ: Կը տեսնեմ բոլորտիքս երջանիկ ընտանիքներ՝ որ իրենց տուներու մէջ կը զուարճանան երգելով, խաղալով, և խնդալով. և ես կը յիշեմ այն ուրախ միութիւնները որ մենք կ'ունենայինք մեր սիրելի ազգականներու հետ: Մեր երջանկութիւնը զերծ չէր զանազան մտահոգութիւններէ, ինչպէս այս տեղի ժողովուրդի երջանկութիւնը, բայց վերջապէս թոպէն բաւական թեթեւութիւն կը բերէր մեզի: Հիմա քեռիս եւ ես առանձին ենք մեր սենեակին մէջ և կը պատրաստուինք հայկական ժողովի մը երթալ՝ լսելու համար կարգ մը սիրուած երգեր և ունկնդրելու ատենախօսութիւններ: Ուստի մեկնելէ առաջ ուզեցի իյիշատակ մեր նախկին կաղանդներու միութեան՝ քանի մը թոպէ ինքնամիտփութիւն եւ երեւակայութեամբ թռչիլ ու տեսնել ձեզ, սիրելի մայրիկս, քոյրս, հօրեղբայրս, հօրաքոյրս, ևն., բոլորուած վառարանին շուրջ և մասնակցիլ ձեր խօսակցութիւններուն: Այսպէս ընտանեկան յարկին քաղցրութիւնը իր յիշատակներով կը վայելեմ և երջանիկ կ'զգամ ինքզինքս: Ուրեմն սրտանց կը մաղթեմ որ ասկէ վերջ բազմաթիւ երջանիկ տարիներ տեսնէք և իմ ու քեռիիս վերադարձով կարող ըլլաք՝ հին օրերու պէս՝ ամբողջ գերդաստանը ձեր շուրջ բոլորուած գտնել:

Կը մնամ միշտ

Ձեր երախտագէտ զաւակը,

A Christmas Letter to the Father.

Dear Father:

This is the first Christmas that I have spent away from you in a different country. I see happy families around me who amuse themselves in their homes by singing, playing, dancing and laughing, and I remember the joyful reunions which we used to have with our relatives. Our happiness was not like the happiness of these people free from worries; but, after all, the hours gave us some relaxation. Now Uncle and I are alone in our room and we are getting ready to go to an Armenian meeting to hear some beloved songs and listen to some speeches. But before leaving the room I want to withdraw for a few minutes into the memory of our previous Christmas reunions and in imagination to see you, Mother, Sister, Uncle, Aunt, etc., around the hearth fire and take part in your conversation. I enjoy the sweetness of home in memory and feel happy. I hope with all my heart that you may be blessed by many years and that upon our return you may be able to see the whole family again around you.

Your grateful son,

Մօրք պատասխանք

Դեկտեմբեր 24, —

Սիրելի զաւակս,

Թերևս կարծես որ արցունքը աղուոր նամակդ ընդունելու անշնորհ կերպն էր: Բայց անոնց ամէնքը տղաս տեսնելու կարօտի արցունքները չէին, կային նաև ուրախութեան արցունքներ. որովհետեւ դուն չես մոռնար զիս եւ, թէպէտ ծանր մաքառումի մէջ ես ու քիչ կը շահիս, ծրագրած ես ինծի գեղեցիկ զգեստ մը տալ: Կրնաս վստահ ըլլալ որ ամենագեղեցիկ հագուստը շէր կրնար զիս այնքան երջանիկ ընել որչափ քու խորհուրդդ ըրաւ: Քիչ ատենէն քեզի պիտի դրկեմ պատկերս ինչպէս որ ուզած էիր, թէև ինքզինքս չափազանց ծերացած կը կարծէի պատկերս առնել տալու համար:

Մենք ամէնքս ալ լաւ և առողջ ենք և զբաղած միևնոյն բաներով՝ որ անշուշտ կը յիշես: Մենք քու կարծածէդ աւելի կարօտդ կը քաշենք: Դուն շատ մը նոր բաներ ունիս ժամանակդ և խորհուրդներդ տալու. բայց մենք կ'ապրինք այնպէս ինչպէս տարիներ առաջ ապրած էինք, միայն թէ դուն մեզի հետ չես: Հայրդ և ես իրիկունները կը նստինք և քու վրայդ կը խօսինք: Մենք կ'ուզենք որ դուն ընես ինչ որ քեզի համար պատշաճագոյն է. ատենէ մը ետքը կը յաջողիս: Ու մենք կ'աղօթենք որ օտար աշխարհի մը մէջ եւ շատ մը փորձութիւններու մէջտեղ կարենաս մնալ այն մաքուր, շիտակ, և զօրաւոր տղան՝ որ եղած էիր քու հայրենի երկրիդ մէջ — և աւելի զօրաւոր քանի տարիները կը հոլովին:

The Mother's Answer.

December 24, —.

My dear Son:

You may think tears were an ungracious welcome to give your good letter. But they were not all tears of homesickness to see my boy. There were tears of joy, too; because you do not forget me, and, although you are having a hard struggle and earning only a little, you have planned to give me a new dress. You may be sure that the finest dress could not make me as happy as your thought has made me. By and by I shall send you my picture as you ask, although I had thought myself too old to have one taken.

We are all in good health and busy in the ways that you remember well. We miss you more than you can realize. You have many new interests to take your time and thought. But we are living as we have lived for many years, except that you are gone. Your father and I sit and talk of you in the evening. We want you to do what is best for yourself. You will succeed after a time. But we pray daily that in a strange land and in the midst of temptations you may be the same pure, true, and strong boy you were when at home—only stronger as you grow in years.

Յաճախակի գրէ և տեղեկացուր մեզ շուրջդ անցած դարձածներուն մասին, ըլլան անոնք մեծ թէ պզտիկ: Լաւ օթեան մը կրցա՞ր գտնել: Ի՞նչ կ'ընես կարկտանքի մասին: Այսօրուան ճաշի համար — ը պատրաստեցի: Պօսեցանք զայն սիրելուդ մասին և փափաքեցանք որ կարենայիր մեզի հետ վայելել:

Մեր ամենուն սիրոյ բարեկները քեզի. յուսաքենէ շուտով նորէն լսել, կը մնամ,

Քեզ սիրող մայրդ,

ԱՅԴ ԱՌԻԹՈՎ ՔՐՈՋ, ՆԱՄԱԿԸ

Սիրելի եղբայր,

Որչա՛փ փափաքեցայ որ մօրս դէմքը տեսնէիր, երբ աննամակդ բացաւ և կարդաց: Աւելի քան վարձատրուած պիտի զգայիր՝ հոգ չէ թէ, նուէրդ որքան զոհողութիւն արժած ըլլար:

Գիտես որ մայրիկը իր պէտքերուն վրայ ամենէն ետքը կը մտածէ, և չպիտի զարմանաս լսելով որ լաւ զգեստ մը շունէր ան: Նոր զգեստը ձեռելու և կարելու պատիւը ես պիտի ունենամ և կրնաս վստահ ըլլալ որ իմ լաւագոյնս պիտի ընեմ: Շնորհիւ քու նուէրիդ եւ իմ ճարտարութեանս մայրիկը շատ գեղեցիկ պիտի երևնայ Մնունդին և Նոր Տարիին:

Մեր ամենուն սիրոյ բարեկները քեզի:

Կարօտալից քոյրդ,

ՎԱՐԴՈՒՀԻ

Write often and tell all about yourself—the little things as well as the big ones. Have you found a good boarding house? What do you do about your mending? Today I made _____ for dinner. We spoke of your liking for it and wished you could have enjoyed it with us.

With much love from us all and hoping to hear from you soon,

Your loving mother,

A Letter from the Sister.

Dear Brother:

I wish you could have seen Mother's face when she opened and read your letter. You would have felt more than repaid for any sacrifice your gift may have cost.

You know Mother's way of attending to her own needs last, and will not be surprised to hear that she had no really good dress. I am to have the honor of making the new dress, and you may be sure I shall do my best. Thanks to your present and to my skill, Mother will look her prettiest at Christmas time.

With love for you always from us all,

Your affectionate sister,

Vartouhi.

Երկար անօրոտով ետ նամակ մը

Սիրելի Եղբայր,

Դեռ որչափ ատեն պիտի մնաս այդ հեռաւոր աշխարհին մէջ: Այլևս մենք դադարեցուցինք երգել ըիմ սիրելի զաւակունքս: Կը յիշես որ մեր ամենուս սիրած երգն էր: Հայրս և մայրս այլևս չեն կրնար դիմանալ անոր: Մինակ մենք չենք հոս անհամբեր՝ գիտնալու թէ այս անջատումը որչափ պիտի տևէ: Զապելը չափազանց համեստ է այդ մասին հարցումներ ուղղելու, բայց իր աչքերը արցունքով լեցուն են: Անշուշտ իր աչքերը մոռցած չես, եղբայրս. այնպէս չէ՞:

Ամերիկա զարմանալի երկիր մը ըլլալու է: Յաճախ սրտէս կ'անցնի քովդ գալու բաղձանքը, միայն թէ ամբողջ ընտանիքը կարենար երթալ ինծի հետ: Թերևս կարելի ըլլայ մեզի երթալ, եթէ մէկ երկու տարիէն չվերադառնաս:

Բարեկամներդ Տիգրան և Մարիամ ամուսնացան և հիմա մեզի դրացի են: Մարիամ շատ լաւ տանտիկին է և ընտիր խոհարարուհի:

Գրիգոր Արմաեան մեռաւ անցեալ շաբաթ թոքախտէն: Դուն ողջ մնաս, եղբայր: Մեղք իր մօրը՝ սրուն միակ նեցուկն էր ան:

Յաճախ գրէ: Երանի թէ ամէն օր կարենայինք քենէ նամակ ստանալ: Կ'ուզենք քու մասին ամէն բան տեղեկանալ: Միշտ կը կարօտինք քեզ:

Մեր ամենուն սիրոյ բարևները:

Գորովալից քոյրդ,

A Letter After Long Separation.

Dear Brother:

How long do you expect to stay in that far-away land? We have stopped singing, "O, Where is my wandering boy tonight?" You remember it was one of our favorites. Father and Mother cannot stand it now. We at home are not the only ones who are wondering how long the separation is to last. Isabel is too modest to ask questions, but her eyes are often full of tears. You haven't forgotten her eyes, have you, Brother mine?

America must be a wonderful country. I often think I would like to join you there if only all the family might go with me. Perhaps, if you do not return within a few years, it may be possible for us to go.

Your friends Dikran and Mary are married and are near neighbors of ours. Mary makes a good housekeeper and is an excellent cook.

Krikor Armaian died last week of tuberculosis. His mother will have a hard time, for he was her only support.

Write often. You can't write too often. We want to hear all about you. We always miss you.
With much love from us all,

Your affectionate sister,

Անգործ Մնացողի մը Նամակը իր Հօրը

Սիրելի Հայրիկ,

Հակառակ իմ սովորութեանը՝ չորս ամիսէ ի վեր կարող չեմ եղած ձեզի դրամ ղրկել: Ամէն նեղութիւններէ աւելի այս բանը զիս կը տանջէ: Այս տարի տնտեսապէս շատ գէշ տարի մը եղաւ Միացեալ Նահանգներու մէջ. բազմաթիւ գործարաններ կամ փակուեցան եւ կամ գործերը նուազեցան կէսի և նոյնիսկ աւելի պակասի: Երեք ամիս շարաթական հազիւ երկու օր աշխատեցայ, իսկ վերջին երկու ամսուան մէջ՝ ինծի համար բոլորովին գործ չկար: Գիտեմ որ դուք ալ նեղ վիճակի մէջ էք հող, և կ'ուզէի գոնէ պղտիկ գումար մը ղրկել, բայց անգործութիւնը ոչ միայն դրամ չէ թողուցած քովս, այլ պարտքերու տակ ձգած է զիս: Հիմա իմ ծանօթներս և բարեկամներս ալ կամ անգործ են ինծի պէս և կամ միայն կէս օր կ'աշխատին. ուստի պարտք ալ չեմ կրնար ընել: Եթէ նոյնիսկ ամբողջ օր աշխատին՝ այս անստոյգ ժամանակներու մէջ ոչ մէկը յօժար է պարտք տալու:

Ուրեմն, սիրելի հայրս, այս ուշացումը իմ զանցառութեանս մի' վերագրէք. ես երբեք սիրելի չեմ դադրած իմ ծնողքս, ամէն օր ձեր վրայ կը մտածեմ, ճար ճարակ կը փնտռեմ, բայց միջոց մը չեմ կրնար գտնել: Կ'ըսեն որ այս նեղ օրերը երկար չեն կրնար տևել, արդէն բաւական տևած են, այնպէս որ առ առաւելն երկու ամիսէն գործերու վերսկսումը կ'ակնկալեն: Ես կը յուսամ որ այդ կարծիքը շիտակ է: Անմիջապէս որ գործերը

**A Letter From a Man Without Work to His
Father.**

Dear Father:

In spite of my usual custom I have not been able to send you any money for four months. I suffer more on this account than for any other reason. This is a very bad year financially in the United States. Many factories have either shut their doors or have reduced their working hours to one-half, or even less. For three months I worked only two days in a week, and during these last two months there has been no work for me at all. I know that you need money and I have wanted to send a small sum; but this lack of work not only has exhausted all my savings, it has forced me to incur heavy debts. Now all my friends and acquaintances either are without work or are working one-half day, so that I cannot borrow. Even if they were working the whole day, no one is willing to lend in these uncertain times.

Then, dear Father, do not attribute this delay to my negligence. I have not ceased to love my parents. Every day I think of you and try to find some way to help, but without success. They say that these hard days will not last very long. They have lasted long enough! Normal conditions are expected within two months. I hope that this opinion is well founded. As soon as I begin to work I shall make haste to send some money.

սկսին ձեզի դրամ կը հասցնեմ: Ճիշտ հիմա, եթէ կարելի է, փոխառութիւնով մը դրամ գտէք երեք կամ չորս ամիսէն վճարելու պայմանով, և ես ձեզի մինչև այն ատեն գումար մը կը ղրկեմ: Ես երբեք այսչափ պարապ մնացած չէի: Ուրիշ արհեստ մը որովիլ ուզեցի, բայց ոչ դրամ ունէի պէտք եղած ծախքը գոցելու, ոչ ալ պատեհութիւն՝ տեղ մը մտնելու:

Յուսալով որ կը ներէք ինծի այս ակամայ ուշացումին համար և կերպ մը կը գտնէք այս նեղ օրերը անցնելու, կը մնամ սիրալիր բարեկեցիկ՝

Ձեր երախտագէտ զաւակը,

ՀՕՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սիրելի գաւակս,

Նամակդ մեծ վիշտ պատճառեց մեզի, ոչ թէ որովհետև մեզի չես կրնար օգնել մեր այս նեղ օրերուն, այլ որովհետև օտարութեան մէջ, զուրկ ծնողական գուրգուրանքէ, այնքան տաժանելի կեանքի մը մատնուած ես: Չաւակս, այդ դառն վիճակի մէջ մեր մասին այնքան մտածելը ցոյց կուտայ թէ որքա՛ն սէր ունիս ծնողքիդ վրայ: Դժբաղդաբար բաղդը չներկց հօրդ այնպիսի գիրք մը պատրաստել իրեն համար որ օգնութենէ անկախ ըլլար և դուն միմիայն քու մասին մտածէիր: Բայց ինչ ալ ըլլայ մեր կացութիւնը՝ չենք ուզեր որ մեզի համար այնքան չարչրկուիս և մտահոգութիւններու մատնուիս: Մենք բան մը կ'ընենք հոս: Տան մէջ ամբարուած պաշարը դեռ քանի

ARMENO-AMERICAN LETTER WRITER 151

At present you may borrow money there to be paid back in three or four months, and then I will transmit to you the necessary sum. I was never before left without work for so long. I have wanted to learn another trade, but I have had neither the money to pay the expense nor any chance.

Hoping that you will forgive me for this involuntary delay, and that you will find some way to get through these hard times, I remain,

Your grateful son,

Father's Answer.

My dear child:

Your letter filled us with sorrow, not because you could not help us in our hard circumstances, but because you have been suffering in a foreign country, away from the comfort of home.

Dear boy, the fact that you think of us even in the midst of such hardships shows your great love for your parents. Your father was not fortunate enough to put himself in a position where he could live without your help. But whatever our situation may be we do not want you to worry about us. We shall do something here. Our supplies can carry us through several

մը ամիս կը բաւէ մեզի, և պզտիկ ծախքերու համար դրամ կը գոյացնենք մեր հին պղնձեղէն անօթները ծախելով, ինչ որ արդէն չենք գործածեր: Իսկ եթէ շատ աւելի նեղ մնանք կը ծախենք մեր տունը:

Ուստի, զաւակս, ինքզինքդ հանդարտ պահէ և մեզի համար մի՛ չարչրկուիր: Այս աշխարհի վրայ մենք այլևս շատ ակնկալելիք չունինք, մեր օրերը արդէն կ'անցնին: Մեր միակ բաղձանքն է որ դուն յաջողիս, զարգանաս և քեզի համար երջանիկ ապագայ մը ապահովես, և տուն տեղ ըլլաս ու զաւակներու հայր:

Մաղթելով որ Երկինք քեզի օգնութեան հասնի և մեր օրհնութիւնները ընդունելի ըլլան՝ կը մնամ ջերմ սիրով,

Հայրդ,

Քրոջ մը Նամակը Իր Պանդուխտ Եղբոր

Սիրելի եղբայր,

Քեզի ամէն օր նամակ գրելու բաղձանքը ունիմ, բայց ամիսներ կ'անցնին և չեմ կրնար ատեն մը գտնել որ սիրտս ու միտքս ամփոփելով քեզի գրեմ: Երբ ազատ աղջիկ մըն էի՝ գրելու շատ միջոց ունէի, բայց հիմա երեք զաւակներու մայր եմ և շարունակ զբաղուած: Ուրեմն եթէ այսպէս կ'ուշացնեմ նամակներս՝ ներէ ինձի և մի կարծեր թէ քեզ մոռցած եմ կամ սիրելէ դադարած: Եղբայրս, կրնամ քեզ մոռնալ: Ես ոչ միայն չեմ մոռցած քեզ, այլ նոյնիսկ զաւակներուս սորվե-

months, and we may secure a little money for small expenses by selling our old copper utensils, which we never use. At the worst, we can sell the house.

Now then, my boy, take good care of yourself and do not worry about us. We have not much to expect in this world. Our days have passed. Our only desire is for your success, prosperity, and happiness.

Praying that Heaven may assist you and bless you,

Your father,

A Sister's Letter to Her Far-Away Brother.

Dear Brother:

I want to write you every day, but months pass and I cannot find time to concentrate my mind upon writing. When I was a girl at home I had plenty of time to write, but now I am the mother of three children and very much occupied. If I delay my letters, you must not think that I have forgotten you or have ceased to love you. I not only have not forgotten you but I have

ցուցած եմ սիրել իրենց հեռաւոր քեռին: Սար գիւրը միշտ քու մասին կը խօսի և կ'ըսէ որ «Երբ քեռիս գայ ես մեծ պիտի ըլլամ և դպրոց պիտի երթամ»: Իսկ Զապէլը արդէն սկսած է դպրոց երթալ և կ'ուզէ գրել սորվիլ որ Ամերիկայի քեռին նամակ գրէ:

Սիրելիս, հայրդ քու կարօտով մեռաւ, եւ մայրդ ծերացած՝ իր օրերը արցունքով կ'անցնէ: Իր արտասուքները մեր ալ սիրտը կը ծակեն: Ինչո՞ւ այսչափ երկար կը մնաս այդ երկրին մէջ: Ամէն մարդ բազդ չգտներ Ամերիկայի մէջ: Բազդը ինչպէս շատերուն քեզի ալ չէ ժպտած, եկուր գոնէ խեղճ մայրիկիդ վերջին օրերը քաղցրացուր, մխիթարէ զինքը և մեզ ալ երջանիկ ըրէ: Քեռայրդ ալ կը խնդրէ որ ճար մը գտնես և հայրենիքդ վերադառնաս. ինքը խանութ մը ունի, թերևս մէկտեղ աշխատելով աւելի ընդարձակէք գործը: Հօրեղբայրս, հօրաքոյրս և մօրաքոյրս ամբողջ ծերացած են եւ շմեռած կը փափաքին քու վերադառնալդ տեսնել: Անշուշտ կը յիշես, եղբայր, անոնք որքան կը գուրգուրային մեր վրայ. քանի զանոնք տեսնեմ ես դեռ ինքզինքս պզտիկ աղջիկ մը կը կարծեմ. միևնոյն գուրգուրանքը կը տածեն մեզի համար: Եկուր և վայելէ անոնց սէրը, և վստահ եմ որ հին տարիները ետ դարձած պիտի տեսնես և պատանիի մը պէս ինքզինքդ թարմ պիտի զգաս:

Բաւական ատենէ իվեր դուն ալ նամակ չես գրած: Երբ նամակներդ այսքան ուշանան՝ սուգեր կը պատեն մայրիկս, կ'երթայ սնուակդ կը բանայ գիրքերդ կը համբուրէ և հին նամակներդ կար-

taught my children to love their distant uncle. Sarkis often talks about you and says, "When Uncle comes I'll be big and go to school." Zabel has already begun to go to school and she wants to learn how to write in order to send a letter to her "Uncle in America."

My dear, Father died longing for you and Mother is spending the days of her old age in tears which fill our hearts with sorrow. Why do you stay so long in that country? It is not given to every man to find a fortune in America. You have been one of the great number of people for whom fortune has no smiles. Come and comfort Mother's last days and make us happy. Your brother-in-law joins me in asking for your return home. He has a little business. You may work together and enlarge it. Our Uncle and Aunts are all growing old and wish very much to see you before they die.

I suppose, Brother, you remember how they loved us. As long as I see them I think I am still a little girl; they give the same care and caresses. Come and enjoy their love, and I am sure you will feel as in the old days. Youth will come back to you.

For some time you have not written either. When you delay your letters Mother is sadly afflicted. She opens your case, kisses your books and old letters, and sheds tears, reading them over

դալով արցունք կը թափէ: Ես երբեք չեմ հաւատար որ քու սիրտդ քարացած է, եղբայր: Եկո՛ւր շուտով, այլևս մի՛ ուշանար. չոր հաց մը այս տեղ ալ կը ճարես: Գիտեմ, եղբայր, հարստութիւն չպիտի կրնաս բերել, բայց ամբողջ մեր գերդաստանին և ազգականներուն ժպիտ պիտի բերես, երջանկութիւն պիտի բերես, լոյս պիտի բերես որ աշխարհի բոլոր հարստութիւններէն շատ աւելի կ'արժէ: Չես գիտեր թէ որչա՛փ արցունք պիտի չորցնես: Ուրեմն մի՛ ուշանար, եկու՛ր քու սիրելիներուդ:

Քեզ սպասող

Քոյրդ,
ՉՄՐՈՒԽՏ

ԵՂՔՕՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սիրելի քոյրս,

Բառ չեմ կրնար գտնել բացատրելու այն հաճոյքը որ զգացի երկար լռութենէդ ետք վերջին նամակդ ստանալով: Քոյրս, դուն քու սիրելիներուդ մէջտեղ, ընտանեկան բաղքը յարկի տակ ըլլալով չես կրնար երեւակայել թէ նամակ մը սիրելիներէ որչափ քաղցրութիւն կը բերէ մեզի պէս թափառականներուն: Մանաւանդ ինծի համար քու նամակդ դարնանային առաւօտեան մը պայծառութիւնը կը բերէ:

Կ'ըսես որ նամակդ այսչափ ուշացնելուդ պատճառը զանցառութիւն կամ մոռացում չէ, այլ բազմազբաղ մօր մը վիճակը: Սիրելիս, ես երբեք մտքէս անգամ չեմ անցներ թէ դուն կրնաս զանցառու ըլլալ և կամ կրնաս գիս մոռնալ: Կը

ARMENO-AMERICAN LETTER WRITER 157

and over again. I can never believe that your heart is getting hardened. Come, Brother, do not delay any longer. You can earn your bread here just as well as there. I know, dear Brother, you will not be able to bring wealth, but you will bring to all our relatives a bright smile, sunshine, and happiness, which are valued more than any wealth in the world. You do not know what tears will be dried. Do not stay any longer. Come to your loving kinsfolk.

Your waiting sister,
Zemroukhd.

The Brother's Answer.

Dear Sister:

I can find no words to express the pleasure which I felt when I received your long-awaited-for letter. Being among your loved ones in your own dear home you cannot imagine what great comfort a letter from beloved ones brings to a vagabond like myself. To me, especially, your letters bring the sunshine of a spring morning.

You say that your delay in writing is not due to negligence or forgetfulness, but to the condition of a very busy mother. My dear, I have never thought that you could be negligent or that you could forget me. I know how your

Հասկնամ թէ ինչպէս օրերդ կ'անցնին, մանուկները տան մէջ զբաղած կը պահեն, ամէն օր նորութիւններ կը բերեն, երբեմն երջանկութիւն երբեմն մտահոգութիւն, ու այսպէս շարաթներ և ամիսներ կը սահին կ'անցնին, եւ յանկարծ կը մտաբերես որ եղբօրդ չես գրած. թերեւս շատ ուշացած ըլլալուն կ'սպասես նոր նամակի մը:

Ինծի համար աշխարհի վրայ գրեթէ ոչ մէկ բան մնացած է՝ բացի հեռաւոր հայրենիքիս մէջ սիրելիներէս: Ա՛հ, միայն թէ գիտնայիր որքան ձեր ամենուն կարօտը կը վառէ սիրտս: Ես կը սիրեմ խանդաղատանքով մայրիկս՝ որ ծերացած է այլևս. կը սիրեմ քոյրս՝ որ իմ անարժան անունս իր զաւակներուն կը սորվեցնէ և անոնց գուրգուրանքի քաղցր բառերը կը ղրկէ. կը սիրեմ քերորդիներս՝ որ իրենց մանկական գողտրիկ զգացումներով իրենց չճանչցած քեռին կը սիրեն. կը սիրեմ հօրեղբայրս, մօրաքոյրս և հօրաքոյրերս՝ որ, հակառակ իմ այսքան ատեն հեռաւոր երկիրներ թափառելու, չեն դադրած զիս իրենց սիրոյն եւ գուրգուրանքին առարկան դարձնելէ: Սիրելիս, ես ալ կը տենչամ վերադառնալ եւ մեր սիրելի ծերունիներու ու մանկիկներուն միջև հին օրերու քաղցրութիւնները վայելել: Բայց ի՛նչպէս բացատրեմ. ես որոշ նպատակի մը համար եկած էի, երիտասարդութեանս ամենաթանկագին եւ խանդավառ օրերը այստեղ գեղեցիկ յոյսերով անցուցի:

Հիմա ամէն յոյս կորսնցուցած չեմ, փայփայած գաղափարներէս ոչ մէկը կրցայ իրագործել: Ես իմ նպատակակէտէս աւելի հեռու եմ հիմա քան նոր եկած ատենս: Եթէ քեռիս ողջ մնար բաղդս

ARMENO-AMERICAN LETTER WRITER 159

days pass. The children keep you busy at home; every day they bring change, sometimes happiness, sometimes worry. Thus weeks and months go by, and suddenly you realize that you have not written to your brother. Perhaps, having delayed so long, you wait for a new letter.

Nothing is left for me in the world except my dear ones in the far-away home. Oh, if you only knew how much I miss you! I dearly love my mother, who is getting old; I love my sister, who teaches my name to her children and sends me their words of love; I love my nephews and niece, who love their unknown uncle with the tender feelings of childhood; I love my uncle and my aunts, who, inspite of my wandering so long in a distant land, have not ceased making me an object of their tender care and love. My dear, I myself long to return and enjoy our dear home with the old folks and the youngsters; I don't know how to explain. I came here for a purpose. I had nurtured bright hopes in the precious days of my ambitious youth.

Now all is gone; none of my cherished objects are won. I am now farther from my goal than when I came to this country. If my dear uncle had lived I would have had a different fortune.

տարբեր պիտի ըլլար: Այս վիճակին մէջ ի՞նչպէս վերադառնամ, ի՞նչ բերեմ ձեզի: Անյաջողութիւնները ընկճած են զիս: Թէև ամէն տեսակէտով պարտուած եմ եւ լքումը կը տիրէ վրաս, բայց հպարտութիւնս և առնական արժանապատուութիւնս չեմ կորսնցուցած: Ձէ, սիրելի քոյրս, այսպէս աղքատ չեմ կրնար դառնալ. խեղճ մօրս աւելի մտահոգութիւն պիտի ըլլամ այսպէս քան մխիթարանք: Դուն սփոփէ զինքը և վստահացուր որ իր սէրը միշտ իմ լաւագոյն հարստութիւնը կը մնայ: Այլևս սպանիական դղեակներու ծրագիրը մէկդի թողուցած եմ և ասկէ վերջ ամբողջ ջանքերս պիտի թափեմ վերադարձի պատրաստութիւն տեսնելու, այնպիսի պատրաստութիւն մը՝ որով ուրիշներու երես նայելու ամօթահար չըլլամ: Այդ բանը որչափ ատեն կ'առնէ չեմ գիտեր. գոնէ երեք տարի մը ևս աշխատելու եմ: Վստահ եմ որ մայրս նոր քաջութեամբ մը այդ երեք տարին ալ կ'անցնէ ու վերջապէս մենք ամէնքս ալ կը միանանք մեռնելէ առաջ:

Սիրելի քոյրս, նամակդ ստանալու ուրախութիւնս եւ տխուր տողերուդ յարուցած յուզումը միտքս բոլորովին մթնցուցած են: Նպատակս էր լաւ նամակ մը գրել քեզի. բայց կը տեսնեմ որ գրածս ուզածէս բոլորովին տարբեր բան մը եղած է: Փորձուեցայ պատուել նետել, սակայն լաւագոյնը գրելու տրամադրութիւն և կարողութիւն չգգալուս, և չուզելով աւելի ուշացնել նամակս՝ քեներէ կարելի եղածին չափ շուտով նորէն լսելու համար, որոշեցի ղրկել այս:

Եղբայրդ,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 161

How can I return in this condition? What can I bring to you? Although I am defeated in every particular, I have not lost my pride and a man's self-respect.

No, my dear sister, I cannot return so poor. In this condition I would be more of a worry to my dear old mother than a comfort. Encourage her and assure her that her love will remain my best wealth. I have already given up my castles in the air. After this I shall concentrate my efforts upon getting ready to return, and make such preparation that I shall not be ashamed to look the world in the face. I do not know how long it will take, I must work at least three years longer. I am confident that mother will wait bravely through these three years and that we shall meet again before death.

Dear Sister, the pleasure of hearing from you on the one hand and the sad lines in your letter on the other have aroused such emotion that my mind is confused. My intention was to write a good letter, but I find that my letter is entirely different from what I wanted it to be. I thought of tearing it up, but, not feeling disposed to write a better one, I send it, in order that there may be no delay and that I may hear from you again as soon as possible.

Your loving brother,

Քոյր Ամերիկա Բերել Տալու Նամակ

Սիրելի հայր իմ և մայր իմ,

Այս նամակով ներփակ ձեզի կը ղրկեմ եօթանասուն անգլիական ոսկիի փոխ-գիր մը եւ ձեզի կը ներկայացնեմ առաջարկ մը՝ որ եթէ յարմար դատէք կը գործադրէք, իսկ եթէ յարմար չդատէք ինչիրը կը փակենք:

Այստեղ իմ գործս ապահովուած է և կրնամ տարիներ շարունակել առանց կորսնցնելու վտանգին. այս դիւրութիւնը գտնելէ ետք միտքս աւելի կ'անդադառնայ առանձնութեանս վրայ, ձանձրոյթէն չեմ կրնար ազատիլ: Քոյրս Եւգինէ Հիմա տասնըութ տարեկան է, դպրոցին շրջանը արդէն աւարտած՝ գիրքով ու գրիչով հետաքրքրուող օրիորդ մը եղած է. իր գողտրիկ նամակները ցոյց կուտան թէ որչափ մտացի աղջիկ մըն է. որքան կարգամ իր հին ու նոր նամակները այնքան իր կարօտը կը քաշեմ: Ուստի կը մտածեմ զինքը այստեղ բերել տալ, քանի որ գործս ապահով է և դեռ քանի մը տարի հոս մնալ ստիպուած եմ: Իր գալը թէ՛ իրեն օգտակար է և թէ՛ ինծի: Նոր երկիր մը կը տեսնէ, իր մտքի հորիզոնը կ'ընդլայնի և թերևս դպրոց մը երթայ իր ուսումը շարունակելու և կամ նոյնիսկ մասնագիտութիւն մը սորվելու: Եւ քրոջ մը ներկայութիւնը ոչ միայն իմ առանձնութիւնս կը փարատէ, այլ նաև ինծի զօրաւիզ կ'ըլլայ և քաջութիւն կը ներշնչէ ապրելու լաւագոյն կեանք մը և գրաւելու բարձրագոյն դիրք մը: Երկու պզտիկ եղբայրներս եւ միւս քոյրս Հռիփսիմէ կը մնան ձեզի հետ, մինչև

**A Letter from a Man Inviting His Sister to
America.**

Dear Father and Mother:

I send you enclosed a check for seventy English pounds, and I make you a proposition which you may accept if you think proper. If not, we will drop it.

My work is guaranteed. I can continue it for years without any danger of losing it. After this relief my mind ponders more upon my loneliness, which I cannot bear now. My sister Eugenia is eighteen years old. Having already graduated from school, she is a young lady, interested in books and literature. Her letters show what a bright girl she is, and the more I read her old and new letters the more I miss her. Therefore I am thinking of having her come here, especially now that my work is secure and I have to stay here for several years more. Her coming will be good both for her and for me.

She will see a new country, her mental outlook will be enlarged and she may go to some school to continue her study, she may even specialize in some subject. And the presence of a sister will not only dispel my loneliness, but will also encourage and stimulate me to live a better life and to seek a higher position.

My two younger brothers and other sister, Hripsime, will remain with you until either we

կամ մենք կը վերադառնանք ձեզի միանալու եւ կամ դուք կուգաք մեզի՝ այստեղ հաստատուելու համար, թէ եւս այս վերջին գաղափարին հակառակ եմ. որովհետեւ մենք աւելի երջանիկ կ'ըլլանք մեր երկրին մէջ, եթէ տնտեսական և քաղաքական պայմանները բարեփոխուին: Առ այժմ պէտք է աշխատինք այս երկրին մեզի պարգևած բարիքներէն օգտուիլ և վստահ եմ որ Եւգինէն բաւական ուշիմ է լիուլի օգտուելու համար: Ես իրեն պիտի օգնեմ ոչ միայն իբրեւ եղբայր, այլ նաեւ իբրև իրեն պարտական՝ իփոխարէն իր ներկայութեամբ ինծի տալիք երջանկութեան:

Գիտեմ որ իր բացակայութիւնը ձեզի դժուար պիտի գայ, բայց այն տեսակէտը թէ ինք եւս այստեղ երջանիկ պիտի ըլլանք՝ պիտի մխիթարէ ձեզ: Անկէ զատ Հռիփսիմէ իր աշխուժութեամբ և զուարթութեամբ իր քրոջ տեղը պիտի գրաւէ: Արդ, եթէ զօրաւոր պատճառներ իր գալը առարկելի չդարձնեն, և եթէ դուք համաձայնիք ընտանիքի այսպէս առժամանակեայ բաժանումին, Ղրկեցէք զինքը առաջիկայ գարնան մէջ: Ես իր ճամբորդութեան համար հարկ եղած դիւրութիւնները պիտի հայթայթեմ: Այս եօթանասուն ոսկիին երեսուն կամ երեսունը հինգը աւելի քան բաւական է երկրորդ աստիճանով գալու համար:

Սպասելով ձեր պատասխանին կը մնամ ջերմ բարևներով՝

Ձեր զաւակը,

return to join you or you come here to settle down with us. I do not entertain the latter idea, because we shall be happier at home if political and economical conditions are bettered. But at present we must try to profit from the advantages that this country offers us. I am sure that Eugenia is bright enough to get the full benefit from American schools. I shall help her not only as her brother but also as her debtor, as compensation for the happiness which she will confer upon me by her companionship.

I have no doubt that her absence will be a hardship for you, but the fact that she and I will be happy here will comfort you. Besides, Hripsime will take the place of her sister with her liveliness and jolly disposition. If there are not strong reasons to make her coming objectionable, and if you agree to this temporary division of the family, send her next spring. I shall arrange everything to make her journey comfortable. Thirty or thirty-five pounds out of this seventy is more than enough to travel in the second cabin.

Waiting for your answer,

Your grateful son,

Հօրհորն Իր Պզտիկ Աղջկան, Բօզին

Իմ սիրելի պզտիկ կոկոնս,

Քեզի համար համբոյր մը դրի այս աղուոր, մաքուր թուղթին մէջ: Խնամքով պիտի ծալլեմ զայն, և կը յուսամ որ դուրս չպիտի իյնայ Լիզպօն հասնելէ առաջ: Եթէ չես կրնար գտնել հարցուր մայրիկին անոր մասին. թերեւս գտնես զայն իր շրթներուն վրայ: Իմ լաւագոյն բարեկներս տուր քեռիդ Ճանին և մօրաքոյրդ Սուին, և քու բոլոր ազնիւ բարեկամներուն, չմոռնալով դայեակդ:

Գորովալից հայրիկդ,

Ն. Հ.

ՎԻՔԹՕՐ ՀԻԻԿՕ ԻՐ ՊԶՏԻԿ ՏԻՏԻՆԻՆ

Բարեւոյս, իմ սիրելիս. բարեւոյս, իմ սիրելի պզտիկ աղջնակս: Խոստացած էի քեզի գրել. կը տեսնես որ խոստումս կը պահեմ:

Տեսայ ծովը, գեղեցիկ եկեղեցիներ, և սիրուն գիւղ մը: Ծովը մեծ է. եկեղեցիները գողտրիկ են. գիւղը աղուոր է: Բայց գիւղը քեզի չափ սիրուն չէ. եկեղեցիները մայրիկիդ չափ գեղեցիկ չեն, և ծովը իմ ձեր ամենուն համար ունեցած սիրոյս չափ մեծ չէ:

Սիրելիս, յաճախ կէս փէնի տուի ճամբուն քովերը բոպիկ ոտքով պտտող աղքատ մանկիկներուն. ձեր սիրոյն համար, պզտիկներս: Ես ամէնքդ ալ սրտանց կը սիրեմ:

Քանի մը ժամեր ևս՝ և ես պիտի համբուրեմ քեզ քու երկու պզտիկ ու սիրոյն այտերուդ վրայ,

Hawthorne to His Little Daughter, Rose.

My dear Little Rosebud:

I have put a kiss for you in this nice clean paper. I shall fold it up carefully, and I hope it will not drop out before it gets to Lisbon. If you cannot find it, you ask Mamma to look for it. Perhaps you will find it on her lips. Give my best regards to your Uncle John and Aunt Sue and to all your kind friends, not forgetting your nurse.

Your affectionate father,

N. H.

Victor Hugo to His Little Didine.

Good morning, my pet; good morning, my dear little girlie. I promised to write to you. You see I am keeping my word.

I have seen the sea, some fine churches, and some pretty country. The sea is large, the churches are handsome, the country is pretty; but the country is not as pretty as you; the churches are not as handsome as your Mamma, and the sea is not as great as my love for you all.

My pet, I have often given half-pence to poor children walking barefooted by the roadside, for your sakes, my little ones. I love you all dearly.

A few hours more and I shall be kissing you on your two dear little cheeks, and also my Charlie

նոյնպէս իմ մեծ Շարլը և իմ փոքրիկ Տէտէն, որ ինծի ժպիտ մը պիտի տայ, կը յուսամ, եւ իմ քաղցրիկ Թօթօն:

Մնաս բարեալ հիմակուհիմա, Տիտինս: Պահէ այս նամակը: Երբ դուն մեծ ըլլաս, ես ծեր պիտի ըլլամ. դուն ինծի պիտի ցուցնես զայն. մենք իրար շատ պիտի սիրենք. երբ դուն ծերանաս՝ զայն պիտի ցուցնես քու զաւակներուդ, և անոնք քեզ այնչափ պիտի սիրեն որքան ես: Քիչ ատենէն պիտի տեսնուինք:

Քու

Հայրիկը:

Վալանսիէն, Օդ. 15 1837.

Եկեղեցիի զանգակները կը հնչեն մինչ այս քաղաքը կը հասնիմ: Աստուածածինի տօնն է: Քիզի կը նուիրագործեմ զայն, զաւակս:

Չուզեցի այս օրը փախցնել առանց քեզի դրեւելու, իմ սիրեցեալ Տիտինս: Ո՛չ մէկ օր, ոչ մէկ ժամ կ'անցնի առանց քու մասին խորհելու:

Մայրդ, դուն, եղբայրդ, եւ սիրելի պզտիկ քոյրդ, ամէնքդ ալ միշտ իմ մտածմունքին մէջն էք, և միացած ինծի միևնոյն սիրով:

Ստացա՞ր իմ վերջին պզտիկ մրոտումս: Սիրեցի՞ր զայն, Տիտինս: Պահէ զայն իմ սիրոյս:

Ամենէն աւելի պահէ անմեղութիւնդ եւ ազնիւ սիրտդ, ակնածանքդ դէպի Աստուած եւ դէպի մայրդ, պարզ միտքդ, և շիտակն ըսելու տեսական փափաքը. այդպիսով օր մը՝ մօրդ պէս՝ կնոջ առաքինութեան հետ պիտի միացնես մանուկի անմեղութիւնը:

and my little Dede, who will give me a smile, I hope, and my beloved Toto.

Good-by for the present, my Didine. Keep this letter. When you are grown up, I shall be old, you will show it to me, we shall love each other dearly; when you are old you will show it to your children, and they will love you as much as I do. We shall soon meet.

Your own daddy,

Valenciennes, 15th August, 1837.

The church bells are pealing as I arrive in this town. It is the fete of the Virgin. I dedicate it to you, my child.

I did not wish to let this day go by without writing to you, my beloved Didine. Not a day, not an hour passes without my thinking of you.

Your mother, you, your brother, and your dear little sister are always in my thoughts, and united to me in the same love.

Did you get my last little scrawl? Did you like it, my Didine? Keep it for my sake.

Above all, keep your innocence and your kind heart, your reverence for God and for your mother, your simple mind, and constant desire to do right; in so doing you will some day, like your mother, unite the virtues of the woman to the innocence of the child.

Հոս գալու համար սիրուն դաշտերու մէջէն անցայ, կանաչութեամբ և ծաղիկներով զարդարուած, ինչ որ ինծի մտածել տուաւ Աստուծոյ վրայ. ես Անոր խօսեցայ քու մասին, ձեր ամենուն մասին, սիրելիներս, որոնք իմ ետևս թողուցած եմ:

Համբուրէ ամէն անոնք որ ես կը սիրեմ եւ որ քու բոլորտիքդ են, սկսելով մայրիկէն:

Հայրիկդ,

Վ.

ՇԱՐԼԻՍ ՀԱՄԱՐ

Մէյանս, Հոկ. 1, 1838

Իմ սիրելի Շարլ,

Ինծի ազուր երկար նամակ մը գրելու ես (ի թրէվ), առտուն կանուխ սկսելով և ուշ վերջացնելով: Գիտես թէ որչափ կը սիրեմ քեզ, քաղցրիկ տղաս: Պէտք է երկար նամակ մը ունենամ քենէ: Պէտք է նաեւ պզտիկ օրագրութիւն մը ընես ինծի համար, բացատրելով թէ ինչպէս անցուցած ես ժամանակդ Սէն-Փրիի մէջ՝ արձակուրդի միջոցին, և թէ, ինչպէս կը յուսամ, պատրաստուած ես առաջիկայ տարուան գործի համար՝ քու խաղի և պարապոյ ժամերուդ մէջ: Կ'ուզեմ որ, սիրելի Շարլս, ազուր, խիստ աշխատող տղայ մը ըլլաս, և ժրջան դպրոցական մը:

Այս մասին խօսիլ ինծի կը յիշեցնէ որ իմ նամակներէս մէկուն մէջ քեզի հրահանգ մը տուի գրելու: Ո՛չ դուն ոչ ալ թ'թ'օ ինծի ղրկեցիք զայն: Հիմա որ արձակուրդը գրեթէ անցած է, և դուն խաղալու քանի մը օր միայն ունիս՝ այդ հրահանգը չպիտի ուզեմ քենէ:

To get here, I had to pass through lovely country, green and covered with flowers, which made me think of God; I spoke to Him of you, of all of you, my dear ones, whom I have left behind me.

Kiss all those I love who are around you for me, beginning with your mother.

Your own daddy,

V.

For My Charlie.

Mayence, 1st Oct., 1838.

My dear old Charlie:

You must write me a good long letter (to Treves), beginning it early and finishing it late. You know how much I love you, dear child. I must have a long letter from you. You must also write a little diary for me telling me how you have spent your time at Saint-Pris during the holidays, and if, as I hope, you have prepared for next year's work amid your play and leisure time. I want you, my dear Charlie, to be a good, hard-working boy, and an industrious scholar.

Talking of this reminds me that in one of my letters I gave you an exercise to write. Neither you nor Toto have sent it to me. Now that the holidays are nearly over, and you have only a few days left to play, I will let you off this exercise.

Եթէ իմ նամակներս կարդացեր ես, սիրելի Շարլ, պիտի գիտնաս թէ ինչ ըսել կ'ուզեմ Կոֆուս - Կոֆուսով: Կատուն թօթօի համար է, եւ մուկը քեզի: Իմ գծագրութեանս մէջ անոնք բնականէն բաւական տարբեր ներկայացուած են. մուկը խիստ աւելի մեծ և խիստ աւելի կատաղի է քան կատուն: Ձայն գծելու օրս երկիրքը՝ որուն մէջ այն կ'աներևութանար՝ փոթորկոտ էր և մթամած:

Պիտի նկատես յարակից լեռան ստորոտը հսկայի մը դէմքը՝ բաց բերանով: Անիկա շատ խնամքով գծեցի: Հսկադ ընտիր նմանութիւն մըն է:

Այս ամէնը կ'ընեմ հաճոյքով, սիրելի մանուկներ, ձեր սիրոյն համար, ձեզ գբօսցնելու և երջանիկ ընելու համար: Բոպէի իմ հաճոյքներս, ինչպէս նաև իմ ամբողջ կեանքիս գործը ձեզի համար են:

Վստահ չեմ թէ ղրկած պատկերներս ինչ վիճակի մէջ պիտի հասնին ձեզի: Պանդոկի մէջ տրուած մեջանը իր գոյնը կը փոխէ մէկ օրէն միւսը՝ ամենէն տաղտկացուցիչ կերպով:

Խիստ աշխատեցայ արձակուրդի միջոցին, սիրելի Շարլ. կը յուսամ դուն ալ նոյնը ըրած ես մասամբ: Միշտ իմ մտքիս մէջ եղած ես, իմ սիրելի տղաս. կը յուսամ որ դուն ալ մտածած կ'ըլլաս տատիկին մասին, որ քեզ այնքան ջերմագին կը սիրէ որքան, ոչ, աւելի քան իր կեանքը, և որ քեզ կը համբուրէ քու ազդուոր երկու այտերուդ վրայ:

If you have read my letters, dear Charlie, you will know what I mean by **The Cat and the Mouse**. The Cat is for Toto, and the Mouse for you. In my drawing they are quite unlike nature, the mouse is much larger and much fiercer than the cat. The day I was drawing it, the sky in which it was disappearing was stormy and lowering.

You will notice at the foot of the adjoining mountain the face of a giant with his mouth open. I drew this very carefully. Your giant is an excellent likeness.

I do all this with pleasure, dear children, for your sakes, to amuse you and make you happy. My pleasures of the moment, as well as the work of all my life, are for you.

I am not sure what state the drawings I send you will arrive in. The ink one gets at inns loses its color from one day to another in the most tiresome way.

I have worked hard during the holidays, dear Charlie; I hope that you have done the same too, a little. You have been always in my thoughts, my dear old boy; I hope that you have thought of your daddy, who loves you as dearly as, nay more than, his life, and who kisses you on both your nice cheeks.

V.

Գան, Հոկտ. 8, 1839.

Ահա չորս նկարներ ձեր չորսին համար, Տիտինս: Քեզի կը շրկեմ Սթրազպուրկի Մայր Եկեղեցին՝ ընկերակցելու համար Բէյմզի Մայր Եկեղեցիին. Շարլին՝ հոյակապ հին աշտարակի մը տեսարանը, ծովով շրջապատուած Սէնթ Օնորա կղզիին վրայ, այստեղէն երկու փարսախս (աշտարակին պատմութիւնը գրած եմ նկարին եզերքը). Թօթօին՝ Պալի մէկ արուարձանին տեսարանը, Մայր Եկեղեցիի Հրապարակէն առնուած. եւ Տէտէին՝ Պատէնի քանի մը գեղեցիկ տուններ, քաղաքային դուռով: Կը յուսամ ամէնքդ ալ գոհ պիտի մնաք անոնցմէ. երբ տուն վերադառնամ աւելի պիտի գծեմ անոնց համար՝ որ ամենէն գէշը ստացած են: Վերջապէս իմս ամենէն շահաւէտն է, որովհետեւ ես աւելի կ'զգամ ձեզի տուած հաճոյքս քան դուք:

Այդ Սթրազպուրկի գանգակատան ետեւի անտառները Սև Անտառներն են:

Գեղեցիկ վայր մըն է այս. հոս եկայ Երէմի Դիմիով Մարտը տեսնելու: Տեսայ նաեւ Ժուանի Ծոցը, ուր նափօլէօն ցամաք ելաւ 1815ին: Վաղը չէ միւս օր ճամբայ կ'ելլեմ Փարիզի համար: Հոն կը հասնիմ 18ին կամ 19ին: Սիրելի բարի մայրիկդ համբուրէ ինծի համար: Ըսէ իրեն որ իրմէ նամակ մը կ'ակնկալեմ Շալօն-սիւր-Սաօնի մէջ: Սկսած էի իրեն համար երկար նամակ մը, բայց ձեր գծագրութիւնները արգիլեցին զիս զայն աւարտելէ: Շուտով կ'ստանայ զայն:

Cannes, 8th Oct., (1839).

Here are four sketches for you, four, my Didine. I send you the Strasburg Cathedral to match that of Reims; to Charlie, a view of a splendid old tower, surrounded by the sea, on the Island of Saint Honorat, two leagues from here (I have written the story of the tower at the side of the drawing); to Toto, the view of a suburb of Bale, taken from the Cathedral Square; and to Dede, a few pretty Baden houses, with the town gate. I hope you will all be pleased with them, and then, when I get home, I will do some more sketches for those who have come off worst. I am the best off, after all, because I feel the pleasure I am giving you more than you do.

Those mountains behind the spire of Strasburg are the Black Forest.

This is a beautiful spot; I came to it to see the prison of the **Man with the Iron Mask**. I have also seen the Gulf Juan, where Napoleon landed in 1815. I start for Paris the day after tomorrow. I shall get there by the 18th or 19th. Kiss your dear good mother for me. Tell her I count on getting a letter from her at Chalon-sur-Saone. I had begun a long letter to her, but your drawings prevented me from finishing it. She will get it soon.

Դարձեալ դպրոցի սկսար, Շարլ: Շատ աշխատէ, այնքան լաւ դպրոցական մը եղիւր որքան բարի տղայ մըն ես:

Քեզի համար նամակ մը պիտի ներփակեմ յաջորդին մէջ երբ գրեմ մայրիկիդ: Մնաս բարով առ այժմ, իմ սիրելի Շարլ:

Թօթօս, շուտով իրար կը տեսնենք: Վերջին երկու շաբաթը ծոցն էի: Սորվեցայ առաջաստով նաւ մը ղեկավարել, առաջաստ պարզել, ամփոփել, ևն: Իմ ամբողջ ճարտարութիւնս ձեզի պիտի ցուցնեմ Փարիզի մէջ: Հիմա դպրոցն ես, դուն ալ շատ աշխատելու ես, սիրելիս:

Տէտէս, կը սիրեմ քեզ: Դուն հայրիկը շատ կը սիրես, այնպէս չէ՞: Կ'ուզէի քեզի համար քանի մը խեցի հաւաքել այստեղ, բայց հաս մը իսկ չկրցայ դտնել: Բացի աւազէն ոչինչ կայ, ինչ որ տարօրինակ է:

Շուտով կը տեսնենք, Մամա. շուտով Ատէլս: Աղուոր նամակ մը գրէ ինծի, իրապէս աղուոր նամակ մը: Կը սիրեմ քեզ և աւելի պիտի սիրեմ եթէ ինծի ղրկես սիրալիւր և գողտրիկ բառեր, որոնց կարօտը կը քաշեմ:

Գալով վարձքին, ըսէ Պն. Պէլանժէին որ պիտի վճարեմ երբ վերադառնամ, 18ին կամ 19ին:

Համբուրէ գիս, Ատէլս, եւ երջանիկ եղիւր, որովհետև անձնուիրաբար կապուած եմ քեզի:

Ձեզ ամէնքդ ալ կ'ողջագուրեմ, սիրելիներս:

Ձեր հայրը,

Վ.

You are back at school again, Charlie. Work hard, be as good a scholar as you are a good boy, and love your father, who is always thinking of you.

I will enclose a letter for you in the next I write to your mother. Good-by for the present, my darling Charlie.

We shall meet soon, my Toto. I have been at sea for the last fortnight. I have learned how to steer a sailing boat, to make plain knots, gasket knots, running knots, etc. I will show you all my accomplishments in Paris. You are now at school; you must work hard too, my pet.

My Dede, I love you. You love Papa very much, don't you? I wanted to pick up some shells for you here; but I could not find any. There is nothing but sand, which is ridiculous.

We shall meet soon, Mamma; very soon, my Adele. Write me a nice letter, a really nice letter. I love you, and I shall love you still more if you will send me some loving and tender words, which I am longing for.

As to the rent, tell M. Bellanger I will pay it when I come back, about the 18th or 19th.

Kiss me, my Adele, and be happy, for I am devotedly attached to you.

I embrace you all, my darlings.

Your father,

V.

Հէնս Էնթրորքնի Նամակը (1)

Սիրելի պզտիկ Մարի,

Հայրիկը և մայրիկը կրնան քեզ կարդալ այս նամակը, քանի որ դուն ինքդ դեռ չես կրնար կարդալ. բայց սպասէ մինչև չորս տարի ետք այս ատեն. ա՛հ, գիտեմ, այն ատեն կարող պիտի ըլլաս ամէն բան կարդալու: Ես ալ հիմա քեզի պէս գիւղն եմ... Այնքան աղուոր է այստեղ. առատ ելակ ունեցայ — խոշոր, կարմիր ելակներ՝ սերով: Կերած ես անկէ: Մարդ անոնց համը կ'զգայ մինչեւ ստամոքսը: Երէկ ծովափը գացի... եւ եզերքը ժայռի մը վրայ նստայ: Մէկէն խոշոր ճերմակ թռչուն մը՝ որ որոր կը կոչեն՝ թռչելով դէպի ինձ եկաւ: Այնքան մօտեցաւ որ կարծեցի թէ իր թևերով պիտի ապտակէր զիս: Բայց ինչ զարմանք, «Մամարի՛» ըսաւ: «Ի՞նչ, ի՞նչ կայ» հարցուցի: «Մամարի՛», ըսաւ նորէն. և անշուշտ այն ատեն հասկցայոր «Մա-մա-րի»ով Մարի ըսել կ'ուղէր: «Ա՛հ», ըսի, «ուրեմն ինձի բարեւ մը կը բերես Մարիէն. այդ է, այնպէս չէ՞»: «Այ-այո, Մա-մա-րի, Մա-մա-րի», ըսաւ: Անկէ աւելի աղէկ չէր կրնար ըսել, որովհետև միայն որորի լեզուն գիտէր, եւ այդ մերինին այնքան ալ չնմանիր: «Շնորհակալ եմ բարեին համար», ըսի. և որորը թռաւ հեռացաւ: Անկէ ետքը մինչ պարտէզին մէջ կը պտտէի, պզտիկ ճնճղուկ մը թռչելով մօտս

(1) Էնթրորքն, Տանիմարքացի մեծ գրագէտը, աշխարհածանօթ է իր մանկական հիանալի պատմութիւններով: Իր գողտրիկ պատմութիւնները այնքան պերճախօսօրէն կը խօսին մանուկներու երեակայութեան որ աշխարհի բոլոր քաղաքակիրթ լեզուներու թարգմանուած են:

Hans Anderson.

Dear Little Marie:


Papa and Mama can read this letter to you, as you cannot read it yourself yet; but only wait till this time four years; ah, then you'll be able to read everything, I know. I am in the country now, like you. . . . It is so nice, and I have had some strawberries—large, red strawberries, with cream. Have you had any? One can taste them right down in one's stomach. Yesterday I went down to the sea . . . and sat on a rock by the shore. Presently a large white bird that they call a gull came flying along. It flew right toward me, so that I fancied it would have slapped me with its wings; but, mercy on us, it said, "Mamaree!" "Why, what's the matter?" I asked. "Mama-ree!" it said again, and then, of course, I understood that "Ma-ma-ree" meant Marie. "Oh," said I, "then you bring me a greeting from Marie, that's what it is, eh?" "Ya-ya! Ma-ma-ree, Ma-ma-ree," it said. It couldn't say it any better than that, for it only knew the gull language and that is not very much like ours. "Thanks for the greeting," said I, and off flew the gull. After that, as I was walking in the garden, a little sparrow came flying up—"I suppose

եկաւ: «Կարծեմ երկար ճամբայ մը թռչած ես, այնպէս չէ՞», ըսի: «Վէ՛, Վէ՛» (հեռու, հեռու), ըսաւ: «Մարին տեսա՞ր», հարցուցի: «Տէ՞, Գէ՞, Գէ՞» (յաճախ, յաճախ), ըսաւ: «Ուրեմն իմ բարևս տար Մարին. որովհետև կը կարծեմ որ ետ պիտի երթաս, այնպէս չէ՞» ըսի: «Վէ՛, Վէ՛» (քիչ, քիչ մը) պատասխանեց: Եթէ մինչև հիմա չէ եկած, ետքէն կուգայ, բայց նախ այս նամակը կը ղրկեմ քեզ: Կրնաս պղտիկ թռչնիկը կերակրել, եթէ ուզես. բայց սեղմելու չես զայն: Ուստի իմ կողմէ բարեւ ըրէ բոլոր բարի անձերուն, բոլոր ուշիմ կենդանիներուն, և բոլոր սիրուն ծաղիկներուն՝ որ իմ տեսնելէ առաջ կը թռչնին: Աղուոր չէ՞ գիւղ ըլլալ, ջուրին հետ խաղալ, շատ մը ազուոր բաներ ուտել, նամակ մը ստանալ սիրականէդ:

Հ. Բ. ԷՆՏԸՐՍԸՆ

you now have flown a long way?" said I. "Vit, vit" (far, far), it said. "Did you see Marie?" I asked. "Tit, tit, tit" (often, often, often), it said. "Then give my greeting to Marie, for I suppose you are going back?" I said. "Lit, lit" (a little, little), it replied. If it has not come yet, it will come later on, but first I'll send you this letter. You may feed the little bird if you like, but you must not squeeze it. Now greet from me all good people, all sensible beasts and all the pretty flowers that wither before I see them. Isn't it nice to be in the country, to paddle in the water, to eat lots of nice things, and to get a letter from your sweetheart?

H. C. Anderson.



ՅՈՐԴՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Յորդորական նամակները ամենապատշաճօրէն կը գրուին հօր, մօր, աւագ եղբօր կամ քրոջ կողմէն: Ուրիշ պարագաներու մէջ կը գրուին միայն երբ մասնաւորապէս կը խնդրուին:

Յորդորական նամակները կը պահանջեն ոճի պարզութեան հետ նաեւ համարձակութիւն եւ բացարձակ անկեղծութիւն: Սխալ մը գործուէլէ ետք ուշ մնացած յորդորներէ զգուշանալու է: Կարելի է գործուածին համակրանքով ցաւակցութիւն յայտնել կամ յանդիմանել՝ ազգականական կամ բարեկամական կապերու սերտութեան համաձայն. բայց արգելիչ միջոցներու մասին խօսիլ ոչ միայն աւելորդ ժամավաճառութիւն պիտի ըլլար, այլ նաև տգիտութիւն՝ կենցաղագիտութեան և թագթի տեսակէտով:

ՅՈՐԴՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՀՕՐ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Սիրելի զաւակս,

Ամերիկա հասած և արդէն տեղաւորուած ես :
Նախորդ նամակովս քու ապահով ժամանումիդ-
լուրին մեզի տուած ուրախութիւնը բացատրեցի :
Այսօր կը գրեմ քեզ հայրական պարտք մը եւս
կատարելու, այն է պանդուխտ զաւակի մը բա-
րոյական կազդուրում տալ : Ամերիկա երթալու
փափաք ունէիր. ես եւ մայրդ թոյլ տուինք քեզ
հեռանալ մենէ, որովհետեւ կը սիրէինք քեզ եւ
կը սիրէինք քու ապագան, երկրորդ՝ վստահութիւն
ունէինք քու տոկուն նկարագրի, գեղեցիկ բարքի
եւ առողջ կազմուածքի վրայ : Տեղդ հասնելու
համար անցուցած ճամբորդութիւնդ չափով մը
արկածալից էր : Առանց ուէ վտանգի հասար,
այդ մասին ամէնքս ալ ուրախացանք : Բայց յիշէ
որ Ամերիկա վերջին նպատակակէտդ չէ : Ամերի-
կայի մէջ նպատակիդ հասնելու միջոցը գտնել
յուսացիր, և այդ կէտին հասնելու համար շատ
աւելի երկար և վտանգաւոր ճամբորդութիւններ
պիտի անցնես : Ծովի կամ ցամաքի ճամբորդութեան
արկածները մեր կամքէ անկախ են. այդպիսի
արկածներուն զոհերը համակրանք եւ ցաւ կ'ազ-
դեն. բայց բարոյական ճամբորդութեան զոհերը
ամէնուն արհամարհանքին և նախատինքին կ'են-
թարկուին : Թէեւ բարոյականով և կազմով զօ-

LETTERS OF ADVICE.

From a Father.

My dear boy:

You are already settled in America. In my previous letter I described our joy at the news of your safe arrival. Today I write to discharge another parental duty, namely, to give moral strength and firmness to my distant son.

You had a strong desire to go to America. Your mother and I yielded to it, because we loved you and we thought of your future, and we had confidence in the firmness of your character, in your good conduct and healthy constitution. Your journey to your present location was somewhat hazardous. You arrived without any misfortune. We were all glad for that. But you must remember that America is not your goal. You only hope to find in America some means to win your cherished object; and in order to reach that you will have a longer and more dangerous journey. The dangers of travel on sea or on land are independent of our will. The victims of such journeys inspire sympathy and grief, but the victims of moral journeys are subjected to scorn and ridicule. Although you are strong both in body and in spirit, temptations

րաւոր ես, բայց փորձութիւններն ալ զօրաւոր են : Մարդ երբեք իր զօրութեան վրայ բացարձակ վստահութիւն ունենալու չէ, տկարութիւնը շատ անգամ անզգալաբար կը սողայ մեր մէջ, և եթէ զգոյշ չըլլանք՝ օր մը յանկարծ մենք արդէն պարտուած կը գտնենք զմեզ :

Սիրելի զաւակս, պանդուխտ ես. միայնութիւնը քեզի ծանր կուգայ եւ այդ վիճակին մէջ կրնաս դիւրութեամբ խաբուիլ կեղծ ժպիտներէ : Ես լսած եմ որ գէշ կիները յաճախ կ'օգտուին պանդուխտներու այդ տկարութենէն և կը տիրեն անոնց սրտին, մտքին, և քսակին վրայ : Այդպիսի անկուճ մը ոչ մէկուն գուժը կը շարժէ : Ուրեմն, զաւակս, այդ մարդու տոկունութիւն ունեցիր, և միշտ յիշէ որ մեր գերդաստանին անունը շարունակ մաքուր մնացած է. երբեք մի' ներք քեզի այնպիսի տկարութիւն մը՝ որ ուէ կերպով կրնայ աղարտ մը բերել մեզի : Այն յարգանքը որ մենք կը վայելենք մեզ ճանչցողներու շրջանակին մէջ՝ տարիներու և սերունդներու զոհողութեամբ չաւանդ ենք. այդ մասին, վստահ եմ, դուն այնքան հպարտ կ'զգաս որքան ես : Այդ բանը մեր միակ միսթարութիւնն է այս աշխարհի վրայ, որ միշտ գնահատել պէտք է գիտնանք : Ուրեմն ընտանեկան այդ ազնիւ հպարտութիւնը քու վաճանդ թող ըլլայ ամէն տեսակ փորձութիւններու դէմ, և օր մը փայփայած նպատակիդ հասնելով վերադառնաս մեր գիրկը և մեզի երջանիկ ծերութիւն մը բերես՝ ոչ թէ ոսկիներով, այլ բարձր նկարագրով, վարկով և պատուով :

Սիրելի զաւակս, ես պէտք եղած հմտութիւնը

are strong, too. Men must never place absolute confidence in their own strength; weakness often creeps in without our realization, and, if we are not careful, some day we may find ourselves captured.

My dear child, you are a lonely foreigner there; loneliness weighs heavily upon you and in that condition you may be easily lured by false smiles. I have often heard that bad women do take advantage of this weakness of immigrants, and soon prevail upon their hearts, minds, and pockets. Such a fall moves nobody's pity. Therefore, my boy, have the firmness of a manly man and remember always that the name of our family was left to us clean. Do not allow yourself any weakness that may bring a stain. The honor that we enjoy in the circle where we are known was won by our forefathers through the sacrifices of years, of which, I am sure, you are as proud as I am. It is our only wealth in this world, which we must know how to appreciate. Then let that noble pride of family be your shield against all kinds of temptations, and some day, after reaching your goal, you may return to your parents bringing them happiness in their old age, not by gold, but by a noble character and untarnished honor.

My dear boy, with my limited knowledge I

չունիմ ուրիշ ուղղութիւնով յորդորներ տալու, բայց համոզուած եմ որ քու իմաստութեամբը շրջավայրիդ համաձայն քեզի ուղիղ ճամբան կ'ընտրես:

Յայտնելով իմ վստահութիւնը քու մասին՝ կը մնամ ողջոյնի համբոյրներով,

Հայրդ,

Նորեկ մը Բարեկամէն Թեկադրութիւններ կը խնդրէ:

Սիրելի

Շարաթէ մը իվեր ես ալ Նոր Աշխահին մէկ բնակիչն եմ: Առ այժմ հաստատուած եմ Չըլսի: Ճամբու յոգնութիւնս արդէն փարատած է և սկսած եմ գործի մասին մտածել: Երանի թէ մօտ ըլլայիր և կարենայինք տեսակցութիւն մը ունենալ: Ինչպէ՞ս ես և ի՛նչ գործով կ'զբաղիս Շիքակօի մէջ: Հիմա համեմատաբար իրարու շատ մօտ ենք և կը յուսամ որ վերջապէս օր մը կը տեսնուինք: Այս երկիրը իր պայմաններով ու սովորութիւններով ինծի անծանօթ է. տակաւին, քու փորձառութեանդ արդիւնքը եղող թելադրութիւններ ինծի օգտակար պիտի ըլլան և իբրև ուղղեցոյց պիտի ծառայեն: Ուստի քենէ լսել կը բաղձամ կարելի եղածին չափ շուտ:

Ձեռքդ սեղմելով կը մնամ,

Քուկդ

cannot advise you in other ways, but I feel confident that with wisdom you will choose the right way.

Expressing my full confidence in you and embracing you, I am,

Your own father,

A Newcomer Asks an Old Friend for Suggestions.

Dear _____:

For a week I have made myself an inhabitant of this new world. At present I live in Chelsea. I have already rested from the fatigue of the journey and am thinking of a job. I wish you were near and that we could see each other. How are you and what is your occupation in Chicago? Now we are comparatively near each other, and I hope that some day we may meet.

I am not yet acquainted with the conditions and customs of this country. Suggestions out of your experience will be useful to me and will guide me into the right path. Therefore I want to hear from you as soon as possible.

Shaking your hands, I am,

Yours truly,

Բարեկամին Թեղադրութիւնները

Սիրելի Փանոս ,

Ամերիկա գալուդ լուրը տուող նամակդ ուրախութեամբ ստացայ և կը փութամ իմ շնորհաւորութիւններս ու բարեմաղթութիւններս ղրկել քեզ , կըսես թէ արդէն գործի մասին մտմտալու սկսած ես . գիտեմ թէ որքան տանջող խնդիր մըն է այդ նորեկի մը համար , բայց պէտք չէ որ քաջութիւնդ կորսնցնես , որովհետեւ գործ գըտնելը այնքան ալ անլուծելի խնդիր մը չէ : Երանի՛ թէ կարող ըլլայի այդ մասին ուղղակի և անմիջապէս օժանդակութիւն մը ընել քեզի :

Իմ թելադրութիւններս ուզած էիր . կը վախնամ որ ոչ մէկ թելադրութիւնս քեզի համար նորութիւն մը ըլլայ կամ արժէք մը ունենայ , բայց բան մը գրած ըլլալու համար հետեւեալ պարզ և ամենայայտնի կէտերը յիշեցնել կողովմ :

Գործ ուղելու համար անշուշտ ստիպուած անձամբ կամ նամակով դիմումներ պիտի ընես : Անձամբ դիմում մի ըներ առանց լաւ հագուելու , կոկիկ ածիլուելու և համարձակութեան ու ինքնավստահութեան յաւ պաշարի մը : Հագուեստը անշուշտ մարդու մը արժանիքին յայտարարը չէ , բայց մարդու մը արժանիքը անմիջապէս դատելու ուրիշ միջոցներ չկան . լաւ հագուեստը մաքրութիւն , կոկիկութիւն և ճաշակի մասին լաւ տպաւորութիւն կը թողու , և հագուեստին այդ ծառայութիւնը մենք պէտք է ապահովենք : Չածիլուիլը անհոգութեան տպաւորութիւնը կը թողու , որմէ զգուշանալու ենք : Եթէ այսօր մէկը տեսնելու

Answer with Suggestions.

Dear _____:

I was glad to receive your letter informing me of your arrival in America. I congratulate you and send my best wishes. You say that you have already begun to worry about work. I know what a vexing question it is for a newcomer; but you must not lose your courage, because finding employment is not an impossible problem after all. I wish I could help you directly and immediately.

You asked for suggestions. I am afraid I cannot make any which will be new to you or of any value; but in order to say something I want to mention the following simple and well-known points.

I have no doubt that you will make applications personally or by letters to get employment. Do not make any personal application without dressing well, without shaving neatly, and without a good supply of self-reliance and courage. Of course a good suit does not represent a man's worth, but there is no way of immediately measuring the merit of people. Good clothes give an impression in regard to the neatness and good taste of the wearer, and therefore we must secure their services. Negligence in shaving would mean a lack of neatness, which we must avoid. If we wish to see some one to-

երթալ ուղենք երէկուան ածիլուած ըլլալու հանգամանքը բաւական չէ, այսօր նորէն ածիլուելու ենք: Այդ մասին թեթեւ զանցառութիւն մը ոչ միայն անհոգ մարդու տպաւորութիւնը կը թողու, այլ նաև մեր այցելած մարդու հանդէպ յարգանքի բացակայութիւնը ցոյց կուտայ:

Ամերիկա վերջապէս ազատ երկիր մըն է, եւ եթէ մարդ ինքնայարգանքի սահմանին մէջ համարձակ ոգի մը ցոյց չտայ օտարօտի կը թուի: Վախկոտութիւն և վհատութիւն տկարութեան նշաններ են և դժբաղդաբար տկարը յարգանք չվայելեր ուէ տեղ: Տկարի հանդէպ մարդ կամայ կամ ակամայ ձանձրոյթ կցգայ. այս ցաւալի է, բայց իրողութիւն է նոյն իսկ մեր մէջ: Անշուշտ անգործութիւնը յաճախ կ'ընկճէ մարդը և բոլոր խրատները օգային պղպղակներ կը դառնան տառապողին համար. և սակայն ընկճումը պարտութիւն է և պարտեալին խնայող չըլլար:

Գործ ուզած ատենդ կը հանդիպի որ ո՞ր ձանձրացած և ջղային դարձած կ'ըլլայ. այդ բանը երբէք լքելու չէ մեզ: Ամենուն անբռնաբարելի իրաւունքն է գործի պատեհութիւն ուղեւ, և յիչէ որ միւսնոյն մարդը աւելի քան ուրախ պիտի ըլլար քեզ տեսնելու, եթէ մարդու պէտք ունեար, և մարդու պէտքը միշտ պիտի ըլլայ: Զուտ մարդասիրական նկատումներով չէ որ մեզ այս երկիրը կ'ընդունին, այլ շորովհետեւ մեր աշխատանքին պէտք ունին, և եթէ այսօր չունենան վաղը պիտի ունենան: Եթէ մեզի պատեհութիւն տան գործելու մենք շնորհակալ կ'ըլլանք, բայց չենք նուաստանար: Այդ իսկ պատճառով երբեք

day, yesterday's shaving will not do; today we must shave again. Negligence in this matter not only gives an impression of carelessness, but also means an absence of respect toward the man whom we visit.

Above all, America is a free country, and if a man fails to show a spirit of courage within the limits of self-respect it will seem strange. Cowardliness and discouragement are signs of weakness, and unfortunately the weak do not have respect anywhere. The general feeling of men toward the weak is a feeling of annoyance. This is to be regretted, but it is a fact witnessed even among ourselves. Sometimes involuntary idleness depresses a man and then all good words seem to him air bubbles; and yet depression is defeat and no one cares for the defeated.

When asked for a job the boss may happen to feel out of sorts and nervous; that must not discourage us. It is everybody's inviolable right to demand an opportunity to work. Remember that the same man would be more than glad to see you, if he were in need of men; and men will always be needed. It is not out of kindness alone that Americans admit us to this country. They admit us because they want our labor, and if they do not need it today, they will need it tomorrow. If they give us a chance to work we shall be thankful, but we shall not humiliate ourselves. For this very reason we shall not beg or

պէտք չկայ աղերսելու : Աղերսանքը ասիական փնթի բռնակալութիւններու մէջ միայն տեղ ունի : Աղերսանքը ինքնայարգանքի պակասութեան նշան է , և եթէ մարդ ինքզինք չյարգէ ուրիշները չեն կրնար յարգել զինք : Նոյնիսկ Միաց . Նահանգաց Նախագահին գրուած խնդրագրերու մէջ աղերսանքը տեղ չունի :

Մարդիկ երբեմն մէկ չափազանցութենէ միւսը կ'երթան : Որովհետև համարձակութիւնը յաջողութեան կ'առաջնորդէ յաճախ , թեթև դիտողները այն համոզումը կը գոյացնեն թէ ուշքը միակ միջոցն է յաջողութեան : Պւշքը իր բնական տեղը ունի ինչպէս ուրիշ երկիրներու՝ նոյնպէս , և քիչ մը աւելի , այս երկրին մէջ . բայց ուշքը պոռոտախօսութեան տանելու չէ : Այդ բանը շատերու գահավիժումին պատճառ կ'ըլլայ : Լաւ ուշք ընելու համար մենք մեր կարողութիւնները լաւ գնահատելու ենք . փոխանակ մենք զմեզ նուազ գնահատելու՝ քիչ մը աւելի գնահատենք , ինչ որ օգտակար է և ինքավստահութիւն կը ներշնչէ մեզ :

Երբ նամակով դիմում ընենք՝ պարտաւոր ենք յստակ և կարճ կերպով ընել մեր դիմումը , առանց աղաչելու և առանց մեր դժուարութիւնները կամ դժբաղդութիւնները յիշելու : Գութի համար գործ չեն տար : Այդպիսի դիմումնագրերու մէջ պէտք է յիշենք մեր առաւելութիւնները և ոչ թէ տկարութիւնները : Ամէն մարդ տկարութիւն կ'ունենայ , և մենք պարտաւոր չենք մեր տկարութեան հաշիւը տալու : Պէտք է վստահութիւն ցոյց տանք մեր ընելու կարողութեան վրայ , քանի որ ապացոյց մը չունինք թէ չենք կրնար ընել :

ARMENO-AMERICAN LETTER WRITER 195

implore. Implores please only the petty little tyrants of Asia. It means an absence of self-respect; and if a man fails to respect himself, others cannot respect him. Even petitions to the President of the United States should contain no supplication.

Sometimes men go from one exaggeration to another. Because courage often leads to success, thoughtless people come to the conclusion that "Bluff" is the only means of getting along. Bluff has its place here as in every other country, perhaps a little more in this country than in others. But bluffing must not be carried to bragging. It causes the ruin of a good many. In order to make a successful bluff we must appreciate our ability; instead of underestimating our powers we may overestimate them a little, which will do us good and give us the inspiration of self-confidence.

When we make a written application, we must do it in a plain and short letter, without supplication and without mentioning our difficulties or misfortunes. We are not given a job for the sake of pity. We must mention our ability and not our weaknesses or shortcomings. Everybody is supposed to have some kind of weakness, and we are not obliged to give an account of our own. We must show self-reliance and confidence in our power of doing things, as long as we have not proofs to the contrary.

Այս տեսակ բաներ ըսել դիւրին է. չեմ գիտեր թէ ես ինքս ինչ չափով կրնամ գործադրել, բայց վերջապէս աշխատելու ենք: Ինչպէս ըսի բան մը գրած ըլլալու համար գրեցի և ես վստահ եմ որ ինծի չափ գիտես:

Քուկդ ճշմարտօրէն,

ՄԵՄ ԵՂԲԱՅԲԸ ՊԶՏԻԿ ԵՂԲՕՐ

Սիրելի եղբայրս Արամ,

Դպրոցական յաջողութիւններուդ ուրախալի լուրը բերող նամակդ ստացայ և մեծապէս ուրախ եղայ: Այդ մասին իմ խորին գոհունակութիւնս կը յայտնեմ և զուարթ սրտէ բղխած համբոյրներս կը ղրկեմ: Շարունակէ այդպիսի լուրեր ղրկել ինծի քու դպրոցական աշխատանքներու մասին:

Նամակիդ մէջ յիշած էիր որ մէկ երկու առարկաներ չէիր սիրեր, բայց կը սորվէիր պարզապէս դասընկերներէդ ետ չմնալու համար: Քու կարծիքով էական չէ որ ամէն դպրոցական դպրոցի մէջ աւանդուած ամէն նիւթ սորվի: Ես այդպէս չեմ մտածեր:

Տարրական վարժարանի մը մէջ աւանդուած նիւթերը հազիւ թէ աւելորդ ըլլան: Ամէն նիւթ որոշ ընդունակութիւն մը կ'ստեղծէ եւ կը զարգացնէ պատանիներու մէջ: Անոնք որ մտադիր են ուսումնականի մը կեանքը ապրիլ՝ չեն կրնար իրենց նախնական ուսումի նիւթերէն մէկը կամ միւսը զանց ընել. որովհետեւ անոնց ամէնքն ալ

ARMENO-AMERICAN LETTER WRITER 197

It is easy to say such things and I do not know how much I can practice them myself. As I told you before, I write these just for the sake of writing, and I know that you know as much as I do.

Yours truly,

Letter from an Elder Brother.

Dear Brother:

I was glad to receive your letter and learn all about your successes in school. I want to express my deep satisfaction and to send you kisses with heartfelt joy. Keep on sending me such news in regard to your school work.

You mentioned in your letter that you did not like certain subjects, but that you learned your lessons in them merely to keep pace with your classmates. In your opinion it is not essential that a scholar should learn every subject taught in a school. I am not of the same opinion.

Subjects given in an elementary school can hardly be unessential. Each subject brings some definite aptitude to youngsters and develops it in them. Those who intend to live a scholar's life cannot afford to neglect any of their subjects of study, because every one of them has its

իրենց տեղը ունին : Հեղինակաւոր աղբիւրներէ քաղած տեղեկութիւններս ցոյց կուտան որ աշխարհի կեանքի մէջ յաջողութեան նշան է դպրոցական կեանքի յաջողութիւնը : Քաղաքական եւ ուրիշ ասպարէզներու մէջ առաջնորդող մարդիկ, շատ քիչ բացառութեամբ, առաջնորդող եզած են նաև իրենց դպրոցական շրջանին մէջ :

Տարակոյս չունիմ որ մեծ մարդերու կենսագրութեան մէջ հանդիպած ես այնպիսի դէմքերու՝ որոնք իրենց դպրոցական կեանքի մէջ այնչափ ընդօրինակելի բարք կամ նախանձելի յաջողութիւն չեն ունեցած : Այդպիսի պարագաներ ունին իրենց յատուկ պատճառները, որոնց քննութեան չեմ կրնար մտնել հիմա : Եթէ մենք մեր ուշագրութիւնը դարձնէինք այն անյաջողներու լէգէոններուն, որ այսօր աշխարհը կը լեցնեն, պիտի տեսնէինք որ անոնցմէ ամենամեծ մասը դպրոցական յաջող շրջան մը չեն ունեցած :

Անշուշտ ըսել չեմ ուզեր թէ դպրոցի մէջ յառաջադէմ տղայ մը անպատճառ եզական դիրք մը կը գրաւէ իր ապագայ կեանքին մէջ . ինչ որ չեչտել կ'ուզեմ՝ սա է թէ դպրոցական յաջողութիւնը կ'օժտէ մարդիկը ոչ միայն խորհելու եւ քննելու կարողութեամբ, այլ նաեւ ինքնավստահութեան մեծ ձիրքով :

Հանճարներէն փոքրաթիւ մաս մը իրենց բնածին ձիրքով և ուրիշ պատճառներով վեր բարձրացած են . բայց տարօրինակ հանճարները բացառիկ երևոյթներ են կեանքի մէջ : Ներկայ քաղաքակրթութիւնը փոքրաթիւ հանճարներու միջոցով չէ անպատճառ որ ստեղծուած է, այլ տոկուն,

place. According to the information that I have derived from authoritative sources, success in the school life means success in the practical life of the world. Leaders in political or other careers have been, with few exceptions, leaders in the life of the school period.

I have no doubt that in the biographies of great men you have come across persons whose conduct in school could not be recommended or whose success in scholarship was not enviable. Such cases have their special reason, which I cannot take time to analyze. If we should turn our attention to legions of those unsuccessful ones, who fill the world, we would find that the great majority of them did not have a good record in their school work.

Of course, I do not mean that a diligent school-boy will necessarily occupy a distinguished position in future life. What I mean to say is this, that early success in school not only endows men with the power of thinking and observing, but also with the great gift of self-confidence.

Only a few men of genius have ascended to their high positions through their innate endowment; a great genius is a phenomenon in life. Our present civilization is not necessarily created and developed by a few talented men, but by

յարատեող, եւ միշտ լաւագոյնը ընելու ձգտող միլիոնաւոր աշխատաւորներու միջոցով: Եւ եթէ մէկը դպրոցէն սկսի լաւագոյնը ընել, լաւը ընելու մտաւորական և ֆիզիքական ուժի կարեւոր պաշար մը կ'ստանայ. և ահա այդ պաշարն է որ թէ՛ արհեստի և թէ՛ գրականութեան մէջ ասպարէզներ կ'ապահովէ հազարաւոր մարդոց՝ որոնք բացառիկ հանճարներ չեն եղած:

Մեր նպատակը չէ բացառիկ մարդիկ ըլլալ աշխարհի վրայ, այլ մարդու բարձրութեան արժանի անձնաւորութիւններ:

Ուստի եթէ դպրոցական փայլուն չըջաններ կը բոլորես, այդ բանը քեզ չլացնելու չէ եւ քու մասին բացառիկ հանճարի մը գաղափարը կազմել տալու չէ քու մէջդ: Այդպիսի խորհուրդներ ամբարտաւանութեան կ'առաջնորդեն: Ճշմարիտ եւ գեղեցկագոյն մեծութիւնները անոնք են որ ինքնահայեցողութեան չեն ենթարկուիր:

Լաւ սկզբունք չէ բան մը սորվիլ պարզապէս ուրիշներէն ետ չմնալու համար: Քանի որ պիտի սորվիս՝ նախ սորվելիքդ սիրել գիտցիր, ջանա՛ առարկային արժէքը տեսնել եւ սորվէ այդ արժէքին համար:

Վստահ եմ որ այս մի քանի դիտողութիւնները նոր եռանդ կուտան քեզի և սիրել կուտան բոլոր դասերդ: Քեզի հիմնական նպատակ ըրէ՛ ոչ թէ ուրիշները գերազանցել, այլ կատարելութեան հասնիլ:

Ողջագուրելով քեզ, կը մնամ միշտ քեզ սիրող
Եղբայրդ,

millions of hard-working, perseverent men who have earnestly tried to do their best. If a person begins in school to do his best, he will store a big supply of physical and moral strength. It is this supply that secures places in art and literature for men who have not exceptional talents.

Our purpose is not to be exceptional men in the world, but to be worthy of the elevation of men.

Now, this brilliant school period must not spoil you, and you must not think of yourself as an exceptional genius. Such thoughts lead to arrogance. True and the most beautiful greatness is not subjected to self-consciousness.

It is not a good principle to learn something merely not to be left behind others. As long as you are going to learn it, try first to love it, try to see the worth of the subject and study it for its own sake. I am confident that these few remarks will stimulate new zeal in you to love all your studies. Make it your chief aim, not to surpass others, but to reach perfection.

Your loving brother,

Լիճերն Գործէ Խուստփող Ազգակցոցի մը

Յունվար 2, 1851.

Սիրելի Ճանսթըն,

Ութսուն տալէրի խնդիրքդ կատարել յարմար չեմ սեպեր հիմա: Զանազան անգամներ երբ ես քեզի քիչ մը օգնեցի՝ ինծի ըսիր. «Հիմա այլևս լաւ կ'ըլլանք»: Բայց խիստ կարճ ժամանակի մը մէջ քեզ միևնոյն դժուարութեան մէջ գտայ: Արդ, այս բանը կրնայ պատահիլ քու ընթացքի մէկ թերութեան պատճառով: Թէ ի՛նչ է այդ թերութիւնը, կարծեմ ես գիտեմ: Մոյլ չես, բայց անգործ ես: Կը տարակուսիմ որ, քեզ տեսնելէս ասդին, սանկ ամբողջ օրուան մը գործ տեսած ըլլաս ուէ մէկ օր: Գործը այնչափ չսիրող չես, բայց միևնոյն ատեն շատ չես գործեր, պարզապէս որովհետև քեզի չթուիր թէ անկէ պէտք եզածին չափ կրնաս շահիլ: Անօգուտ ժամավաճառութեան այս ունակութիւնն է ամբողջ դժուարութիւնը: Անհրաժեշտօրէն պէտք է քեզի համար, և աւելի զաւակներուդ համար, որ բեկանես այս ունակութիւնը: Աւելի անհրաժեշտ է անոնց համար, որովհետև անոնք աւելի երկար կեանք ունին ապրելու, և կրնան անգործի ունակութենէն ազատ մնալ՝ անոր մէջ իյնալէ առաջ, ինչ որ աւելի դիւրին է՝ քան անկէ դուրս ելնել անգամ մը անոր մէջ իյնալէ ետք:

Հիմա դուն քիչ մը դրամի կը կարօտիս. այդ մասին իմ առաջարկս է որ դուն երթաս գործելու «ակոսայով ու եղունգով»՝ մէկու մը համար որ քեզի դրամ կուտայ անոր փոխարէն: Թող Հայ-

Lincoln's Letter to John D. Johnston.

January 2, 1851.

Dear Johnston:

Your request for eighty dollars I do not think it best to comply with now. At the various times when I have helped you a little you have said to me, "We can get along very well now"; but in a very short time I find you in the same difficulty again. Now, this can only happen by some defect in your conduct. What that defect is, I think I know. You are not lazy, and still you are an idler. I doubt whether, since I saw you, you have done a good whole day's work in any one day. You do not very much dislike to work, and still you do not work much, merely because it does not seem to you that you could get much for it. This habit of uselessly wasting time is the whole difficulty; it is vastly important to you, and still more so to your children, that you should break the habit. It is more important to them, because they have longer to live, and can keep out of an idle habit before they are in it, easier than they can get out after they are in.

You are now in need of some money; and what I propose is, that you shall go to work, "tooth and nail," for somebody who will give you

րիկը և զաւակներդ հոգ տանին տան գործերուն , հունձք մը պատրաստեն և հնձեն , և դուն գործի կ'երթաս դժբախտ կարելի վճարումով մը , կամ ունեցած մէկ պարտքիդ փոխարէն . եւ , քու աշխատանքին պատշաճ վարձք մը ապահովելու համար , ես հիմա կը խոստանամ քեզի որ հիմակուընէ մինչև Մայիսի առաջին օրը՝ քու աշխատութեան փոխարէն ստանալիք կամ պարտքէդ թեթեւալիք իւրաքանչիւր տալէրին դիմաց տալէր մըն ալ ես պիտի տամ քեզի : Ասով եթէ ամիսը տասը տալէրով վարձուիս , ինձմէն պիտի ստանաս տասը աւելի , որով գործիդ համար ամիսը պիտի ստանաս քսան տօլար : Ըսել չեմ ուզեր որ հեռանաս Սէնթ Լուի երթաս , կամ կապարի հանքերուն , և կամ Քալիֆօրնիոյ ոսկի հանքերուն . բայց ըսել կ'ուզեմ որ գործի երթաս լաւագոյն վճարումով մը՝ որ կրնաս գտնել բնակավայրիդ մօտերը , Քօլս Քաունթիին մէջ : Արդ եթէ այս բանը ընես , շուտով պարտքէ կ'ազատիս , և , ինչ որ լաւագոյն է , պիտի կազմես ունակութիւն մը՝ որ քեզ ազատ պիտի ընէ պարտական իյնալէ : Բայց եթէ ես հիմա պարտքդ մաքրեմ՝ գալ տարի դարձեալ նոյնչափ ընկղմած պիտի ըլլաս անոր մէջ : Կ'ըսես որ գրեթէ երկինքի մէջ տեղդ պիտի տայիր եօթանասուն կամ ութսուն տալէրի համար : Ուրեմն երկինքի մէջ քու տեղդ շատ աժան կը գնահատես , որովհետև վստահ եմ որ իմ առաջարկովս եօթանասուն կամ ութսուն տալէրը կրնաս ձեռք բերել չորս կամ հինգ ամիսէն : Կ'ըսես որ եթէ քեզի տամ այդ գումարը հոգը իմ վրայ կ'ընես , և , եթէ չվերադարձնես դրամը , սեփականութիւնը ինձի կը

money for it. Let Father and your boys take charge of your things at home, prepare for a crop, and make the crop, and you go to work for the best money wages, or in discharge of any debt you owe, that you can get; and, to secure you a fair reward for your labor, I now promise you, that for every dollar you will, between this and the first of May, get for your own labor, either in money or as your own indebtedness, I will then give you one other dollar. By this, if you hire yourself at ten dollars a month, from me you will get ten more, making twenty dollars a month for your work. In this I do not mean you shall go off to St. Louis, or the lead mines, or the gold mines in California, but I mean for you to go at it for the best wages you can get close to home in Coles County. Now, if you will do this, you will be soon out of debt, and, what is better, you will have a habit that will keep you from getting in debt again. But, if I should now clear you out of debt, next year you would be just as deep in as ever. You say you would almost give your place in heaven for seventy or eighty dollars. Then you value your place in heaven very cheap, for I am sure you can, with the offer I make, get the seventy or eighty dollars for four or five months' work. You say if I will furnish you the money you will deed me the land, and, if you don't pay the

փոխանձես : Անիմաստ խօսք : Հիմա եթէ այդ հողով չես կրնար ապրիլ, ի՞նչպէս պիտի կրնաս ապրիլ առանց անոր : Դուն ինծի միշտ ազնիւ եղած ես, և ես չեմ ուզեր քեզի անազնիւ ըլլալ : Ընդհակառակը եթէ իմ տուած խորհուրդիս հետևիս, պիտի գտնես որ ութսուն անգամ ութսուն տալէրէն աւելի կ'արժէ այն :

ՆԱՄԱԿ ՄԸ ԵՒՍ ՆՈՅՆԻՆ

Շէլպիվիլ, Նոյեմբեր 4, 1851.

Սիրելի եղբայր,

Երբ երէկ չէ առջի օր Չարլըսթըն եկայ՝ իմացայ որ կ'աշխատիս քու ապրեւալայր հողը ծախել և Միսուրի փոխադրուիլ : Անկէ ասդին այս բանի վրայ կը խորհիմ, և չեմ կրնար չմտածել որ այդպիսի նպատակ մը բացարձակապէս խենթութիւն է : Միսուրիի մէջ աւելի աղէկ ի՞նչ կրնաս ընել քան այստեղ : Հոն հողը աւելի հարուստ է : Հոն կրնաս՝ աւելի քան հոս՝ կորեկ, ցորեն և վարօակ արտադրել առանց աշխատանքի : Արդեօ՞ք հոն ուէ մէկը, աւելի քան հոս, քու գործդ քեզի համար պիտի ընէ : Եթէ մտադիր ես գործելու երթալ՝ չկայ ոչ մէկ լաւագոյն տեղ քան ճիշտ ուր որ կը գտնուիս . եթէ մտադիր չես գործելու երթալ՝ ոչ մէկ տեղ կրնաս ապրիլ : Տեղէ տեղ շարժըտկիլ ոչ մէկ բարիք կ'ընէ : Այս տարի հունձք չես արտադրած, և կ'ուզես որ հողը ծախես ու դրամը ծախես : Ունեցած հողդ վրայ տուր, և,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 207

money back, you will deliver possession. Nonsense! If you can't now live with the land, how will you then live without it? You have always been kind to me, and I do not mean to be unkind to you. On the contrary, if you will but follow my advice, you will find it worth more than eighty times eighty dollars to you.

Letter to John D. Johnston.

Shelbyville,

November 4, 1851.

Dear Brother:

When I came into Charleston day before yesterday, I learned that you are anxious to sell the land where you live and move to Missouri. I have been thinking of this ever since, and cannot but think such a notion is utterly foolish. What can you do in Missouri better than here? Is the land any richer? Can you there, any more than here, raise corn and wheat and oats without work? Will anybody there, any more than here, do your work for you? If you intend to go to work, there is no better place than right where you are; if you do not intend to go to work, you cannot get along anywhere. Squirming and crawling about from place to place can do no good. You have raised no crop this year; and what you really want is to sell the land, get the money, and spend it. Part with the land you

կեանքիս վրայ կ'երդնում՝ ետքէն ոչ մէկ ատեն թաղուելու չափ հողի տէր պիտի դառնաս: Հողէն ստանալիք դրամին կէսը Միսուրի փոխադրութեան համար պիտի ծախսես և միւս կէսը պիտի ուտես, խմես, եւ հատցնես, եւ ոչ մէկ ոտք հող պիտի գնուի: Արդ, ես պարտականութիւն կ'զգամ այսպիսի անմտութեան մէջ մաս չունենալ: Այդպէս կ'զգամ նոյնիսկ քու սիրոյդ եւ մասնաւորապէս մայրիկին սիրոյն համար: Արեւելեան քառասուն էջերը հողը մտադիր եմ պահել մայրիկին համար՝ քանի ան կ'ապրի: Եթէ չմշակես զայն՝ զինքը ապրեցնելու չափ վարձք կը բերէ—գոնէ բան մը կը բերէ: Իր օժիտը եղող միւս երկու քառասուննոց հողը ան կրնայ քեզի թողուլ, և ոչ մէկ շնորհալիք ինծի: Ուստի, սխալ մի՛ հասկնար այս նամակս. ուէ անաղնիւ ոգիով չեմ գրեր: Կը գրեմ որպէսզի, եթէ կարելի է, տեսնես ճշմարտութիւնը. և ճշմարտութիւնը այն է՝ որ կարօտ վիճակի մը մատնուած ես, որովհետեւ ամբողջ ժամանակդ պարապ վատներ ես: Անյաջողութեանդ հազարու-մէկ պատրուակները անիմաստ են. անոնք ոչ ոք բայց միայն քեզ կը խաբեն: Գործի երթալ միակ դարմանն է քու կացութեան:

Բառ մը Մայրիկին համար: Չէփմէն ինծի կ'ըսէ թէ ինք կ'ուզէ որ երթաք եւ իրեն հետ ապրիք: Եթէ ես քու տեղդ ըլլայի ատեն մը կը փորձէի: Եթէ անկէ ձանձրանաս (և ես կը խորհիմ չպիտի ձանձրանաս) կրնաս վերադառնալ տունդ: Չէփմէն աղնիւ զգացումներ կը տածէ քու մասին, և տարակոյս չունիմ որ քու վիճակդ շատ հաճելի պիտի դարձնէ:

have, and, my life upon it, you will never after own a spot big enough to bury you in. Half you will get for the land you will spend in moving to Missouri, and the other half you will eat, drink, and wear out, and no foot of land will be bought. Now, I feel it my duty to have no hand in such a piece of foolery. I feel that it is so even on your own account, and particularly on Mother's account. The eastern forty acres I intend to keep for Mother while she lives; if you will not cultivate it, it will rent for enough to support her—at least, it will rent for something. Her dower in the other two forties she can let you have, and no thanks to me. Now, do not misunderstand this letter; I do not write it in any unkindness. I write it in order, if possible, to get you to face the truth, which truth is, you are destitute because you have idled away all your time. Your thousand pretences for not getting along better are all nonsense; they deceive nobody but yourself. Go to work is the only cure for your case.

A word to Mother. Chapman tells me he wants you to go and live with him. If I were you I would try it awhile. If you get tired of it (as I think you will not), you can return to your own home. Chapman feels very kindly to you, and I have no doubt he will make your situation very pleasant.

Հէնրի Վան Տայֆ (1) Եօրրին Բարձրագոյն
Վարժարանի Սրէյ Կարգին, Ինսիտնափօլիս

ԷՎՐԸՆ, Փրինսթըն, Նիւ Ճըրզի.
Յունվար 25, 1902:

Իմ սիրելի բարեկամներս,

Ձեր յոյժ ազնիւ նամակները փոխանցուած է
ինծի Օր.— ի կողմէ, եւ մեծապէս շահագրգռած
են զիս: Ձեր ուսուցիչը յայտնապէս կը հաւատայ որ
Անգլիական Գրականութիւնը կենդանի նիւթ մըն
է, և պէտք չէ ուսումնասիրուի «Լէպըրէթօրիի
մէթօտով», այլ կենսական մէթօտներով: Ինծի
կը թուի թէ այս է շիտակ ճամբան: Մեծ հեղի-
նակները ալճեպրական նշաններ չեն. անոնք իրա-
կան մարդիկ են: Մեծ գիրքերը քիմիական ար-
տադրութիւններ չեն տարրալուծուելու համար.
անոնք պատգամախօսներ են կեանքէ կեանք. ա-
նոնք մարդկային սրտի ցոլացումներ են. անոնք
արուեստի գործեր են և պէտք է գնահատուին
իրենց տուած ցնծութեան եւ աւանդած մտքի
համար:

Ուրախ եմ որ դուք Թէնիսընի նկարագրերու
մասին կը խորհիք եւ կը խօսիք իրրեւ կենդանի
անձերու, այնպէս որ դուք անոնց մէջ ձեզի նախ-
ընտրելիները ունիք, և նոյնիսկ վիճարանութիւն-
ներ ու բարեկամական բանակուիւններ կ'ունենաք
ձեր հերոսներու և հերոսուհիներու բաղդատական
արժանիքներու նկատմամբ: [Ես կը ճանչնայի եր-

(1) Հէնրի Վան Տայֆ, նախկին փրօ. Անգ. Գրականութեան Փրինսթին
Գօլէճի մէջ, հանրածանօք վիպագիր, վերջերս Մ. Նախագնորու դեսպան
Հօլանտայի մէջ:

**Henry Van Dyke to the Junior Class in the
Shortridge High School at Indianapolis.**

Avalon, Princeton, N. J.

Jan. 25, 1902.

My dear friends:

Your very kind letters have been forwarded to me by Miss ———, and have interested me greatly. Your teacher evidently believes that English Literature is a living subject, and is not to be studied by "laboratory method," but by vital methods. This seems to me the right way. Great authors are not algebraic symbols; they are real men. Great books are not chemical products to be analyzed; they are messages from life to life; they are reflections of the human heart; they are works of art, to be valued for the joy they give and the meaning they impart.

I am glad that you think and speak of Tennyson's characters as living persons, so that you have your favorites among them, and even have disputes and friendly quarrels about the comparative merits of your heroes and heroines. [I knew two schoolmates who had a regular fight about David Copperfield and Henry Esmond. We did not "fight to a finish," so it did us no

կու դասընկերներ՝ որ կանոնաւոր կուի կ'ուենե-
նային Տէյվիտ Գափըրֆիլտի և Հէնրի Էզմընտի
մասին: «Կուիւր վախճանին» չտարինք, ուստի
մեզի վնաս մը չըրաւ. բայց ես տակաւին կը խոր-
հիմ Էզմընտի մասին՝ իբրև շատ աւելի գեղեցիկ
նկարագրի:]

Թէնիսըն իրաւամբ նկատուած է ամենակա-
տարեալ արթիսթը տասնևիններորդ դարու անգ-
լիացի բանաստեղծներու մէջ: Բայց այս միմիայն
անոր համար չէ որ իր ոտանաւորը աւելի ճոխ է
եւ երաժշտական, այլ նաեւ անոր համար որ իր
գործերը ճշմարիտ են՝ նոյնիսկ ամենափոքր ման-
րամասնութիւններու մէջ: Կը յիշէ՞ք այն գեղեցիկ
կտորը «Մօտ»ին մէջ.

«Իր ոտքերը դպած էին մարգերուն
եւ մարգարտածաղիկները թողած վարդագոյն:»

Եթէ ամերիկացի բանաստեղծ մը գրէր այդ
բանը ամերիկացի աղջկան մը նկատմամբ՝ զգա-
ցական անիմաստութիւն մը պիտի ըլլար: Ինչո՞ւ:
Որովհետև ամերիկեան բոլոր մարգարտածաղիկե-
րը ճերմակ և դեղին են. վարդագոյն ոչինչ կայ
անոնց մէջ: Բայց անգլիկան մարգարտածաղիկը
իսկապէս վարդագոյն է՝ թերթերուն վարի կողմը,
այնպէս որ երբ Մօտ դաշտի մէջէն կ'անցնէր իս-
կապէս իր ոտքի հետքերը վարդագոյն կը թողուր՝
կոխած տեղերու ծաղիկները վեր դարձած ըլլալով:

Եթէ դուք կ'ուզէք ունէ բանի վրայ գրել,
ձեր առաջին ջանքը պէտք է ըլլայ տեսնել զայն
այնպէս ինչպէս որ է. այն աստեղ դուք կրնաք
թոյլ տալ ձեր երևակայութեան զայն լուսաւորելու
և մեկնելու մերկ իրողութիւնը հետեւեալին մէջ.

harm; but I still think Esmond by far the finer character.]

Tennyson is rightly considered the most perfect artist among Nineteenth Century English Poets. But this is not merely because his verse is rich and musical; it is because his work is also true, even in the smallest details. You remember that beautiful bit in "Maud":

"Her feet have touched the meadows
And left the daisies rosy"?

If an American poet had written that about an American girl, it would have been sentimental nonsense. Why? Because the American daisy is all white and yellow. There is nothing rosy about it. But the English daisy is really pink on the under side of its petals. So when Maud crossed the field she really left her footprints marked in rose-color in the upturned flowers where she had trodden.

If you are going to write about anything, the first thing to do is to see it as it really is; then you may let your imagination illuminate it, and interpret the bare fact in

"The light that never was on sea or land,—
The consecration and the poet's dream."

«Լոյսը որ երբեք չկար ոչ ծովի վրայ ոչ ցամաքի, —
Նուիրումը և բանաստեղծին երազը:»

Կարելի չպիտի ըլլայ պատասխանել ձեր իւրաքանչիւրի նամակին անջատապէս. և մէկը վերցնել պատասխանի մը համար՝ արդարութիւն պիտի չըլլար մնացած հարիւր քսանը չորսին: Բայց պիտի ուզէի ձեր ամենուն ալ պզտիկ պատմութիւն մը ընել թէնիսընի վրայ, և ձեզի թողուլ դատել թէ այն ուէ լոյս կը սփռէ՞ իր նկարագրի վրայ:

Երբոր ես իր տունն էի 1892ին, (իբ վերջին հիւանդութենէն քանի մը շաբաթ առաջ), խոստացաւ ինծի համար ինքնագիր բան մը գրել իր պատկերին վրայ: «Ինչ գրեմ», հարցուց ան: Խորհելով իր բարի կեանքին եւ մեծ համբաւին վրայ՝ տող մը թելադրեցի «Ուէլիսկիթըն Տաղերգութենէն».

«Պարտականութեան շաւիղը փառքին ուղին է:»

Ան գրեց այդ, եւ ետքը թերթը դարձնելով ըսաւ. «Հիմա ես ալ իմ ընտրութիւնս կ'ուզեմ գրել:» Իր ընտրութիւնը այս էր.

«Սէրը վեր առաւ տաւիղը կեանքին
Եւ հարկանեց բոլոր թելերն ուժգին,
Հարկանեց թելը անձին՝ որ, դողդոջուն,
Անհետացաւ իմէջ երգին գեղահնչուն:»

Հաճեցէք իմ անկեղծ յարգանքներս տալ ձեր ուսուցչուհիին եւ իմ շնորհակալութիւններս՝ իր ինծի տուած հաճոյքին համար: Կարծեմ, եթէ խելացի էք, նոյնպէս դուք ձեր շնորհակալութիւնները պիտի յայտնէք իրեն այն աշխատութեան համար՝ որ կատարած է ձեր ուսմունքը շահագր-

It will not be possible to answer each of your letters separately; and to pick out one for a response would hardly be fair to the other one hundred and twenty-four. But I would like to tell you all a little story about Tennyson, and leave you to say whether you think it throws any light on his character.

When I was staying at his house in 1892 (a few weeks before the last illness), he promised to write an autograph for his portrait for me. "What shall I write?" he asked. Thinking of his good life and his great fame, I suggested a line from the Wellington Ode:

"The path of duty is the way to glory."

He wrote it, and then turning over the sheet he said, "Now I will write what I prefer." This was his choice:

"Love took up the Harp of Life and smote on all
the chords with might,
Smote the chord of Self, that, trembling, past in
music out of sight."

Will you give my sincere regards to your teacher, and my thanks to her for the pleasure she has given me? I think, if you are wise, you will give her also your own thanks for the work

գիտ և ձեր շահագրգռութիւնները ուսումնատենչ ընելու համար :

Ուրախ կ'ըլլամ եթէ ձեռնէ ուէ մէկը սիրէ իմ գիրքերը : Անոնք ամէնքն ալ միւսնոյն նիւթի շուրջ են, — միակ նիւթին՝ որուն վրայ, իմ կարծիքով, կ'արժէ գրել — այն է կեանքին : Եւ այս է որ ես կը յուսամ դուք ամէնքդ ալ պիտի ունենաք (իր իսկական իմաստով), զայն պիտի գործածէք ամենաբարձր վախճանին համար և պիտի վայելէք ընդ միշտ :

Ձերդ անկեղծօրէն,
Հէնրի ՎԱՆ ՏԱՅՔ

ՆԱԽ. ԼԻՆՔԸՆ ԶՕՐ. ՄԷՔԼԷԼԷՆԻ (1)

Ուաշինգթըն, Տ. Գ., Փետ. 3, 1862.

Իմ սիրելի Տիար,

Դուք և ես անջատ և տարբեր ծրագրեր ունինք Փօթօմաքի բանակի շարժման մասին — ձերը՝ Չէսէփիքի ճամբով, Բափահէնաքի վրայով դէպի Ուրպանա և ցամաքէն Եօրք գետի վրայի երկաթուղիին վախճանը. իմս՝ շարժել ուղղակի դէպի կէտ մը, Մէնէսէսի հարաւ արևմտեան երկաթուղիին վրայ :

Եթէ ինձի գոհացուցիչ պատասխաններ տաք հետեւեալ հարցումներուն, ես ուրախութեամբ տեղի պիտի տամ ձեր ծրագրին :

(1) Մեծ Նախագահին այս նամակը կը բարգմանենք իբրև մէկ նմոյշը իր պայծառատեսութեան, յստակ և անսքեմք ոճին, եւ զօրաւոր արտայայտութեան : Լինքըն զինտրական հսկայ եւ խիստ բարդ խնդիր մը լռօնց իր այս նամակի մէջ խտացուցած քանի մը հարցումներով :

ARMENO-AMERICAN LETTER WRITER 217

she has done to make your studies interesting and your interests studious.

I am glad if any of you like my books. They are all about the same subject,—the only one that seems to me worth writing about,—Life. And this is what I hope you all will have (in the real sense), and use it for the highest ends, and enjoy it forever.

Sincerely yours,

Henry Van Dyke.

**President Lincoln's Letter to General G. B.
McClellan.**

Washington, D. C.
Feb. 3, 1862.

My dear Sir:

You and I have distinct and different plans for a movement of the Army of the Potomac—yours to be down the Chesapeake, up the Rappahannock to Urbana and across land to the terminus of the railroad on the York River; mine to move directly to a point on the railroad southwest of Manassas.

If you will give me satisfactory answers to the following questions, I shall gladly yield my plan to yours.

Առաջին. ձեր ծրագիրը չե՞նթաղեր ժամանակի և դրամի խիստ աւելի վատնում մը քան իմս :

Երկրորդ. ինչո՞վ յաղթութիւն մը աւելի ստոյգ է ձեր քան թէ իմ ծրագրով :

Երրորդ. ինչո՞վ յաղթութիւն մը աւելի արժէքաւոր է ձեր քան թէ իմ ծրագրով :

Չորրորդ. արդարև նուազ արժէքաւոր պիտի չըլլա՞ր պարզ այն իրողութեան համար որ թշնամիին հաղորդակցութեան ոչ մէկ մեծ գիծ պիտի բեկանէր այդ, մինչդեռ իմս պիտի բեկանէր :

Հինգերորդ. աղէտի մը պարագային՝ նահանջը աւելի դժուար պիտի չըլլա՞ր ձեր քան իմ ծրագրով :

Ճիշտ քիչ առաջ օգնեցի պատերազմական քարտուղարին՝ կազմելու ձեզի հեռագրի մը մէկ մասը բանակի վերաբերմամբ, այդ հեռագիրը անշուշտ ասկէ շատ աւելի առաջ հասած պիտի ըլլայ :

Կ'ուզեմ ձեզի քանի մը բառ ըսել անձնապէս այս նիւթին նկատմամբ : Ես զօրաբանակի կազմակերպութիւնը արտօնեցի ոչ միայն միաձայն հաւանութեամբ տասներկու հրամատարներու՝ որ դուք ընտրած և կարդած էիք իբրև բաժանումի հրամատարներ, այլ նաեւ միաձայն կարծիքով ամէն այն շէնո-որական Ֆուրո- որու կարծիքը կրնայի առնել (և ամէն արդի զինուորական գրքի), միայն դուք բացառութիւն ըլլալով : Իհարկէ ես իմ դատողութեամբս չպնդեցի հասկցած ըլլալ խնդիրը : Արդ, ես անհրաժեշտ կը նկատեմ ձեզի համար գիտնալ թէ անոր դէմ ձեր մաքառումը ի՞նչպէս կ'ընդունուի այն շրջանակներու մէջ՝ որ չենք կրնար այնպէս բոլորովին անտես թողուլ :

ARMENO-AMERICAN LETTER WRITER 219

First. Does not your plan involve a greatly larger expenditure of time and money than mine?

Second. Wherein is a victory more certain by your plan than mine?

Third. Wherein is a victory more valuable by your plan than mine?

Fourth. In fact, would it not be less valuable in this, that it would break no great line of the enemy's communications, while mine would?

Fifth. In case of disaster, would not a retreat be more difficult by your plan than mine?

I have just assisted the Secretary of War in framing part of a despatch to you, relating to army corps, which despatch of course will have reached you long before this will.

I wish to say a few words to you privately on this subject. I ordered the army corps organization, not only on the unanimous opinion of the twelve generals whom you had selected and assigned as generals of division, but also on the unanimous opinion of every military man I could get an opinion from (and every modern military book), yourself only excepted. Of course I did not on my own judgment pretend to understand the subject. I now think it indispensable for you to know how your struggle against it is received in quarters which we cannot entirely disregard.

Այդ կը նկատուի իբրև պարզ ջանք մը յափրացնելու մէկ երկու սիրուածներ և հալածելու եւ նուաստացնելու անոնց ենթադրուած մրցակիցները: Ուէ բառ չեմ լած Սըմնըրէն, Հայնցէլմընէն, կամ Քայսէն: Այս բանակներու հրամատարները ձեզի հետ ամենաբարձր պաշտօնեաներն են անշուշտ, բայց շարունակ կը լսեմ որ անոնց հետ ոչ մէկ խորհրդակցութիւն կամ հաղորդակցութիւն կ'ունենաք, — թէ ոչ մէկու հետ չէք խորհրդակցիր և հաղորդակցիր բացի Չորավար Ֆից Ճան Փօրթրէ, և թերևս Չորավար Ֆրէնքլինէ: Չեմ ըսեր թէ այս տրտունջները ճիշտ են կամ իրաւ, բայց ամէն պարագայի մէջ պատշաճ է որ գիտնաք անոնց գոյութիւնը: Բանակի հրամատարները ուէ բանի մէջ ձեր հրամաններու անհնազանդ կը գտնուի՞ն:

... Բաւականին զօրաւոր էք — բաւականին զօրաւոր էք՝ նոյնիսկ իմ օգնութեամբը — ձեր ոտքը դնելու Սըմնըրի, Հայնցէլմընի, և Քայսի վիզերուն վրայ մէկ անգամէն: Այս գործնական և խիստ լուրջ հարց մըն է ձեզի համար:

It is looked upon as merely an effort to pamper one or two pets and to persecute and degrade their supposed rivals. I have had no word from Sumner, Heintzelman, or Keyes. The commanders of these corps are of course the three highest officers with you, but I am constantly told that you have no consultation or communication with them,—that you consult and communicate with nobody but General Fitz John Porter, and perhaps General Franklin. I do not say these complaints are true or just, but at all events it is proper you should know of their existence. Do the commanders of corps disobey your orders in anything?

. . . Are you strong enough—are you strong enough, even with my help—to set your foot upon the necks of Sumner, Heintzelman, and Keyes, all at once? This is a practical and a very serious question for you.

ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՃՕՐՃ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՊԷՆՃԸՄԻՆ ՖՐԷՆՔԼԻՆԻ,
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆ Ի ՖՐԱՆՍԱ

Ֆիլատէլֆիա, Դեկտ. 28, 1778.

Տիար,

Մարքի տը Լաֆայէթ, երկու պատերազմներու մէջ մեծ պատիւով ծառայած ըլլալով՝ իբրև աւագ հրամատար Միաց. Նահանգներու բանակին մէջ, որոչա՞ծ է՝ Եւրոպական պատերազմի մը հեռանկարով վերադառնալ իր բնիկ երկիրը: Հաճոյքով է որ կ'ողջագուրեմ պատեհութիւնը ձեզի ներկայացնելու պարտն մը՝ որուն համբաւը չկրնար իր արժանիքները ձեզի անձանօթ թողուցած ըլլալ:

Վեհոգի շարժառիթները որ զինք առաջին անգամ մղեցին Ատլանտեանը անցնելու, քաջութեան մեծ տուրքը որ ան վճարեց Պրէնտիուայնի մէջ, ձըրզիի իր յաջողութիւնը՝ իր վերքերէն ապաքինելէ առաջ՝ կռուի մը մէջ ուր ան միլիցիայի հրամատարն էր բրիտանական ռմբածիգներու դէմ, իր փառաւոր նահանջը՝ որով ան խոյս տուաւ վերջին պատերազմի մէջ ամբողջ բրիտանական բանակի մէկ միացեալ ռազմափորձէն, իր ծառայութիւնները Բօտ Այլէնտի դէմ եղած ձեռնարկի մէջ, այնպիսի ապացոյցներ են իր նախանձախնդրութեան, զինուորական կորովի և տաղանդի որ զինք սիրելի դարձուցած են Ամերիկայի, եւ մեծապէս կը յանձնարարեն զինք իր վեհապետին:

INTRODUCTION.

**George Washington to Benjamin Franklin,
American Minister in France.**

Philadelphia, 28 December, 1778.

Sir:

The Marquis de Lafayette, having served with distinction as major-general in the army of the United States for two campaigns, has been determined, by the prospects of a European war, to return to his native country. It is with pleasure that I embrace the opportunity of introducing to your acquaintance a gentleman, whose merits cannot have left him unknown to you by reputation. The generous motives which first induced him to cross the Atlantic; the tribute which he paid to gallantry at Brandywine; his success in Jersey before he had recovered from his wounds, in an affair where he commanded militia against British grenadiers; the brilliant retreat, by which he eluded a combined manœuvre of the whole British force in the last campaign; his services in the enterprise against Rhode Island; are such proofs of his zeal, military ardor, and talents, as have endeared him to America, and must greatly recommend him to his Prince.

Այսքան բազմաթիւ տիտղոսներով գալով ձեր գնահատումին տիրանալու՝ աւելորդ պիտի ըլլար ուրիշ ուէ նպատակի համար, եթէ ոչ թոյլ տալու իմ անձնական զգացումներուս, աւելցնել թէ ես խիստ մասնաւոր բարեկամութիւն մը ունիմ իրեն համար, եւ թէ ինչ ծառայութիւններ որ ունիք ձեր տրամադրութեան տակ իրեն մատուցանելու՝ երախտագիտական պարտք մը պիտի թողուն մէկու մը վրայ որ պատիւ ունի ըլլալու, Տէր, ամենամեծ գնահատումով, յարգանքով և մեծարանքով

Չեր ևն.

ԼՕՐՏ ՊԱՅՐԸՆ (1) ՄՐ. ՄՈՒՐՐԷԻՆ

Վենետիկ, Յունիս 8, 1817.

...

Այս նամակը ձեզի պիտի յանձնուի երկու հայ վանականներու կողմէ, Անգլիայէն անցած ատեններին՝ Մատրաս երթալու համար: Անոնք պիտի տան նաև քանի մը օրինակ քերականութիւն, որ կարծեմ համաձայնեցաք առնելու: Եթէ կրնաք ուէ կերպով օգտակար ըլլալ իրենց, ըլլայ ձեր նաւային կամ Իսթ Ինտեան ծանօթներու միջոցով, կը յուսամ զիս այնքան պարտաւոր կ'ընէք որքան անոնք և անոնց միաբանութիւնը մեծապէս ուշա-

(1) Պայրընի այս նամակը ոչ միայն կը ծառայէ իբրև օրինակ մը յանձնարարական նամակի, այլ նաև հետաքրքիր է մեզ համար, քանի որ Վենետիկի Միսթարաններու հետ իր ունեցած յարաբերութիւնը ցոյց կուտայ: Թերևս աւելորդ չըլլայ հոս յիշել որ Պայրըն Հայերէն սորվեցաւ Վենետիկ:

ARMENO-AMERICAN LETTER WRITER 225

Coming with so many titles to claim your esteem, it were needless for any other purpose, than to indulge my own feelings, to add, that I have a very particular friendship for him; and that whatever services you have it in your power to render him will confer an obligation on one who has the honor to be, with the greatest esteem, regard, and respect, sir, etc.,

Lord Byron to Mr. Murray

Venice, June 8, 1817.

To Mr. Murray:

The present letter will be delivered to you by two Armenian friars, on their way, by England, to Madras. They will also convey some copies of the grammar, which I think you agreed to take. If you can be of any use to them, either among your naval or East Indian acquaintances, I hope you will so far oblige me, as they and their order have been remarkably attentive and friendly towards me since my arrival at Venice.

դիր եղած են ինծի՝ Վենետիկ հասնելէս իվեր :
 Իրենց անուներն են . Հայր Սուքիաս Սուամալեան
 և Հայր Սարգիս Թէոթորոսեան : Կը խօսին Իտա-
 լերէն եւ հաւանօրէն Ֆրանսերէն կամ քիչ մը
 Անգլիերէն : Կրկնելով իմ յանձնարարական խն-
 դիրքս , հաւատացէք ինծի իբրև

Ձերը ճշմարտօրէն ,

ՊԱՅՐԸՆ :

Յ . Գ . Թերևս կրնաք օգնել իրենց ուղևորու-
 թեան , կամ տալ և ձեռք բերել նամակներ Հնդ-
 կաստանի համար :

ՃէՅՄՍ Ր . ԼՈՈՒԷԼ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԷ ՀԱՌԻԷԼՁԸ

Իմ սիրելի Հօթհօրն ,

Ձեր վրայ մասօնական ոչ մէկ պահանջ ունիմ
 բացի ծխախոտի ընկերակցութենէ , և երիտասար-
 դը՝ որ այս կը բերէ՝ չծխեր : Բայց կ'ուզէ ձեզի
 նայիլ , բան մը՝ որ ձեզի վնաս չտար , բայց իրեն՝
 չաս բարիք :

Իր անուները Հաուէլզ է եւ ինքը շատ աղուոր
 երիտասարդ մը . գրած է բազմաթիւ ոտանաւոր-
 ներ «Էթլէնթիք»ի մէջ , որ անշուշտ երբեք կար-
 դացած չէք , որովհետև դուք ինքնիդ ատանկ բան
 չէք ըներ , եւ բաւականին տարիքոտ էք աւելի
 աղէկը գիտնալու . . . Եթէ իմ դատողութիւնս ունէ
 բանի համար աղէկ է՝ այս երիտասարդը իր մէջ
 աւելին ունի յանգի տեսակէտէն քան մեր աւելի
 դեռատի բարեկամներէն ունէ մէկը :

Իհարկէ ան չկրնար յուսալ մրցակից ըլլալ
 Consule Plancoի մարդոց : Ուստի թոյլ տուէք
 իրեն ձեզի նայելու և անցուցէք իհաւիւ

Ձերին միշտ ,

Ճ . Ր . ԼՈՈՒԷԼ

Their names are Father Sukias Somalian, and Father Sarkis Theodorosian. They speak Italian, and probably French, or a little English. Repeating earnestly my recommendatory request, believe me,

Very truly yours, Byron.

Perhaps you can help them to their passage, or give or get them letters for India.

**James Russell Lowell to Nathaniel Hawthorne,
Introducing W. D. Howells.**

My dear Hawthorne:

I have no masonic claim upon you except community of tobacco, and the young man who brings this does not smoke.

But he wants to look at you, which will do you no harm and him a great deal of good.

His name is Howells, and he is a fine young fellow, and has written several poems in the "Atlantic," which of course you never read, because you don't do such things yourself,—and are old enough to know better If my judgment is good for anything, this youth has more in him than any of our younger fellows in the way of rhyme.

Of course he can't hope to rival the "Consule Planco" men. Therefore let him look at you and charge it

To yours always, J. R. Lowell.

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷ ՇՐՋԱՆԱԻԱՐՏ ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ

Սիրելի . . . ,

Ձեր շրջանաւարտութեան ցանկալի լուրը մեծ հաճոյքով ստացայ և թոյլ տուէք որ իմ խնդակցութիւնս յայտնեմ ձեզ իմ տկար բառերով: Ձեր այս յաջողութիւնը սովորական ուսանողի յաջողութիւնը չէ, այլ նաեւ պսակը ձեր չարքաշութեան, մտքի եւ մարմնոյ տոկունութեան, եւ անյողդողդ յարատեւութեան: Ձերը զինւորի մը յաղթանակն է՝ որ քիչեր կրնան տանիլ:

Վստահ ըլլալով որ ձեր շրջանաւարտութիւնը ապահով քայլ մըն է դէպի ձեր փայփայած իտէալները, կը մաղթեմ որ ապագան աւելի բարձր յաջողութիւններով պսակէ ձեզ՝ իցնծութիւն ձեր գերդաստանին և ազգին:

Ձերդ անկեղծօրէն ,

Պն

Ե՛՛յլ Համալսարանէն գիտութեանց պսակաւորի տիտղոսը՝ որ հանդիսաւորապէս աւանդուեցաւ ձեզի, իբրև արդիւնք ձեր տարիներու ուսումնական աշխատութեանց, մեծապէս ուրախացող զիս. ուստի սրտազեղ ցնծութեամբ կը մասնակցիմ ձեր երջանկութեան եւ կը մաղթեմ որ տարիները նոր յաջողութիւններու պսակները պատրաստեն ձեզ Համար:

Իսրտէ շնորհաւորելով ձեզ՝ կը մնամ,

Ձեր հիացողը ,

LETTERS OF CONGRATULATION.

To a Friend Graduating from a College.

Dear _____:

I received the news of your graduation with a great deal of pleasure. Let me in my weak words try to express my joy and congratulations. This success of yours is not that of an ordinary student, it is the crowning result of your strenuous efforts, mental and bodily endurance, and resolute perseverance.

Trusting that your graduation is a sure step toward your cherished ideals, I pray that the future may have higher successes in store for you both for the happiness of your family and for the good of our nation.

Yours very truly,

Dear _____:

The degree of S. B. which has been solemnly bestowed upon you by the University of Yale, as a result of your studious labors of years, gives me great pleasure. Heartily sharing your happiness with you, I now wish for you that the coming years may crown your efforts with new successes.

Congratulating you with all my heart, I remain,

Your admirer,

ՄԱՆՈՒՍԵՆՈՒԹԵԱՆ ԵՄԱՆՈՒԹԵԱՆ

Սիրելի ,

Մենք ես օրերը կեանքի ուղևորութեան մղոնաչափերը կրնան նկատուիլ. եւ քանի որ այսօր տարեդարձի նոր սահմանանիշի մը կը հասնիք, թոյլ տուէք ինձի շնորհաւորել ձեզ՝ ձեր մինչեւ այսօր ապահով ճամբորդութեան համար, և մաղթել ձեզ՝ ամբողջ սրտովս՝ բազմաթիւ նման առիթներ, ընդունելու բարեկամներու բարեմաղթութիւնները: Կը մաղթեմ նաև որ ձեր ապագայ տարիները սահին երջանկութեամբ, առանց վշտի և մտահոգութեան:

Ձերդ ամենաանկեղծօրէն,

ԱՄՈՒՍԵՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Սիրելի ,

Ձեր երջանիկ ամուսնութեան բարի լուրը հասած է ինձի և անկեղծօրէն կը մաղթեմ ձեզ շէն և երջանիկ տուն մը ձեր այս նոր կեանքին մէջ: Երկար ատենէ իվեր ծանօթ էի ձեր հաստատ սիրոյն և նուիրումին դէպի մէկը՝ որ այնքան վստահած էր ձեր պահպանութեան. և ես վստահ եմ որ ձեր ջանքերը չպիտի թերանան ապահովելու ամէն հաւաստիք իրական բարեբաստութեան մը՝ որ այս միութիւնը կրնայ բերել ձեզ: Մաղթելով որ ձեր այս երկրային երջանկութեանը միանան երկնային օրհնութիւնները, կը մնամ,

Ձեր անկեղծ բարեկամը,

Birthday Anniversary.

Dear _____:

Birthdays may be called the milestones in life's journey. As you reach another of those anniversary landmarks today, permit me to congratulate you on having traveled thus far in safety, and to wish you, with all my heart, many similar opportunities of receiving the good wishes of your friends. That your future years may glide happily by, without care or sorrow, is the heartfelt prayer of

Yours most sincerely,

On the Marriage of a Friend.

Dear _____:

The tidings of your happy marriage has just reached me, and I sincerely wish you joy and prosperity in this new life of yours. I have long known the constant attachment and devotion which you have for the one so completely entrusted to your keeping, and I am confident in the belief that you will spare no effort to ensure every advancement of the material comforts this union may bring upon you. That your enjoyment of these earthly felicities may be combined with Heaven's choicest blessings is the prayer of

Your true friend,

Բարեկամի մը Ամուսնութիւնը

Սիրելի ,

Ձեր ամուսնութեան հրաւէրը ամսոյս 20ին հասած է ինձի. քանի որ այդ օրը անխուսափելիօրէն քաղաքէ դուրս պիտի ըլլամ, ուստի եւ, իմե՛ծ ցաւ ինձի, անկարող՝ ներկայ ըլլալու արարողութեան, ձեզի կը ղրկեմ իմ շնորհաւորութիւններս նամակով :

Իսկապէս դուք նախանձեւի էք : Բաղդը ձեզի համար գեղեցիկ ժպիտներ ունի : Առևտուրի մէջ յաջող, ընկերային շրջանակներու մէջ սիրուած և յարգուած, հիմա ալ իլրումն ձեր կրջանկութեան ձեզի կ'առնէք՝ իբրեւ կեանքի ընկերուհի՝ ամենասիրելի, գեղեցիկ, և մտացի օրիորդ մը : Ամէն տարակոյսէ վեր է որ փայլուն ապագայ մը եւ խիստ հաճելի առտնին կեանք մը պատրաստ է ձեզի համար, ինչ որ իմ ջերմագին բաղձանքն է և բարեմաղթութիւնը :

Ձեր բարեկամը ,

Marriage of a Friend.

Dear _____:

The invitation to your wedding on the 20th has just reached me, and as I shall be unavoidably absent from the city on that day, and therefore, to my great regret, unable to witness the ceremony, I send you my congratulations by letter.

You are surely to be envied! Fortune has had sweet smiles for you. Successful in business, respected and very much liked in social circles, you now crown your happiness by taking, as a life-mate, one of the loveliest, brightest, and most intellectual of women! That you have a brilliant future and a delightful home life before you seems beyond doubt. Such, at all events, is my ardent wish.

Yours very truly,



ՑԱԻԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Ցաւակցական կամ միտիթարական նամակի մը մէջ նամակագիրը կարեկցութիւն կը յայտնէ ուրիշի մը վշտին կամ տառապանքին համար :

Այդպիսի նամակ մը բնականաբար շատ դժուար է : Բարեկամական կամ մտերմական ամենաջերմ սէրն անգամ յաճախ անզօր կը գտնուի մեր կոչումին պատասխանելով օգնելու մեզ՝ մեր զգացածը արտայայտելու համար : Բայց անկեղծ սրտէ բղխած ամենապարզ բառերը և զգացումները աւելի ընդունելի և ամոքիչ են տառապողին :

Պէտք չէ երբեք ձախորդութեան պատճառներու կամ մանրամասնութեանց մէջ մտնել : ցաւակցութեան պարզ զգացումները արտայայտելով բաւականանալու է :

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Միրեւի ,

Սրտի անհուն կսկիծով իմացայ ձեր եղբոր մահը իր ծաղիկ հասակին մէջ : Թերևս ձեր վշտի խորութիւնը չպիտի կրնայի ըմբռնել եթէ չճանչնայի ձեր եղբայրը և իր խոստմնալից անձնաւորութիւնը : Եւ որովհետեւ կը հասկնամ ձեր վիշտը , չեմ փորձեր մխիթարել ձեզ բառերով : Բառերու ամենէն պերճախօսը անզօր է այս պարագային : Միայն թոյլ տուէք որ ես ալ բաժին ունենամ ձեր կսկիծէն եւ արտասուլթոր աչերովս մթերեմ Յակոբիկին քաղցր յիշատակները իմ սրտիս մէջ : Հանգի՛ստ իր ոսկորներուն :

Վշտակից բարեկամդ ,

ՉԱՒԿԻՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ՝ ՀՕՐԸ

Յարգելի տիար ,

Ձեր թանկագին զաւկին մահուան գուժը զիս բոլորովին յանկարծակիի բերաւ : Հազիւ կրնամ հաւատալ թէ այդպիսի սիրասուն , ուշիմ , եւ վառվռուն պատանեակ մը կրնար մահուան ճիրաններուն զոհ երթալ : Եթէ զիս այսքան վիշտով կը համակէ , հապա որքա՞ն խոր ըլլալու է ձեր թախիծը որ հօր մը թախիծն է : Եթէ չեմ կրնար ձեզի մօտ ըլլալ մարմնով , վստահ եղէք որ մտքով և սրտով ձեզի հետ եմ : Բառ չունիմ ձեզ մխիթարելու , և թէպէտ մասնակից ձեր տառապան-

Letter of Condolence.

Dear _____:

I learned with great sorrow of the death of your dear brother in his very youth. Perhaps I should not be able to understand the greatness of your loss if I had not known your brother and his promising personality. As I understand your grief I shall not attempt to console you by words, the most eloquent of which would be powerless in this sad case. Permit me only to share your sorrow with you and to keep in my heart his dear memory.

Yours with sympathy and affection,

To a Father upon the Death of His Son.

Dear Sir:

I was shocked by the sad news of the death of your beloved son. It is hard to believe that such a lovable, intellectual, and energetic youth could fall a prey to death. If it gives me such sorrow, what must be your affliction, which is that of a father! I cannot be near you in body, but you may be assured that I am with you in heart and spirit. I have no words to comfort you, and, although I share your sorrow, I can-

քին՝ անոր ծանրութիւնը չեմ կրնար թեթեցնել : Բայց, սիրելի բարեկամ, թոյլ տուէք ինծի յիշեցնել ձեզ որ ամէն զոհողութիւն եւ ամէն ջանք իգործ դրիք ձեր սիրելին ազատելու, եւ եթէ ամէն բան անհնար եղաւ, ուրեմն մեզի կը մնայ համակերպիլ անխուսափելիին առջեւ :

Ձերդ վշտակից ,

ԶԱՐԼՁ ՏԻՔԸՆՁ ՄԱՐՔ ԼԷՄՕՆԻՆ՝ ԶԱԽԱԿԻ ՄԸ
ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ, 1835-ԻՆ

Սիրելիդ իմ Մարք ,

Արդարեւ մեծ կսկիծով համակուած ենք ձեր աղէտին առթիւ : Պէտք չունիմ քեզի ըսելու, սիրելիս, թէ ինչպէս միշտ մեր մտածմունքի մէջն էք, և թէ ես չեմ մոռցած և չեմ կրնար մոռնալ ան՝ որ ինծի հետ հսկեց եւ զիս մխիթարեց այն գիշերը երբ տանս մէջ պատիկ տեղ մը թափուր թողուեցաւ : Մենք գիտենք որ դուք երկուքդ ալ սփոփանք գտած էք այն երանաւէտ ամոքումէն որմէ այդ նուիրական պատկերը՝ մանուկը իր ծունկին վրայ՝ անանջատ է մեր կեանքի ամէն աստիճաններու մէջ . «Որովհետեւ այդպիսիներուն համար է երկինքի արքայութիւնը» : Խիստ դժուար է, Աստուած գիտէ այդ, ուէ տարիքով զաւակ մը կորսնցնել, բայց մխիթարութեան շատ մը աղբիւրներ կան մէկու մը համար որ՝ ձեզի պէս՝ ծաղիկ հասակով զաւակ մը կը կորսնցնէ :

not mitigate your grief. But, dear friend, allow me to remind you that you made every sacrifice and did everything possible to save your dear child, and since all efforts proved unavailing we must comply with the inevitable.

Yours very truly,

**Charles Dickens to Mark Lemon, on the Death of
a Child, in 1835.**

My dear Mark:

We are indeed greatly grieved at your calamity. I have no need to tell you, dear fellow, how constantly you are in our thoughts, and that I have not forgotten, and never can forget, who it was that watched with me and comforted me the night a little place in my house was left empty. We know you will both have found comfort in the blessed relief from which the sacred figure with the child on His knee is in all the stages of our lives inseparable. "For of such is the kingdom of Heaven." It is hard, God knows, to lose a child of any age, but there are many sources of comfort in losing one so young as

Գեղեցիկ խորհուրդ մը կայ «Ֆիլտինկի Օրագիր Այս Աշխարհէն Միւսը»ի մէջ, ուր իր կորսնցուցած փոքրիկը կը գտնէ ժպտուն և պայծառ, որ իրեն համար Եղիսեան Դաշտերուն մէջ սարփինա մը կը շինէր, որուն տակ անոնք միասին պիտի ապրէին երբոր ան ժամանէր:

Միշտ, վաղեմի բարեկամ, և միշտ քուկդ,
ՉԱՐԼՍ ՏԻՔԸՆՁ

Լիմֆնի Նամակը Մօր մը որ Իր Ամբողջ Զուակները
Կորսնցուցած էր Քաղ. Պատերազմին մէջ

Նոյ. 21, 1864.

Սիրելի Տիկին,

Պատերազմական պաշտօնատան թուղթերուն մէջ ինծի ցոյց տուին Մէսէչուսէցի սպայակոյտի պետին յայտարարութիւնը թէ դուք մայրն էք հինգ զաւակներու՝ որոնք փառքով մեռած են պատերազմի դաշտին վրայ: Կ'զգամ թէ որքան տկար և անպտուղ պիտի ըլլային իմ կողմէ ուէ բառեր՝ եթէ փորձէի անոնցմով մոռցնել տալ ձեզ ձեր այնքան ծանր կորստին վիշտը: Բայց չեմ կրնար հրաժարիլ ձեզի մատուցանելէ այն մխիթարութիւնը որ կրնայ գտնուիլ երախտեացը մէջ այն հանրապետութեան՝ որու փրկութեան համար անոնք մեռան: Կ'աղօթեմ որ մեր երկնաւոր Հայրը ամօքէ ձեր զրկանքի տառապանքը, եւ թողու ձեզի ձեր կորսնցուցած սիրելիներու միմիայն քաղցր յիշատակը և այն հոյակապ հպարտութիւնը որ ձերն ըլլալու է—դրած ըլլալով այնքան թանկագին զոհողութիւն մը ազատութեան խորանին վրայ:

Ձերդ ամենաանկեղծօրէն և յարգանքով,
ԱՔՐԱԶԱՄ ԼԻՆՔԸՆ

yours. There is a beautiful thought in "Fielding's Journal from This World to the Next," where the little one he had lost was found by him radiant and smiling, building him a bower in the Elysian Fields, where they were to live together when he came.

Ever, old friend, yours ever,

Charles Dickens.

**Lincoln's Letter to a Mother Who Had Lost All
Her Children in the Civil War.**

November 21, 1864.

Mrs. Bixley,

Boston, Mass.

Dear Madam:

I have been shown in the files of the War Department a statement of the Adjutant-General of Massachusetts that you are the mother of five sons who have died gloriously on the field of battle. I feel how weak and fruitless must be any words of mine which should attempt to beguile you from the grief of a loss so overwhelming. But I cannot refrain from tendering to you the consolation that may be found in the thanks of the Republic they died to save. I pray that our heavenly Father may assuage the anguish of your bereavement, and leave you only the cherished memory of the loved and lost, and the solemn pride that must be yours to have laid so costly a sacrifice upon the altar of freedom.

Yours very sincerely and respectfully,

Abraham Lincoln.

ՖՈՂՈՔԻ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ

Օսմանեան սահմանադրութեան վերահաստատումը ուրախութեամբ ողջունելէ ետք, Կիլիկիոյ ահաւոր կոտորածներէն յանկարծակիի եկած եւ այդ առթիւ Օսմ. կառավարութեան ցոյց տուած անտարբերութենէն ցնցուած, մենք, Պօսթընի և շրջակայքի հայերս, երկար ակնկալութիւններէ ետք՝ ուշացած արդարութենէն դառնօրէն յուսախաբ, կազմելով մեծ ժողով մը, (1909), Օգոստ. 15ին, խստիւ կը բողոքենք հայերու վերագրուած և հալածանքի նոր միջոց մը դարձած անջատողականի ամբաստանութիւններու դէմ և կը դատապարտենք անարդարութիւնը Ատանայի զինուորատեանին՝ որ չկրցաւ պատժել ոճիրին բուն հեղինակները: Մենք մեր դայրոյթը կը յայտնենք նաև քաւութեան նոխազ դարձած վեց հայերուն հետ կոյր գործիք եղող ինը թիւրքերու կախուելուն համար: Իբրեւ քաղաքացիներ Օսմանեան Պետութեան՝ կը պահանջենք վերջ տալ Կիլիկիոյ հայերու հալածանքներուն եւ խստիւ պատժել բուն եղեռնագործները, որոնց ցարդ անպատիժ մնալը հեղեռութիւն մըն է սահմանադրութեան և արդարութեան:

A RESOLUTION OF PROTEST

Having hailed the restoration of the Ottoman Constitution, we, the Armenians of Boston and vicinity, shocked by recent massacres in Cilicia and by the indifference shown by the Ottoman Government and, after long expectations, bitterly disappointed by the belated "justice", assembled in mass meeting, August 15, 1909, protest emphatically against the accusations of separatism attributed to the Armenians as a new means of persecution and condemn the injustice of the martial court of Adana, which failed to punish the real authors of the crime. We also express our indignation at the execution of the six Armenians who were made the scapegoats and of the nine Turks who were but blind tools. As citizens of the Ottoman Empire we demand that an end be put to the persecution of the Armenians of Cilicia and that severe punishment be visited on the real criminals, whose escape from punishment is an irony of constitutional law and justice.



ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Սիրային նամակներ ըսելով չենք հասկնար այնպիսի գրութիւններ՝ որոնք միայն մարդու ստորին հակումներէն կը թելադրուին և կը պարունակեն ցոփ զգացումներ կամ կը քողարկեն անպարկեշտ միտումներ: Սիրոյ նամակները, ինչպէս մենք կը հասկնանք, իրարու համակրող եւ փոխադարձօրէն իրարու իտէյակական դարձած երկու անձնաւորութիւններու միջեւ հաղորդակցութեան միջոցներ են, և եթէ երկուստեք կատարեալ անկեղծութիւն կը տիրէ՝ այդ միջոցը այնքան անմեղ, արդարացի, և պարկեշտ է որքան ամուսնութիւնը բնական է և անհատին անբռնաբարելի իրաւունքը: Ուստի սիրոյ նամակներու ոմանց վրայ ազդած սոսկումը անիմաստ է և անոնց դէմ նախապաշարեալ անձերու տարած խաչակրանքը անհարկի:

Երբ մարդ անկեղծ է իր սիրոյն մէջ՝ զայն արտայայտելու բառեր դիւրութեամբ կրնայ գտնել, միայն թէ զգուշանալու է բուռն և անբնական յորդութիւններէ, այնպէս որ գրողը պէտք չէ ամչնայ երբ իր նամակը ուրիշներու ձեռք անցնի:

Պըրնզի և Պայրընի սիրային նամակներէն նմոյշներ կուտանք, բայց երկուքին ալ նամակները օրինակելի չենք գտներ:

ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԿԸ ՓԱՓԱԲԻ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿԵԼ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՀԵՏ

Յարգելի Օրիորդ ,

Կը ներէ՞ք այս համարձակութիւնը անծանօթ անձնաւորութեան մը՝ որ խորին յարգանքով կը փափաքի ծանօթութիւն մշակել ձեզի հետ : Ձեր հօրեղբօր հետ իմ ունեցած երկար մտերմութիւնս և սենեկակցութիւնս , և այդ առիթով ձեր հօր հետ իմ փոխանակած քանի մը նօթերը ինծի այն փաղաքշող կարծիքը կուտան թէ իմ անունս բուրովին նոր չէ ձեզի համար :

Յարգելի օրիորդ , առանց գիտնալու պանդուխտի մը կեանքը՝ օտար երկրի մը մէջ , չէք կրնար շմտածել իբրև տարօրինակ երևոյթ մը այս իմ փորձի նկատմամբ : Ես կանուխէն որբ մնացած եմ և չեմ գիտեր մօր մը գգուանքը և քրոջ մը գուրգուրանքը : Կ'երևակայեմ թէ որչափ երջանիկ պիտի ըլլայի եթէ թղթատարութիւնը ինծի ալ պարբերաբար նամակներ բերէր մօր մը կամ քրոջ մը կողմէն , ու ես փոխադարձաբար գրի առնէի և ղրկէի իմ լաւագոյն խորհուրդներս եւ զգացումներս : Կ'ղգամ , բայց չեմ կրնար արտայայտուիլ : Սրտիս մէջ կ'ղգամ այն պարապը որ մայր մը կամ քոյր մը կրնայ լեցնել : Ձեր ազնիւ նկարագրի և բարձր մտայնութեան մասին յաճախ լսած եմ ձեր հօրեղբօր կողմէն և ձեր լուսանկարը իր սենեակին մէջ ինծի կը ներշնչէ միևնոյն գաղափարը : Ուստի ձեր բարեկամութիւնը շա-

LOVE LETTERS.

A. Young Man Desiring to Cultivate Friendship with a Young Lady.

Dear Miss ———:

Will you kindly allow this liberty from an unknown person who, with a deep sense of respect, desires to cultivate acquaintance with you? My long intimacy with your uncle as a chum and the few notes that I have had the pleasure of exchanging with your father give me the flattering idea that my name is not altogether new to you.

My dear lady, not knowing the life of our people in this far-away land, you cannot help thinking this attempt upon my part a strange affair. I was left an orphan early in life and do not know a mother's care or a sister's love. I can imagine how happy I would be if the mail brought me regularly letters from mother or sister, and I, in reply, could put down on paper the best of my thoughts and the most tender sentiments that move me. I have the longing, but I have no way of expressing myself. I am conscious of the empty place in my heart which a mother or sister could fill.

I have often heard your uncle speak of your good character and bright intellect, and your photograph in his room gives me the same idea of you. Therefore the desire of gaining your ac-

հեղու փափաքը անդիմադրելիորէն աճած է իմ մէջ. և ահա տեղի տալով այդ փափաքին կը գրեմ ձեզի: Կը խոստովանիմ որ այս առաջին նամակն է կը գրեմ օրիորդի մը և կզգամ որ կեանքի ամենագեղեցիկ մենաշնորհներէն մէկն է այն: Այն պարապը որ սրտիս մէջ կը տիրէ պիտի լեցուի այսպիսի բարեկամութեան մը մշակումով:

Թերևս այս իմ համարձակութիւնս իմ կարծածէս շատ աւելի մեծ յանդգնութիւն մըն է, և կ'յուսամ դուք պիտի ներէք ինծի վստահ ըլլալով լաւագոյն դիտաւորութեանս մասին:

Ընդունեցէք, ազնիւ օրիորդ, իմ խորին յարգանքի հաւաստիքը:

Ձերդ անկեղծօրէն,

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Կարին, Նոյ. 5, 19...

Յարգելի Պարոն,

Ձեր Հոկ. 6 թուակիր նամակը ինծի հասած է գրեթէ շաբաթ մը առաջ: Հօրեղբօրս նամակներուն մէջ ձեր անունին արդէն հանդիպած էի: Այն իրողութիւնը՝ որ հօրեղբայրս ձեր մէջ այնքան գնահատուած բարեկամութիւն մը գտած է՝ ապացոյց մըն է ինծի համար ձեր ազնիւ և շիտակ նկարագրին: Ձեր նամակը ինծի պատիւ մը կը սեպեմ, և որուն համար ձեզի իմ անկեղծ շնորհակալիքս կը յայտնեմ: Եթէ իմ թղթակցութիւնս կրնայ արժէք մը ունենալ և կամ ձեզի օգտակար ըլլալ՝ չեմ ուզեր այդպիսի թեթև ծառայութիւն

quaintance has grown more and more irresistible within me until now, yielding to that desire, I write to you. I confess that this is the first letter that I have ever written to a young lady, and I feel that it is one of the best privileges of life. The vacant space in my life will be filled by cultivating such a friendship as this.

Perhaps this liberty is more bold than I realize, but I hope you will pardon it, being assured of my best intentions.

Please, dear lady, accept assurances of the highest respect of

Yours very sincerely,

The Answer.

Karin, Nov. 5, 19—.

Dear Sir:

Your letter of October 6 reached me about a week ago. I had seen your name mentioned in my uncle's letters. The fact that my uncle has found in you a highly appreciated friend is a proof to me of your kind nature and upright character. I consider your letter an honor and I sincerely thank you for the same. If correspondence with me has any value or may be useful to you in even a slight degree I do not wish

մը մերժեւ: Միայն թէ իբրեւ անփորձ աղջիկ մը ծնողացս կարծիքը հարցուցի, որոնք առարկելի չգտան այսպիսի թղթակցութիւն մը, մանաւանդ քանի որ հօրեղբայրս ձեզ այնքան լաւ կերպով յանձնարարած էր իրենց: Դժբաղդարար ես ոչ լաւ գրող եմ և ոչ ալ լաւ դիտող: Ինծի կը թուի թէ մեր քաղաքին մէջ հետաքրքրական ոչինչ կայ գրելու, թերևս կայ և ես չեմ տեսներ: Դիտելու ընդունակութիւն չունիմ թերևս, եթէ նոյն իսկ ունեցած ըլլայի չէի կրնար ղարգացնել՝ հայ աղջիկներու սահմանուած նեղ միջավայրի հետեանքով: Դուք անշուշտ այդ տարօրինակ աշխարհի մէջ շատ բաներ կը տեսնէք, կը լսէք, և կը կարդաք. և հետեապէս դուք շատ աւելի բաներ պիտի ունենաք ինծի գրելու:

Այս նամակը կը ղրկեմ հօրեղբօրս գրած նամակիս մէջ ներփակ: Մեր ընտանեկան լուրերը գրած եմ իրեն, անշուշտ ան ձեզի կը պատմէ, եթէ կը հետաքրքրուիք այդպիսի աննշան պարագաներով:

Յաջողութիւն մաղթելով ձեզ՝ կը մնամ,
Խորին յարգանքով,

ՔԱՆԻ ՄԸ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԵՏՔ ՍԻՐՈՅ
ԶԳԱՑՈՒՄ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Սիրելի Օր. — ,

Թոյլ կուտամ ինծի այս անգամ հնազանդելու իմ սրտի զօրաւոր ձայնին և գրել քեզի այն բառերով որ հոգիիս խորերէն կուգան և որոնք այլևս չեմ կրնար զսպել: Սիրելիս, այս առաւօտ կանուխ

to refuse such a small service. Only, as an inexperienced girl, I have asked the opinion of my parents, who do not think a correspondence of this nature objectionable, especially since my uncle had recommended you so highly.

Unfortunately I am neither a good writer nor an observer; it seems to me that there is nothing interesting in our town to write about. There may be something, but I fail to see it. Perhaps I have no aptitude for observation. Even if I have, I have no opportunity to develop it, on account of the very limited environment destined for Armenian girls. You may have many things in that wonderful country to see, to hear and to read about, and, therefore, many interesting things of which to write.

I send this letter enclosed in the letter I send to my uncle. I have written him some home news, which you may learn from him if you are interested in such trifles.

Wishing you success, I am, dear sir,
Yours respectfully,

**After Exchanging a Few Letters, the Young Man
Writes of Love.**

Dear Miss ———:

Will you permit me this time to obey the dictates of my heart and to write you in words which spring from the depths of my being, words which I can no longer restrain? My dear, I woke up

արթնցայ անգամ մը ևս կարդալու նամակդ առաւօտեան քաղցր լոյսով: Երկինքը հիմա պայծառ է և ոսկեղէն արեւը — անսովոր այստեղի Ապրիլ ամսի մէջ — ծագելով երջանկութիւն ու ժպիտ կը սփռէ: Բայց քու նամակդ աւելի թափանցող լոյս ունի հոգիիս համար: Արդեօք կը մեղադրե՞ս զիս թղթակցութեանս ոճը այսպէս յանկարծ փոխուած տեսնելով, եւ կամ արդեօ՞ք կանուխ կը գտնես զայն: Երբ սէրը կը խօսի՝ սովորական հաշիւները կը լռեն: Սիրտս այնքան ղեղուն է որ չեմ կրնար այս բացառիկ բոպէի մէջ իմ զգացումներուս ելք մը տալ. մինակ պիտի ըսեմ որ իմ երջանկութիւնս քու ձեռքդ է. իսկ իմ լաւագոյն տենչանքս է քու երջանկութեան նուիրուիլ:

Սուլիչները, շոգիի այդ ձայները արդէն ղիս գործի կը կոչեն, ուստի պէտք է վերջացնեմ գիրս: Բայց, սիրելիս, վստահ եղիր որ սիրոյ ամենամաքուր զգացումներս երբեք չպիտի վերջանան:

Սպասելով քու ցանկալի նամակներուն՝

Քուկդ անկեղծօրէն,

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ազնիւ Պն. — ,

Ձեր նամակը ղիս այնպէս յանկարծակիի բերաւ որ անկարելի կ'զգամ ուէ բան գրել: Ձեր անկեղծութեան մասին կասկած չունիմ և ամբողջ սրտով կը բաղձամ ձեր երջանկութիւնը. բայց ես վստահ չեմ թէ իսկապէս կրնամ ձեզ երջանիկ

early this morning to read your letter once more in the sweet morning's light. The sky is now clear and brilliant, and the glowing sun—unusual in the rainy month of April—rises and spreads cheer and happiness. But your letter has a more penetrating ray for my heart. Do you blame me for this sudden change in the style of my letters? Or do you think it is too soon? When love speaks other rules vanish. My heart is so full that I can give no vent to my feelings in these few minutes. I want to tell you only that my future is in your hands and that my chief desire is to devote myself to your happiness.

The whistles are blowing. The sound of steam calls me to work. I must end my letter; but, my dear, believe me, my love for you will never end.

Waiting for your answer, I am,
Yours devotedly,

The Answer.

Dear Mr. _____:

The change of tone in your last letter was so sudden that I feel it impossible for me to write anything. I have no doubt of your sincerity, and I wish you happiness with all my heart, but I am not sure that I can make you happy. The

ընել: Խնդիրը շատ լուրջ է և վտանգաւոր. մենք իրար չենք ճանչնար, թերեւս դուք չկարենաք գտնել իմ մէջ այն յատկութիւնները՝ որ ձեր իտէալը կը կազմեն:

Ներեցէք ինձի այս բնական անկարողութեան համար՝ որ կ'արգիլէ զիս աւելի գրելէ: Կը յուսամ ես ուէ պատճառով առիթ չեմ տուած ձեր բարոյական տառապանքին:

Լաւագոյն բաղձանքներով,

Ձերդ անկեղծօրէն,

ՕՐԻՈՐԴԸ ԿԸ ՀՐԱԻԻՐԷ ԱՄԵՐԻԿԱ ԱՅՑԵԼԵԼ

Սիրելի Օրիորդ,

Երբ զգացումները զօրաւոր են բառերը շատ տկար են, ուստի չեմ կրնար իմ երջանկութիւնս և տառապանքս բացատրել ձեր վերջին նամակի առթիւ:

Ես վստահ եմ որ իմ բոլոր իտէալ յատկութիւնները պիտի գտնեմ ձեր մէջ. այդ մասին պատրաստ եմ ամէն «վտանգ» յանձն առնել: Բայց կ'ընդունիմ որ սիրոյ առաջարկ մը ընելու չափ ծանօթ չէի ձեզի: Ուստի յանուն մեր անկեղծ բարեկամութեան և ազնիւ թոյլտուութեամբ ձեր հօրեղբօր՝ ձեզի կը զրկեմ իբրև նուէր քառասուն ոսկիի փոխ-գիր մը, որպէսզի պտոյտի համար Ամերիկա գաք եւ՝ ձեր հօրեղբօր մօտ պաշտպանութիւն գտնելով՝ ուսումնասիրէք այս միջավայրը և մօտէն ճանչնաք մէկը որ ձեր պաշ-

question is a serious one. We do not know each other. You may not find your ideal in me.

Pardon me for this natural inability to write any further. I hope I have not occasioned you suffering in any way.

With best wishes,

Yours sincerely,

The Young Man Invites the Young Woman to Visit America.

Dear Miss _____:

When sentiments are strong words are too weak to express them. I cannot describe the happiness and suffering that I felt after reading your last letter.

I am confident that I shall find in you all the qualities which I admire. In that respect I am ready to take any "risk." But I admit that I was not sufficiently known to you to make a love proposal. Therefore, in the name of our sincere friendship and by the kind permission of your uncle, I send you as a present a check for forty pounds, to be used by you for the expenses of a visit to America. Here, under the protection of your uncle, you may study your new environment and the character of the one who is your devoted admirer. I hope you will

տողն է: Կը յուսամ այս խնդիրքս չէք մերժեր: Ձեր ազատութիւնը ոչ մէկ նկատումով պիտի սահմանափակուի այստեղ: Եթէ իմ մէջ չգտնէք ձեր բաղձացած մարդը, այն ատեն իմ միակ տենչանքս պիտի ըլլայ ձեր երջանկութիւնը և պզտիկ տեղ մը ձեր բարեկամութեան մէջ: Ձեր հօրեղբայրն ալ պիտի գրէ ձեզի և ձեր այստեղ գալու մասին կարգադրութիւններ պիտի ընէ:

Ձերդ ճշմարտօրէն,

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԽԱՂԸՆԿԵՐԻՆ

Ազնիւ Օր. — ,

Այս նամակը թերևս ձեզի տարօրինակ և անհարկի թուի. բայց իբրև իմ մանկութեան խաղի ընկերուհին, վստահ ըլլալով ձեր ներողամտութեան վրայ, կը համարձակիմ ազատ կերպով արտայայտուիլ այն նուիրական զգացումներու մասին՝ որ միշտ տածած եմ ձեզի համար: Հակառակ այսքան տարիներու անջատումին՝ մոռցած չեմ ոչ մէկ պարագայ, ոչ մէկ բառ այն կեանքէն որ մենք ունեցանք իրարու հետ: Նեղ օրերու մէջ ձեր յիշատակը իմ կեանքի քաղցրութիւնը եղած է, ծանր աշխատութիւններու ատեն ձեր մանկական անմեղ ժպիտներու վերյիշումը թեթեւութիւն բերած է ինծի: Իսկ յաջողութեան ժամանակ տառապած եմ ձեզ տեսնելու տենչանքով:

not refuse this request of mine. Your freedom will under no circumstances be impaired. In case you cannot find your ideal in me, my only wish will be your happiness and a small place in your friendship. Your uncle also will write to you and make arrangements to welcome you.

Yours truly,

Letter to an Early Playmate.

Dear Miss _____:

This letter may seem to you strange and uncalled for. But I feel confident that I shall obtain indulgence in expressing freely the sacred feelings which I have always cherished for you, the playmate of my happy childhood. In spite of so many years' separation, I have not forgotten the play or conversations which took place in those days. During my hard struggles your memory has been the sweetness of my life; when doing heavy labor, the remembrance of your innocent smile has brought me relief; and during my success I have suffered with longing to see you.

Երկար աշխատելէ ետք ինծի համար անկախ առևտուրի խանութ մը բացած եմ՝ բաւական լաւ դրամագլուխով, և գործը հիմակուընէ ցոյց կուտայ յաջողութեան ամէն նշան: Բայց երջանկութիւնս կատարեայ չպիտի ըլլայ մինչև որ ձեր ներկայութիւնը նորէն չբերէ ինծի իմ մանկական օրերու մէջ իսկ պաշտելի դարձած էակը: Ազնիւ օրիորդ, հակառակ ձեր ներողամտութեան մասին իմ վնասհուստեան՝ չեմ կրնար բոլորովին ազատ արտայայտուիլ. իմ իտէալս դուք եղած էք, եւ եթէ հաւանիք ձեր ճակատագիրը միացնել իմինիս, իմ փառասիրութիւնս պիտի ըլլայ ձեր երջանկութիւնը ապահովել: Ձեր ընկերակցութիւնը ինծի ետ պիտի բերէ իմ մանկութիւնս իր բոլոր երջանկութիւններով: Ես կը սիրեմ յուսալ որ հին օրերու հմայքը բոլորովին անհետացած չէ ձեր մէջ, և պիտի պատուէք զիս ձեր մէկ գիրով:

Պորին յարգանքով,

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԽԱՂԻ ԸՆԿԵՐԻՆ

Սիրելիդ իմ էմմա,

Այս անունով կը կոչեմ ձեզ, որովհետև ուրիշ կերպ չեմ կրնար խորհիլ ձեր մասին — թէև հիմա մեծ օրիորդ մը — եթէ ոչ իբրև այն «Պզտիկ Ե.»-ը որուն հետ անցուցի մանկութեանս բազմաթիւ երջանիկ օրերը: Կրնա՞ք մէկ անգամէն վճռել մտիկ ընել ահաւոր խոստովանութիւն մը: Պարզ խօսքով, ձեզ ամբողջ սրտովս կը սիրեմ հիմա՝ ինչպէս սիրած եմ միշտ, և, եթէ կրնամ ուղիղ

After much hardship I have succeeded in establishing an independent business for myself, with sufficient capital. It has already begun to give signs of success. But my happiness will be very far from complete if your presence does not bring to me the one whom I adored even in my childhood. Dear Miss ———, in spite of my trust in your indulgence, I cannot express myself as freely as I wish. You have always been my ideal of a companion, and now if you decide to join your destiny with mine it will be my ambition to secure your happiness. Your companionship will bring back to me the sunny days of my childhood. I flatter myself with the belief that the charm of the old days has not vanished from your memory and that you will honor me with a reply.

With best regards,

Yours truly,

To an Early Companion and Playmate.

My dear Emmy:

I use that name because, though you are now a woman, I can only think of you as the "little Emmy" of the many happy days of childhood that we have spent together. Can you make up your mind to listen to a very awful confession? In plain words, I love you as heartily now as ever, and, if I may judge from our last night's meet-

դատել մեր երէկուան հանդիպումէն՝ այնքան երկար բաժանումէ մը ետք, բոլորովին կորսնցուծած չէք յիշատակը ձեր նախկին խաղի ընկերոջ: Բայց կատակը մէկդի. ժամանակը շատ բան ըրած է մեր երկուքիս համար ալ. ձեզի համար ըրած է ինչ որ մարդ մը կրնայ փափաքել որ ըլլար իր սիրոյն եւ վստահութեան առարկային. իսկ ինծի կարելիութիւն տուած է պատրաստելու ընտանեկան յարկ մը անոր համար՝ որ միշտ իմ ամենասիրելին եղած է եւ որուն պատկերը երբեք չէ աւրուած իմ յիշողութենէս, հակառակ դժուարին կեանքի մը զանազան շարքաշութիւններուն:

Եւ հիմա, սիրելի էմմա, լաւ խորհեցէք և տեսէք թէ կրնա՞ք փոխանցել, իբրեւ օրիորդ, այն համակրանքը՝ որ, ձեր մանկութեան ատեն, իմ ամենամեծ բերկրանքս էր: Պիտի հանդիպինք — օրը — ին տունը, և այն ատեն թերեւ սիրտս հրճուի այն հաւատքէն թէ «բան մը կայ առաջին սէրերուն մէջ»:

Անհամբեր սպասելով մեր հանդիպումին՝ հաւատացէք ինծի, իբրեւ ձեր գորովալիք նախկին խաղընկերը և նոր սիրահարը,

Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ԱՄՈՒՍԵՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼ

Սիրելիդ իմ —

Այն բերկրալի օրը՝ որուն համար տենչացած եմ իբրեւ երջանիկ վարձատրութիւնը մեր փոխադարձ հաւատարմութեան համար՝ շատ հեռու չէ,

ing after so long a separation, you have not quite lost the remembrance of your old playfellow. But, joking apart, Time has done much for both of us—for you, in making you all that can be desired by man as the object of his love and trust; for me, in enabling me to provide a home for her who has ever been dearest to me, and whose image has never faded from my memory amidst the varied exertions of a hard career.

And now, my dear Emmy, think well whether you can give me that affection as a woman which, in your girlhood, was my chiefest delight. We shall meet on——at——’s, and then, perhaps, my heart may be gladdened by a belief that “there is something in first loves.”

Eagerly awaiting our meeting, believe me,
Your affectionate old playmate and new lover,

**From a Gentleman, Proposing a Day for the
Nuptials.**

My dear ———:

The happy day to which I have looked forward as the blissful reward of our mutual constancy is not far distant, if the proposal I am now about

եթէ իմ ընելիք առաջարկս քու և ծնողքիդ հաւանութիւնը գտնէ. այն է թէ մեր ամուսնութեան արարողութիւնը տեղի ունենայ ամսոյս—օրը — Եկեղեցիին մէջ: Կը յուսամ շուտով քեզ տեսնելու հաճոյքը պիտի ունենամ, այն ատեն կնանք խնդրոյ վրայ երկարօրէն խօսիլ: Բայց եթէ ինծի գրել ուզես՝ մեր հանդիպումէն առաջ, կրնաս համառօտակի յիշել թէ որոշած օրս քեզի և ընտանիքիդ համար յարմար է:

Յուսալով որ կարճ ատենէն առանձնաշնորհումը պիտի ունենամ ստորագրելու քու սիրալիբ ամուսինդ, կը մնամ՝

Ամենաանկեղծ և նուիրուած նշանածդ,

ԵՐԿԱՐ ԱՏԵՆՈՒԱՅ ԾԱՆՕԹԻ ՄԸ

Սիրելի Օրիորդ—,

Այնչափ երկար ատեն վայելած եմ ձեր յարգելի ծնողաց տունը հիւրասիրուած ըլլալու երջանկութիւնը, որ աւելի խորունկ վստահութիւնով կը գրեմ իմ ապագայ բարօրութեանս համար խիստ կարևորութիւն ունեցող խնդրոյ մը վրայ:

Շարունակհ անդիպելով ձեզի, և դիտելով ձեր առօրեայ կեանքը զարդարող ազնուութեան եւ քնքշութեան հազարումէկ գործերը, աստիճանաբար իմ ապագայ երջանկութեան յոյսերու վրայ աւելցուցած եմ ձեզ անոնց մասնակից ընելու յոյսը: Հաւատացէք ինծի, սիրելի օրիորդ, ասիկա մանկական սիրահարութեան մէկ յանկարծական

to make should meet the approbation of yourself and parents. It is this: that our nuptial ceremony may be performed on the — of the present month, and in the parish church of —. I hope to have the pleasure of seeing you soon; we can then give the subject a lengthened discussion; if, however, you should wish to write before we meet, please mention whether the day I have fixed will suit the convenience of yourself and family.

Hoping that I may claim shortly the privilege of signing myself your affectionate husband, I am,

Your sincerest friend,

To an Acquaintance of Long Standing.

My dear Miss ———:

I have so long enjoyed the happiness of being received as a welcome guest at your respected parents' house, that I write with the more confidence on a subject of most serious importance to my welfare.

From constantly meeting with you and observing the thousand acts of amiability and kindness which adorn your daily life, I have gradually associated my hopes of future happiness with the chance of possessing you as their sharer. Believe me, dear Miss ———, this is no outbreak of boyish passion, but the hearty and healthy result

պոռթկումը չէ, այլ սրտազեղ և լուրջ արդիւնքը՝ ձեր տրամադրութեան մասին երկար ու գորովալից ուսումնասիրութեան մը: Ասիկա սէր է որ հիմնուած է յարգանքի վրայ. և ես վստահ եմ որ ձեր ծանօթութիւնը իմ նկարագրի մասին պիտի օգնէ ձեզ իմ շարժառիթներուս ուղիղ աղբիւրը գտնելու:

Կրնամ, ուրեմն, խնդրել ձեռնէ որ դիմէք ձեր սրտին, և, եթէ ես սխալած չեմ այն հաւատքի մէջ թէ իմ զգացումներս չափով մը փոխադարձուած են, արտօնութիւն տաք ինծի խնդիրը պարզելու ձեր ծնողաց առջև:

Ձերդ ամենաանկեղծօրէն,

ՅԱԶՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ ՍՏԱՆԱԼՈՒՆ ԱՌԹԻԻ

Իմ ամենասիրելի — —,

Բառերով չեմ կրնար բացատրել այն անակնկալ հաճոյքը որ ունեցայ երբ ձեր երկտողը իմ սեղանիս վրայ գտայ երէկ իրիկուն: Օրուան աշխատանքը վերջացած էր. բայց որքա՛ն բերկրալի էր գտնել նամակ մը — և այնպիսի նամակ մը — անկէ՛ որ այլևս կրնամ ողջունել իբրև ընկերուհին իմ ապագայ կեանքիս: Մտքիս վրայէն ծանր բեռ մը վերցուած է պարզ եւ աղնիւ խոստովանութեամբը մէկու մը՝ որուն սէրը չափազանց մեծ երջանկութիւն մը կը թուէր ինծի յուսալու համար. զգացած անդորրութիւնս չեմ կրնար նկարագրել: Վաղը պիտի փութամ ներկայութեանը

of a long and affectionate study of your disposition. It is love, founded on esteem; and I feel persuaded that your knowledge of my own character will lead you to trace my motives to their right source.

May I, then, implore you to consult your own heart, and, should I not have been mistaken in the happy belief that my feelings are in some measure reciprocated, to grant me permission to mention the matter to your parents.

Yours faithfully,

On Receiving a Favorable Answer.

Dearest Miss ————:

Words cannot express my delight on finding your note on my table last night. The toils of the day were over, and how delightful it was to find a letter—and such a letter!—from one whom I may now hope to hail as the companion of my whole future life! The weight taken off my mind by the candid and gentle confession of one whose love seemed too great a happiness to hope for, is beyond description. To-morrow I shall

անոր՝ որմէն, կը յուսամ, ասկէ վերջ երբեք չպիտի բաժնուիմ. բայց հիմա չեմ կրնար հանգչիլ առանց տկար փորձ մը ընելու արտայայտելու իմ բերկրութիւնս՝ իմանալով որ այդքան փաղաքշող յոյսերս իզուր չեն եղած:

Խանդաղատագին սիրով
 Երջանիկ սիրողդ,

ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՀՕՐԸ

Յարգելի Տիար,

Կը համարձակիմ յուսալու որ դուք ձեր ամբողջ ազնիւ զգացումները ձեզի օգնութեան պիտի կոչէք՝ նկատի առնելու համար առաջարկ մը որ պիտի պարզեմ ձեզի և որուն մէջ կը կայանայ իմ երջանկութիւնս:

Երկար ատենէ իվեր ձեր դուստրը, Օր. —, գրաւած էր իմ համակրանքս, և ես պատճառ ունիմ հաւատալու թէ անտարբեր չեմ հանդէպ իրեն: Իմ դիրքս կը հաւաստէ զիս որ կրնամ պահել զինք հանգստաւէտ եղանակով մը՝ որուն այնքան արժանի է ան և որ շարունակ ձեր նպատակը եղած է ապահովել ձեր զաւակներուն համար: Գալով իմ նկարագրիս և դիրքիս, կը յուսամ անոնք պէտք եղածին չափ ծանօթ են ձեզի՝ ձեզ վստահացնելու համար ձեր զաւակին երջանկութեան հեռանկարին նկատմամբ:

Այսու հանդերձ յանդգնութիւնը ունեցած չեմ որոշապէս իրեն յայտարարելու իմ զգացումներս առանց նախ ձեր խորհուրդը առնելու այս խնդրին

hasten to the presence of her from whom I hope I may never henceforth be parted; but I could not retire to rest without making one feeble attempt to express my delight at finding that hopes so flattering have not been in vain.

Believe me, dearest,

Your devoted and happy lover,

To the Father of a Lady.

Respected Sir:

I venture to hope that you will call all your friendly feelings to my assistance in considering a proposal I am about to lay before you, in which my happiness is much concerned.

For a long time past your daughter — has held a strong hold over my affections, and I have reason to believe that I am not indifferent to her. My position is such as to warrant my belief that I could support her in the style of comfort which she so well deserves, and which it has been your constant aim to provide for your children. As regards my character and disposition, I trust they are sufficiently well known to you to give you confidence in the prospect of your child's happiness.

I have not, however, ventured on any express declaration of my feelings without first consulting you on the subject; as I feel persuaded that

վրայ. որովհետև ես համոզուած եմ թէ պարզ և շիտակ ընթացքը միշտ լաւագոյն ճամբան է, եւ թէ ծնողքի մը հաւանութիւնը երբեք չպիտի թերանայ, երբ խնդրի մը հանգամանքները արդարացնեն անոր շնորհումը:

Անհամբեր սպասելով ձեր նկատառութեան արդիւնքին՝ այս կարևոր նիւթի նկատմամբ, կը մնամ, Տէր, Ձերդ խորին յարգանքով,

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սիրելի Պն. —,

Շատ շնորհակալ եմ այն առնական եւ պատուական եղանակի համար որով ինձի դիմում ըրած էիք իմ աղջկանս ձեռքը ուզելու: Երկար ատենէ իվեր նշմարած էի որ ձեր ուշադրութիւնները իրեն վերաբերմամբ աչքառու հանգամանք մը կ'ստանային եւ անոնք իրեն հաճելի ըլլալ կը թուէին: Պատճառ մը չեմ տեսներ ձեր փափաքին ընդդիմանալու, և՛ եթէ կրնամ դատել այն վարմունքէն որով ան ընդունեց ինձմէ այս լուրը՝ պիտի գտնէք իր մէջ ոչ անյօժար ունկնդրող մը:

Վաղը իրիկուն ժամը —ին ընթրիքը մեզի հետ առէք, եթէ ուրիշ ժամադրութիւն մը չունիք, որով պատեհութիւն պիտի ունենաք ձեր դատը անձամբ պաշտպանելու: Միևնոյն ատեն ընդունեցէք իմ հաստատ համոզումի հաւաստիքը ձեր բարձր բարոյականի եւ ազնիւ զգացումներու նկատմամբ:

Ձերդ անկեղծօրէն,

the straightforward course is always the best, and that a parent's sanction will never be wanting when the circumstances of the case justify its being accorded.

Anxiously awaiting the result of your consideration on this important subject, I remain, Sir,

Yours very respectfully,

The Answer.

My dear _____:

I thank you very much for the manly and honorable way in which you have addressed me in reference to my daughter's hand. I have long since perceived that your attentions to her were of a marked character, and that they appeared to give her much pleasure. I know of no reason for opposing your wishes, and if I may judge from the manner in which my daughter received the communication from myself, you will find a by no means unwilling listener.

Dine with us to-morrow at —, if you are not engaged, and you will then have an opportunity of pleading your own cause. Meanwhile, believe me, with full confidence in your integrity and good feeling,

Yours most sincerely,

**Աննպատոս Պատասխան մը Կանխաւ Նօտեցուած
Ըլլալու Պատճառով**

Սիրելի Պարոն ,

Միշտ ցաւալի եղած է աննպատտ պատասխան մը տալ . բայց եւ այնպէս , դժբաղդաբար , այդ եղած է իմ բաժինս այս ներկայ պարագային :

Իմ դուստրս երկար ատենէ ի վեր նշանուած է պարոնի մը՝ որուն նկարագիրը և դիրքը ոչ մէկ պատճառ կուտան ցաւելու եղած կապին համար : Միևնոյն ատեն ան պէտք եղածին պէս կը գնահատէ ձեր նախընտրութիւնով իրեն եղած պատիւը և կը միացնէ իր անկեղծ բաղձանքները իմ բարեմաղթութիւններուս , որպէսզի , իբրև յարգելի բարեկամ , կարենաք հանդիպել ձեզ ամէն կերպով երջանիկ ընելու սահմանուած ընկերուհիի մը :

Բարեկամական անկեղծ ղգացումներով՝

Ձերդ ,

ՆՇԱՆԱՄԻՆ

Սիրելիդ իմ ——— :

Եթէ կայ բան մը՝ որ կրնայ մխիթարել զիս իմ անխուսափելի բացակայութեանս համար քու ընկերակցութենէդ՝ այն ալ կարող ըլլալն է քանի մը տող գրելու և արտայայտելու , թէև տկարօրէն , իմ տևական և անդադրում սէրս քեզի համար : Արդարև , առևտրական հաշիւներու տափակ զբազումը և գործի անվերջ խառնակութիւնը ցաւալի և ձանձրացուցիչ փոփոխութիւն մըն են՝ դաշտե-

Unfavorable on Account of a Pre-engagement.

Dear Sir:

It is always painful to return an unfavorable answer, but such is unfortunately my task on the present occasion.

My daughter has for a long time been engaged to a gentleman whose character and position give her no cause to regret the tie. At the same time she duly appreciates the compliment implied by your preference and unites with me in the sincere wish that, as an esteemed friend, you may meet with a companion in every way calculated to ensure your happiness.

Believe me, dear Sir,

Your sincere friend,

To a Young Lady to Whom One Is Engaged.

My dearest —:

If there is one thing which can console me for my unavoidable absence from your side, it is the pleasure of being able to pen a few lines to express, however feebly, my continued and increasing affection for you. It is, indeed, a painful and irksome change from our rambles about the

րու մէջ մեր թափառումներէն, երեկոյեան երգեցողութիւններէն, և գողտուկ խօսակցութիւններէն ետքը: Բայց բարեբաղդաբար գործերս արագօրէն ճշտուելու ճամբու վրայ են, և շուտով, կը յուսամ, անգամ մը եւս պիտի տաքնամ իմ Ֆէնիխ քաղցր դէմքի արևալոյսէն, և սնուցանեմ իմ երևակայութիւնս խորհուրդներովը այն երջանկութեան թէ ան իր պայծառ եւ անկեղծ տրամադրութիւնը ասկէ վերջ պիտի սփռէ ընտանեկան նոր յարկի մը մէջ: Հազիւ թէ պէտք ունենամ ըսելու՝ թէ որքա՛ն տենչանքով կ'սպասեմ թղթաբերին, և թէ որքա՛ն կ'ըմբռնիմ ամէն մէկ տողը որ իմ սիրուհիս սիրոյ յայտնութիւնը կը կրէ, և թէ ի՛նչ երախտեօք ամէն ղգացում որ կը զեղու իր գրչէն կամբարուի իմ յիշողութեանս մէջ:

Երկինքի օրհնութիւնը քեզի, սիրելի Ֆէնի, եւ իմ գորովալից ու յարգալից բարեւներս ծնողացդ:

Պանդակաթ նշանածդ,

ԳԱՆԳԱՏ ՆԱՄԱԿ ԶՍՏԱՆԱԼՈՒ ԱՌԹԻԻ

Սիրելի — ,

Թէև առժամաբար զրկուած եմ քու ընկերակցութեանդ հաճոյքէն, միևնոյն ատեն չեմ կրնար հրաժարիլ յուսալէ որ այս զրկումի մէջ քիչ մը երջանկութիւն տաս ինձի՝ քու կողմէդ թղթակցութիւնը աւելի յաճախակի ընելով: Ամբողջ չորս օրեր անցած են և քենէ ուէ նամակ չեմ ստացած .

fields, our evening duets, and our stolen conversations, to a dull routine of mercantile accounts and the never-ending confusion of business. Happily, however, my affairs are in a rapid state of settlement, and I shall soon hope once more to bask in the sunshine of my Fanny's sweet countenance, and to feed my imagination with thoughts of the happiness her placid and sincere disposition will hereafter shed around a home! I need hardly say how eagerly I watch for the post, and how I cherish every line that bears the evidence of my dear girl's affection, and how gratefully every sentiment that flows from her pen is treasured in my memory.

God bless you, dearest —, and may you believe me, with most respectful and affectionate remembrances to your parents and all friends,

Your ever affectionate and devoted,

Complaining of Not Receiving a Letter.

Dear —:

Although temporarily estranged from the delights of your society, I cannot refrain from hoping that you will enable me to realize some slender happiness from a more frequent correspondence on your part. Four days have passed without my receiving a letter from you, and I

մտահոգութեան մէջ եմ որ մի գուցէ պատճառը հիւանդութիւն եղած ըլլայ: Խնդրեմ, շուտ գրէ, եթէ ոչ հակամէտ կ'զգամ կռուելու քեզի հետ, իբրև մի ծոյլ աղջկան հետ, եւ կամ բացարձակապէս նախանձոտ պիտի դառնամ երևակայելով որ աւելի համակրուած սիրահար մը իմ պաշտելի սիրուհիս սէրը ինձմէն կը հեռացնէ:

Բայց ես վախ չունիմ: Խիստ լաւ գիտեմ որ քու սրտի ներածին բարութիւնը թոյլ չտար խաղալու ունէ մէկու զգացումներուն հետ: Ուստի, յուսալով որ այս թեթեւ կշտամբանքը լաւ իմաստով կ'առնես և եղածը կը դարմանես խիստ երկար նամակով մը՝ գրուած այնքան արագ որքան մատներդ կը ներեն, կը մնամ, սիրելի —,

Քուկդ միշտ,

ՆՇԱՆԱԾԻՆ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Իմ ամենասիրելի կատարինէ,

Որքան տխուր է հեռու ըլլալ քեռէ տարուոյն այս ամենաքաղցր օրը—այն օրը՝ որ կատարինէիս արև տուաւ և իմ կեանքիս ամենամեծ երջանկութեան հիմը դրաւ:

Բառեր անզօր են բացատրելու այն խորունկ երախտագիտութիւնը որ կ'զգամ հանդէպ այն մեծ Զօրութեան որ՝ քեզի կեանք շնորհաւորելէ ետք՝ տարուէ տարի հասունցուցած է հոգիիդ շնորհները ինչպէս նաև զարգացուցած է մարմնոյ արտաքին կատարելութիւնները: Քանի կը տեսնեմ քեզ, իմ

am in painful anxiety lest illness should be the cause. Pray write quickly, or I shall really feel inclined to quarrel with you as an idle girl; nay, I shall absolutely grow jealous, and fancy that some more favored suitor is undermining the affections of my dear girl.

But I have no fears. I know too well that your innate goodness of heart would prevent you from trifling with the feelings of any one; so, hoping you will take this little scolding in good part, and relieve the offence by a very long letter as speedily as your fingers can write it, believe me, dear —,

Your affectionate,

To a Lady on Her Birthday.

Dearest Katharine:

How sad it is that I am hindered from being with you on this dearest of all days of the year—the day that gave my Katharine to the light, and that laid the foundation of the greatest happiness of my life.

Words cannot express the deep gratitude I feel to that Power, which, in granting you life, has at the same time, year after year, ripened the graces of the soul as well as developed the outward perfections of the body. As I see you, the

մանկութեան ցաւերու և հաճոյքներու ընկերուհին, իբրև այն կինն էակը՝ որ պիտի մասնակցի իմ ամբողջ ապագայ կեանքիս երջանկութիւններուն եւ վիշտերուն, գրեթէ զարմանք կ'զգամ թէ ինչպէս այդպիսի երանութեան մը արժանացած եմ, եւ սիրտս երախտագիտութիւնով կը լեցուի դէպի ազնիւ ծնդքներդ՝ որ հաւանած և քաջալերած են մեր սէրը :

Ընդունէ, սիրելիս, ներփակ պատկերը : Վստահ եմ որ բնատիպը չափափազանց խոր դրոշմուած է սրտիդ մէջ՝ պահանջելու համար ունէ պատկերագիր որ զինք յիշեցնէ քեզի : Սակայն ամենայամար նուէրն է որ կրնայի այս պայծառագոյն օրուան մէջ իմ երջանկութեանս պատճառին :

Տար երկինք որ ամէն յաջորդող տարին քու աճումդ տեսնէ մտքի և մարմնոյ ամէն հրապոյրներով : Հաւատա ինձի, սիրելի Կատարինէ,

Սիրալիբ նշանածդ,

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ ՎԷՃ

Սիրելի — ,

Ցաւով կը գրեմ քեզի այնպիսի ոճով մը որ կրնայ յանդիմանութեան մը երևոյթը առնել. բայց կը խոստովանիմ որ քու երէկ իրիկուան ընթացքդ զիս թէ՛ զարմացուց եւ թէ՛ անհանգիստ ըրաւ : Պն. — ի տուած ուշադրութիւնները ընդունիլդ այնքան աչքառու էր որքան զիս լքելդ : Ապահով եղիր որ անիմաստ նախանձի մը մէջ չեմ ինկած, և ոչ ալ այնքան անձնասէր եմ կամ ոչ-առնական

companion of my childish pains and pleasures, expanding into the woman who is to share both with me throughout my future lot, I feel almost surprised as to how I have deserved such happiness, and gratitude beyond expression to the kind parents who have encouraged and approved our affection.

Accept, dearest, the enclosed portrait. I feel that its original is too deeply stamped on your heart to require an effigy to remind you of him. It is, however, the most appropriate present I could offer to the cause of my happiness on this brightest of all days.

God grant that every succeeding year may see you increase in all that is charming in body and mind! Believe me, dearest Katharine,
 Ever yours sincerely,

A Lover's Quarrel.

My dear ———:

It is with pain I write to you in aught that can seem like a strain of reproach, but I confess that your conduct last night both surprised and vexed me. Your marked approbation of the attentions paid to you by ——— was as obvious as your neglect of myself. Believe me, I am in no way given to idle jealousy; still less am I selfish or

գրկել ուզելու համար աղջիկ մը, որուն հաստատապէս տուած եմ իմ սէրս, ոեւէ հաճոյքէ որ կարելի է ստանալ լաւ ընկերութեան մը մէջ: Բայց մտքի խազաղութիւնս ընդ միշտ պիտի կորսուի եթէ հաւատամ թէ քու սէրէդ հիւլէ մ'իսկ կորսնցուցած եմ:

Խնդրեմ, գրէ և ապահովցուր զիս որ տակաւին կը պահես քու անբաժան սէրդ ինծի համար: Քեզ սիրող բայց վշտացած

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Սիրելի Օրիորդ,

Ձեզի հանդիպելէս իվեր միտքս շարունակ գրաւուած է ձեր ընկերակցութեամբ անցած հաճելի րոպէներու յիշողութիւնով: Վերջերս իմ գործս շատ առաջ կ'երթայ եւ բարգաւաճումի տեսակէտէն շատ պատճառներ ունիմ գոհ ըլլալու: Բայց կ'ղգամ որ կեանքի մէջ աւելի բարձր պարտականութիւններ կան քան որ մարդ կրնայ կատարել իր մենակեաց վիճակի մէջ, և ես կը տենչամ իմ ապագայ կեանքիս ընկերը գտնելու: Այդպիսի ընկեր մը, սիրելի Օրիորդ —, կը համարձակիմ հաւատալ որ գտած եմ ձեր մէջ. և իմ ամենամեծ յոյսս է որ դուք կը յօժարիք գնահատել գորովալից յարգանքը մէկու մը՝ որ, թէեւ ներկայիս խոնարհ դիրքի մը մէջ, ամէն ջանք պիտի թափէ բարձրացնելու այդ դիրքը՝ ձեր սիրոյն համար:

unmanly enough to wish to deprive a girl on whom I have so firmly fixed my affections of any pleasure to be obtained in good society. But my peace of mind would be lost forever did I believe that I have lost one atom of your affection.

Pray write, and assure me that you still preserve your undivided affection for

Your devoted but grieved,

To a Young Lady from a Young Tradesman.

Dear Miss ————:

Since I met with you, my mind has been constantly filled with the remembrance of the pleasant moments passed in your society. My business has been improving of late, and in point of prosperity I have much cause to be thankful. But I feel that there are higher duties in life than can be fulfilled by man in his single state, and I am anxious to find a companion for my future life. Such a companion, dear Miss ————, I venture to believe I have found in you, and my earnest hope is, that you may be willing to accept the affectionate regard of one who, however humble in his present position, has every desire to elevate that position for your sake.

Առանց փորձ մը ընելու նուրբ լեզու մը գործածելու, կամ զգացումներու ցուցադրութիւն մը ընելու, կը յուսամ կ'ընդունիք այս տողերը իբրև փոխանցող պարզ և անկեղծ զգացումները անոր՝ որ, անհամբեր ակնկալութեամբ ձեր պատասխանին, կը մնայ, սիրելի Օր. —,

Ձեր ամենաանձնուէր հիացողը,

ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՁԵՌՔԸ ԽՆԴՐՈՂ ՆԱՄԱԿ

Սիրելի Օրիորդ,

Գրեթէ տարի մըն է այն օրէն՝ կրթ առաջին անգամ ըլլալով գեղեցիկ հաճոյքն ունեցայ ձեր տունը ընդունուելու իբրև բարեկամ մը: Ամբողջ այդ ժամանակի ընթացքին, կը խոստովանիմ համարձակօրէն, մէկ հրապոյր և ապա մէկ զօրաւոր յոյս շարունակ գիտ ձեր տունը կը քաշէր: Պէտք կայ աւելցնելու թէ այդ հրապոյրը ձեր թանկագին անձը և այդ յոյսը ձեր նպաստաւոր ակնարկը չահելու փափաքը եղած է:

Արդեօ՞ք յաջողած եմ: Արդեօ՞ք այն խորունկ և հաւատարիմ սէրը՝ որ ես կ'զգամ ձեզի համար՝ ունի՞՞ ձեր սրտին մէջ ունէ պատասխան: Ապագայի երջանկութեան իմ ամբողջ յոյսս ձեր պատասխանէն կախեալ է. որովհետև իմ սէրը ժամուան մը համար սլացող քմահաճոյքը չէ, այլ ճշմարիտ, տևական սէրը՝ որ հաստատուած է յարգանքի եւ զնահատումի վրայ և ամիսներէ իվեր եղած է իմ կեանքի երազը:

Without my attempting to use fine language, or make a parade of sentiment, I hope you will receive these lines as conveying the plain and honest sentiments of one who, in anxious expectation of your reply, remains, dear Miss _____,

Your most devoted servant,

**Letter from a Gentleman to a Lady, Offering Her
His Hand.**

My dear Miss K_____:

It is now nearly a year since I first had the great and highly appreciated pleasure of being received at your house on the footing of a friend. During all that time, I will frankly confess that one attraction, and later one strong hope has been drawing me ever to your residence, and I need scarcely add that your own dear self was the attraction, the desire of winning your favorable regard, my hope.

Have I been successful? Has the deep, faithful love that I feel for you any response in your heart? All my hope of happiness in the future hangs upon your answer, for mine is not the fleeting fancy of an hour, but the true, abiding love that is founded upon respect and esteem, and has been for months my life dream.

Ձեր կուսական արժանապատուութիւնը այնքան ապահովօրէն ծածկեր է ձեր սիրտը ինձմէն որ հազիւ թէ կը յանդգնիմ յուսալու տեղ մը անոր մէջ. բայց կ'զգամ որ այլևս աւելի երկարաձգումին չեմ կրնար տոկալ. ուստի կը գրեմ կամ շահելու և կամ կորսնցնելու ամէն բան:

Եթէ դուք ընդունիք իմ ձեռքս, կեանքիս հպարտութիւնը պիտի ըլլայ աշխատիլ ձեզ պատասպարելու ամէն վիշտէ և ձեզի տալու բոլոր այն երջանկութիւնը որ գորովալից, սիրող ամուսին մը կրնայ տալ իր առաջին և միակ սիրոյ առարկային:

Յուսալով ձենէ շուտով լսելու, կը մնամ յարգանքով և ջերմ սիրով,

Ձերդ հաւատարմօրէն,

ՅԱԶՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ

Սիրելի Պն. — ,

Ձեր ազնիւ և առնական նամակը իմ աչքերս կը բանայ և ես կը տեսնեմ որ ինչ որ սոսկ տաք բարեկամութիւն մը կը կարծէի աւելի զօրաւոր զգացում մը եղած է: Կ'զգամ որ ինծի տանջանք պիտի ըլլայ կորսնցնել ձեր այցելութիւնները եւ ներկայութիւնը, եւ թէ այն սէրը՝ որ դուք կը խոստանաք ձեր կեանքի ընկերուհիին՝ խիստ երջանիկ պիտի ընէ զիս: Կը տեսնէք որ ձեզի ազատօրէն կը պատասխանեմ, որովհետեւ արդար չեմ նկատեր խաղալ այնպիսի գորովալից սիրոյ մը հետ որ դուք ինծի կը նուիրէք:

Your own maidenly dignity has kept your heart so securely hidden from me that I scarcely venture to hope I have a place there, but I feel that I cannot endure suspense any longer, and so write to win or lose all.

If you will be my wife, it will be the pride of my life to try to shield you from all sorrow, and to give you all the happiness that a tender, loving husband can bestow upon his first and only love.

Hoping to hear from you soon, I am, with respect and devotion,

Yours faithfully,

Favorable Reply to the Foregoing.

My dear Mr. _____:

Your kind and manly letter opens my eyes to the fact that what I believed to be only a warm friendship is a stronger feeling. I see that it would be a pain to me to lose your visits and presence, and that such love as you promise your wife would make me very happy. You see that I answer you frankly, deeming it wrong to trifle with such affection as you offer to me.

Ձեր նամակը ցոյց տուած եմ ծնողացս, եւ անոնք կը փափաքին իմ միջոցաւ ձեզի իմացնել որ ուրախ պիտի ըլլան եթէ այս իրիկուն գաք զիրենք տեսնելու:

Լաւագոյն զգացումներով,

Ձերդ ճշմարտօրէն,

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԻՐ ՍԻՐԱԾ ՕՐԻՈՐԴԻՆ

Օրիորդ — ,

Երեք անգամ փորձեցի այս նամակի պարունակութեան բառացի արտայայտութիւնը տալ ձեզի, բայց ամէն անգամ ալ սիրտս թերացաւ: Չեմ գիտեր ինչպէս պիտի նկատուի այս. միայն թէ, եթէ ես կրնամ ուէ գաղափար կազմել իմ սրտի մասին այն տպաւորութենէ որ ձեր սխրալի կատարելութիւնները ըրած են անոր վրայ, իմ երջանկութիւնը այս աշխարհի վրայ մեծ մասով կախուած պիտի ըլլայ ձեր պատասխանէն: Սիրելի Օրիորդ, սէրս գահավիժական չէ, բայց ձեր ձեռքը չեմ ուզեր եթէ ձեր սիրտը չընկերանայ անոր: Անկախ պայմաններու մէջ կը գտնուիմ. նկարագիրս անաղարտ եղած է ցարդ, այդ մասին կրնաք ունենալ աներկբայելի ապացոյցներ: Իմ ազգականներէս ոմանք արդէն տեսած էք ձեր մօրաքրոջ տունը՝ Րիչմընտ փողոցին վրայ, մասնաւորապէս մայրս՝ որուն հետ կ'ապրիմ հիմա: Ձեր մօրաքոյրը ձեզի տեղեկութիւն պիտի տայ մեր ընտանիքի մասին, և եթէ դուք գոհ մնաք, ոչ միայն ես ինքզինքս

I have shown your letter to my parents, and they desire me to say that they will be pleased to have you call this evening to see them.

With kindest regards, I am,
Yours truly,

**From a Gentleman to a Lady with Whom He
Is in Love.**

My dear Miss _____:

I have three times attempted to give you a verbal relation of the contents of this letter; but my heart has as often failed. I know not in what light it may be considered, only if I can form any notion of my own heart from the impression made on it by your many amiable accomplishments, my happiness in this world will, in a great measure, depend on your answer. I am not precipitate, dear Miss _____, nor would I desire your hand if your heart did not accompany it. My circumstances are independent, and my character is unblemished, of which you shall have the most undoubted proof. You have already seen some of my relatives at your aunt's in Richmond street, particularly my mother, with whom I now live. Your aunt will inform you concerning our family, and if it is to your satisfaction, I shall not only consider my-

ամենաերջանիկ մէկը պիտի նկատեմ, այլ նաև իմ ապագայ կեանքի գլխաւոր ուսումնասիրութիւնը պիտի ընեմ երջանիկ ընել ան՝ որ աշխարհի վրայ ամենէն աւելի կը սիրեմ: Անհամբեր սպասելով ձեր պատասխանին, կը մնամ,

Ձեր ճշմարիտ հիացողը,

ՍԷՐԸ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ ՆԱՄԱԿ

Սիրելի Օր. — ,

Ձեզի ներկայացուելու օրէն իվեր միտքս լեցուած է միայն մէկ գաղափարականով, որ նոյնիսկ ձեր անձին գաղափարականն է, եւ իմ ամբողջ հոգիս այնքան առլցուած է սիրոյ զգացումով որ խորհուրդներս բոյորովին շեղած են իմ առօրեայ զբաղումներէս: Վարանում, երկիւղ, ոգևորութիւն, և հազարումէկ յուզումներ յաջորդաբար տատանած են զիս, և այս զգացումները ջնջելու կամ զսպելու ամբողջ ջանքերս իդերև ելած են: Այլևս անկարող ըլլալով տոկալու անոնց ճնշումին՝ ձեզի կը դիմեմ եւ համարձակութեանս համար ձեր ներողութիւնը կը խնդրեմ: Սիրելի Օր. — , դուք էք միայն պատճառը իմ ներկայ վշտի, եւ դուք պէտք է ըլլաք իրաւարարը իմ ճակատագրի, որովհետև ես աշխարհի ամենաերջանիկ կամ ամենադժբաղդ անձը պիտի ըլլամ՝ ըստ որում դուք փոխադարձէք կամ մերժէք իմ զգացումներս: Բայց չեմ կրնար ընդունիլ այն տխուր չարագուշակութիւնը թէ ձերինին զէս այնքան փափուկ և

self extremely happy, but shall also make it the principal study of my future life to make happy one whom I do prefer to all others in the world. I shall wait for your answer with the utmost impatience.

Your true admirer,

From a Gentleman to a Lady, Declaring His Love.

Dayton, O.,
Sept. 29, 19—.

My dear Miss ———:

Ever since the day I was introduced to you my mind has been so filled with the one idea of yourself, and my whole soul so absorbed by the passion of love, that my thoughts have been completely distracted from my daily pursuits. Doubt, fear, delight, and a thousand other emotions have successively agitated me, and all my efforts to suppress or stifle these feelings have been vain. Being no longer able to resist their impulse, I crave your pardon for the liberty I take in addressing you. My dear Miss ———, you alone are the cause of my unhappiness, and must become the arbiter of my fate, for I shall be the happiest or most miserable of beings according as you reciprocate or reject my love. But I cannot entertain the sad foreboding that a heart of so much tenderness and purity as yours will

այնքան մաքուր սիրտ մը կրնայ երբեք իմ ապագայ երջանկութեան հեռանկարներս վերջնական ոչնչութեան մատնել: Ո՛հ, որքան կը տենչամ պզտիկ նախադասութեան մը հանդարտելու համար վրդոված հոգիս, եւ ձենէ կախեալ է, սիրելիս, արտասանել այդ մոգական խօսքը: Տուէք ինծի յուսոյ թեթեւ ճառագայթ մը, և այն պիտի ազատէ զիս մշտական անպատմելի անհանգստութենէ մը: Եթէ զիս չէք սիրեր, գոնէ ըսէք թէ չե՛ս «Գեր»: Անհամբեր և ակնպիչ կ'սպասեմ ձեր պատասխանին եւ վստահ եմ որ պիտի ներէք այս բարբառնջանքիս համար. որովհետեւ այնպիսի վիճակի մէջ եմ որ հազիւ թէ կրնամ խոհական միտք մը արտայայտել: Կը մնամ, սիրելի Օր. — ,

Ձեր հաւատարիմ սիրողը,

ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Սիրելի Տիար,

Բաւական զարմացայ ձեր երէկուան նամակի ոճին համար: Թէև խորապէս կ'զգամ ձեր սիրոյ տաքութիւնը և լրջութիւնը, բայց իմ կարծիքով ձեր ծանօթութիւնը ինծի հետ այնչափ քիչ է որ աւելի սերտ առընչութիւն մը կրնայ փոփոխութիւն առաջ բերել ձեր զգացումներու մէջ: Այդ հաւանականութիւնը թող ըլլայ. դարձեալ և այնպէս ես շնորհակալ եմ ձեզի ձեր ըրած պատիւին համար և կը հաւատամ ձեր չափազանց փաղաքշող զգացումներու անկեղծութեանը. և քանի որ մեր առաջին հանդիպումին իրիկունը ձեր ուշադրու-

ever consign my prospects of future felicity to utter annihilation. Oh! how ardently do I long for one sentence to calm my troubled mind; and it is in your power, my dear, to give the magic utterance. Bestow but a slender ray of hope, and it will relieve me from a state of inexpressible anxiety; if you do not love me, say at least that you do not hate me. Anxiously and impatiently shall I look for your reply, and, trusting you will excuse this rhapsody, for I am in such a state that I can scarcely form one sane reflection, I remain, my dear Miss Rogers,
Your faithful and devoted lover,

A Favorable Reply.

Dear Sir:

I was not a little surprised at the tenor of your letter yesterday, and, while I am deeply sensible of the ardor and earnestness of your passion, I think your acquaintance with me is so slight that it is possible a closer intimacy might produce an alteration or modification of your sentiments. Be that as it may, however, I give you credit for honor and sincerity in the too flattering complement given by the declaration of your feelings; and as your attentions on the evening we first met have left a not displeasing impression on me, there will, so far as my own wishes are concerned, be no obstacles thrown

Թիւնը ոչ անհաճոյ տպաւորութիւն մը թողուցած էր իմ վրայ՝ աւելի մտերմական յարաբերութեան մը արգելք չեմ տեսներ, որչափ որ խնդիրը իմ կամքիս հետ կապ ունի: Այս կ'ըսեմ մէկ վերապահումով, այն է թէ խնամակալներս պէտք է հաւանին մեր տեսակցութեան, եւ որովհետեւ կ'ուզեմ յարմար առթիւ մը մօրս հաղորդել ձեր սիրոյ յայտարարութիւնը, քիչ ատենէն նորէն կը լսէք ինձմէ. բայց մինչև լսէք, խնդրեմ, պատասխան մի՛ տաք. որովհետև նոր թղթակցութիւն մը կրնայ վտանգել իմ վարկս ծնողացս առջև, առանց ձեր նպատակին օգնելու:

Կը մնամ, սիրելի Տիար,

Ձերդ յարգանքով,

ԿԱՐԾԵՑՈՒԱԾ ԱՆՀՈԳՈՒԹԵԱՆ ՄԸ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Իմ ամենասիրելի էտնա,

Որչա՛փ ցաւ կուտայ ինձի այն խորհուրդը թէ դուն գիս ընդունակ կարծած ըլլաս տատանուելու իմ քեզի հանդէպ ունեցած սիրոյս մէջ, և կամ դիտմամբ արհամարհոտ ըլլալու դէպի մէկը՝ որուն վրայ կեդրոնացուցած եմ երկրային երջանկութեան ամբողջ ակնկալութիւնս: Հաւատա ինձի, իմ ուշադրութիւնս դէպի Օր. Պօէնեան ուրիշ բան չէր եթէ ոչ սովորական քաղաքավարութիւն մը: Իմ երկար և մտերմական ծանօթութիւնս իր եղբօր հետ, իր լաւ նկարագրի մասին ունեցած տեղեկութիւնս, եւ կարիներանցներու տան մէջ իր ոչ

ARMENO-AMERICAN LETTER WRITER 291

in the way of a more familiar intercourse. I mention this with the reservation that my guardians approve of our meeting in society. As I propose taking an early opportunity of acquainting my mamma of your professions of attachment, you shall hear again from me shortly; but, until you do, please make no reply to this, as further correspondence might compromise me in the estimation of my parents, without attaining the object you have in view. I remain, dear sir,

Yours, with respect,

Explaining an Apparent Slight.

My dearest Edna:

I am much grieved that you should think me capable of wavering in my affection toward you or wilfully inflicting a slight upon one in whom my whole hope of earthly happiness is centered. Believe me, my attentions to Miss Bowen were never intended for anything more than common courtesy. My long and intimate acquaintance with her brother, and my knowledge of her amiable character, as well as the circumstance of her being a comparative stranger to the

ընտանի ըլլալու հանգամանքը միակ պատճառներն էին որ աւելի ուշադրութիւն տուի իրեն քան որ պիտի տայի ուրիշ պարագաներու տակ :

Կը խնդրեմ որ հաստատ մնաս այն հաւատքի մէջ թէ իմ սէրս քեզի համար այնքան անյողդողդէ որքան իմ ցաւս մեծ՝ պատճառ ըլլալով այդպիսի կասկածի մը քու մէջ : Վստահ եղիր, սիրելի էտնա , որ ես կը մնամ

Քուկդ միշտ և անկեղծօրէն ,

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՁԵՐՄ ՍԻՐՈՅ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ

Սիրելի ——— ,

Այն շնորհները՝ որ քեզ աստուածային էակ մը թուել կուտան ինձի , և այն զգացումները՝ որ անոնք ծնունդ տուին իմ սրտիս մէջ , այնպիսի բնոյթ մը ունին որ ի զուր կը ջանամ զանոնք նկարագրելու յարմար արտայայտութիւններ գըտնել : Քեզ տեսնելու երջանկութենէս ի վեր կ'ուզեմ խօսիլ քեզի , բայց բառերը կը մեռնին շըրթունքիս վրայ : Երբ դուն կը խօսիս ձայնիդ հնչումը կը թռթռայ հոգիիս խորերը , և երբ բնութեան քեզի պարգևած հրապոյրներուն վրայ կ'սքանչանամ , թագուն վիշտ մը կը ցնցէ իմ հոգիս , և ես չեմ գիտեր թէ ուր կը գտնուիմ : Երբ դու բացակայ ես , այն վայրը որ քաղցրացուցած ես՝ անապատ կը թուի , այն վայրը որ քեզմով դրախտ ըլլալ կը թուէր՝ կը փոխուի ամառուութեան մը : Բայց սէրը՝ զիս մխիթարելու

Greens, were my sole reasons for paying more attention to her than I might otherwise have done.

Pray rest confident in the belief that my affection for you is as unchanging as my regret is great that I should ever have given you cause to doubt it, and believe me, dearest Edna,

Yours, ever sincerely and devotedly,

**A Passionate Declaration from a Young Man
to a Young Lady.**

Dear _____:

The sentiments you have given birth to, in my heart, by those graces which make you seem in my eyes a divine being, are of such a nature that I seek in vain for adequate expressions to depict them. Since I have had the happiness of seeing you, the words I would speak to you die upon my lips. When you speak the sound of your voice vibrates to the depths of my soul, and so, when I admire the charms with which nature has endowed you, a secret sorrow agitates my senses, and I know not where I am. When you are absent the place you have embellished seems desolate, and that which had seemed a paradise with you is changed into a frightful desert. However, love, to console me, gives me

համար՝ յաճախ երազիս մէջ քեզ տեսնելու ուրախութիւնը և քեզ սրտիս ողջագուրելու յափըշտակութիւնը կուտայ ինծի: Սակայն այս երջանկութեանց իրականութեան է որ հոգիս կը տենջայ: Ո՛հ, ե՞րբ պիտի վայելեմ, սրտի իմ հատոր, այդպիսի իրականութիւն մը, պատասխանէ ինծի:

Քեզի անձնուէր և հիացող,

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԿԱՌԱՋԱՐԿԷ

Սիրելի — ,

Ձեզի ծանօթանալու երջանկութենէս իվեր ձեր հմայքը և ձեր կատարելութիւններուն յիշատակը անընդհատ մտքիս մէջն են. և թէպէտ կը սոսկամ առաջարկիս մերժում գտնելու ցաւագին խորհուրդով՝ այլևս չեմ կրնար ծածկել այն զգացումը որ հոգիս ու միտքս կը չարչրկէ այս վերջին քանի մը ամիսներէ իվեր: Սիրտս ամբողջովին ձերն է, անոր հետ հիմա համարձակօրէն կը մատուցանեմ ձեզի իմ ձեռքս. և եթէ ընդունելով զայն զիս մահկանացուներու ամենէն երջանիկը ընէք, իմ մեծագոյն ջանքը պիտի ըլլայ ձեր կեանքը հաճելի և երջանիկ ընել: Կը հաւատամ որ դուք ունիք ծանօթներ որոնք ձեզի կրնան տալ հարկ եղած տեղեկութիւնը իմ նկարագրիս և պարագաներուս ինչպէս նաև մեր ընտանիքի պատուաւորութեան նկատմամբ: Երեք տարիէ իվեր առևտուրի մէջ հաստատուած եմ, եւ գործս ակնկալածէս շատ աւելի յաջող է. տեւական բարգաւաճումի հեռանկար մը աչքի առջև ունենալով՝ ջերմօրէն կը տենչամ հարազատ ընկերակցի մը որ մասնակցի

often in my dreams the joy of seeing you, and the rapture of pressing you to my heart. But it is to the reality of these pleasures that my soul aspires. When, O best beloved, shall I enjoy such happiness? Answer me.

Your devoted admirer,

**From a Gentleman to a Lady, Proposing
Marriage.**

Dayton, Ohio, April 2, 19—.

Dear Miss Breen:

Ever since I have had the happiness of becoming acquainted with you, the thought of your charms and accomplishments has been continually present in my mind, and though I dread the possibility of my suit being rejected, I can no longer conceal the passion which has preyed on my spirits these few months past. My heart is wholly yours. With it I now frankly offer you my hand; and should you make me the happiest of mortals by a frank acceptance of it, my utmost endeavor will be to make your life agreeable and happy. I believe you have some relatives who can give you all the necessary information concerning my character and circumstances, and the respectability of my family. It is now three years since I have been settled in business, my success being far beyond my own expectations; and, having a prospect of continued prosperity, I ardently long for a genial companion

անոր պտուղներուն և բերէ տունս այն անթառամ
հրապոյրը որ ձեր սիրելի ներկայութիւնը միայն
կրնայ տալ: Թոյլ տուէ՛ք ինձ ուրեմն խնդրել ձեռնէ
որ ձեր ամենապզնիւ նկատառութիւնը ընծայէ՛ք
իմ առաջարկին: Խնդրելով շուտափոյթ պատաս-
խանի մը շնորհքը՝ կը մնամ, սիրելի օրիորդ, ան-
կեղծ ուխտով

Ձերդ անկեղծօրէն և անձնուիրաբար,

ՕՐԻՈՐԴԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՆՊԱՍՏԱՒՈՐ

Սիրելի Պն. Յակոբեան,

Ճիշտ հիմա կարդացի ձեր ազնիւ և փաղաքշող
նամակը, և հաւատացէ՛ք այնքան յուզեց զիս որ
հազիւ թէ խօսք մը կրնամ գտնել պատասխանե-
լու: Անշուշտ նկատած է՛ք որ այն նպաստաւոր
տպաւորութիւնը՝ որ ստացայ մեր առաջին հան-
դիպումի իրիկունը՝ աստիճանաբար կը խորունկնար
քանի մեր մտերմութիւնը կը հասուննար. շինծու
համեստութիւն մը պիտի ըլլար իմ կողմէ՛ եթէ
չխոստովանէի ամենաանկեղծ և ամենէն գուրգու-
րալից զգացումը որ կը սածեմ ձեր նկատմամբ՝
ձեր սիրոյ այդպիսի աներկբայելի ապացոյցներէն
եաքը: Գարծեմ պէտք չունմ ըսելու աւելի քան
այս, թէ ձեր առաջարկը, եթէ յարմար ձևով մը
ենթարկուի ծնողացս, ջերմ և ոչ-անշահախնդիր
պաշտպան մը պիտի գտնէ յանձին մէկու մը որուն
համար երջանկութիւն պիտի ըլլայ անոնց ընդու-
նելը, իսկ դժբաղդութիւն՝ մերժելը:

Ներեցէ՛ք այս նամակի կարճութեանը համար,
որովհետև ինքզինքիս չեմ վստահիր աւելին ըսելու:

Ձերդ ջերմ սիրով,

to share its fruits and impart to my home that unfading charm which your delightful presence would give. Let me entreat for my proposal your kindest consideration. Requesting the favor of an early reply, I remain, dear Miss Breen,

Yours sincerely and devotedly,

The Lady's Reply, Favorable.

Tuesday, April 5, 19—.

Dear Mr. James:

I have just read your kind and very flattering letter, and, believe me, it has so upset me that I scarcely know how or what to reply. You cannot but have observed that the favorable impressions I received on the night of our first meeting have gradually deepened as our intimacy has matured, and it would be false modesty in me to disclaim a feeling of sincerest and most affectionate regard for you, after such undoubted proofs of your attachment. I think I need say no more than that your proposals, if made in proper form to my parents, will find a warm and not uninterested advocate in one to whom the acceptance of them will be happiness—their rejection a misfortune.

Excuse the brevity of this letter, for I cannot trust myself to say more than that I am

Yours affectionately,

Օրինորդին Հօրք

Սիրելի Տիար ,

Կը յուսամ իմ ընթացքս յանդուգն կամ անխորհուրդ չէք նկատեր , և կամ յարգանքի թերութիւն մը՝ հանդէպ ձեզի և ձեր ընտանիքին , երբ բացատրեմ ձեզի դիմելուս նպատակը : Խնդիրը իմ երջանկութեանս հետ սերտ առնչութիւն ունենալով՝ թոյլ տուէք ինձ նախ խնդրել ձեր ազնիւ ուշադրութիւնը և ներողութիւնը :

Ձեր դուստրը Օր․ Մարիին յաճախակի հանդիպելու հաճոյքն ունենալով Տկն․ Ս․ի տունը՝ իր հաճելի տրամադրութենէն , ազնիւ վարքէն եւ կատարելութիւններէն այնքան տպաւորուեցայ որ իմ բարեկամական զգացումներս փոխուեցան անկեղծ և պատուաւոր սիրոյ : Կ'ենթադրեմ որ իմ նկարագիրս և ժողովուրդի մէջ ունեցած դիրքս այնքան լաւ ծանօթ են Օր․ Մարիին որ կը խնայէք զիս աւելի մանրամասնութեան մտնելու անձնասիրութենէն :

Գալով իմ տնտեսական պայմաններուս , կը հաւատամ որ իմ եկամուտս՝ հաստատուն և բարգաւաճ առևտրական տունէ մը՝ աւելի քան բաւական է առտնին ծախքերը գոցելու և ընտանիք մը հանգստաւէտ եղանակով պահելու :

Իբրև եզրակացութիւն՝ ամենամեծ գոհունակութիւնը ունիմ ձեզ վստահացնելու թէ իմ սէրս ձեր դստեր հանդէպ փոխադարձուած է , և , եթէ դուք և Տկն․ Պրինին հաւանիք իմ առաջարկին , միշտ իմ առանձնաշնորհումս ինչպէս նաեւ պարտականութիւնս պիտի սեպեմ ձեր դստեր

To the Young Lady's Father.

Dear Sir:

I trust you will not consider my conduct rash or presumptuous, or wanting in respect to yourself and family, when I explain my object in addressing you at this time, and as the matter is one which very nearly concerns my happiness, let me request your kind attention and forbearance.

Having had the pleasure of meeting your daughter, Miss May, frequently at the house of Mrs. S——, I have been so impressed with her amiability of disposition, her lady-like manners and accomplishments, that my feelings of friendship have ripened into sincere and honorable attachment. I presume that my character and position in society are so well known to Miss May that I may be spared the disagreeable egotism of referring to them more minutely.

As regards my worldly circumstances, my income from an established and prosperous business is, I believe, amply sufficient to meet the expenses of housekeeping and a family in a comfortable style.

In conclusion, I have the highest satisfaction in assuring you that my affection for your daughter is reciprocated; and, should yourself and Mrs. Breen sanction my proposals, I shall ever esteem it a privilege, as well as a duty, to promote your

երջանկութիւնը առաջացնել և անով կրկնապէս ապահովել իմ երջանկութիւնը :

Կանուխ պատասխան մը մեծապէս երախտապարտ պիտի թողու զիս :

Ձերդ խորին յարգանքով,

ՀՕՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՆՊԱՍՏԱԻՈՐ

Սիրելի Պարոն ,

Ձեր ամսոյս Ցթուակիր ազնիւ նամակը ստացած եմ և կը փութամ պատասխանել : Թէև ոչ Տիկին Պրինին ոչ ալ ինքս պիտի ուզէինք ընդդիմանալ մեր դստեր ընտրութեան՝ սրտի խնդիրներուն մէջ, իբաց առեալ եթէ անոր չար հետեւանքներէն վախնայինք, ծնողական պարտականութեան զգացում մը կը պահանջէ մեր կողմէն զգոյշ խոհականութիւն մը՝ վճռական պատասխան մը տալէ առաջ ձեր նամակին : Մարիին ծանօթութիւնը ձեզի հետ կարճ եղած ըլլալու է, ուստի պիտի ուզէինք քանի մը կարևոր հարցուփորձեր ընել. և տարակոյս չկայ որ, ձեր նամակի պատուաւոր և տաք ոճէն դատելով, արդիւնքը գոհացուցիչ պիտի ըլլայ : Կրնաք ակնկալել մենէ դարձեալ լսելու չարթուան ընթացքին մէջ :

Միևնոյն ատեն հաղորդելով ձեզ Տկն. Պ.ի և իմ բարեացակամութիւնը, կը մնամ,

Ձերդ յարգանքով,

daughter's happiness, thereby doubly securing my own.

An early reply will greatly oblige,
Yours, very respectfully,

Father's Reply, Favorable.

Dear Sir:

I am in receipt of your letter of April 8 and, in reply, I would say that although neither Mrs. Breen nor myself would offer opposition to our daughter's choice in affairs of the heart, unless we apprehended ill consequences therefrom, a sense of parental duty requires prudent deliberation on our part before returning a decisive answer to your communication. May's acquaintance with you must be so slight that we should wish to make some necessary inquiries. There can be no doubt, from the candor and honor apparent in your letter, that the result will be satisfactory. You may expect to hear from us again in the course of the week.

Meantime, on behalf of Mrs. Breen and myself, I remain,

Yours faithfully,

Նամակ Զիճուրէ մը

Սիրելի — ,

Վերջապէս ահաւոր ժամը հասած է որ պիտի բաժնէ մեզ, թերևս ընդ միշտ : Տար Աստուած որ այդպէս չըլլար . բայց զինուորի մը կեանքը, սիրելիդ իմ Մարի, խիստ անորոշ է և անկայուն : Սակայն հաւատա ինձի, իմ այս սուպարէզիս ամէն վտանգին և դժուարութեան մէջ միշտ սիրով պիտի յիշեմ մեր ծանօթութիւնը և մտերմութիւնը, եւ պիտի յուսամ որ խաղաղութիւնը կը հաստատուի և մենք կարող կ'ըլլանք միանալու իբրև ամուսիններ :

Երկինքի օրհնութիւնը քեզի, սիրելիդ իմ Մարի :

Միշտ անձնուէր սիրողդ ,

ԲՕՊԷՐԹ ՊԸՐՆՁԻ ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ

Սիրելիդ իմ է . ,

Ես խկապէս կը հաւատամ որ սիրոյ մաքուր և հարազատ զգացումները այնքան հազուագիւտ են աշխարհի մէջ որքան առաքինութեան և բարեպաշտութեան մաքուր և հարազատ սկզբունքները : Այս բանը կը յուսամ պիտի բացատրէ իմ քեզի գրած բոլոր նամակներուս անսովոր ոճը : Անսովոր բառով ըսել կ'ուզեմ գրուած այն լուրջ եղանակը՝ որ, ճշմարիտը ըսելով, յաճախ ինձի վախ կուտայ թէ մի գուցէ զիս նկատես մոլեռանդ մը որ իր սիրուհիին հետ այնպէս կը խօսի ինչպէս պիտի խօսէր իր երէցին հետ : Չեմ գիտեր ինչ-

From a Soldier.

Dear _____:

At length the dreaded time has arrived which is to separate us, perhaps forever. God grant it may not be so, but a soldier's life, my dear Mary, is very uncertain and precarious. But believe me, amidst every danger and difficulty of my career, I shall ever think fondly of our acquaintance, and hope that a time may come when peace shall be restored, and when we shall be united as man and wife.

God bless you, my dear Mary. Believe me,
Your devoted lover,

Robert Burns to Miss E.

Lochlea, 1783.

My Dear E.:

I verily believe, my dear E., that the pure, genuine feelings of love are as rare in the world as the pure, genuine principles of virtue and piety. This I hope will account for the uncommon style of all my letters to you. By uncommon, I mean their being written in such a serious manner, which, to tell you truth, has made me often afraid lest you should take me for some zealous bigot, who conversed with his mistress as he would converse with his minister. I don't

պէս կ'ըլլայ, սիրելիս, թէև աշխարհի վրայ ոչինչ կայ, բացի քու ընկերակցութենէդ, որ ինծի այնքան հաճոյք տայ որքան քեզի գրելը, ասոր հետ մէկտեղ երբեք ինծի չտար այն գլխու պտոյտ տուող յափշտակութիւնները՝ որուն վրայ այնչափ կը խօսին սիրահարները: Յաճախ կը խօսչիմ որ եթէ լաւ հիմնուած սէր մը իսկապէս առաքինութեան մէկ մասը չէ՝ անոր չափազանց մօտ բան մըն է: Ամէն անգամ որ իմ է.իս խորհուրդը կը տաքցնէ սիրտս՝ մարդկութեան ամէն զգացում, վեհանձնութեան ամէն սկզբունք կը վառի կուրծքիս տակ: Այն կը մարէ չարութեան և նախանձի ամէն ազտոտ կայծ՝ որմէ վարակուելու չափազանց ընդունակ եմ: Ամէն արարած կ'ողջագուրեմ տիեզերական բարեացակամութեան բազուկներուս մէջ, և հաւասարապէս կը մասնակցիմ երջանիկի հաճոյքներուն, և կը համակրիմ դժբախտի թշուառութիւններուն: Կը վստահացնեմ քեզ, սիրելիս, յաճախ երախտագիտական աչքով կը նայիմ դէպքերու Աստուածային Տնօրինողին, այն օրհնութեան համար որ կը յուսամ մտադիր է ինծի պարզեւել քեզ պարզեւելով: Անկեղծօրէն կը մաղթեմ որ ան օրհնէ իմ ջանքերը քու կեանքդ այնքան հանգստաւէտ և երջանիկ ընելու որքան կարելի է, թէ քաղցրացնելով իմ բնական խառնուածքիս բիրտ կողմերը և թէ բարւոքելով իմ բազգիս անազնիւ հանգամանքները: Ասիկա, սիրելիս, զգացում մըն է որ՝ գոնէ իմ կարծիքով՝ վայել է մարդու, եւ, պիտի աւելցնէի նաեւ, վայել է քրիստոնեայի մը: Ազահ սողուն մը կրնայ կնոջ անձին համար սէր կեղծել, մինչդեռ իրապէս իր գորովանքը կեդրո-

know how it is, my dear, for though, except your company, there is nothing on earth gives me so much pleasure as writing to you, yet it never gives me those giddy raptures so much talked of among lovers. I have often thought that if a well-grounded affection be not really a part of virtue, 'tis something extremely akin to it. Whenever the thought of my E. warms my heart, every feeling of humanity, every principle of generosity kindles in my breast. It extinguishes every dirty spark of malice and envy which are but too apt to infest me. I grasp every creature in the arms of universal benevolence, and equally participate in the pleasures of the happy, and sympathize with the miseries of the unfortunate. I assure you, my dear, I often look up to the Divine Disposer of events with an eye of gratitude for the blessing which I hope he intends to bestow on me in bestowing you. I sincerely wish that he may bless my endeavors to make your life as comfortable and happy as possible, both in sweetening the rougher parts of my natural temper, and bettering the unkindly circumstances of my fortune. This, my dear, is a passion, at least in my view, worthy of a man, and I will add worthy of a Christian. The sordid earthworm may profess love to a woman's person, whilst in reality his affection is centered in her pocket; and the slavish drudge

նացած է անոր քսակին մէջ։ Ստրկաբար աշխատողը կրնայ սիրաբանութեան ելնել այնպէս՝ ինչպէս պիտի երթար ձիու վաճառատեղին ընտրելու համար հաս մը որ զօրաւոր ըլլայ եւ տոկուն, և ինչպէս ձիու մը մասին կ'ըսենք, մէկը որ ստրկօրէն աշխատող ըլլայ և ագնուօրէն քայլէ։ Կ'արհամարհեմ այդպիսի խեղճ գաղափար մը ունենալ այն սեռի մասին՝ որ ընկերութեան երջանկութիւնը պասկեւու կոչուած է։ Ողորմելի սատանանե՛ր. չեմ նախանձիր երջանկութեանը անոնց՝ որ այդպիսի մտածելակերպ ունին։ Իմ մասիս, ես բոլորովին տարբեր հաճոյքներ կ'առաջադրեմ իմ սիրելի ընկերուհիս հետ։

Բ. 9.

Իմ սիրելի է. ,

Ձեմ յիշեր երբեք, մեր ծանօթութեան ընթացքին մէջ, քու կարծիքդ լսած ըլլալ սիրահարութեան մասին՝ մեր դասակարգի անձանց մէջ։ Ըսել չեմ ուզեր այն անձերու մասին՝ որ կ'սկսին սակարկութեան մը ձևով, այլ անոնց մասին՝ որոնց սէրը իսկապէս անձի համար է։

Թէև ես ինքս, ինչպէս դու լաւ գիտես, անճարակ սիրահար մըն եմ, բայց քանի պատեհութիւն ունիմ դիտելու ուրիշները՝ որ ինձմէ շատ աւելի ճարպիկ են դարպասի խնդիրներու մէջ. յաճախ կը մտածեմ որ աւելի բարեբաղդ դիպուածի քան լաւ դեկավարութեան արդիւնքով է որ ապերջանիկ ամուսնութիւններու թիւը աւելի բազմապատիկ չէ։

may go a-wooing as he goes to the horse market to choose one who is stout and firm, and as we may say of an old horse, one who will be a good drudge and draw kindly. I disdain their dirty, puny ideas. I would be heartily out of humor with myself if I thought I were capable of having so poor a notion of the sex, which were designed to crown the pleasures of society. Poor devils! I don't envy them their happiness who have such notions. For my part, I propose quite other pleasures with my dear partner.

Robert Burns.

Lochlea, 1783.

Dear Miss ———:

I do not remember, in the course of your acquaintance and mine, ever to have heard your opinion on the ordinary way of falling in love, amongst people of our station of life: I do not mean the persons who proceed in the way of bargain, but those whose affection is really placed on the person.

Though I be, as you know very well, but a very awkward lover myself, yet as I have some opportunities of observing the conduct of others who are much better skilled in the affair of courtship than I am, I often think it is owing to lucky chance more than to good management, that there are not more unhappy marriages than usually are.

Բնական է երիտասարդի մը համար ախորժիլ իզական սեռի բարեկամութենէ, և սովորական է անոր համար ընկերակցիլ անոնց՝ երբ առիթը ներկայանայ. անոնցմէ մէկը անոր համար աւելի ախորժելի է քան միւսները. բան մը կայ անոր ընկերութեան մէջ, ինքն ալ չգիտեր ինչ է կամ ինչպէս, որ իրեն շատ հաճելի է: Այս բանը ես կը նկատեմ ինչ որ սէր կը կոչուի մենէ շատերու մէջ: Եւ պէտք է ընդունիլ, սիրելի է. որ դժուարին խնդիր մըն է գործ ունենալ այդպիսի սիրահարի մը հետ: Չես կրնար չընդունիլ որ ան անկեղծ է. բայց հակառակ անոր որ նպաստաւոր դիրք կը բռնես իրեն հանդէպ՝ թերևս քանի մը ամսուան, առ առաւելն մէկ կամ երկու տարուան մէջ, նոյն անհասկնալի քմահաճոյքը կրնայ զինքը նոյնչափ խենթօրէն սիրահար ընել ուրիշի մը, մինչ դու կը մնաս բոլորովին մոռցուած: Թերևս, երբ քեզ տեսնելու հաճոյքն ունենամ յաջորդ անգամ, իմ դասս տալ ուզես և տուն ղրկես զիս՝ ըսելով թէ իմ ալ ցոյց տուած սէրս նկարագրածիս պէս վաղանցուկ փայլակներէն մէկն է: Բայց կը յուսամ, սիրելիդ իմ է. արդար պիտի ըլլաս ինծի հաւատալու թէ իմ քեզի համար ունեցած սէրս հաստատուած է առաքինութեան և պատուի նուիրական սկզբունքներուն վրայ, և հետեւապէս որքան ատեն որ շարունակես տէրն ըլլալ այն սիրելի յատկութիւններուն՝ որ առաջին անգամ քեզի համար ունեցած սէրս ներշնչեցին ինծի, այնքան ատեն պիտի շարունակեմ ես սիրել քեզ: Հաւատա ինծի, սիրելիս, այս տեսակ սէրն է միայն որ ամուսնական կեանքը երջանի կ'ընէ: Մարդիկ

It is natural for a young fellow to like the acquaintance of the females, and customary for him to keep their company when occasion serves: some one of them is more agreeable to him than the rest; there is something, he knows not what, pleases him, he knows not how, in her company. This I take to be what is called love with the greater part of us; and I must own, dear E., it is a hard game, such a one as you have to play when you meet with such a lover. You cannot refuse but he is sincere, and yet though you use him ever so favorably, perhaps in a few months, or at farthest in a year or two, the same unaccountable fancy may make him as distractedly fond of another, whilst you are quite forgot. I am aware that perhaps the next time I have the pleasure of seeing you, you may bid me take my own lesson home, and tell me that the passion I have professed for you is perhaps one of those transient flashes I have been describing; but I hope, my dear E., you will do me the justice to believe me, when I assure you that the love I have for you is founded on the sacred principles of virtue and honor, and by consequence so long as you continue possessed of those amiable qualities which first inspired my passion for you, so long must I continue to love you. Believe me, my dear, it is love like this alone which can render the marriage state happy. People may talk of flames

Թող սիրոյ բոցերու և յափշտակութեանց մասին խօսին որչափ որ ուզեն, և թող տաք երևակայութիւն մը՝ երիտասարդական ոգիի զեղումով՝ իրենց նկարագրածին համաձայն պատրանքոտ զգացումներ ներշնչէ, բայց ես ապահով եմ որ մտքի ազնուագոյն ուժերը սրաի յարակից զգացումներու հետ կրնան միայն ըլլալ բարեկամութեան հիմունքը. և շարունակ իմ կարծիքս այն եղած է թէ ամուսնական կեանքը ուրիշ բան չէ եթէ ոչ բարեկամութիւն մը աւելի խանդավառ աստիճանով: Եթէ իմ փափաքս իրագործելու ազնուութիւնը ունենաս, եւ եթէ նախախնամութիւնը հաճի խնայել մեզ մինչեւ կեանքի երկարագոյն շրջանը, կրնամ դէպի առաջ նայիլ և տեսնել որ նոյնիսկ այնպիսի ատեն՝ երբ տարիքէն կորացած և խորշամած ըլլամ, նոյնիսկ այնպիսի ատեն՝ երբ աշխարհի ուրիշ բոլոր պարագաները ինծի համար աննշան դառնան, ես իմ է.ս պիտի սիրեմ ամենախանդակաթ սիրով, եւ այն պարզ պատճառով որ ան տակաւին տէրն է այդ ազնիւ յատկութիւններուն՝ զարգացած և աւելի բարձր աստիճաններու հասած՝ որ առաջին անգամ իմ սէրս ներշնչեցին իրեն համար:

«Ո՛հ, ի՛նչ երջանկութիւն երբ հոգիներ իրարքաչեն, Երբ սէրը ազատութիւն է և բնութիւնը օրէնք:»

Գիտեմ, եթէ այսպիսի ոճով խօսէի աղջկան մը՝ որ ինքզինքը խելացի կարծէր, անիմաստ պիտի նկատէր զայն. բայց սրտի լեզուն, սիրելիդ իմ է. , միակ սիրաբանութիւնն է որ շարունակ պիտի գործածեմ քեզի համար:

and raptures as long as they please, and a warm fancy, with a flow of youthful spirits, may make them feel something like what they describe; but sure I am the nobler faculties of mind, with kindred feelings of the heart, can only be the foundation of friendship, and it has always been my opinion that the married life was only friendship in a more exalted degree. If you will be so good as to grant my wishes, and it should please Providence to spare us to the latest period of life, I can look forward and see that even then, though bent down with wrinkled age: even then, when all other worldly circumstances will be indifferent to me, I will regard my E. with the tenderest affection, and for this plain reason, because she is still possessed of those noble qualities, improved to a much higher degree, which first inspired my affection for her.

“O! happy state when souls each other draw,
When love is liberty and nature law.”

I know were I to speak in such a style to many a girl, who thinks herself possessed of no small share of sense, she would think it ridiculous; but the language of the heart is, my dear E., the only courtship I shall ever use to you.

Երբ վերստին աչքէ կ'անցնեմ գրածս կ'զգամ որ սիրաբանութեան սովորական ոճէն բոլորովին տարբեր է այն. բայց անոր համար ներողութիւն չպիտի խնդրեմ—գիտեմ որ բարի բնաւորութիւնդ կը ներէ ինչ որ ողջմտութիւնդ սխալ կը գտնէ :
Բ. Գ.

ԼՕՐՏ ՊԱՅՐԸՆԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ

Իմ ամենասիրելի Գարօլին ,

Եթէ այն արցունքները՝ որ դուն տեսար, եւ գիտես որ ես այնքան ընդունակ չեմ թափելու, եթէ այն յուզումը որով ես քենէ բաժնուեցայ— յուզումը որ՝ այն ամբողջ ջղային հանգամանքներու միջոցին, նշմարած ըլլալու ես թէ չսկսաւ մինչև քեզ թողելու վայրկեանը մօտեցաւ, եթէ ամէն ինչ որ ըսած եւ ըրած եմ, և տակաւին աւելի քան պատրաստ եմ ըսելու կամ ընելու, բաւականապէս ապացուցած չեն թէ ինչ են, և ինչ պիտի ըլլան իմ զգացումներս դէպի քեզ, սրտի իմ հատոր, ուրիշ ոչ մէկ ապացոյց ունիմ քեզ տալու :

Աստուած գիտէ մինչև այս ըոպէի չէի գիտեր իմ սիրելի, ամենասիրելի և ամենաթանկագին բարեկամուհիին մտային մորմոքումը : Չեմ կրնար ինքզինքս արտայայտել, հիմա բառերու ժամանակը չէ— բայց հպարտութիւն մը, մեծամաղձոտ հաճոյք մը պիտի ունենամ տառապելով բանի մը համար որ դուն ինքդ հազիւ թէ կրնաս երեւակայել, որովհետև դուն գիտ չես ճանչնար :

Ծանր սիրտով դուրս ելնելու վրայ եմ, որովհետև այս իրիկուն իմ երևնալս դադար պիտի

When I look over what I have written, I am sensible it is vastly different from the ordinary style of courtship, but I shall make no apology—I know your good nature will excuse what your good sense may see amiss.

Robert Burns.

A Letter of Lord Byron's.

My dearest Caroline:

If the tears, which you saw, and know I am not apt to shed; if the agitation in which I parted from you—agitation which you must have perceived through the whole of this nervous affair—did not commence till the moment of leaving you approached; if all I have said and done, and am still but too ready to say and do, have not sufficiently proved what my feelings are, and must ever be, towards you, my love, I have no other proof to offer.

God knows I never knew till this moment the madness of my dear dearest and most beloved friend. I cannot express myself, this is no time for words—but I shall have a pride, a melancholy pleasure, in suffering what you yourself can scarcely conceive, for you do not know me.

I am about to go out with a heavy heart, for my appearing this evening will stop any absurd

պիտի տայ ուէ անիմաստ պատմութեան որուն տեղի կրնան տուած ըլլալ օրուան դէպքերը: Հիմա կը կարծե՞ս թէ ես պաղ եմ, և դաժան և կամակոր: Ուրիշները այդպէս պիտի մտածե՞ն երբեք: Արդեօք մայրդ, մայրը որուն արդարեւ մենք պէտք է աւելի զոհենք, շատ աւելի իմ կողմէն քան երբեք ինք գիտնայ կամ կարենայ երևակայել:

«Խոստանալ քեզ չ'սիրե՛լ:» Ա՛հ, Գարօլին, այլևս խոստումը անցած է: Բայց ես բոլոր զիջումները պիտի վերագրեմ յատուկ շարժառիթին, և երբեք չպիտի դադրիմ զգալէ այն ամէն ինչ որ դուն արդէն տեսած ես, և աւելի քան երբեք կրնայ գիտցուիլ իմ սրտիս, թերևս կարելի ըլլայ քու սրտիդ: Թող Աստուած ներէ, պաշտպանէ, և օրհնէ քեզ միշտ ընդ միշտ, աւելի քան երբեք:

Քու հիացողդ,

ՊԱՅՐԸՆ

Յ. Գ. Այս հեգնանքները քեզ այս բանին մղած են, իմ սիրելի Գարօլին, և եթէ մօրդ նկատումը չըլլար, և քու պարագաներուդ ազնուութիւնը, կա՞յ բան մը՝ երկինքի մէջ կամ երկրի վրայ՝ որ զիս երջանիկ ընէր որքան ըրած պիտի ըլլար քեզ իմս ընելով ասկէ շատ առաջ: Եւ ոչ նուազ հիմա՝ քան այն ատեն, բայց աւելի քան երբեք ԱՅՍ ՊԱՀՈՒՍ:

Աստուած գիտէ որ քեզ երջանիկ ընել կուզեմ, եթէ ես քեզ թողում, կամ աւելի դուն, մօրդ հանդէպ ունեցած պարտականութեան մը զգացումէն մզուած, թողուս զիս, պիտի ճանչնաս

story to which the events of the day might give rise. Do you think now I am cold and stern and wilful? Will ever others think so? Will your mother ever? The mother to whom we must indeed sacrifice much more, much more on my part than she shall ever know, or can imagine.

“Promise not to love you?” Ah, Caroline, it is past promising! But I shall attribute all concessions to the proper motive, and never cease to feel all that you have already witnessed, and more than ever can be known, but to my own heart—perhaps to yours. May God forgive, protect, and bless you ever and ever, more than ever.

Your most attached

Byron.

P. S.—These taunts have driven you to this, my dearest Caroline, and were it not for your mother, and the kindness of your connections, is there anything in heaven or earth that would have made me so happy as to have made you mine long ago? And not less now than then, but more than ever at this time.

God knows I wish you happy, and when I quit you, or rather you, from a sense of duty to your mother, quit me, you shall acknowledge

ճշմարտութիւնը այն բանին որ նորէն կը խոստանամ և կ'ուխտեմ, թէ ուրիշ ոչ մէկը, խօսքով կամ գործքով պիտի բռնէ իմ սիրոյս մէջ այն տեղը որ քեզի համար սրբագործուած է և պիտի ըլլայ մինչև որ ես ոչինչ դառնամ: Գիտես որ քեզի համար ամէն բան հաճոյքով կուտամ, ըլլայ այն հոս կամ գերեզմանէն անդին, և ասկէ զգուշանալով պէ՞տք է որ իմ շարժառիթներս սխալ հասկցուին:

Հոգս չէ թէ ո՛վ գիտնայ այս բանը, ինչ ձևի մէջ, քեզի և միմիայն քեզի համար է: Ծս քուկդ էի, և հիմա ալ քուկդ եմ, ազատօրէն և ամբողջովին, պատրաստ հնազանդելու, պատուելու, սիրելու, և փախչելու քեզի հետ: Ո՛ր, Ե՛րբ, եւ Ի՛նչո՞ւ, գուն կրնայիր և տակաւին կրնաս որոշել:

the truth of what I again promise and vow, that no other, in word or deed, shall ever hold the place in my affections which is and shall be sacred to you till I am nothing. You know I would with pleasure give up all here or beyond the grave for you, and in refraining from this must my motives be misunderstood?

I care not who knows this, what use is made of it—it is to you and to you only, yourself. I was, and am yours, freely and entirely, to obey, to honor, love, and fly with you, **when, where,** and **how** yourself might and may determine.

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ՍԻՄՕՆԵԱՆ

Կը խնդրեն որ ձեր ներկայութեամբ պատուէք

հարսանեկան հանդէսը իրենց դասեր

ՄԱՐԳԱՐԻՏԻՆ

ԸՆԴ

ՊՐՆ. ՆՇԱՆ ԳԵՈՐԳԵԱՆԻ

որ տեղի պիտի ունենայ

Չորեքշաբթի Իրիկոնն, Յունուար Եօթին

Հազար ինը հարիւր տասն և չորս

ԱՄԵՐԻԿԱ ԺՈՂՈՎԱՍՐԱՀԸ

724 Ուաշինկթըն Փողոց

Գօսթըն, Մէսէչուսէց

Տունը, Յունուար Հինգին

Գրուելայն Փողոց, Գօսթըն

Wedding Invitation

Mr. and Mrs. Sarkis Simonian

request the honor of your presence at the
marriage of their daughter

Margaret

to

Mr. Nishan Kenorkian

on Wednesday evening, January seventh

nineteen hundred and fourteen

at six thirty o'clock

America Hall, 724 Washington St.

Boston, Massachusetts

**At home January fifth
Brookline St., Boston**

ՈՒՐԻՇ ԶԵՒ ՄԸ

Կը խնդրուի ձեր ներկայութեամբ պատուել
ամուսնութեան արարողութիւնը

ԳԵՈՐԳ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

ԸՆԴ

ՕՐ. ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐԷՆԵԱՆԻ

Հինգշաբթի իրիկուն, Յունուար Տասն և Հինգ

Հազար ինը հարիւր տասն և չորս

Ժամը ութին

ՖՐՐՍԹ ԳԻՊԹԻՍԹ ԵԿԵՂԵՑԻՆ

Տօրչէսթըր, Մէսէչուսէց

Տունը

Պրօսթուէյ և Գրօս Փողոց

Սըմըրվիլ, Մէսէչուսէց

The honor of your presence is
requested at the marriage ceremony
of

Kenork Samuelian

To

Miss Siranoush Parenian

on Thursday evening, Fifteenth of
January, Nineteen hundred and four-
teen, at eight o'clock

**The First Baptist Church
Dorchester, Massachusetts**

At home
Broadway and Cross St.
Somerville, Mass.



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Առևտրական նամակները վաճառականութեան մէջ խիստ կարևոր դեր մը կը կատարեն, և որովհետև թէ գրողին և թէ ստացողին ժամանակը խիստ սուղ է՝ կարճութիւնը ամենէն աւելի պահանջուած յատկութիւնն է: Եւ կարճութիւնը կ'ապահովուի զգուշանալով աւելորդ նախադասութիւններէ, նիւթի հետ կապ չունեցող խօսքերէ, բացագանչութիւններէ, որպիսութիւնը հարցնելու յառաջաբանէ կամ վերջաբանէ, եւ ուրիշ ամէն կարգի շեղումներէ: Պէտք է գրել միայն ինչ որ կ'ուզուի ըսել: Առևտրական նամակ մը այնքան յարգի է և այնքան շուտ ուշադրութեան կ'արժանանայ որքան պարզ է և կարճ: Զբաղեալ մարդիկ երկար նամակները ամենավերջը կը ձգեն, և կրնայ ըլլալ որ կարդալու ժամանակ անգամ չկարենան տալ անոնց. անկէ զատ գրողի մասին գէշ գաղափար կը կազմեն իբրև անգործնական մարդ և առևտրական բարքի մէջ համբակ մէկը:

Ասոր հետ մէկտեղ յստակութիւնը պէտք չէ զոհուի կարճութեան, նամակ մը այնքան կարճ պէտք է ըլլայ որքան յստակութիւնը կը ներէ: Աւելի լաւ է քիչ մը երկարացնել եւ մթութենէ բոլորովին ազատ ըլլալ՝ քան կարճ բան մը գրել որմէ բան չհասկցուիր: Նամակը այնպէս յստակ ըլլալու է որ բթամիտ մարդն անգամ դիւրութեամբ հասկնայ մէկ անգամ կարդալով:

Նոյնպէս քաղաքավարութիւնը պէտք չէ զոհուել կարճութեան: Քանի մը բառերով կարելի է շնորհալի ոճը ապահովել: Անհոգութեամբ գրուած նամակները յաճախ սխալ հասկցողութեան տեղի կուտան և ֆլասներու դուռ կը բանան:

Գիրը պէտք է ընթեռնելի ըլլայ եւ կոկիկ՝ առանց չափազանցուած պճնումի: Տգեղ անձնասիրութիւն է ուրիշի մը ժամանակը առնել դժուարաբնութեան նամակով մը, մինչդեռ պէտք եղած խնամքը տանելով կարելի պիտի ըլլար զայն դիւրընթեռնելի ընել: Գեղեցիկ գիրը ամենուն տրուած չէ, բայց մաքուր եւ դիւրընթեռնելի գիրը ամէն մարդու կարողութեան սահմանին մէջն է:

Ինչպէս սիրային՝ նոյնպէս առևտրական նամակներու կարևոր մէկ մասը ընտրած ենք հրապարակի վրայ եղած անգլիերէն նամականիներէն:

Այստեղ աւելորդ չըլլայ յիշեցնել թէ այս նամականիին նպատակը պարզ գաղափար մը տալ է նամակներու ձևին, ընտրուելիք նիւթերու ևն. ի վրայ, և ոչ թէ ընդօրինակելու միջոց հայթայթել: Ամէն մարդ պէտք է որ իր ըսելիքը յստակօրէն ունենայ իր մտքին մէջ, և լաւ կ'ըլլայ որ գլխաւոր կէտերը մէկ, երկու, ևայլն թուանշաններով գրի առնէ և անկէ ետք նամակի վերածէ կամ ընդլայնէ: Առևտրական նամակներու մէջ կան այնպիսիներ որ կրնան շատերու պէտքին յարմարցուիլ շատ քիչ փոփոխութեամբ:

ԹՌՈՒՑԻԿ ԿՈՒՅՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ ՎՐԱՑ

Օրէնքի անգիտութիւնը ոչ մէկ չբմեղանք կրնայ ըլլալ :

Համաձայնութիւն մը առանց նկատառումի նշանակութիւն չունի :

Մատիտով եղած ստորագրութիւնները ընդունելի են օրէնքով :

Վճարուած դրամի մը ընկալագիրը օրինաւորապէս վերջնական փաստ չէ :

Առևտրական ընկերի մը գործերը հարկագրիչ են միւս բոլոր ընկերներու վրայ :

Կիրակի կամ տօն օրերու մէջ կատարուած պայմանագրութիւնները ուժ չունին :

Անչափահասի կամ խենթի մը հետ եղած պայմանագրութիւն մը ոչինչ է :

Գործատէրերը պատասխանատու են իրենց գործակալներու գործառնութեանց համար :

Գործակալները իրենց գործատէրերուն պատասխանատու են իրենց սխալներուն համար :

Ընկերութեան մը մէջ ամէն անգամ պատասխանատու է իրենց հաստատութեան ամբողջ պարտքին :

Անչափահասէ մը տրուած մուրհակը ոչինչ է :

Մուրհակները տոկոս կը բերեն եթէ այդ պարագան յիշուած է անոնց մէջ :

Օրէնքի համաձայն անհրաժեշտ չէ մուրհակի մէջ յիշել «արժէքը ստացուած է» :

Կիրակի օր եղած մուրհակ մը ոչինչ է :

Պարդախուլթեամբ ստացուած, կամ գինով վիճակի մէջ գտնուող անձէ մը առնուած մուրհակը ուժ չունի :

Եթէ մուրհակ մը կորսուի կամ գողցուի, տուողը պարտաւորութենէ ազատ չկրնար ըլլալ, պէտք է վճարէ :

Պարդախուլթիւն մը ծածկել խարդախուլթիւն է և օրէնքով պատժելի :

Օրէնքը չստիպեր ոեւէ մէկը անկարելին ընելու :

Անհատի մը մասնաւոր իրաւունքը կը մեռնի այդ անհատին հետ :

ՄԻԱՑ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ ԵՒ ԳԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԵՆ ԲՈՂՈՐ ձեռագիր նամակներ կամ ուրիշ գրութիւններ, գոցուած կամ չգոցուած, և բոլոր այն նիւթերը (տպուած) որ գոցուած են և կամ այնպէս մը ծրարուած որ դիւրութեամբ քննելի չեն. այս կարգի նիւթերը կը տարուին իւրաքանչիւր առևնսը կամ անոր մէկ կոտորակը 2 սէնթով, այնպէս որ եթէ նամակը կշռէ 2½ կամ 3 առևնս՝ պէտք է փակցնել 6 սէնթի դրոշմ:

(Նամակները այս գիներով կ'երթան նաև հետեւեւ Վայրերը. — Քանադա, Մեքսիկո, Քոլորադո, Փանամայի Հանրապետութիւն, Հավայի, Փորթո Րիօ, Շանհայ, Փիլիպիններ, և Կոստա Ռիկա-Քոլոմբիա կղզիները:)

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԵՆ ԲՈՂՈՐ լրագիրները եւ Հանդէսները երբ գոցուած չեն քննութեան դէմ, և կը տարուին 4 առևնսը կամ անոր մէկ կոտորակը 1 սէնթով: Ասոնց արժէքը կանխաւ կը վճարուին հրատարակիչներու կողմէն:

ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԵՆ տպուած առարկաներ, ինչպէս գիրք, շրջաբերական, լուսանկար, ևն., երբ կը գտնուին չգոցուած փաթեթներու կամ պահարաններու մէջ, և կը տարուին իւրաքանչիւր 2 առևնսը կամ անոր մէկ կոտորակը 1 սէնթով: Մրարի ծանրութեան սահմանն է 4 փառևնս, բացի այն պարագայէն երբ միայն մէկ գիրքի ծանրութիւնը 4 փառևնսէն աւելի է:

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԵՆ ԲՈՂՈՐ այն նիւթերը որ վերի ցանկէն դուրս են և այնպէս մը փաթեթուած որ դիւրութեամբ կրնան քննուիլ:

ՄՐՆԻ ՕՐՏԸՐԻ ԳԻՆԵՐԸ. — 3 սէնթ մինչեւ \$2.50, 5 սէնթ՝ \$2.50էն \$5., 8 սէնթ՝ \$5էն 10, 10 սէնթ՝ \$10էն 20, 12 սէնթ՝ \$20էն 30, 15 սէնթ՝ \$30էն 40, 18 սէնթ՝ \$40էն 50, 20 սէնթ՝ \$50էն 60, 25 սէնթ՝ \$60էն 75, 30 սէնթ՝ \$75էն 100:

ՓԱՐՍԸԼ ՓՕՍԹ. — Կը պարփակէ չորրորդ կարգի նիւթերը և 1914 Մարտ 16-էն ի վեր երրորդ կարգի նիւթերը, ծանրութեան սահմանն է 50 փառուստ մինչև 100 մղոն հեռաւորութեան համար. իսկ 20 փառուստ՝ աւելի հեռաւոր վայրերու համար:

C. O. D. [collect on delivery]. — յանձնումի ատեն գանձելի ծրարներ փարսը վճարով կարելի է ղրկել:

1. C.O.D.ի գումարը \$100է աւելի ըլլալու չէ:
2. 10 սէնթնոց յաւելուածական դրամով կարելի է ապահովել ծրարը մինչև \$50-ի կորուստի դէմ:
3. C. O. D. քարդը ապահով կերպով կապուելու է ծրարին, և պէտք է ցուցնէ. [ա] ղրկողին տրուելիք գումարը, [բ] Մրնի օրտրին ծախքը այդ գումարին համար, [գ] գանձելի ամբողջ գումարը [ա. առաւել բ.]

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳԻՆԵՐԸ

Մեծն Բրիտանիոյ և Իրլանտայի համար նամակները կը տարուին առևսը կամ անոր մէկ կոտորակը 2 սէնթով:

ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ. Բացի Քանատայէ, Մէքսիքայէ, [տես ներքին գիները] Իւրաքանչիւր կէս առևսը կամ անոր մէկ կոտորակը 5 սէնթով կը տարուի:

Կրկին գին կ'առնուի յանձնուելու ատեն՝ չը վճարուած կամ պակաս վճարուած նամակներու համար:

Բոլոր սպուլած նիւթերու համար 1 սէնթ 2 առւնսին կամ անոր մէկ կոտորակին:

ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՒԱԼԻՆ ՍԱՀՄԱՆԸ. Նրմոյշ ապրանքներու ծրարը պէտք է անցնի $8\frac{3}{4}$ առւնսը և ոչ ալ 4X8X12 ինչ ծաւալը. իսկ գիրքի կամ ուրիշ սպուլած նիւթերու ծրարը պէտք է անցնի 4 փառնս 6 առւնսը: Ֆրանսա, Մեծն Բրիտանիա, Պէլճիքա, Չուիցերիա, Իտալիա, Աւստրիա, Հավայի և Արճէնթին զրկուելիք նմոյշ ապրանքներու ծրարը 12 առւնս կրնայ ըլլալ:

Դրոշմաթուղթերը փօսթ օֆիսի կողմէ ետ չեն առնուիր և ոչ ալ կը փոխուին: Երբ մէկ դրոշմը երկրորդի մը վրայ մասամբ փակցուի, երկրորդը իր արժէքը կը կորսնցնէ:

Սխալ գրուած կամ աղտոտած փօստ քարտերը կարելի է փոխել փօստ օֆիսի մէջ՝ 4-ի տեղ 3ով:

Դրոշմով պահարանին կամ փաթեթին դրոշմը եթէ անջատուի՝ անարժէք կը դառնայ, բայց եթէ պահարանը աւրուի կարելի է փոխել 2 սէնթնոցով:

Փօստ քարտերը եթէ իրենց հասցէին չհասնին ետ չեն դարձուիր:

Պայթուցիկ նիւթեր, անբարոյական գրականութիւն կամ ուրիշը վարկաբեկելու համար ծրարագրուած գրութիւններ և վիճակահանութեան թուղթեր անընդունելի են:

Special Delivery [մասնաւոր յանձնում] Դրոշմը նամակին կամ ծրարին արագ յանձնումը կ'ապահովէ, բայց արժէքը չ'ապահովեր, արժէքի ապահովութեան համար 10 սէնթնոց մը պէտք է:

Երբ սովորական դրոշմներէն 10 սէնթնոց գործածուի, պէտք է Special delivery բառերը աւելցնել պահարանին վրայ արագ փոխանցման համար:

Արագ յանձնելու համար միայն մէկ փորձ կը կատարուի և եթէ ստացող անձը չգտնուի՝ սովորական նամակի կարգը կ'անցնի:

Եթէ հասցէն փոխողը լուր տայ փօսթ օֆիսին՝ բոլոր նամակները կը փոխանցուին նոր հասցէին:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԳՈՐԾԻՆ ԿԱՌՁԵԼՈՒ ՅՈՐԴՈՐՈՂ ՆԱՄԱԿ

Սիրելի Մելքոն,

Ապրիլ 24 թուակիր նամակդ երկու օր առաջ ստացայ, բայց, հապճեպով գրել չուզելով, մինչև այսօր ուշացուցի պատասխանը:

Կը գրես թէ Մր. Տ. կ'առաջարկէ քեզ իր խանութը առնել աւելի բարձր շարաթականով քան որ հիմա կ'ստանաս, և կարգադրել ներկայ գործատէրիդ հետ ջնջելու պայմանագրութիւնդ, բայց թէ դուն կը սիրես ներկայ գործը և շահագրգիռ կ'զգաս անոր տիրանալու:

Իմ խորհուրդս, որ կ'ըսես անկեղծօրէն կ'ոսգես ունենալ, պիտի ըլլար ամէն պարագայի տակ շարունակել քու ներկայ գործը: Պիտի սորվիս արհեստ մը որ միշտ միջոց պիտի տայ քեզի ապրուստ մը հանելու, և միևնոյն ատեն տեւականութեան ու յարատեւութեան ճիրքերը պիտի շահիս: Իմ կարծիքով առևտուրի մէջ ամէնէն գէշ բանն է երիտասարդի մը համար մէկ զբաղումէն միւսը թռչիլը, կէս մը սորվելով զանազան արհեստներ և տիրանալով ոչ մէկուն: Այսպէսով ան կը դառնայ անհանդարտ, անկայուն, դժգոհ, անկանոն ունակութիւններու տէր, եւ ընդհանրապէս ոչ մէկ բանի ծառայող մարդ մը:

Մր. Տ. ի խանութին մէջ շատ հաճելի դիրք մը պիտի ունենաս, բայց ոչինչ պիտի սորվիս, և քանի մը ամսուան մէջ կրնաս դուրս թողուիլ,

BUSINESS LETTERS.

Advising a Youth to Stick to His Trade.

Dear Malcolm:

Your letter of April 24 reached me two days ago, but, not wishing to answer it hastily, I have delayed writing until to-day.

You write that Mr. D. offers to take you into his store, at higher wages than you are now receiving, and to arrange with your present employers to cancel your indentures, but that you like your trade and feel an interest in becoming master of it.

My advice, which you say you sincerely desire to have, would be by all means to continue in your present employment. You will acquire a good trade that will always afford you the means of gaining a livelihood, and you will at the same time attain steadiness and perseverance. I think it is the worst of all things in business, for a young man to fly from one pursuit to another, half learning a great variety of professions and trades, and mastering none thoroughly. He thus acquires restless, discontented ideas, habits of irregularity, and generally ends by being good for nothing at all.

At Mr. D.'s you would occupy a very pleasant position, but you would learn nothing, and in a few months might be out of a situation, and

այն ատեն պիտի ստիպուիս նոր գործի մը սկսիլ, թէև այնքան կորուստով որքան արդէն սորված էիր :

Կարծեմ աւելի աղէկ է քեզի համար, ամէն տեսակէտով, հաստատամտօրէն հետապնդել քու ընտրած արհեստդ մինչև որ անոր տիրանաս :

Յուսալով դարձեալ լսելու քենէ, կը մնամ,
Հօրեղբօրորդիդ

ԳՈՐԾԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յարգելի Տիկին,

Ձեր խնդիրը իմ խորհուրդս ստանալու համար ձեր զաւկին ապագայ գործին մասին խիստ փառաքշող է ինծի, երանի թէ աւելի ատակ ըլլայի լիովին պատասխանելու :

Քանի որ ոչ մէկ մարդ կրնայ լաւ գործ ընել եթէ չ'ընէ ամբողջ իր սիրտով, թոյլ տուէք ինծի հարցնել թէ ձեր զաւակը մասնաւոր գործի մը կամ արհեստի մը ձգտումը ունի՞, եթէ ան կը փափաքի փաստաբան մը կամ բժիշկ մը ըլլալ, մի' փորձէք զինքը վաճառական մը ընել : Ձեր նամակէն կը կռահեմ որ առևտուրի համար փափաք ունի. եթէ այդպէս է տուէք իրեն իր ուզած պատեհութիւնը, և վստահ եմ ան ձեզի պատիւ պիտի բերէ :

Եթէ աւելի դեռատի ըլլար պէտք էր սկսիլ իբրև օֆիսի տղայ, հոգ չէ թէ ինչ տեսակ գործ ընտրէր : Այս կերպով առևտրական կեանքի մանրամասնութիւնները պիտի սորվէր և մօտէն դիտե-

forced to begin anew, with perhaps a loss of much that you have already learned.

I think it better for you, in every way, to steadily pursue your chosen trade until you have mastered it.

Hoping to hear from you again very soon, I am, as ever,

Your affectionate cousin,

Choice of Employment.

Dear Madam:

The request you make for my advice concerning your son's future employment is a very flattering one, and I wish I were more capable of answering it.

As no man can do work well that he does not do with all his heart, let me ask, has your son business or professional tastes? If he wishes to be a lawyer or physician, do not try to make a merchant of him. From your letter I take it that he has a taste for trade; if so, give him the opportunity he desires, and he will be, I trust, a credit to you.

If he were a little younger, he should begin as office boy, no matter what business he chooses. In this way he would learn all the details of business life, and by close observation and atten-

լով ու քննելով շատ մը բաներ պիտի գտնէր որ իր ապագայ ասպարէզին մէջ իրեն օգտակար պիտի ըլլային: Քանի որ այս նպատակին համար օտարիքը անցած է, թող վաճառատան մը մէջ գործ մը առնէ մէկ կամ երկու տարուան համար, եթէ նոյն իսկ դրամ ունի ուղղակի գործ մը սկսելու համար. որովհետեւ աւելի լաւ է մարդու մը համար առանձին տան մը մէջ ծառայել մինչև որ կատարելապէս ծանօթանայ առևտրական մանրամասնութեանց: Այս կերպով շատ բարեկամներ կը վաստկի, եւ կը ծանօթանայ լաւագոյն սխթեմին և ամենէն չահաւոր տեղերու մասին, և կը սորվի յաջող վաճառականի մը հարկ եղած յատկութիւնները:

Ձեր զաւակին համար առևտուրի ճիւղ մը ընտրելու ատեն պէտք է առաջնորդուիք պատեհութիւններէն: Ընդհանրապէս մեծաքանակ վաճառատուն մը նախընտրելի է փոքրաքանակէն: Եւ անհրաժեշտ արտադրութիւններու առևտուրը աւելի աղէկ է քան օրուան մօտայէն և քմահաճոյքէն կախում ունեցող նիւթերու առևտուրը: Տեղը, դրամագլուխը, և առաջանալու հեռանկարը նոյնպէս լուրջ նկատողութեան կը կարօտին: Ձեզի համար անմիջական թոշակն մեծ նշանակութիւն ունենալու չէ:

Երբ որ ինքնիրեն համար առևտուրի սկսի թող ձեր զաւակը գործադրէ հետեւեալ սկզբունքները.

Յաճախորդներուն՝ քաղաքավարութիւն.

ինչքե՞ռ ու արագ յանձնում.

tion, discover many things that would be of great advantage to him later in his career. As he is too old for this, let him take a clerkship for a year or more, even if you have money to start him in business, as it is well for a man to serve a good house until he has made himself thoroughly acquainted with all the details of the business. He makes many friends in this way, and becomes acquainted with the best systems and most advantageous localities, and learns in his own clerkship the qualities necessary to a successful merchant.

In selecting a business in which to place your son, you must be guided by the opportunities at hand. In general, a wholesale house is to be preferred to a retail establishment, and one dealing in staple commodities to one dependent on the whims or fashions of the day. Locality, capital, and prospect of advancement must also be carefully considered. To you, immediate salary should be a matter of indifference.

When started in business for himself, let your son observe these principles:

Politeness to customers.

Prompt delivery of goods.

ինչքերը իրենց իսկութեան համար ծախուին :
Հաստատ գիներ :

Կանխիկ գործառնութիւն՝ երբ գործնական է :
Քիչ ապառիկ գնելու և թէ ծախելու մէջ :
Քաղաքավարութիւն , բայց հաստատութիւն՝
հաշիւներ հաւաքելու ատեն :

Հետեւելով այս կանոններուն , և յիշելով որ
ուղղամտութիւն , արագութիւն , և քաղաքավա-
րութիւն ունէ գործի պահանջած ամենէն անհրա-
ժեշտ յատկութիւններն են , ձեր զաւակը կրնայ՝
ժամանակի ընթացքին մէջ՝ հասնիլ առևտրական
ամենաբարձր յաջողութեան :

Յուսալով ի սրտէ որ այդ բանը իրագործուի ,
կը մնամ՝

Ձերդ յարգանօք

ՕՖԻՍԻ ՏՂԱՅԻ ՊԱՇՏՕՆԻՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ

Յարգելի Տիար ,

Յարգանքով դիմում կ'ընեմ այս առաւօտեայ
Հէրըլտի մէջ ծանուցուած գործի համար : Տաս-
նրվեց տարեկան եմ և կապրիմ իմ ծնողացս հետ ,
թիւ 1246 Ուաշինկթըն փողոց : Մինչեւ այս օրս
հանրային դպրոց յաճախած եմ , և ձեզի կը ղրկեմ
բարձի վկայական մը ուսուցիչէս : Յօժար եմ
ստանալ պզտիկ շաքաթական , եթէ լաւ պատե-
հութիւն կայ ստանալու առևտրական հմտութիւն
և աստիճանաբար յառաջանալու :

Պորին յարգանքով ,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 337

Goods sold for what they are.

Fixed prices.

Cash dealings when practicable.

Short credit, both in buying and selling.

Politeness, but firmness, in collecting accounts.

Following these rules of action, and bearing in mind that truthfulness, promptness, and politeness are three of the most necessary qualities required for any business, your son may in time attain the highest mercantile success.

Hoping most heartily that such will prove the case, I remain

Respectfully yours,

Application for an Office Boy's Position.

Sir:

I respectfully apply for the position advertised in the Herald of this morning. I am sixteen years old, and reside with my parents at No. 1246 Washington Street. Until now I have attended the public school, and I send you a certificate of character from my late teacher. I am willing to accept small wages if there is good opportunity to acquire business knowledge and a chance of gradual advancement.

Very respectfully,

Հօթելի մէջ Գործ Ուզող

Տէր,

Պատասխանելով ձեր այս օրուան Հէրըլտի մէջ ունեցած ծանուցումին կը հաստատեմ որ երեսուներկեց տարեկան եմ, ամուրի, և շատ փորձառութիւն օւնիմ հօթէլի գործին մէջ: Ներկայիս կը գործեմ Փէքօթ Հաուզի մէջ, քաղաքին մօտ, և վկայագիր մը կը ներփակեմ հօթէլի տիրոջ կողմէ: Ձգել կ'ուզեմ՝ եղանակիս մէջ գործերու թուլութեան պատճառաւ: Հօթէլին տէրը չի կրնար վճարել ինչ որ ես պէտք էի ըստանալ: Քանի որ ուզած էիք փափաքուած թոշակին քանակը իմացնել, պիտի աւելցնեմ որ իմ պայմաններս են ամիսը 75 տօլար՝ անշուշտ կերակուրով մէկտեղ: Ձեզի կը զրկեմ յանձնարարականներ ուրիշ տեղերէ ուր ես գործած եմ, եւ մասնաւորապէս կը յիշեմ ձեզի Մր. Տ. Քէմպրիճէն, որ զիս լաւ կը ճանչնայ և կրնայ ձեզի աւելի տեղեկութիւն տալ եթէ փափաքիք:

Ձերդ յարգանքով,

ԿՕՇԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԸ ՄԷՋ

Վերակացու — Կօշիկի գործարանի,
Սէյլըմ, Մէս.

Յարգելի Տէր,

Այս առաւօտ կարդացի «Պօսթըն Կլօպ»ի մէջ ձեր ծանուցումը և իմացայ որ լեւեռներ կուղէք: Յարգանքով ձեր նկատառութեան կ'ենթարկեմ

An Application for a Position of Hotel Clerk.

Sir:

In answer to your advertisement in to-day's Herald, I would state that I am thirty-six years of age, unmarried, and have had considerable experience in the hotel business. I am now engaged at the Pequot House, near this town, and inclose a testimonial from the proprietor. I wish to leave because, owing to the dullness of the season, the proprietor cannot pay me what I think I should receive. As you ask that the salary desired should be stated, I will say that my terms are \$75 a month, with board, of course. I send you recommendations from other places where I have been engaged, and would specially refer you to Mr. S. of Cambridge, who is well acquainted with me, and can give you any further information you may desire.

Yours, very truly,

The Superintendent of _____
Shoe Factory,
Salem, Mass.

Dear Sir:

I read your advertisement for lasters in the Boston Globe this morning, and I respectfully submit this application for a position. I have

այս դիմումնագիրս յիշուած գործին համար: Այդ ճիւղին մէջ չորս տարուան փորձառութիւն ունիմ և ի վկայութիւն կը կոչեմ Մր. — Տըկլէս Ընկերութենէն, որ ծանօթ է թէ իմ նկարագրիս և թէ գործիս որակին:

Յուսալով նպաստաւոր պատասխան մը, կը մնամ,

Ձերդ յարգանքով,

ՀԱՇԻԻ ՄԸ ԲԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ

Պններ. Բ. Ս. և Ընկ. Պօթըն, Մէս.

Պարոններ,

Վերջերս անօթներու և գործիքներու խանութ մը բացած եմ այս տեղ, և քանի որ պէտք եղածին չափ ապրանք չեմ մթերած, կ'առաջարկեմ հաշիւ մը բանալ ձեր տան հետ, եթէ հաճելի է ձեզ: Վկայութեան համար ձեզի կուտամ հետեւեալները, Ճ. և Բ. ձեր քաղաքէն, որուն հետ անցեալին մէջ գործ ունեցած եմ, և Մր. Մ. Ուիլսըն Ընկ., այս քաղաքէն, որոնք լաւ ծանօթ են իմ տնտեսական վիճակիս, և որոնց հետ, կարծեմ, դուք կը թղթակցիք: Եթէ ձեր անոնցմէ ստանալիք տեղեկութիւնները գոհացուցիչ ըլլան հաճեցէք իմացնել ինծի այդ առթիւ, որ անմիջապէս ներկայիս ինծի պէտք եղած ապրանքներուն ապրանքները ղրկեմ ձեզ:

Խորին յարգանքով,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 341

had four years' experience in that line of work. I refer you to Mr. _____ of Douglas Co., Brockton, Mass.; who is well acquainted both with my character and with the quality of my work.

Hoping for a favorable answer, I am,
Yours respectfully,

An Offer to Open an Account.

Messrs. Rawlins & Smith, Boston, Mass.

Gentlemen:

I have lately opened a hardware store in this place, and as I am not yet fully stocked, I propose opening an account with your house, if agreeable to you. I refer you to Messrs. Jones & Ralph, of your city, with whom I have had dealings in the past, and also to Messrs. Matthews, Wilson & Co., of this city, who are well acquainted with my financial standing, and with whom I believe you correspond. Should the information you may receive from them prove satisfactory, please inform me to that effect, and I will at once forward an order for what goods I require at present.

Very respectfully,

Ապրանքի Մասին Դժգոհութիւն

Յարգելի Տիար,

Կը ցաւիմ որ ստիպուած եմ գանգատելու թէ իմ ձեռնէ ստացած վերջին ապրանքները նմուշին չէին համապատասխաներ: Ասկէ առաջ գանգատելու պատճառ կամ առիթ ունցած չեմ երբեք, և աւելի այն կարծիքէն եմ որ սխալ մը տեղի ունեցած է, որ՝ տարակոյս չունիմ՝ պատրաստ պիտի ըլլաք ճշդելու: Ձեր ինծի ղրկած ապրանքները ինծի ուէ օգուտ չունին: Համբաւս պիտի աղարտէի եթէ փորձէի զանոնք ծախել իմ յաճախորդներուս ուէ գնով: Ձեր անմիջական ուշադրութիւնը այս խնդրոյն համար շնորհապարտ պիտի թողու զիս:

Ձերդ անկեղծօրէն,

ԳՐԱՒԱԴՐՈՒԹԻԱՆ ՄԸ ՎՃԱՐՈՒՄԻ ԱՌԹԻԻ

Յարգելի Տիար,

\$2500ի նօթը, որուն ապահովութեան համար գրաւի մուրհակ մը ունիք իմ թիւ 12 Սքրէնթըն փողոցի վրայ տանս և գետնին համար, վճարելի է գալամսուան առաջին օրը: Այդ թուականէն ետք ինչպէս կը հասկնամ, եթէ ուզէք, դատարան կրնաք դիմել խափանման համար: Կարողութենէս վեր է հարկ եղած գումարը հոգալ պարտքը փակելու համար, և մեծապէս շնորհապարտ պիտի ըլլայի եթէ այդ առթիւ ձեր դիտաւորութիւնը իմացնէիք ինծի: Ինչպէս գիտէք տոկոսը միշտ կանոնաւոր կերպով վճարած եմ և ներփակ կը

A Letter Complaining of the Quality of Goods.

Dear Sir:

I am very sorry to be compelled to complain that the last bill of goods received from you is not equal to the samples sent. I have never before had occasion to complain, and I am disposed to think there has been some mistake, which no doubt you will be ready to correct. The goods you have sent are really of no use to me; I should harm my reputation by endeavoring to sell them to my customers at any price. You will oblige me by giving immediate attention to this matter.

Yours truly,

Relating to the Payment of a Mortgage.

Dear Sir:

The note for \$2,500, for the security of which you hold a mortgage deed on my house and lot, No 12 Scranton Street, is payable on the first of next month. After that date I understand that you can, if you choose, at once bring suit for foreclosure. It is not in my power to raise the sum necessary to discharge the debt, and I should be greatly obliged for information as to your intentions on the subject. As you know, I have always paid the interest regularly, and I

դրկեմ փոխդիր մը վերջին եռամսեայի համար (\$37.50) ձեր հրամանին վճարելի: Թերեւս տեղեակ էք որ պզտիկ բայց կանոնաւոր եկամուտ մը ունիմ եւ վստահ եմ որ տոկոսը կրնամ վճարել: Այս հանգամանքներու տակ կը յուսամ խնդիրը կը թողուք այնպէս ինչպէս որ է ներկայիս:

Ձերդ յարգանքով,

ԴԱՏԱՐԱՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՆԱՄԱԿ

Պն. Կ. Ֆէրկիւսըն

Քընալ փողոց

Յարգելի Տէր,

Երեք ամիս համբերութեամբ սպասած եմ ձեր ինձմէ գնած նպարեղէններու և ուտելիքներու հաշիւին վճարումին համար: Ամենավերջին առարկաները գնուած էին Փետրուար 10-ին, եւ հիմա Յուլիսին կէսը անցած է: Հաշուեցոյցը ձեզի շատ անգամներ ղրկուած էր, բայց պատասխան չէր ստացուած: Ստիպուած եմ ձեզ տեղեկացնել որ եթէ վճարումը գալիք ամսուան առաջին օրէն առաջ չի կատարուի հաշիւը փաստաբանին պիտի յաճնեմ գանձելու համար:

Ձերդ անկեղծօրէն,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 345

enclose herewith a check for the last quarter (\$37.50) payable to your order. You are probably aware that I have a small but regular income and am certain to keep up the interest. Under these circumstances I have great hopes that you will allow matters to stand as they are at the present.

Yours respectfully,

Threatening Law Proceedings.

Main St., Buffalo, July 12, 1913.

Mr. G. F.,
Canal St.

Dear Sir:

I have waited patiently for three months to receive payment of your bill for groceries and provisions purchased of me. The last item was bought February 10, and it is now the middle of July. The bill has been sent to you several times, but has met with no response. I am obliged to inform you that if payment is not made before the first of next month, I shall put the account into the hands of an attorney for collection.

Yours sincerely,

Վարկագիր

Պնր. Գէորգեան և Որդիք,
 Նիւ Եօրք Քաղաք:

Յարգելի Տեարք,

Հաճեցէք նամակաբերս Պն. Գրիգոր Սարգիս-
 եանին տալ մինչև հինգ հարիւր տալէրի (\$500.00)
 վարկավճար և խնդրուած գումարին համար իր
 ընկալագիրը առնելով փոխանակագիր մը քաշել
 մեր վրայ կարճ ասեռէ մը վճարելի: Ներփակ կը
 ղրկեմ ձեզ Պն. Սարգիսեանի ստորագրութիւնը:

Ձերդ անկեղծօրէն,

Լևոն Հուրիկեան

(Պն. Սարգիսեանի ստորագրութիւնը)

ՀԱՇԻԻ ԲԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Յարգելի Տեարք,

Կը խնդրենք որ վարկահաշիւ մը բանաք Պն.
 Ա. Յ. Ի համար՝ որ ձեզի պիտի յանձնէ այս նամակը:
 Ուէ գումար որ, հազար տալէրը (\$1000) չանց-
 նելու պայմանով, խնդրէ ձեռնէ հաճեցէք յանձնել
 իրեն և անցնել մեր հաշիւին:

Ձերդ անկեղծօրէն

ԱՊՐԱՆԻ ԱՊՍՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յարգելի Տեարք,

Ներկայովս ձեզի կը յանձնեմ նիւթերու ցանկ
 մը որոնց համար հաճեցէք ձեր նուազագոյն գի-
 ները ցոյց տալ և տեղեկացնել թէ անոնցմէ որոնք
 պատրաստի ունիք, եւ որչա՛փ ատեն կ'առնէ
 հայթայթել մնացածները, իմացնելով նաեւ ձեր
 սովորական պայմանները:

A Letter of Credit.

Messrs. Keorkian & Sons,
Gentlemen:

Please give the bearer, Krikor Sarkisian, a cash credit to the extent of \$500, taking his receipt for the amount required and drawing on us at short sight for your advances. I enclose Mr. Sarkisian's signature.

Yours truly,

Leon Hourikian.

(Mr. Sarkisian's Signature)

Proposing to Open an Account

Gentlemen:

We beg to open a credit account with you in favor of Mr. A. H., who will hand you this. Any sums he may require, not to exceed one thousand dollars (\$1,000) in the aggregate, you will please advance to him, charging the amount to our account.

Yours truly,

Preparing to Order Goods.

Gentlemen:

We herewith send you a list of articles, for which you will please favor us with your lowest quotations, informing us at the same time which of them you keep on hand, and the necessary time required for filling an order for such of the others as we may require, together with your customary terms.

Respectfully,

Ապստղրանք

Պարոններ ,

Ստացած եմ ձեր ամսոյս առաջին թուակիր նամակը՝ ներփակ գներու ցանկով և պայմաններով, եւ կը խնդրեմ որ ընդունիք իմ շնորհակալիքս ձեր շուտափոյթ ուշադրութեան համար : Ներկայովս կը ներփակեմ իմ ապստղրանքս , վստահ ըլլալով որ յաւագոյն որակով ապրանքներ կը հայթայթէք :

Այն ապստղրանքները որ ես նշանակած եմ , պիտի տեսնէք որ , ձեր միշտ պատրաստ ունեցած առարկաներէն են . անոնք կը խնդրուի անմիջապէս ղրկել , իսկ մնացածները կարելի եղածին չափ շուտ :

Եթէ ոեւէ ապրանքի վրայ փոփոխութիւններ եղած են , կը խնդրուի իմացնել անմիջապէս եւ ապստղրանքը պահել մինչեւ մեր պատասխանը , միևնոյն ատեն , կը մնանք , պարոններ ,

Ձերդ յարգանքով ,

ԳԱՆԳԱՏ ԱՊՐԱՆՔԻ ՅԱՊԱՂՄԱՆ ՀԱՄԱՐ

Յարգելի Տիար ,

Անցեալ Դեկտ . 16ին ձեզի ստիպողական նամակ մը ղրկեցի ապստղրելով ներփակուած ցանկի ապրանքները փութով ղրկել , որ դեռ մինչև հիմա չեմ ստացած , և ոչ ալ լսած եմ ձեռնէ առաքումի յապաղման պատճառներու մասին :

Այս յապաղումը զիս շատ նեղեց եւ հարկադրուեցայ քանի անգամ շուկայէն գնելու պէտք եղած ապրանքները բարձր գիներով եւ ծախելու

Ordering Goods.

Gentlemen:

We have your letter of June 1, with prices and terms of settlement, for which prompt send an order herewith, relying upon you to supply us with none but first-class articles.

The items I have checked, you will perceive, are those distinguished in your list as being always in stock and ready to hand. These you will please forward immediately; the others as soon as procurable.

Should there have been improvements upon any of the articles, please advise us without delay, holding this order subject to our reply. In the meanwhile, we remain, gentlemen,

Yours respectfully,

Complaint—A Delay in Goods.

Dear Sir:

On December 16 I sent you an urgent letter, ordering in haste the inclosed list of articles, which up to date I have not received; neither have you advised me of the reason for delaying shipment.

This delay has annoyed me greatly, necessitating the purchase in the market from time to time of such articles in the list as I needed, at

առանց չափի, որպէսզի յաճախորդներս յուսախար չընեմ:

Այս վերաբերումը բոլորովին անսովոր է, ուստի կը փափաքիմ բացատրութիւն մը ունենալ այդ մասին: Եթէ ապրանքները չհասնին մինչեւ ամսոյս 26ը՝ հաճեցէք ապսպրանքը ջնջուած նկատել:

Ձերդ յարդանքով,

ՀԱՇԻԻ ԲԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ

Յարգելի Տիարք,

Ձեր տան հետ առևտրական յարաբերութիւն հաստատել փափաքելով, կը խնդրենք գիներու ցանկ մը ղրկել և իմացնել ձեր վճարման պայմանները:

Մեր գործը արագօրէն կ'աճի և մենք իվիճակի ենք՝ մեր ունեցած դիւրութիւններով՝ ձեր ապրանքներու տեսակէն ծախել մեծ քանակութեամբ: Գալով մեր դիրքին արտօնուած ենք ձեռնէ խնդրելու որ մեր մասին հարցնէք հետևեալներուն. Պնր. Իսրայէլ Նէփ և Ընկ., մեր քաղաքէն, և Պնր. Հափքինս և Լէնտհըրզ, սեզանաւորներ, ձեր քաղաքէն:

Յուսալով ձեռնէ շուտով լսել, կը մնանք,

Ձերդ անկեղծօրէն,

advanced figures, which were redispod of at cost rather than disappoint my customers.

This treatment is not that of my usual experience with you, and I desire an explanation. If the goods are not here by January 26, you will please consider the order cancelled.

Yours respectfully,

Proposing to Open an Account.

Gentlemen:

As we are desirous of opening business relations with your house, we shall ask you to transmit a list of prices, stating your terms of settlement.

Business increases rapidly, and we are in a position, with our facilities, for handling a large quantity of your style of goods. As to our standing, we are permitted to refer to Messrs. Israel Knapp & Co., of our city, and Messrs. Hopkins & Lathers, bankers, of your own.

Hoping to hear from you at an early date, we remain, gentlemen,

Yours truly,

Գանգատ Ապրանքներու Ստորին Որակի Մասին

Յարգելի Պարոններ ,

Ստիպուած ենք յակամայս մեր յուսախարութիւնը յայտնել ձեզ՝ ձեր վերջին անգամ ղրկած ապրանքները խիստ անգոհացուցիչ գտած ըլլալով : Զանոնք քննելով այնքան գէշ գտանք որ չենք կրնար մեր յաճախորդներուն առջև հանել : Զբաղումի այս շրջանին մէջ մեծ անպատեհութիւն մըն է այս և շատ նեղութիւն կը պատճառէ : Թէև մեր վստահութիւնը ձեր տան վրայ կը մնայ անյողդողդ , սակայն հարկադրուած ենք ձեզ տեղեկացնել որ եթէ ապրանքները չփոխէք և անոնց տեղը լաւագոյնները չղրկէք՝ մենք պիտի դադարեցնենք մեր բոլոր թղթակցութիւնը : Խնդրելով անմիջական պատասխան մը և ապրանքները պահելով ձեր հրահանգին ենթակայ՝ կը մնանք ,

Ձերը յարգանքով ,

ՆՈՐ ԳՈՐԾԻ ՍԿՍՈՂ ՄԸ՝ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՏԱՆ ՄԸ

Յարգելի Տեարք ,

Այստեղ հաստատուած ըլլալով առևտուրով և յաջողութեան ամէն հեռանկար ունենալով կը փափաքիմ հաշիւ մը բանալ ձեր տան հետ : Այս ակնկալութեամբ ձեզի կը ղրկեմ ներփակուած ապսպրանքները , որպէսզի առանց ուէ յապաղումի առաքէք ձեր նուագագոյն գիներով՝ որուն համար կանխաւ կը յայտնեմ շնորհակալիքս : Քա-

Complaint—Inferior Goods.

Gentlemen:

We are reluctantly compelled to express our surprise and disappointment at finding the goods contained in your last shipment so unsatisfactory. Upon examination we discover them to be so inferior that we are disinclined to offer them to our customers. This causes annoyance, and, at this busy time, great inconvenience. Although our confidence in your house remains unshaken by this last transaction, we are, notwithstanding, under the necessity of notifying you, that unless you can replace the invoice with goods of a superior class, we must cease all correspondence for the future. Asking for an immediate reply, and, in the meantime, holding the goods subject to your order, we remain, gentlemen,

Respectfully yours,

From a Man Commencing Business, to a Wholesale House, with an Order for Goods.

Gentlemen:

I have established myself in business here with every prospect of success, and I desire to open an account with your house, hoping it will be to our mutual advantage. With this in view I inclose an order, to be filled with the least possible delay and on your lowest terms, for which I will thank you. As this is a first transaction, upon

նի որ այս առաջին փոխանցումն է՝ երբ ձեր հա-
ռուցոյցը ստանամ, կանխիկ վճարի համար պէտք
եղած զեղչով, ձեզի պիտի ղրկեմ ձեր քաղաքի
մէկ պանքին վրայ տեսօրին վճարելի փոխանա-
կագիր մը:

Իմ մասին կրնաք հարցնել այս քաղաքի մէջ
Տեարք է— և Ընկերութեան:

Ձերդ յարգանքով,

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԿԱՐՃ ՆԱՄԱԿՆԵՐ

Յարգելի Տիար,

Պատիւ ունիմ ձեզի ներկայացնելու նամակա-
բերս Պն. Յակոբ Գրիգորեան, Պօսթընէն, որուն
համար կը խնդրեմ ձեր բարեկամական ուշա-
դրութիւնը:

Ձերդ յարգանքով,

Բապրդ Չէմպրդ

Թոյլ տուէք ինձ ձեզի ներկայացնելու նամա-
կաբերս Պն. Տ. Լ. Սէնթ Լուիէն: Ձինքը տարի-
ներէ ի վեր խիստ մօտէն ճանչնալով ամէն կեր-
պով կրնամ վկայել իր մասին, և պիտի խնդրէի
յարգանքով որ իրեն ընծայէիք այն ամէն օժան-
դակութիւնը որ ձեզի համար կարելի է, եթէ
ինք մտնէ ձեզի հետ առևտրական յարաբերու-
թեան մէջ: Վստահ եմ որ իրեն կը նուիրէք ձեր
ամենէն նպաստաւոր պայմանները:

Ձերդ յարգանքով,

Լուիս Միլզ

ARMENO-AMERICAN LETTER WRITER 355

receipt of the invoice less the discount for cash, I shall remit a sight draft on a bank in your city for the amount.

Referring you to Messrs. E. & Co., of this place, I am, gentlemen,

Yours respectfully,

Short Introductions.

Dear Sir:

Allow me the pleasure of introducing the bearer, Mr. Hagor Krikorian, of Boston, Mass., for whom I ask your friendly offices.

Yours truly,

Robert Chambers.

Dear Sir:

Allow me the pleasure of introducing the bearer, Mr. Y. Loucinian, of St. Louis. Having known him intimately for many years, I can freely vouch for him in every way, and I would respectfully request that you offer him such attention as may be in your power to bestow, should he enter into business relations with you. I rely upon your quoting him your most favorable terms. With great respect, I am,

Yours truly,

Lewis Mills.

Յարգելի Տեարք,

Թոյլ տուէք ինձ ներկայացնել ձեզի նախակարերս Պն. Տ. Լ., այս քաղաքէն: Իրեն մատուցուած ուէ օժանդակութիւն մեծապէս պիտի գնահատուի:

Ձերդ անկեղծօրէն,

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԷ ՀԱՇՈՒԱՊԱՀ ՄԸ

Տեարք,

Պն. Լ. Ճ. Լօ, նամակաբերը, մեր գրասենեակին մէջ գործած է գրեթէ վեց տարի իբր հաշուապահ, եւ ամբողջ այդ ժամանակաշրջանին մէջ զինք գտած ենք խիստ աշալուրջ, գործնական, կատարելապէս լաւ տոմարակալ. սուանց վարանելու կրնանք նաև վկայել իր կարողութիւնը նամակագրութեան մէջ: Ընտիր ձեռագրի հետ՝ ճշգրիտ հաշուապահ է ան, ժրջան եւ կատարելապէս վստահելի ամէն տեսակէտով:

Վստահ ենք որ զինք պէտք եղածին չափ բարձրօրէն չենք կրնար յանձնարարել: Իրեն համար կը մաղթենք ամէն յաջողութիւն ձեր մօտ:

Ձերդ անկեղծօրէն,

ՈՒՐԻՇ ՄԸ

Յարգելի Տէր,

Պն. Ո. Պ. Թղթաբերս, կը փափաքի ունենալ ձեր հսկողութեան տակ պաշտօն մը: Երբ իմ քով կը գործէր իր շիտակ նկարագիրը եւ գործի կառչուածը ապահոված էր իմ բացարձակ վստահութիւնը: Ձինք պիտի գտնէք ժուժկալ, եւ վստահելի, եւ ամէն տեսակէտով կարող: Եթէ տեսակցութիւն մը ընծայէք իրեն շնորհապարտ պիտի թողուք զիս:

Ձերդ յարգանք,

Gentlemen:

I beg leave to introduce the bearer, Mr. Hovsep Leonian, of this city. Any attention shown him will be appreciated by me. Yours truly,

Recommending a Bookkeeper.

Gentlemen:

Mr. L. J. Lowe, the bearer, has been engaged in our office as bookkeeper for nearly six years, during which period we found him to be a very careful, practical and thorough bookkeeper, and we also proved his ability as a correspondent. He is an excellent penman, correct accountant, industrious, and thoroughly reliable in every way. We are confident that we cannot recommend him too highly, and wish him every success with you. Yours truly,

Another.

Dear Sir:

Mr. Wm. Belden, the bearer, is desirous of serving in one of the many positions under your control. His integrity and close application to business while in my employ secured my utmost confidence. You will find him temperate and trustworthy, and in every respect capable. Should you grant him an interview, you will confer a favor upon me.

Yours respectfully,

ՎԱՃԱՌԱՏԱՆ ՄԷՋ ԳՈՐԾՈՂԻ ՀԱՄԱՐ

Յարգելի Տէր,

Նամակարերս, Պր. Հ. Կ., կը փափաքի պաշտօն մը ունենալ ընկերութեան մէջ որուն դուք նախագահն էք: Երկար ատեն գործած է ինծի, ինք ժուժկալ է և վստահելի, և կը վայելէ իմ կատարեալ վստահութիւնս, ուստի հաճոյք կ'զգամ գինք յանձնարարելով ձեր նկատառութեան:

Յարգանքով ձերդ

ՊԱՏԱՆԻ ՄԸ ՈՐ ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒ՛

Յարգելի Տեարք,

Իմ նախնական կրթութիւնս աւարտած ըլլալով՝ կը փափաքիմ գործ մը ունենալ առևտրական լաւ տան մը մէջ, և յարգանքով կը դիմեմ ձեզի պաշտօնի մը համար՝ ձեր հաստատութեան մէջ:

Կը փափաքիմ ձեր վաճառատունը մտնել վաճառականութեան մէջ լիակատար հմտութիւն չահելու յոյսով:

Ինքս տասնըվեց տարեկան եմ, առողջ և ուժով: Եթէ խնդիրքս նպաստաւոր կերպով ընդունուի պիտի ջանամ արժանանալ այն ամէն վստահութեան որ կրնաք տածել իմ մասին:

Սորին յարգանքով,

A Clerk's Recommendation.

Dear Sir:

The bearer, Mr. Charles Hall, desires a position of some kind in the company of which you are president. He was in my employ for a number of years, is temperate, trustworthy, and has my entire confidence. I take pleasure in recommending him to your consideration.

With great respect, I remain

Yours truly,

From a Young Man Seeking Employment.

Gentlemen:

Having finished my school course, I am anxious to secure employment in some good house, and would respectfully make application for a position with your firm.

I am desirous of entering your establishment in the hope of gaining a thorough knowledge of the mercantile business.

I am sixteen years of age, healthy and robust. Should my request be favorably received, I shall conscientiously endeavor to merit whatever confidence you may repose in me.

Very respectfully yours,

ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ

Այսօրուան «Հէրլտ»ի մէջ տեսնելով ձեր ծանուցումը, կը խնդրեմ ակնարկած պաշտօնի համար իմ թիկնածութիւնս ընդունիլ:

22 տարեկան եմ, գործունեայ, առողջ և զօրաւոր, հինգ տարուան փորձառութիւն ունեցած եմ իմ նախկին գործատէրիս մօտ, Պնր. Ս. և Ընկ., Թիւ 56 Ուոթըր Սթրիթ, որուն կրնաք հարցնել իմ մասին, և կ'ուզեմ նաև աւելցնել որ, եթէ ձեր կողմէ ընդունուիմ պիտի ջանամ լիակատար գոհացում տալ:

Ձերդ յարգանքով,

ՀՕՐ ՄԸ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ԶԱԻԿԻՆ ՀԱՄԱՐ

Յարգելի Տեարք,

Որդիս՝ դպրոցը ձգած ըլլալով՝ կը փափաքի պաշտօն մը ձեռք բերել լաւ հաստատութեան մը մէջ, յուսալով ատով ինքզինքը լիովին դաստիարակել առևտուրի մէջ: Ուստի այս դիմումը կ'ընեմ յուսալով որ գործ մը գտնուի իրեն համար ձեր տան մէջ:

Ինքը տասնըվեց տարեկան է, գործունեայ, ատակ դպրոցական, և, նկատի առնելով իր յաջողութիւնը դաստիարակութեան բազմաթիւ ճիւղերու մէջ, վստահ եմ որ, եթէ կատարէք այս խնդիրքը, ձեզի լիակատար գոհացում պիտի տայ:

Ձերդ յարգանքով

Answering an Advertisement.

Gentlemen:

Observing your advertisement in today's Herald, I beg to offer myself as a candidate for the position referred to.

I am twenty-two years of age, active, healthy, and robust; I have had five years' experience with my late employers, Messrs. Striver & Co., No. 56 Water St., to whom I refer; and I would say, that if engaged by you, I will endeavor to give entire satisfaction.

Yours very respectfully,

A Father's Application for his Son.

Gentlemen:

My son has left school and is desirous of procuring a position in some good house, hoping thereby to become thoroughly trained in the mercantile profession. I therefore make this application in the hope that some position may be found for him in your firm.

He is sixteen years old, active, healthy, and a napt scholar. In view of his earnest and successful work while at school, I am confident, should you comply with this request, that he will give entire satisfaction.

Very respectfully yours,

ԷԲՍՓՐԷՍԻ ԿՈՐՈՒՍՍՈՒ ԱԳՐԱՆԻԻ ՄԱՍԻՆ

Գարսններ,

Թոյլ աուէք տեղեկացնել ձեզ որ իմ ամսոյս աստնին ապագրած երկու ծրարներս չեն հասած, որ ձեր 15 թուականով իմացուցած էիք էմէրիքըն էքսփրէս Գըմբընիին յանձնած ըլլաւ:

Ձեր անմիջական ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս խնդիրին վրայ, քանի որ այն մարդիկը որոնց համար ապագրած էի՝ անհամբեր կ'ապաստեն անոնց հասնելուն:

Անհրատեշտ է որ զանոնք ճիշտ ներկայ շըբջանին մէջ ստանամ մտադրուած նպատակին համար: Հակառակ պարագային ապագրողները ոչ միայն իրոս յուսախար պիտի ըլլան, այլ նաև ապրանքը պիտի ձայ իմ ձեռքս: Կը խնդրեմ անմիջապէս հարցուփորձ ընել՝ անոնց մասին:

Ձերդ

ԷԲՍՓՐԷՍ ԸՆԿ. ՏԵՂԵԿԱՃՆԵԼ ԿՈՐՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ

Ամէրիքըն էքսփրէս Ընկ. ,

Երկու արժէքաւոր ծրարներ, յանձնուած ընկերութեանդ ամսոյս 15-ին, փոխադրելու համար Պն. Ա. Բ. ին, Սիբաքիւզ, հասած չեն իրենց հասցէին:

Եթէ անոնք չի հասնին վազը իրիկուն, պիտի պրկենք իւրաքանչիւր ծրարի միւնոյն պարունակութիւնը, և ձեր ընկերո: Թիւնը պատասխանատու պիտի բանենք ապրանքի արժէքին և ամէն ֆլուսին որ յապազուսմի արդիւնքով տեղի կ'ուսնենայ:

Goods Lost by Express.

Gentlemen:

I beg to inform you of the non-arrival of the two packages ordered by me on August 10, and which by yours of August 15 I notice were forwarded by the American Express on that day.

I must ask your immediate attention to this matter, as the customers for whom they are required are anxiously awaiting their arrival.

It is indispensable that I should receive them in season for the purpose for which they are intended. Otherwise my customers will not only be annoyingly disappointed, but the goods will be left on my hands. Pray institute inquiries about them at once.

Yours truly,

Notifying an Express Company of Loss.

The American Express Co.:

Gentlemen:

Two packages of value, delivered to your company on August 15 for transmission to Mr. A. B. Messer, of Syracuse, have not arrived at their destination.

Should the packages not reach him by tomorrow night, we shall forward duplicate contents of each package, and hold your company responsible for the cost of the articles and all damage resulting from the delay.

Պատշաճ է նաև տեղեկացնել ձեզ որ ապրանքը պէտք է յանձնուի վաղը գիշերէն առաջ, եթէ ոչ անոնց հասնիլը ուէ օգուտ չպիտի ունենայ:

Յուսալով որ ձեր հետապնդումով անոնց ուր
ըլլալը կը գտնուի, կը մնանք,
Ձերդ յարգանքով,

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՂ ՆԱՄԱԿ

Պարոններ,

Պիստ կը ցաւինք որ ստիպուած ենք ձեզ տեղեկացնելու թէ անակընկալ դէպքերու պատճառաւ պիտի հարկադրուինք մեր վճարումները առկախել:

Մեր տետրակներու պարտի պահանջը կշռելով մինչև ամսոյս մէկը այնքան վնաս գտանք— իբրև արդիւնք բարդ պարագաներու— որ որոշեցինք մեր գործերը մեր գլխաւոր պարտատէրերուն քննութեանը ենթարկել, և որոնք մանրակրկիտ խուզարկութենէ ետք որոշեցին յանձնախումբ մը կարգել մեր ինչքի վաճառման և արդիւնքի համեմատական բաժանման համար՝ մեր պարտատէրերու մէջ:

Յուսալով որ դուք չպիտի առարկէք այս կարգադրութեան, կը խնդրենք անմիջապէս ղրկել ձեր մեր վրայ ունեցած հաշիւները Պնր. Ս. Ո. Պարէթին և Գ. Փ. Օլիվըրին, որպէսզի կարելի ըլլայ անոնք բաղդատել մեր տետրակներուն հետ, ճշգրիտ հաշուեկշիռը ստուգելու համար:

Ձերդ յարգանքով,

It is proper that we also apprise you of the fact that it is necessary that the goods should be delivered before to-morrow night, for if they are not, their discovery will be of no use.

Hoping your inquiries may lead to a discovery of their whereabouts, we are,

Yours respectfully,

An Announcement of Failure.

Gentlemen:

We are sorry at being obliged to inform you that, owing to unforeseen events, we shall be compelled to suspend payments.

Upon balancing our books to September 1, we discovered so considerable a deficiency, resulting from a combination of circumstances, that we concluded to submit our affairs to the inspection of our principal creditors, who have, after a full investigation, decided to appoint trustees, for the sale of our property and distribution of the proceeds, pro rata, among our creditors.

Hoping you will not object to this arrangement, we will ask you to send immediately to Messrs. S. W. Barrett and C. P. Oliver the account you hold against us, so that it may be compared with our books, for the purpose of ascertaining the correct balance.

Yours respectfully,

ԿԸ ԽՆԴՐԷ ՊԱՐՏԱՆՕԹԻ ՄԸ ԺԱՄԱՆԱԿԸ
ՅԵՏԱԶԳԵԼ

Յարգելի Տէր,

Կը վախնամ անկարող պիտի ըլլամ ՅԼՍ. 10-ին վերջացող \$530.87ի պարտամուրհակս ազատել, ուստի կը խնդրեմ որ երեսուն օրուայ վերանորոգութեան շնորհքն ընէիք ինձի, այդ ժամանակը լրանալուն պատրաստ պիտի ըլլամ զայն ջնջելու:

Ձերդ յարգանքով,

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Պարոններ,

Կը փափաքինք ձեզ տեղեկացնել որ ՍանՖրանչիսքօ Պեր. Ր. և Ընկ. և մեր միջև գոյութիւն ունեցող ընկերակցութիւնը պայմանաժամի աւարտումով լուծուած և երկուստէք յայտնուած բարձանքի համաձայն չէ նորոգուած:

Ուստի մեր նախկին ընկերներու կողմէ ՍանՖրանսիսքօ հաստատուած տան մէջ շահ չունինք:

Նոյն ատեն օգտուելով առիթէն կը խնդրենք շարունակել ձեր սովորական օժանդակութիւնը:

Ձերդ անկեղծօրէն

Requesting Extension of Time on a Note.

Dear Sir:

I fear I shall be unable to meet my note for \$540.87, due July 10, and in consequence must ask you to grant me the favor of a renewal for thirty days, at the end of which time I shall be ready to cancel it.

Respectfully yours,

Dissolution of Partnership.

Gentlemen:

We beg to apprise you that the copartnership hitherto existing between Messrs. Read & Co., of San Francisco, and ourselves expired by limitation on March 1, and in accordance with the desire of all parties the same was not renewed.

We shall consequently have no interest in the new firm formed by our late partners in San Francisco.

At the same time we avail ourselves of this occasion to solicit a continuance of your usual patronage.

Yours truly,

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Յարգելի Պարոններ,

Այստեղ փոխադրուած ըլլալով Շիքակոյէն, ուր երկար տարիներ հաստատուած էի իբրև ընդհանուր գործակալ, կը խնդրեմ ձեր Թոյլտուութիւնը իմ ծառայութիւններս ձեզի մատուցանելու նոյն հանգամանքով:

Ուէ գործ որ իմ խնամքիս յանձնէք ուրախ պիտի ըլլամ կատարելու, ապահովելով ձեզ որ՝ Արեւմուտքի մէջ իմ ունեցած փորձառութեանս հետ մէկտեղ՝ ոչ մէկ ջանք պիտի խնայեմ ձեր լաւ կարծիքը ապահովելու համար:

Ձերդ յարգանքով,

ԳՈՐԾԻ ՍԿՍՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Յարգելի Պարոններ,

Առ ձեռն ունենալով 1000 տալէր կը փափաքիմ առևտուրի մէջ մտնել, իբրև փոքրաքանակ նպարավաճառ այս քաղաքի մէջ, և այդ նպատակի համար կը խնդրեմ ներփակուած ապսպրանքի ինչքերը դրկել նուազագոյն գիներով, եւ սովորական պայմանաժամով որ կը տրուի իմ ճիւղիս մէջ: Թոյլտրուած է ինձ ձեզի տալ հետևեալ անունները ի վկայութիւն իմ նկարագրի.

Պնր. Ս. Գ. եւ Ընկ., 15 Բլիթ Սթրիթ, եւ իմ նախկին գործատէրերս Պնր. Ճ. եւ Գ., 21 Ուօթըր Սթրիթ, երկուքն ալ ձեր քաղաքէն:

Ձերդ յարգանքով,

Agency.

Gentlemen:

Having removed to this city from Chicago, where I was established for many years as a general agent, I beg leave to offer you my services in that capacity.

Any business which you may intrust to my care I shall be happy to transact, assuring you that in combination with my experience in all matters pertaining to the great West, no care or attention shall be wanting on my part to secure your good opinion.

Respectfully yours,

B_____ R_____.

From a Young Man Starting in Business.

Gentlemen:

Having one thousand dollars at hand I am desirous of entering into business, as a retail grocer in this city, and for that purpose, I ask you to forward to me the inclosed order for goods needed, at the lowest figures, and upon the usual time accredited to those in my line. I am permitted to refer to Messrs. Smith, Caldwell & Co., No. — Cliff St., and to my former employers, Messrs. Jones & Cook, No. — Water St., both of your city.

Very respectfully,

ՎԱՃԱՌՈՐԴԻ ՄԸ ՀԱՄԱՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՄԸ
ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ

Յարգելի Պարոններ ,

Ձեր ծանուցումը այս առաւօտեայ «Հէրըլտ»-ի մէջ տեսած ըլլալով, որով վաճառորդի մը ծառայութիւնը կուզէք ունենալ, Թոյլտուութիւնը կը խնդրեմ ինքզինքս իբրև Թիկնածու ներկայացնելու այդ պաշտօնի համար, խիստ վստահ ըլլալով որ կարող եմ զայն կատարել և ձեզ գոհ Թողուլ :

Փափուկ առողջութեան պատճառաւ ստիպուեցայ Թողուլ ընդհանուր գործակալներ, Պէլ և Ընկ. տունը, Ֆրօնթ Փողոցի վրայ, ուր գործած եմ երկար տարիներ, որոնց կրնաք դիմել իմ մասին հարցի փորձի համար : Այդ ժամանակէն ասդին տեղէ տեղ կը ճամբորդեմ նորոգելով մեր վաճառականներու մէջ հին ծանօթութիւնները, և յանձնարարականներ ստանալով բաղմամբիւ նոր տուներու, որոնք վերջերս սկսած են առևտուրի : Ասկէ կրնաք ըմբռնել իմ օգտակարութիւնս զիս վարձողներու շահուն համար :

Սպասելով ձեր պատասխանին, կը մնամ,

Ձերդ յարգանքով ,

ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ ԱՌԱՋԱՐԿՈՒԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ
ՄԱՍԻՆ

Յարգելի Պարոններ ,

Ի պատասխան ձեր այս առաւօտեան նամակին՝ Թոյլ տուէք ինձ յայտնել իմ շնորհակալիքս ձեր աղնուութեան համար : Թոշակը կատարելապէս

ARMENO-AMERICAN LETTER WRITER 371

Reply to an Advertisement for a Salesman.

New York, March 10, —.

Messrs. Shotwell & Co.,
No. — Broad Street.

Gentlemen:

Having noticed your advertisement in this morning's Herald, calling for the services of a salesman, I beg to offer myself as a candidate for the position, feeling confident that I am in every way qualified to fill it to your satisfaction.

Failing health determined me to withdraw from the house of Messrs. Bell & Co., of Front Street, general agents, in whose employ I had been for some years, and to whom I may refer. Since that time I have been journeying from place to place renewing old acquaintances among our merchants, and obtaining introductions to many new firms lately commencing business. From this you will perceive my assistance will be of benefit to my employers.

Waiting to hear from you, I am

Respectfully yours,

Henry Freeman,

From a Clerk, Replying to a Communication.

Gentlemen:

In reply to your letter of this morning I must express my thanks for your kindness. The salary is perfectly satisfactory, and I assure you

գոհացուցիչ է, և կը վստահացնեմ ձեզ որ ոչ մէկ ջանք պիտի խնայեմ իմ կողմէ արդարացրնելու համար ձեր իմ վրայ դրած վստահութիւնը: Յուսալով որ գործի սկսելու ժամանակը կը տեղեկացնէք շուտով, կը մնամ,

Ձերդ յարգանքով,

ՀԱՐՑՈՒՄ ԿՈՐՍՈՒԱԾ ՍՆՏՈՒԿԻ ՄԸ ՄԱՍԻՆ

Ուղեգրոյքի վերակացուին,
Նիւ Եօրք Քաղաք.

Յարգելի Տիար,

Հոս եկած եմ Պօսթընէն՝ որ թողուցի ամսոյս 16ին ժամը 12 Յ. Կ. Թրէյնով եւ երէկ առաւօտ ժամը 7ին հասայ այս քաղաքը: Թրէյնի մէջ սնտուկի չէքս, թիւ 336, էքսփրէս աճէնթին տուի իր ստորագրութիւնը առնելով: Չէքը ինծի վերադարձուցած է՝ ըսելով թէ սնտուկս տակաւին ձեռք չէ անցեր:

Կաշիէ մեծկակ սնտուկ մըն է երկու կողմին վրայ իմ սկզբնատառերովս, P. W. Կը բարեհաճի՞ք առանց ժամանակ կորսնցնելու նայիլ այս խնդրոյս և տեղեկացնել զիս անմիապէս որ ստուգուի:

Ձերդ յարգանքով,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 373
that no pains will be spared upon my part to justify the confidence you place in me. In the hope of an early intimation as to the date of my employment, I remain

Yours respectfully,

Henry Freeman.

An Inquiry for Lost Baggage.

Windsor Hotel, New York, April 18, —.

The Baggage Master, N. Y. Central R. R.

Dear Sir:

I reached this city from Boston, which I left on the 12 P. M. train, 16th inst., arriving here yesterday morning at 7 o'clock. While on the train I handed my baggage check, No. 336, to the Express Agent, taking his receipt for it. He has returned it to me, stating that my baggage has not yet come to hand.

It is a large-sized sole leather trunk, with my initials on each end, P. W. Will you have the goodness to look it up without delay, and notify me as soon as it is heard from.

Yours truly,

Philip Warnock.

ԺԱՄԱՆԱԿ ԽՆԴՐԵԼ ՏԱՆ ՎԱՐՁՔԻ ՎՃԱՐՄԱՆ
ՀԱՄԱՐ

Յարգելի Պարոն ,

Եօթը տարիէ աւելի է որ ձեր վարձակալն եմ և միշտ վարձքը ժամանակին վճարած : բայց մեր գործարանը հրոյ ճարակ ըլլալով և ներկայիս գործ գտնելանկարելի՝ ստիպուած եմ ձեր ներողամտութիւնը խնդրել կարճ ժամանակի մը համար : Վստահ եմ որ քիչ ատենէն նախկին գործիս նման գործ մը ձեռք պիտի ձգեմ և շուտով ձեզի ունեցած պարտքս պիտի կրնամ գոցել : Ճաւելով այսպիսի յապաղում մը խնդրելու հարկադրութեան համար՝ կը մնամ ,

Խորին յարգանքով ,

. ԳՈՐԾ ՓՆՏՌՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ

Յարգելի Տիար — ,

Անցեալամառ երբ հոս էիք ձեր ինծի ցոյց տուած ազնիւ վերաբերումէն քաջալերուած կ'զգամ ձեր ազդեցութիւնը խնդրելու՝ ձեր քաղաքի մէկ հաստատութեան մէջ ինծի պաշտօն մը դտնելու համար :

Վաճառատունը՝ ուր կը գործէի՝ սնանկանալով անդործութեան մատնուեցայ , և ներկայիս գործ գտնելու բոլոր յոյսերս կորսնցուցած ըլլալով կը մղուիմ այս խնդիրքս ընելու ձեզի :

Եթէ գիտէք և կամ եթէ լսէք իմ ընդունակութեանս յարմար ուէ պաշտօնի մասին և իմաց տաք ինծի երախտապարտ պիտի թողուք զիս :

Ձերդ յարգանքով ,

Excusing Delay in Paying Rent.

Dear Sir:

I have been your tenant for over seven years and have always been prompt in paying my rent when due, but owing to the destruction of our factory by fire, and the impossibility of obtaining employment at present, I am obliged to ask your indulgence for a short period. I am confident of soon securing another situation similar to the one I held in the factory, and will promptly cancel my indebtedness to you. Regretting the necessity that forces me to ask for delay, I am

Very respectfully yours,

From a Young Man Desiring Employment.

Dear Sir:

I am prompted by your kindness toward me while here last summer, to ask your influence in procuring me a situation in some establishment in your city.

The failure of the house with which I was connected having thrown me out of employment, and my disappointment at having been unable to obtain a position as yet, leads me to make this request.

Should you know or hear of anything that you consider adapted to my capacity, you will confer a favor by apprising me of it.

Respectfully yours,

ՀԱՐՑՈՒՄ ԳԻՒՂԱԿԱՆ ՏԱՆ ՄԸ ՄԱՍԻՆ

Յարգելի Տիար ,

Լսելով որ մտադիր էք ձեր գիւղական բնակարանը ծախելու և ես փափաք ունենալով զայն գնելու՝ կը դիմեմ ձեզի վաճառման պայմանները հասկնալու համար :

Հաճեցէք հաղորդել ինձի անոր ճշգրիտ տեղը , կալուածին քանի էջերէ բաղկացած ըլլալը , չրջակայքին նկարագրութիւնը , նուազագոյն գինը որով գնումը կարելի է , նաեւ իմացնել թէ ո՞ր օրը և որ ժամը ձեզի ամենէն յարմարն է զայն աչքէ անցնելու համար :

Ձերդ յարգանքով ,

Ս . Գ . ԲԱՒԻՆՁ :

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յարգելի Տիար ,

Ստացած ըլլալով ձեր ամսոյս մէկ թուակիրը իմ կալուածքս գնելու մասին՝ կը փութամ պատասխանել :

Կալուածը Լօուէլին մօտ է , կայարանէն քսան վայրկեան հեռու քալելով , կը բաղկանայ հինգ էջերը ընտիր հերկելի հողէ . տան մեծութիւնն է յիսուն առ քառասուն ոտք , տանիքին ձևը՝ Մանսարեան , շինուած օրական աշխատավարձով՝ տիրող բնակութեանը համար , և կը մնայ ամէն կերպով կատարեալ . ունի քսան սենեակ՝ ներկայ ամէն կատարելագործութիւններով , ախոռներ և ուրիշ շինուածներ , պտղատու ընտիր ծառեր առատութեամբ , ևն : Ամբողջ սեփականութիւնը յօժար

ARMENO-AMERICAN LETTER WRITER 377

Inquiry as to Country Seat.

Dear Sir:

Hearing of your intention to dispose of your country residence, and with a view to purchase, I address you in reference to the terms of sale.

May I ask you to communicate to me the precise location, number of acres the property consists of, with a description of the premises, stating the lowest figure at which a purchase could be made; also advising me what day and hour would be most convenient for examination.

Respectfully yours,

C. B. Rollins.

Answer.

Mr. C. B. Rollins,
Lowell, Mass.

Lowell, March 4, —.

Dear Sir:

In answer to your letter of March 1 regarding the purchase of my place, I reply as follows:

The grounds are near Lowell, within twenty minutes walk of the depot, and consist of five acres of excellent farming land; the house is fifty by forty feet, built by day's work for the owner's residence, standing complete in every way and containing above twenty rooms, with all modern improvements; there are barns and outbuildings, selected fruit trees in abundance, etc. The entire

եմ ծախելու տասներկու հազար տօլարի, անդեղ չ
և կանխիկ:

Ուէ օր, բացի Երկուշաբթիէ, յարմար է ինծի
ձեր այցելութիւնը ընդունելու ձեր կատարելիք
քննութեան համար. այդ առթիւ ուրախ պիտի
ըլլամ ձեզի ընկերակցելու: Կը մնամ՝

Ձերդ ճշմարտօրէն,

ՏԺԳՈՂՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ԳԻՆԻ ԵՒ ՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ

Յարգելի Տեարք,

Ապրիլ 19ին մեզի ղրկուած հաշուեցուցակի
ապրանքները այսօր ստացանք: Կը ցաւինք ըսել
որ տպածոները մեր ակնկալութեան երբեք չեն
համապատասխաներ, և նմոյշներէն ոմանք պակա-
սաւոր են թէ՛ գոյնով եւ թէ՛ գծագրութեամբ,
և անոնց ամենուն ալ որակը ստորին է: Այս
տեսակ ապրաքներ կը ծախուին մեր ամբողջ շը-
ջակայքը միևնոյն գնով որ դուք մեզի կը հաշ-
ուէք, այնպէս որ նոյն իսկ ճամբու ծախքը հանելու
չափ բան մը չպիտի կրնանք շահիլ անոնցմէ:

Մենք այն համոզումը ունինք թէ այս տպա-
ծոները կապելու ատեն սխալ մը եղած է, որ պիտի
գտնէք քննութիւն մը կատարելով:

Հաճեցէք յաջորդ փօսթով հրահանգել մեզ
այս մասին, որովհետեւ կ'ուզենք ապրանքը պահել
մինչև որ ձեռնէ լսենք:

Ձերդ յարգանքով,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 379

property I am willing to dispose of for twelve thousand dollars, net cash.

Any day, except Monday, will suit me to have you examine the premises, over which I shall be happy to accompany you. I am

Yours truly,

H. B. Walgrave.

Complaining of the Price and Quality of Goods.

Gentlemen:

The goods invoiced to us April 19 arrived today. We are sorry to say that the prints are not at all up to our expectations. Some of the patterns are defective both in color and design, and the quality of all of them is inferior. This same grade of goods is being offered all around us at the same price that you charge us for them, so that we shall be unable to make enough on them even to pay freight.

We believe that you will find on investigation that there has been some mistake in packing these prints.

Kindly advise us in regard to this matter by return mail, as we prefer to hold the goods until we receive further advices from you.

Yours truly,

Arthurs & Co.

ԳԱՆԳԱՏ ԲԱՐՁՐ ԳԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յարգելի Պարոն,

Ստացուած է ձեր Մայիս 2 թուակիրը եւ ներփակ բեռնագիրը այն ապրանքներու՝ որ Ապրիլ 18ին ղրկուած են Մըրչընց Տիսիէչով: Գիները բաղդատելով Յունվար 18ի հաշուեցուցակի մէջ նշանակուած գիններու հետ կը տեսնենք որ 1/2 սէնթ յաւելում մը կայ մետաքսեղէններու և բրդեղէններու վրայ, և որովհետև մեր ապսպրանքը նախկին տեսակի և որակի համար տրուած էր, կ'ենթադրենք որ սխալ մը եղած է մեր հաշուեցոյցը պատրաստելու ատեն:

Մեր առևտուրը գլխաւորապէս օտարականներու և անոնց ընտանիքներու հետ է, որոնք քաղաք կուգան իրենց գնումները ընելու. անոնք գնողներու այնպիսի դասակարգ մը կը ներկայացնեն՝ որոնց աչքերը լայնօրէն բաց են իրենց շահերուն համար: Գիներու թեթև յաւելում մը պատճառ պիտի դառնայ կորսնցնելու այդպիսի յաճախորդներու մէկ մասը՝ եթէ ոչ ամբողջը. և քանի որ ստիպուած ենք մրցիլ ուրիշ խանութպաններու հետ այս քաղաքին մէջ, պէտք է որ ապրանքներուն գիները նուազագոյն չափով նշանակենք:

Քանի որ ապրանքները չպիտի հասնին մինչև ատեն մը, կը յուսանք կը շտկէք ոեւէ սխալ որ գտնէք մեր հաշուեցոյցին մէջ, որպէսզի կարող ըլլանք զանոնք ծախել միեւնոյն գիներով որով հիմա կը ծախենք:

Ձերդ անկեղծօրէն,

Complaining of High Prices.

Dear Sir:

Your letter of May 2 is received, inclosing invoice and bill of lading of goods shipped to us by the Merchants' Dispatch on April 28. On comparing the prices with those charged us in invoice of Jan. 18, we note an advance of $\frac{1}{2}$ cent on all the silks and woolens, and, as our orders called for the same patterns and qualities as before, we infer that there has been an error in making out our invoice.

Our trade is composed principally of foreigners and their families who come to town to make their purchases, and they represent a class of buyers who are always wide awake to their own interests. A trifling rise in prices is liable to cause the loss of a portion if not all of their patronage; and, as we have to compete with other firms in this town, we are compelled to mark our goods down to the lowest figures practicable.

As the goods will not arrive for some time we hope that you will have rectified any error you find in our invoice, so that we can offer the goods referred to at the same prices at which we are now selling them.

Very truly yours,

ԳԱՆԳԱՏ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ Տեարք ,

Կը ցաւինք որ հարկադրուած ենք մեր տժգոհութիւնը յայտնել ձեր տունէն ստացուած ապրանքներու վերջին հաշուեցուցակի մասին : Առարկաներէն շատերը մեր ապսպրած օրինակներէն և պահանջուած որակէն շատ վար են :

Բէտինէ ապրանքները բոլորովին անպէտ են , հնութենէն փտտած ըլլալով . այդպիսի ապրանքները առևտուրի հանել մեզ անդարմանելիօրէն պիտի փնասէր :

Ապրանքները կը պահենք ենթակայ ձեր հրահանգին և շնորհակալ պիտի ըլլանք եթէ խնդրին արագ ուշադրութիւն ընծայէք :

Ձերդ անկեղծօրէն ,

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՄԵՐԺՈՒՄ

Յարգելի Տէր ,

Փետր . 18ին ապսպրած ապրանքներուս հասնելու լուրը ճիշտ հիմա ստացայ , բայց ժամանակին հասած չըլլալով զանոնք ծախելու պատեհութենէն զրկուեցայ , որովհետև յաճախորդներս նոյն նիւթերը գնեցին մրցակից տունէ մը : Ուստի ոչ միայն ապրանքներու վաճառքէն զրկուեցայ այլ նաև հաւանօրէն կարգ մը յաճախորդներէն :

Քանի սր այս եղանակին մէջ չեմ կրնար ծախել զանոնք և մինչև գալիք ձմեռ ալ չեմ կրնար պահել՝ ստիպուած եմ մերժել :

Ձերդ անկեղծօրէն ,

Complaint about the Quality of Goods.

Gentlemen:

We regret the necessity which compels us to complain of the last invoice of goods received from your house. Many of the articles are far below standard quality and samples from which we ordered.

The rubber goods are totally useless, having deteriorated from age, and to offer such goods to our trade would do us irreparable injury.

We hold the goods subject to your order and would thank you to give the matter prompt attention.

Yours truly,

Declining to Receive Goods.

Dear Sir:

I have just received notice of the arrival of the goods I ordered Feb. 18, but their failure to arrive in proper time has deprived me of the opportunity of selling them, as my customers have all been supplied with such goods by a rival concern; consequently, I have not only lost the sale of the goods, but probably some of my customers as well.

As I have no use for the goods this season, and cannot consistently hold them over until next winter, I am compelled to decline to receive them.

Very truly yours,

ԳԱՆԳԱՏ ԱՌԱՔԺՄԱՆ ՍԽԱԼԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Տեարք ,

Ձեր Մայիս մէկ նամակին պատասխանելով կ'ուզենք ձեզի իմացնել մեր զարմանքը որ ունեցանք երբ Ապրիլ 24ին մեր ապսպրած մուրճերու սնտուկը Ֆրէյթով ղրկուած գտանք, մինչդեռ էքսփրէսով ղրկել յանձնարարած էինք :

Ապրանքները, ինչպէս գիտէք, մեր ճիւղէն դուրս են. մենք ապսպրած էինք զանոնք դիւրութիւն տալու համար յաճախորդի մը՝ որուն ապրանքները այսօր շոգենաւով կը ղրկենք :

Եթէ ուզուած եղանակով ղրկէիք՝ անոնք հոս պիտի ըլլային ամենաուշը երէկ, որով բաւական ժամանակ կ'ունենայինք միւս ապրանքներուն հետ ղրկելու : Քանի որ չեն եկած այլևս զանոնք չենք կրնար գործածել, ուստի և չենք կրնար ընդունիլ :

Ձերդ անկեղծօրէն ,

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՍՏԱՑԱԾ ԸԼԼԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Յարգելի Պարոններ ,

Ապրանքները Ապրիլ 18ի հաշուեցոյցին համաձայն երէկ հասան լաւ վիճակի մէջ եւ ամէն կերպով գոհացուցիչ են : Ծնորհակալ ենք ապսպրանքները ընտրելու մէջ ձեր ցոյց տուած բարի դատողութեան համար, ինչ որ կ'ապացուցանէ թէ մեր հրապարակի համար ամենէն յարմար ձևերու և նմոյշներու մասին պայծառ հասկցողութիւն մը ունիք :

A Merchant Complaining of a Mistake in Shipment.

Gentlemen:

In reply to your letter of May 1, I would say that we are surprised to find that the case of hammers of your manufacture which we ordered on April 24 to be forwarded by express, has been shipped by freight.

These goods are out of our line, as you may be aware, and were ordered by us only to accommodate a customer whose goods we are shipping by steamer today.

They would have been here by yesterday at latest, in ample time to go with the other goods, if you had forwarded them as ordered. As they have not come in time, we shall have no use for them, and therefore cannot accept them.

Yours truly,

Acknowledging Receipt of Goods.

Gentlemen:

The goods as per invoice of April 18 arrived yesterday in excellent condition, and they are satisfactory in every respect. We thank you for the good judgment you used in selecting the goods, which indicate a very clear understanding of the styles and patterns suitable for our market.

Յայտնելով մեր շնորհակալութիւնը ձեր ըրածին համար՝ վստահ ենք որ ապագային ալ պիտի շարունակէք գործադրելու միևնոյն խնամքը թէ՛ ընտրութեան և թէ՛ ծրարելու մէջ:

Ձերդ յարգանքով,

ԳԻՐՔԵՐՈՒ ԱՊՍՊՐԱՆՔ

168 N. St., Ֆրէզնօ, Բալ.

Մայիս 10, 1914:

Պն. Ի. Ա. Երան,

795 Ուաշինկթըն Սթ., Պոսթըն, Մէս.

Յարգելի Տիար,

Կը հաճի՞ք ինծի էքսփրէսով զրկել վերջերս ձեր հրատարակած նամականին հետեեալ դիրքերու հետ՝ որոնց արժէքը կը զրկեմ ձեր դրացուցակի գիներուն համաձայն.

Ջրուցատրութիւն	\$1.50
Գրպանի Բառարան Անգ. Հայ. և Հայ. Անգլ.	1.00
Երգարան	1.50
Գործնական Առողջապահութիւն	75
Սեռային	1.00
Պատմ. Հայ Գրականութեան	1.00
Վերը յիշուած նամականին	1.00
Կոմս Մօնթէ Բրիսթօ	3.00
	<hr/>
Գումարը	\$10.75
10 % զեղջ՝ ըստ ձեր կանոնի	1.08
	<hr/>
Ներփակ կը գտնէք	\$9.67

Ձերդ յարգանքով,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 387

We thank you for what you have done, and feel confident that you will continue in the future to exercise the same care and discrimination in the way of selection and packing.

Yours truly,

Order for Some Books.

Fresno, Cal., May 10, 1914.

Mr. E. A. Yeran,
795 Washington St.,
Boston, Mass.

Dear Sir:

Will you please send me by express your recently published "The Art of Letter-writing," with the following list of books, which I send with their price as given in your catalogue.

Arm. Eng. Conversation	\$1.50
Eng. Arm. & Arm. Eng. Dictionary	1.00
Song Book	1.50
Practical Hygiene	.75
Sexual Hygiene	1.00
History of the Armenian Literature	1.00
Letter Writer	1.00
Count of Monte Christo	3.00
Total amount	<hr/> \$10.75
10 % discount according to your rule	\$1.08
The amount of the enclosed check	<hr/> \$9.67

Yours truly,

**ԳԻՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑՈՒՄ
Պարոններ,**

Կը հաճի՞ք յաջորդ փօսթով ինծի ղրկել ձեր գիներու ցանկը լուացուելիք ապրանքներու համար: Կը խնդրեմ որ նուազագոյն գիները եւ լաւագոյն պայմանները տաք: Իմ մասին կրնաք տեղեկանալ Տեարք Գրօլի և Ընկ.էն և Հօմզ եւ Հուէյլ ինկէ, երկուքն ալ ձեր քաղաքէն:

Ձերդ յարգանքով,

ՎՃԱՐՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՓՈՆԳԻՐ ՄԸ ԿԸ ՂՐԿԷ

Ձեր ամսոյս 10ի նամակին իպատասխան կը ներփակեմ փոխգիրս \$750ի, համագումարը ձեր Յունվար 3ի հաշուեցուցակին: Հաճեցէք անցնել զայն իմ հաշիւիս և շնորհապարտ թողուլ

Ձերդ անկեղծօրէն,

**ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՑԱՆԿ ՄԸ ՂՐԿԵԼՈՎ ԳԻՆԵՐԸ
ԿԸ ՀԱՐՑՆԷ**

Պարոններ,

Հաճեցէք ձեր նուազագոյն գիները նշանակել ներփակ ցանկին մէջ տրուած առարկաներուն համար, եւ աւելցնել այդ ցանկին վրայ ուէ ուրիշ նիւթեր որ դուք պատրաստ ունիք:

Կը խնդրուի նաեւ իմացնել ինծի թէ ապապրանքները ո՛րչափ ժամանակէն կը կատարուին և ինչ պայմաններով:

Ձերդ անկեղծօրէն,

Asking Prices and Terms.

Gentlemen:

Will you kindly furnish me by return mail with your list of prices for wash goods. Please quote lowest rates and best terms. You may refer to Messrs. Crowley & Co. and Messrs. Holmes & Wheeling, both of your city.

Very truly yours,

William Morse.

Remitting a Check in Payment.

Gentlemen:

Referring to your letter of Jan. 10, I herewith inclose my check for \$750, the amount of your bill of Jan. 3. Please place the same to my credit, and oblige

Yours truly,

Charles P. Brower.

Submitting a List for Prices.

Gentlemen:

Will you please favor us with your lowest quotations for articles shown on the accompanying list, and add to the list any other articles, not appearing thereon, which you keep in stock.

Also, kindly inform us as to the time required for filling orders, and terms.

Yours truly,

ՔԱՇԱԾ ՓՈՒԱՆԱԿԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԼՈՒՐ ՏԱԼ**Յարգելի Տեարք ,**

Այսօր ձեր վրայ քաշեցինք իտես վճարելի եօթն հարիւր տօլարի (\$700.00) փոխանակագիր մը ձ. Փ. Գ. ի հրամանին :

Ձերդ ճշմարտօրէն ,

ԱՌՉԱՇԻՒ ՎՃԱՐ ՄԸ ԿԸ ՆԵՐՓԱԿԷ**Պարոններ ,**

Ի պատասխան ձեր Օգոստոս 8 թուակիրին՝ որով փոխգիր մը կ'ուզէիք ձեր հաշիւը փակելու համար՝ պիտի ըսէի որ մեր հաւաքումները անսովոր կերպով դանդաղ են ներկայիս :

Կը ներփակենք մեր վեց հարիւր տօլարի (\$600.00) փոխգիրը առ հաշիւ , և Օգոստոս 20-ին կամ անոր մօտերը ձեզի նորէն կը ղրկենք վճար մը : Վստահ ըլլալով որ ասիկա գոհացուցիչ պիտի ըլլայ , և շնորհակալ ըլլալով ձեզ ձեր տուած դիւրութեան համար , կը մնանք ,

Ձերդ ճշմարտօրէն ,

ՈՒՇԱՑԱԾ ՄՆՏՈՒԿԻ ՄԸ ԵՏԵՒԷՆ ԸԼԼԱԼ**Յարգելի Տեարք ,**

Ներփակ կը գտնէք փոխադրական ընկալագիրը սնտուկի մը որ Յուլիս 21-ին ղրկուած էր Պր. Սահակ Եակոբեանի հասցէին , Ուսթըր , Մէս. :

Օգոստոս 10 թուով այդ հասցէին տէրը մեզի կը գրէ թէ ապրանքը դեռ չէ հասած , հաճեցէք սնտուկին ետեւէ ըլլալ և յանձնումը փութացնել :

Ձերդ ճշմարտօրէն ,

Advice of Draft Drawn.

Gentlemen:

We have this day drawn on you at sight for seven hundred dollars (\$700) in favor of Mr. John P. Clark.

Yours truly,

A Letter Enclosing Payment on Account.

Gentlemen:

Referring to your letter of August 8, requesting a check in settlement of your account, I would say that collections are unusually slow with us at the present time.

We inclose our check for six hundred dollars (\$600.00) on account, and will send you a further remittance on or about August 20. Trusting that this will be satisfactory, and thanking you for the accommodation, we are

Yours truly,

Tracing Delayed Shipments.

Dear Sirs:

Inclosed you will find a shipping receipt covering one box consigned to Mr. Sahag Hagopian, of Worcester, Mass., on July 21.

Under date of Aug. 10 the consignee writes us, stating that the goods have not yet arrived. Please trace the box and hurry delivery.

Yours truly,

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Է Մ Ը Պ Ա Ր Տ Ք Կ Ը Խ Ն Դ Ր Է

Սիրելի Մարգար,

Կրնա՞յիր զիս երախտապարտ ընել ինձի պարտք տալով քսանը հինգ տալէր՝ երկու շաբթուան համար, որովհետև անակնկալ կերպով դրամս հատաւ:

Այդ ատեններ տնտեսապէս լաւ վիճակի մէջ պիտի ըլլամ, և դուն կրնաս ապահով ըլլալ որ դրամը կը վերադարձուի ամսոյս կէսի միջոցները:

Ուրախ պիտի ըլլամ ուէ ատեն քենէ իմանալու թէ նման օժանդակութիւն մըն ալ ես քեզի կրնամ ընել: Յուսալով որ ինձի օգնելու ի վիճակի ես, կը մնամ:

Միշտ քուկդ,
Յովսէփ

Կ Ը Մ Ե Ր Ժ Է Պ Ա Ր Տ Ք Տ Ա Լ

Սիրելի Պարոն,

Կը ցաւիմ որ պարագաները չեն ներեր կատարել խնդրանքը բարեկամի մը՝ որով այնքան շահագրգռուած եմ: Ես ինքս խիստ պէտք ունիմ դրամի, և դեռ քանի մը օր առաջ ստիպուած էի փոխառութիւն ընել նօթ մը վճարելու համար: Ուստի ինձի համար անկարելի է ձեր խնդրանքին գոհացում տալ:

Յաւելով ձեզ օգնելու անկարողութեանս համար և յուսալով որ կերպով մը կը յաջողիք դրամը ձեռք բերել, կը մնամ,

Չերդ ճշմարտօրէն,

Requesting a Loan from a Friend.

Dear Marcar:

Can you oblige me with a loan of twenty-five dollars for a couple of weeks, as I have unexpectedly run short of funds?

By that time I shall be in good shape financially, and you may depend upon the return of the money by the middle of the month.

I shall be glad to hear from you at any time that I may do you a similar favor. Trusting that you may be in a position to help me out,

As ever, yours,

Hovsep.

Refusing to Make a Loan.

Dear Sir:

I am sorry that circumstances will not permit me to meet the demands of a friend in whom I am so interested; but I am myself in great need of money, and only a few days ago was forced to borrow to meet a note. It is, therefore, out of my power to grant your request.

Regretting my inability to aid you, and trusting that you may be successful in securing the money, I am

Yours very truly,

Պ Ա Ր Տ Ք Կ Ո Ւ Տ Ա Յ

Սիրելի Պարոն ,

Ձեր Սեպտ . 7ի նամակը ստացած եմ և ուրախ եմ ըսելու թէ ձեր ուզած փոխառութիւնը կրնաք ունենալ :

Ներփակ կը գտնէք փոխգիր մը այդ գումարի համար՝ որ կրնաք վերադարձնել ձեզի . յարմարատեանին :

Ձերդ անկեղծօրէն ,

ԳՈՐԾԱԽՈՐ ՄԸ ԹՈՇԱԿԻՆ ՅԱԻՆԼՈՒՄ
ԿԸ ԽՆԴՐԷ

Պարոններ ,

Ներող ակնարկ մը հայցելով այս դիմումին համար խորին յարգանքով կը խնդրեմ որ թոշակս բարձրանայ առաջիկայ Յունվար 1-էն սկսեալ :

Ես պատրաստ եմ ի գոհունակութիւն ձեզի ցոյց տալ այս փափաքս արդարացնող պատճառները , և կրնամ վստահացնել ձեզ որ , եթէ հաւանիք իմ խնդիրքս , ձեռքէս եկածը պիտի ընեմ արժանի ըլլալու համար շարունակութեանը ինծի հանդէպ ձեր ունեցած վստահութեան և շահագրգռութեան :

Ներկայիս կ'ստանամ շաբաթը քսանը երկու տալէր , և մեծապէս պիտի գնահատէի քսանը-հինգի բարձրացումը : Յուսալով նպաստաւոր պատասխան մը ստանալ , կը մնամ ,

Ձերդ յարգանքով ,

Granting a Loan.

Dear Sir:

Your letter of September 7 is received, and I am glad to be able to say that you may have the loan asked for.

Inclosed you will find a check for the amount, which you may return at your own convenience.

Yours very sincerely,

From an Employe Requesting Increase of Salary.

Gentlemen:

Requesting an indulgent view of my application, I most respectfully ask for an increase of my salary, beginning Jan. 1, next.

I am prepared to demonstrate to your satisfaction the grounds upon which I desire this increase, and can assure you that, should you accede to my request, I shall do my utmost to merit a continuance of your confidence and interest in me as your employe.

I am at present receiving twenty-two dollars a week, and would much appreciate a raise to twenty-five dollars. Hoping to receive a favorable answer, I am

Yours respectfully,

ԴԻՄՈՒՄ ՊԱՐՏԻՋՊԱՆԻ ԳՈՐԾԻՆ ՀԱՄԱՐ

Յարգելի Տիար,

Իմացած եմ որ կը փափաքիք պարտիզպանի մը ծառայութիւնը ապահովել: Դիմում կ'ընեմ այդ գործին համար քանի որ ներկայիս պարապ եմ:

Ծառայած եմ Պն. Բոյ Պըրկրին և Պն. Բապըրթ Մըկէյրիի այս քաղաքին մէջ, որոնց իւրաքանչիւրն ալ կրնայ վկայել որ կարելի գոհունակութիւնը տուած եմ:

Քառասուն տարեկան եմ, ամուսնացած եւ ունիմ երեք զաւակներ: Փորձառութիւն ունիմ մասնաւորներու կալուածներու և ջերմանոցներու խնամք տանելու մէջ, ինչպէս նաև բուսեղէններ և պտղեղէններ մշակելու մէջ:

Քարեհանգեցէք նկատի առնել այս դիմումը, կամ, եթէ փափաքիք, թոյլ տուէք ինձ գալ եւ ձեզ տեսնել, որպէսզի կարենամ աւելի լաւ բացատրել իմ կարողութիւնս այդ գործը վարելու համար:

ԴԻՄՈՒՄ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԻ
ՊԱՇՏՕՆԻՆ ՀԱՄԱՐ

Պարոններ,

Քարեկամ մը ինձի կ'իմացնէ թէ դուք ներկայացուցիչ մը ունենալ կը փափաքիք Հարաւային Նահանգները շրջելու համար:

Այդ երկրամասին վրայ ճամբորդած եմ անցեալ տասը տարուան շրջանին մէջ Նիւ Եօրքի Պնր. Հէյզ և Ընկերութեան համար, որոնք Նոր

An Application for Employment as Gardener.

Dear Sir:

I am informed that you wish to secure the services of a gardener. I make application for the place, as I am at present without a situation.

I have been employed by Mr. Roy Berger and Mr. Robert Megary, of this city, each of whom will tell you that I gave entire satisfaction.

I am forty years old, am a married man, and have three children. I have had experience in the care of private grounds and hothouses, and the culture of vegetables and small fruits.

Kindly consider this application, or, if you will, allow me to call and see you, that I may better explain my ability to fill the position.

Yours respectfully,

**An Application for a Position as Commercial
Traveler.**

Gentlemen:

I am advised by a friend that you desire a representative to cover the Southern States.

I have traveled over this territory during the past ten years for Messrs. Hayes & Co., New York, who are going out of business on the first

Տարուայ առաջին օրը առևտուրը պիտի ձգեն, ազատ թողլով զիս նոր կապակցութիւն մը կազմելու :

Ուրախ պիտի ըլլամ ձեզի հետ գործի սկսելով անուանական թոշակով մը, բայց տարեկան որոշուած գումարէ մը աւելի գործառնութեան համար գործակատարի որոշ վարձքով մը :

Երեսուն ութը տարեկան եմ, ամուսնացած, ոչ-արբեցող, և ունիմ այդ երկրամասի լաւագոյն վաճառականներու հետ տարեկան \$150,000ի առևտուր :

Անձնական տեսակցութիւն մը մեծ հաճոյք պիտի տար ինծի, և եթէ իմացնէք ինծի թէ ո՞ր օրը և որ ժամը ամենէն յարմարն է ձեզի զիս ընդունելու, նիւ Եօրք կուգամ այդ ատեն ձեզ այցելելու :

Ձերը ճշմարտօրէն,

ՊԱՏԱՍԽԱՆ ՏՈՄԱՐԱՎԱԼԻ ՄԸ ՀԱՄԱՐ ՏՐՈՒԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՄԸ

Տիար,

Տեսնելով այսօրուան նիւ Եօրք Հէրըլտի մէջ X. 24 ծանուցումը, տոմարապահի մը համար, ձեր թոյլտուութիւնը կը խնդրեմ հաստատելու համար թէ ես ամէն տեսակէտով այդ պաշտօնը կատարելու յարմարութիւնը ունիմ, իբրև երկար և բազմազան փորձառութիւն ունեցող մէկը այդ ճիւղին մէջ :

ARMENO-AMERICAN LETTER WRITER 399

of the year, leaving me at liberty to form a new connection.

I would be pleased to engage with you at a nominal salary, with a commission on excess business over a stated amount yearly.

I am thirty-eight years of age, am married, temperate, and have a trade of \$150,000 a year among the very best class of merchants in this territory.

A personal interview would afford me great pleasure, and if you will advise me what day and time would be most convenient for you to meet me, I will go to New York and call upon you.

Very truly,

Answer to an Advertisement for a Bookkeeper.

Sir:

Referring to your advertisement for a bookkeeper, X. 24, in today's New York Herald, I beg to say that I am qualified in every respect to fill the position, having had long and varied experience in that branch of office work.

Երկար տարիներ գործած եմ Տեառք կրէյ, Պրատեն և Ընկերութեան. անոնց գործէնք աշուեցայ ինծի համար առևտուր մը սկսելու նպատակով, որ յաջողութիւն չ'գտաւ, բայց ոչ իմ թերութեանս պատճառով:

Եթէ բարեհաճիք զիս տեսակցութեան մը կոչել, սիրայօժար պիտի գամ և ներկայացնեմ ձեզ իմ վկայականներս, որոնք ամենաբարձր գնահատականներ են: Միևնոյն ատեն յարգանքով պիտի թելադրէի ձեզ որ հարցնէիք իմ նախկին գործատէրերուս իմ կարողութեան, բնաւորութեան և պարտաճանաչութեան նկատմամբ: Յուսալով ձեռնէ նպաստաւոր պատասխան մը ստանալ, կը մնամ,

Ձերդ խորին յարգանքով,

ԱՅՐ ԿԱՄ ԿԻՆ ՕԳՆԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆ

(Ծանոցութեան ինքնին կրելով բեր նախկին վերեւը)

Տիար,

Պատասխանելով վերի ծանուցումին կը խնդրեմ որ զիս նկատի առնէք իբրև թիկնածու այդ պաշտօնին: Կատարելապէս կարող եմ պահանջուած պարտականութիւնները կատարելու ուշիմութեամբ և հաւատարմութեամբ, և վստահ եմ որ յուսախաբ չպիտի ըլլաք, եթէ ինծի պատեհութիւն մը տաք ցոյց տալու թէ կրնամ ընել:

ARMENO-AMERICAN LETTER WRITER 401

For many years I was in the employ of Messrs. Gray, Brown & Co., and withdrew from their service to engage in a business for myself, which did not prove successful; through no fault of mine, however.

If you will kindly grant me an interview it will afford me great pleasure to call upon you and present my testimonials, which are of the highest character. In the meantime I would respectfully suggest that you communicate with my former employers as to my ability, habits and attention to duty. Hoping to receive a favorable reply, I am,

Very respectfully yours,

Answering an Advertisement for Male or Female Help.

Sir:

In reply to the above advertisement, I submit this application for the position. I am thoroughly qualified to perform the duties required, intelligently and faithfully, and I feel confident that you will not be disappointed, should you give me an opportunity to demonstrate what I can do.

իմ անցեալս եւ ունակութիւններս պարսաւանքէ զերծ եղած են, եւ վկայութիւններս լաւագոյններէն:

Վարժութիւնս այնպէս է որ փորձի աստիճաններէն բոլորովին անցած է, եւ եթէ ինծի ազնուօրէն տեսակցութիւն մը շնորհէք՝ կուգամ և ձեզի բացատրութիւններ կուտամ:

Խորին յարգանքով,

ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՂԻ ՄԸ ՆԿԱՐԱԳՐԻՆ ՆԿԱՏ-
ՄԱՄԲ ԵՂԱԾ ՀԱՐՑՈՒՄԻ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆ

Պարոններ,

Պատիւը ունեցած ենք ամսոյս 25 թուակիր ձեր նամակը ստանալու, որով կը հարցնէիք Պն. լեոն Բարիքեանի նկարագրին եւ կարողութեանը մասին. այս առթիւ կուգանք հաճոյքով յանձնարարելու այդ երիտասարդը ձեզի՝ նպաստաւոր նկատառութեան համար:

Ան մեր գործին մէջն էր քանի մը տարիներ եւ թողուց մեզ իր իսկ կամքով:

Ինքը բացառիկ կարողութեան տէր երիտասարդ մըն է, աշխոյժ և ամէն տեսակէտով կատարելապէս վստահելի, եւ վստահ ենք որ եթէ որոշէք զինքը վարձել՝ ձեր բոլոր ակնկալութիւնները պիտի արգարացնէ:

Ձերդ անկեղծօրէն,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 403

My record and habits are above reproach, and my references are among the best.

My experience has been such as to place me entirely beyond the experimental stage, and if you will kindly grant me an interview I will call and give you full particulars.

Very respectfully,

Replying to an Inquiry as to the Character of an Applicant.

Gentlemen:

Your letter of March 25, inquiring as to the character and ability of Mr. Leon Barikian, has been received, and we take pleasure in recommending the young man to your favorable consideration.

He was in our employ for several years and left us of his own accord.

He is a young man of exceptional ability, energetic and thoroughly reliable in every respect; and we are sure that should you decide to engage him he will meet your highest expectations.

Very truly,

ԴԻՄՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՊԱՇՏՏՈՆԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Յարգելի Տիար ,

Վստահ եմ որ ձեր ազնիւ նկատառութիւնը կ'ընծայէք այս դիմումագրիս որ ձեզի կը յանձնեմ ձեր գծին վրայ գործ մը ունենալու համար :

Ես Քէմպրիճի բարձրագոյն վարժարանի շրջանաւարտն եմ և կ'ապրիմ ծնողացս հետ , գէշ ունակութիւններ չունիմ եւ կը տենչամ կեանքը սկսիլ նպաստաւոր պայմաններու տակ և յառաջ դիմել պարտականութեան գիտակից կատարումով՝ ուէ զբաղումի մէջ որ ինծի կը յատկացուի :

Սորին յարգանքով ,

ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՀԻԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Առ որ անկ է .

Թղթաբերս , Մարի Կալեան , անցեալ երկու տարիներ գործած է ինծի իբրև խոհարարուհի :

Ինքը համեստ , կարող , և հաւատարիմ է իր պարտականութիւններու մէջ , յարգալից իր մեծերուն հանդէպ եւ խիստ հաճելի իր տրամադրութեանց մէջ :

Մեծ ուրախութեամբ կը յանձնարարեմ գինք ուէ մէկուն ո՞ք ընտիր խոհարարի մը ծառայութիւնը կ'ուզէ , և վստահ եմ որ իր յաջորդ տանտէրին ամենաբարձր ակնկալութիւնները պիտի իրականացնէ յաջողութեամբ :

(Տկն .) Ա . Թ . Ռուբէնեան

Պօսթըն , Մէս . , Մարտ 9 , 1911 .

Application for a Railroad Position.

Dear Sir:

I trust you will give kind consideration to this application, which I submit for a position on your line.

I am a graduate of the Cambridge High School and live with my parents. I have no bad habits, and am ambitious to begin work under favorable conditions and earn advancement, by a conscientious discharge of duty, in any occupation to which I may be assigned.

Very respectfully,

Recommending a Servant.

To whom it may concern:

The bearer, Mary Kalian, has been employed by me for the past two years as cook.

She is honest, capable, faithful in her duties, respectful to superiors and very amiable in disposition.

I most cheerfully recommend her to any one requiring the services of an excellent cook, and feel confident that she will fulfill in every particular the highest expectations of her next employer.

(Mrs.) Anna T. Rouben.

Boston, Mass.,
March 9, 1911.

ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՐԻՇ ՆԱՄԱԿ ՄԸ

Առ որ անկ է ,

Թղթաբերս , Պն . կարապետ Պանքեան , ան-
ցեալ հինգ տարիներու ընթացքին ինծի ծառայած
է իբրև հաշուապահ :

Ինքը բարոյական ընտիր նկարագրի , առե-
տրական բարձրարժէք յատկութիւններու տէր
պարոն մըն է , կատարելապէս կարող հաշուապահ
և խիստ աշխոյժ :

Ինծի մեծ հաճոյք կուտայ զինքը յանձնարա-
րել նպաստաւոր նկատառութեանը ունէ մէկուն որ
պէտք ունի այնպիսի ծառայութեանց՝ ինչպիսին
ան կարող է ընծայել :

ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ, ՆԱՄԱԿ ՀԱՇԻԻ ՄԸ ԲԱՆԱԼԷ ԱՌԱՋ

Յարգելի Տիար ,

Այս նամակով ձեզի կը ներկայացնեմ Մր .
Ճօրճ Սմօլըուտտ՝ որ կը փափաքի հաշիւ մը բանալ
ձեզի հետ :

Ես Պն . Սմօլըուտտը կը ճանչնամ երկար տա-
րիներէ իվեր եւ կատարելապէս վստահ եմ որ
զինքը փափաքելի յաճախորդ մը պիտի գտնէք :
Զերդ անկեղծօրէն ,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 407

General Letter of Recommendation.

New York, April 10, 19—.

To whom it may concern:

The bearer, Mr. Carl Bankian, has been in my employ for the past five years as bill clerk.

He is a gentleman of excellent moral character, sterling business qualifications, a thoroughly capable bill clerk and very energetic.

It affords me great pleasure to commend him to the favorable consideration of any one who may be in need of such services as he can render.

[Signature.]

Letter of Introduction Prior to Opening an Account.

Dear Sir:

This will introduce to you Mr. George Smallwood, who wishes to open an account with you.

I have known Mr. Smallwood for many years and I am quite sure that you will find him a desirable customer.

Yours truly,

ՀԱՇԻԻ ՄԸ ԲԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ

Յարգելի Տեարք,

Վերջերս խանութ մը հաստատեցի այս քաղաքին մէջ՝ կօշիկի գործը առաջ տանելու համար, և քանի մը օրէն պատրաստ պիտի ըլլամ ապրանքս ներս դնելու: Եթէ հաճելի է ձեզ կ'առաջարկեմ հաշիւ մը բանալ ձեր տան հետ եւ վկայութեան համար ձեզի կուտամ ձեր քաղաքէն Ուայտըր եւ Որդւոց անունը: Կը հաճի՞ք իմ մասին հարց ու փորձ ընել և, եթէ իմ տնտեսական կացութեանս մասին գոհացուցիչ պատասխան ստանաք, իմացնել ինձի որ ապապրանքներս անմիջապէս ղրկեմ:

ՆՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՂՐԿՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾԻ ՄԸ
ԸՆԿԵՐԱԿՑՈՂ ՆԱՄԱԿ

Ոմբագրութիւն «Ասպարէզ»ի,

Ճրէզնօ, Գալ:

Յարգելի Տեարք,

Ներկայիս հետ կը ներփակեմ ձեռագիր վիպակ մը՝ «Նորեկը» վերնագրով՝ և վերադարձի դրոշմը որ կը գործածէք, եթէ գրութիւնս անյարմար նկատէք ձեր թերթի համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Ոմբագրութիւն «Հայրենիք»ի,

Հաճեցէք տարուան մը բաժանորդ գրել զիս ձեր թերթին՝ որուն բաժնեգինը, երկու տալէր մընի օրտըրով, ներփակ կը գտնէք նամակիս մէջ:

Ձերդ յարգանքով,

Proposing to Open an Account.

Gentlemen:

I have just fitted up a store in this city for the purpose of conducting a boot and shoe business, and shall be ready in a few days to put in my stock. If it is agreeable to you, I propose opening an account with your house. I refer you to Messrs. Nathan Wilder & Sons, of your city. Will you kindly look me up, and if the information you obtain concerning my financial standing is satisfactory, please advise me in order that I may place an order with you at once.

Yours truly,

Accompanying Manuscript to a Publisher.

Gentlemen:

I herewith inclose the manuscript of a short story entitled, "The Newcomer," together with postage for its return in the event that you should not consider it suitable matter for your publication.

Very truly yours,

Subscription to a Paper

To the Editor of Hairenik:

Please subscribe me for one year to your paper for the subscription of which you will find enclosed two dollars in money order.

Yours respectfully,

**ՈՒՇԱՑԱԾ ՅՕԴՈՒԱԾԻ ՄԸ ՀԱՄԱՐ ԽՄԲԱԳՐԻՆ
ՀԱՐՑՈՒՄ ՈՒՂՂՈՂ ՆԱՄԱԿ**

Խմբագրութիւնն «Ասպարիզ»ի,

Ֆրէզնօ, Գալ.

Յարգելի Գարոններ,

Անցեալ ամսոյ 10ին ձեզի յօդուած մը ղրկեցի («Դժուարութիւններ» վերնագրով, ինչպէս նաեւ հարկ եղած դրոշմը զայն վերադարձնելու համար՝ անընդունելի նկատուելու պարագային):

Կը հաճի՞ք փնտել այդ յօդուածը, եւ եթէ յարմար չէ հրատարակութեան համար՝ վերադարձնել զայն ձեր ամենականուխ պատեհութեամբը:

Ձերդ անկեղծօրէն,

ԿԸ ԽՆԴՐԷ ՈՐ ՄՈՒՐ ՀԱԿԸ ՆՈՐՈԳՈՒԻ

Յարգելի Գարոններ,

Կը ցաւիմ ըսելու որ անկարող պիտի ըլլամ իր օրին ազատել մուրհակս որ կը պահէք \$2000ի համար՝ վճարելի Մայիս 10ին:

Ձախորդ պարագաներ, շնախատեսուած եւ կամօքէս բոլորովին անկախ, բարդուած են զիս առժամարար նեղելու, բայց ոչ մէկ պարագայի տակ լրջօրէն: Ուստի, կը խնդրեմ ձեռնէ որ շնորհ ընէ՞ք իննքսուն օրուան համար նորոգելու՝ աւելցնելով տոկոսը, և կը վստահացնեմ ձեզ որ գումարը պիտի վճարուի իր օրին:

Ձեր հաւանութիւնը այս խնդրին առթիւ նիւթապէս պիտի ազատէ զիս իմ ներկայ դժուարութիւններէս և զիս մեծապէս երախտապարտ պիտի թողու ձեզի:

Ձերդ անկեղծօրէն,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 411

**Letter to Editors of a Publication Inquiring about
Delayed Manuscript.**

To the Editors of

The Asbarez Publishing Company,

Gentlemen:

On April 10 I mailed you the manuscript of a story entitled, "Hard Lines," with postage for its return in case it should not prove acceptable.

Will you kindly look the manuscript up, and if not available for your publication, return it to me at your earliest convenience?

Very truly yours,

Requesting the Renewal of a Note.

Gentlemen:

I regret to say that I will not be able to meet at maturity my note which you hold for \$2,000, payable May 10.

Adverse circumstances, unforeseen and entirely beyond my control, have combined to embarrass me temporarily, but by no means seriously. I would, therefore, ask at your hands the favor of a renewal for ninety days with interest added, assuring you that upon maturing the note will be redeemed.

Your compliance with this request will very materially relieve me in my present difficulties and place me under great obligations.

Very truly yours,

**ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ ԿԸ ԽՆԴՐԷ
Յարգելի Տեառք,**

Կը ցաւիմ ձեր հաշուոյ կարգադրութեան յապաղումին համար եւ կը խնդրեմ ձեր ներողամտութեան շարունակութիւնը: Գործերս այնպիսի վիճակի մէջ են որ ներկայիս ինծի համար անկարելի է ձեր պահանջին գոհացում տալ:

Եթէ բարեհաճիք ինծի քիչ մը եւս թոյլտուութիւն ընել, ուրախ պիտի ըլլամ ձեզ նեղութենէ ազատելու ձեզի ղրկելով վաթսուն օրուայ մէկ մուրհակս որ փոխանձելի է և ժամանակը լրանալուն պիտի յարգուի իտես:

Սպասելով ձեր նպաստաւոր պատասխանին և շնորհակալ ըլլալով մինչև հիմա այս խնդրին մէջ ձեր ցոյց տուած նկատառութեան համար, կը մնամ՝

Ձերդ անկեղծօրէն,

ԳՐԱԻԻ ՄԸ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՂՄՈՒԹԻԻՆ ԽՆԴՐԵԼ

Յարգելի Տէր,

Ազարակիս այն գրաւաթուղթը՝ որ իբրեւ ապահովութիւն 3800 տալէրի մուրհակիս համար կը պահէք ձեր քով՝ կրնայ փակուիլ դատարանի միջոցով, եթէ մուրհակը՝ որուն ատենը կը լրանայ գալ ամսոյ 10ին՝ չվճարուի: Կը ցաւիմ ձեզի տեղեկացնել թէ ինծի համար անկարելի պիտի ըլլայ վճարել զայն իր օրին. բայց ամէն պատճառունիմ հաւատալու թէ կարող պիտի ըլլամ քիչ մը ետքը: Այս սեփականութեան կորուստը ինծի խիստ ծանր վնաս պիտի տայ ճիշտ այս պահուս,

Requesting an Extension of Time.

Gentlemen:

I regret my delay in the settlement of your account and would ask your continued leniency, my affairs being in such shape at present as to preclude any possibility of complying with your demand.

If you can consistently grant me further indulgence, I would be pleased to relieve your embarrassment by sending you my note for sixty days, which is negotiable and will be promptly honored upon presentation at maturity.

Hoping for a favorable reply and thanking you for your courteous consideration heretofore in the matter, I am

Very truly yours,

James C. Ellis.

Requesting Clemency Concerning a Mortgage.

Dear Sir:

The mortgage deed on my farm which you hold as security for my note of \$3,800, I understand can be foreclosed by suit if the note, which matures on June 10, is not paid. I regret to inform you that it will be impossible for me to meet payment of the note when due; but I have every reason to believe that I will be in a position to do so a little later on. The loss of this property would damage me very seriously just at this

եւ եթէ կրնաք այս առթիւ ինծի ներողամտութեամբ քիչ մը ժամանակ տալ՝ զիս մեծապէս երախտապարտ պիտի ընէք: Ես միշտ կանոնաւորապէս տոկոսը վճարած եմ և ներկայովս կը ներփակեմ \$57ի փոր-գիր մը, իբրև տոկոսը վերջին եռամսեայի համար: Եկամուտս բաւական է տոկոսի արագ վճարումը ապահովելու, նկատում մը՝ որ, վստահ եմ, ինպաստ ինծի ազդեցութիւն պիտի ունենայ:

Սպասելով ձեր առաջին պատեհութեամբ գրուած պատասխանին՝ տեղեկանալու համար այս առթիւ ձեր դիտաւորութեան մասին, կը մնամ,
Ձերդ անկեղծօրէն,

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յարգելի Տիկին,

Ձեր ապրիլ 3 թուակիր նամակը և ներփակ \$57ի փոխգիրը ստացած եմ: Գուք կրնաք ապահով ըլլալ որ ձեզի նեղութիւն պատճառելիք ունէք այլ չպիտի առնեմ, նկատի ունենալով ձեր անցեալ փութկոտութիւնը տոկոսի վճարման մէջ և վստահ ըլլալով բանաւոր ժամանակի մը մէջ մուրհակը վճարելու ձեր դիտաւորութեանը և կարողութեանը մասին: Արդարև, գրաւը լաւ շահարկութիւն մըն է ունէ մէկուն համար՝ որուն դրամագլուխը առևտուրի մէջ չգործածուիր. եւ եթէ ուրիշ նպատակներու համար ունէ ատեն դրամի պէտք ունենամ, ձեզի պէտք եղած ժամանակը պիտի տամ՝ որպէսզի կարող ըլլաք գրաւը փոխանձել ուրիշի մը:

Կը մնամ, Տիկին,

time, and if you can consistently extend to me a little indulgence in the matter, you will place me under great obligations. I have always paid the interest with regularity, and I herewith inclose a check for \$57, the interest due for the last quarter. My income is sufficient to insure continued prompt payment of interest; a consideration which I trust may weigh in my favor.

Awaiting a reply at your earliest convenience, informing me as to your intentions in the matter, I am

Yours truly,

Reply.

Dear Madam:

Your letter of April 3, inclosing a check for \$57, is received. You may rest assured that, in consideration of your past promptness in the payment of interest and my confidence in your intention and ability to take up the note within a reasonable time, I shall take no step which will in any way tend to cause you embarrassment. In fact, the mortgage is a good investment for any one whose capital is not actively employed, and should I at any time require the money for other purposes, I will see that you have ample time to effect a transfer of the mortgage. I am, Madam,

Yours truly,

ԱԳԱՀՈՎՈՒԹԻՆ ԿԸ ԽՆԴՐԷՆ ՎԱՒԵՐԱՑՈՒԱՅ
ՆՕԹԻ ՄԸ ՁԵՒՈՎ

Յարգելի Տեարք ,

Ստացած եմ ձեր Յուլիս մէկ թուակիր նամակը՝ որ կը բացատրէր մեր ձեր վրայ քաշած փոխանակագրի անվճար մնալը , բայց բոլորովին գոհացուցիչ չէր : Գիտէք որ այդ գումարին վճարման ժամանակը անցած էր , և ես իմ պարտքերս ուշացուցի քանի մը օր՝ յուսալով որ ձեր ինծի պարտած գումարին համար փոխգիրը կը հասնէր , մինչև որ վախցայ թէ աւելի յապաղումը գործերս կը վտանգէր :

Ձեզի համար դժուարութենէն դուրս գալու լաւագոյն միջոցն է պատշաճ կերպով վաւերացուած երեսուն օրուայ նօթ մը ղրկել ինծի , որ կարենամ ներկայ պէտքերուս յատկացնել : Այս միջոցը ձեզի երկար ժամանակ կուտայ հարկ եղած գումարը հայթայթելու :

Կը յուսամ այդ բանը ձեզ չպիտի նեղէ , բայց կ'ակնկալեմ որ ձեռք առնէք այս միակ միջոցը , որ կրնամ թելադրել ձեզի՝ Պնր . Ալֆրէտ Սմիթհ և Ընկերութ . հետ բարդութիւններէ խուսափելու համար :

Ձերդ անկեղծօրէն ,

ՀԱՇԻՒ ՄԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Յարգելի Տէր ,

Քանի մը անգամներ ձեզի գրած եմ ներփակելով ձեր վրայ ունեցած հաշիւս՝ ընտանեկան ուտեստեղէններու համար : Այս հաշիւը երկար

**Asking Security in the Form of an Endorsed
Note.**

Gentlemen:

Your letter of July 1, giving an explanation for non-payment of our draft on you, has been received, but is not entirely satisfactory. You were aware that the amount for which I drew on you was more than due, and I delayed remittances for some days, expecting to receive your check for the amount due me, until I feared that further delay would seriously compromise me.

The best way out of the difficulty would be for you to furnish me with a properly endorsed thirty days' note, which I could apply to my present needs. This would give you ample time to provide funds to meet the note.

I trust it will not embarrass you; but I shall expect you to adopt this course, the only one that I can suggest to avoid complications with Messrs. Alfred Smith & Co. I am

Yours very truly,

Final Letter to Collect a Bill.

Dear Sir:

I have written to you a number of times inclosing my bill against you for family supplies. This bill is of long standing; nearly a year over due.

ատենէ ի վեր առկախ կը մնայ, գրեթէ տարիէ մը ի վեր: Համբերութեամբ սպասած եմ անոր փակումին և կամ, եթէ կարելի չէր ամէնը մէկէն վճարել, գէթ ձեր պարտքը նուազեցնելու տրամադրութեան մը համար: Այս խնդրին մէջ ձեզի հանդէպ այնչափ քաղաքավար և ազնիւ վերաբերում ունեցած եմ՝ որչափ ոեւէ բանաւոր անձ կրնար ակնկալել. հիմա այլևս պէտք է վերջնականապէս պնդեմ անոր անմիջական փակումին համար, հակառակ պարագային պահանջս պիտի յանձնեմ փաստաբանին՝ օրինական միջոցներու սկսելու հրահանգով:

Յուսալով որ չպիտի ուզէք զիս այդպիսի անախորժ միջոցի մը մղել՝ կը մնամ,
 Ձերդ անկեղծօրէն,

ԻՐԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ Կ'ԸՆԴՈՒՆԻՆ
 Սիրելի Տիար,

Մենք յօժար ենք ընդունելու ձեր Մայիս 16 թիւ նամակով յիշած առաջարկը կարգադրելու համար մեր վէճը իրաւարարութեամբ, եւ այդ նպատակով ալ զրկած ենք խնդրոյ վերաբերեալ թուղթերը մեր բարեկամ Մր. Բապըրթ Պօրտընի, ձեր քաղաքէն, որուն իրաւունք տուած ենք մեր կողմէն գործելու:

Մեր դիտաւորութիւնը, որ ինք ձեզի պիտի հաղորդէ, ներկայովս կը հաստատենք:
 Ձերդ ճշմարտօրէն,

ARMENO-AMERICAN LETTER WRITER 419

I have waited patiently for a settlement, or some evidence of a disposition on your part to reduce the indebtedness, at least, if you cannot pay it all at once. Having extended to you in the matter as much courtesy as any reasonable person could expect, I must now finally insist upon an immediate settlement, in default of which, I shall place the claim in the hands of my attorney, with instructions to commence legal proceedings.

Trusting that you will not compel me to resort to measures so disagreeable, I am

Very truly yours,

Accepting a Proposal for Arbitration.

Dear Sir:

We are willing to accept the proposal, mentioned in your letter of May 16, to settle our dispute by arbitration, and we have with that end in view sent copies of all the papers relative to the transaction to our friend, Mr. Robert Borden, of your city, whom we have authorized to act and decide for us.

Our intentions, of which he will advise you, we hereby confirm.

Yours very truly,

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՌԿԱՆԵԼՈՒ ԱԶԴ

Սիրելի Տիար,

Ցաւով ստիպուած ենք ձեզ տեղեկացնել թէ, անցեալ վեց ամիսներու միջոցին կտրդ մը բարդուած դժբաղդութիւններու եւ վերջերս տեղի ունեցող սնանկութիւններու մեզի տուած ծանր վնասներու պատճառով, մեր կարողութենէն վեր կը գտնենք մեր պարտքերը գոցել, և այսօր կը հարկադրուինք վճարումները առկախել:

Մեր տետրակները շուտով պիտի պատրաստուին, և անմիջապէս ետքը մեր պարտատէրերը ժողովի մը պիտի կոչենք և անոնց պիտի ենթարկենք մեր պարտքերու կատարեալ հաշիւը ինչպէս նաեւ զանոնք վճարելու համար մեր ունեցած միջոցները:

Միևնոյն ատեն կը խնդրենք ձեր դատավճիռին առկախումը, քանի որ մենք ճշմարտօրէն կրնանք պնդել թէ մեր նեղութիւնը առաջ եկած է այնպիսի դիպուածներէ՝ որոնք կանխատեսել անկարելի էր եւ որոնց վրայ մենք ոեւէ քօնթրօլ չունէինք:

Ձերդ ճշմարտօրէն,

ՄԵՌԱՆՎ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ՅԱԶՈՐԴԸ

Յարգելի Պարոններ,

Ներկայովս կուզեմ տեղեկացնել ձեզ թէ ես յաջորդած եմ Պն. Ճէքըպ թայլըրին՝ իր գործին մէջ, և թէ մտադիր եմ ճիշտ միևնոյն կարգի ապրանքներ ծախել և հաշիւ բանալ այն հաստա-

Notice of a Suspension of Payments.

Dear Sir:

We regret the necessity of informing you that, due to a combination of misfortunes during the past six months and heavy losses incurred through recent failures, we find it beyond our power to meet our engagements, and are this day compelled to suspend payments.

Our books will be written up at once, and as soon as done we shall call a meeting of our creditors and submit a complete statement of our liabilities, and the means we may possess to meet them.

In the meantime we request a suspension of judgment, as we can truthfully claim that our embarrassment has arisen from events which it was impossible to foresee, and over which we had no control.

Yours truly,

**Successor of a Deceased Storekeeper to a
Wholesale Dealer.**

Messrs. M. A. Wilken & Co.,

New York, June 5, 19—.

Gentlemen:

I hereby inform you that I have succeeded to the business of the late Mr. Jacob Tyler, and intend to deal in exactly the same class of goods,

տուժիւններու հետ՝ որոնք մինչեւ հիմա իրեն հայթայթած էին զանոնք:

Երկար տարիներ վաճառող եղած եմ Տեարք Ալֆրէտ և Ընկ. վաճառատան մէջ, որոնք, եթէ իրենց հարցուի, տեղեկութիւն պիտի տան ձեզ իմ ունակութեանցս, նկարագրիս, ևն. ի վրայ: Կը ներփակեմ ձեր քաղաքի մէջ լաւ ծանօթ վաճառականի մը անունը, որ մօտէն տեղեակ է իմ միջոցներուս եւ կարողութեանցս մասին, եւ որ կրնայ ձեզի տալ այդ նկատմամբ ամէն մանրամասնութիւն որ դուք ուզէք ունենալ:

Եթէ իմ նախորդիս վայելած վստահութիւնը և պատիւը ինձի ալ տալ որոշէք, առեւտրական երկար և փոխադարձօրէն գոհացուցիչ կապակցութիւն մը ունենալ կը յուսամ:

Ներփակ կը գտնէք ապսպրանք մը՝ որ, եթէ իմ մասին վկայութիւնները գոհացուցիչ գտնէք, հաճեցէք կարելի եղածին չափ շուտով կատարել:

Ձերդ անկեղծօրէն,

ԱԶԴ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԸ ԼՈՒԾՈՒՄԻՆ

Պարոններ,

Մինչև հիմա գոյութիւն ունեցող ընկերակցութիւնը Արմէն Յ. Հայկեանի, Գէորգ Արկինեանի, եւ Աբրահամ Պարոնեանի միջև, Արմէն Հայկեան և Ընկ. անունի տակ, այսօր լուծուած է փոխադարձ հաւանութեամբ:

Ձերդ անկեղծօրէն,

ԱՐՄԷՆ ՀԱՅԿԵԱՆ ԳԷՈՐԳ ԱՐԿԻՆԵԱՆ

ԱՐՐԱՀԱՄ ՊԱՐՈՆԵԱՆ

and to open accounts with the firms that have heretofore supplied him.

I was for many years salesman in the house of Messrs. Alford & Co., and those gentlemen will, upon inquiry, inform you in regard to my character and habits. I inclose the card of a well-known merchant in your city who is well acquainted with my means and resources, and who will furnish you with all the particulars in that respect that you may require.

Should you decide to extend to me the courtesy and confidence heretofore enjoyed by my predecessor, I shall look with pleasant anticipation upon a long and mutually satisfactory business connection.

Inclosed is an order, which, if you are satisfied with my references, kindly execute as promptly as possible.

Very truly yours,

John Donaldson.

Notice of Partnership Dissolution.

Gentlemen:

By mutual consent the copartnership heretofore existing between Armen H. Haikian, Keork Arkinian, and Abraham Baronian, under the firm name of Armen Haikian & Co., has this day been dissolved.

Very truly yours,

Armen Haikian,

Keork Arkinian,

Abraham Baronian.

ԱԶԴ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱԶՄՈՒԵԼՈՒՆ

Պարոններ ,

Հանդիմանով լուր կուտամ ձեզի թէ ընկերակցուած թիւն մը կազմուած է Պն . Արթիւր Փայրեանի և իմ միջև , կարօեան և Փայրեան անունին տակ , առաջ տանելու համար միևնոյն գործը՝ որ ես առանձինն կը շարունակէի տասը տարիէ ի վեր :

Յարգանքով խնդրելով ձեր մեծարժէք գործակցութեան շարունակութիւնը նոր տան համար և շնորհակալ ըլլալով ձեզի անցեալի մէջ ձեր իմ վրայ ունեցած վստահութեան համար , կը մնամ ,

Ձերդ անկեղծօրէն ,

ՅԱԿՈՒԲ ԿԱՐՕԵԱՆ :

ՀԱՅ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳՈՐԾԱՏԻՐՈՋ

Յարգելի Տեարք ,

Ստացայ ձեր Մայիս 10 թուակիր նամակը ձեր գործարանին համար հայ աշխատաւորներ հայթայթելու խնդրոյն առթիւ : Ի պատասխան թոյլ տուէք ինծի յայտնելու թէ հայերու մէջ տիրող զգացումը դէմ է գործելու այն գործարաններու մէջ՝ ուր գործադուլ կայ : Հայերը օգնութեան կը կարօտին , և եթէ իրենց պատեհութիւն արուի գործելու՝ շնորհակալութեամբ կ'ընդունին , բայց չեն ուզեր մնասել իրենց գործակիցներու դատին , որոնց բարեացակամութիւնն այնքան նշանակութիւն ունի իրենց համար :

Խնդրին խաղաղ կարգադրութենէն ետք՝ ուրախութեամբ կը դրկեմ ձեզի վստահելի մարդիկ :

Շնորհակալ ըլլալով ձեր նամակին համար , կը մնամ ,

Ձերդ յարգանքով ,

Notice of Copartnership Formed.

Gentlemen:

I take pleasure in advising you of the copartnership just formed, between Mr. Arthur Payrian and myself, under the firm name of Garoian & Payrian, for conducting the same business in which I have been singly engaged for the past ten years.

Respectfully soliciting a continuance of your valued patronage for the new firm and thanking you for the confidence reposed in me in the past,

I am, very truly yours,

Hagop Garoian.

The Answer of an Armenian Agent to an Employer
Gentlemen:

I received your letter of May 10 in regard to procuring some Armenian workmen for your factory. In reply allow me to state that the prevailing sentiment of Armenians is against working in factories where a strike is in progress. Armenians need help, and if they are given opportunity to work they gladly welcome it, but they do not wish to hurt the cause of their fellow workers, whose goodwill means much to them.

After the peaceful settlement of the difficulties I shall be glad to send you reliable men for employment.

Thanking you for your letter, I am

Yours respectfully,

ՆԱՄԱԿ ԶՄՈՒՌՆԻՈՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ
ԱՆՈՐ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԽՆԴՐԵԼՈՒ
ՑԱՄԱՔ ԵՂԱԾ ԱՏԵՆ

Աղեքսանդրիա, Եգիպտոս
Մայիս 1, 1914

Մեծայարգ ———

Ամերիկեան Հիւպատոս,
Զմուռնիա, Թուրքիա.

Սիրելի Տիար,

Իբրև քաղաքացի մը Միաց. Նահանգներու յարգանքով կը խնդրեմ ձեր աջակցութիւնը Զմիւռնիոյ նաւահանգստին վրայ, եթէ թիւրք պաշտօնեաները դժուարութիւններ յարուցանեն իմ ցամաք ելնելու:

Ես կանոնաւոր անցագիր ունիմ Ուոշինկթընի կառավարութենէն, և կուգամ կարճ այցելութիւն մը տալու իմ ծնողացս և ուրիշ ազգականներու:

Աղեքսանդրիայէ, Եգիպտոս, պիտի ելլեմ Օգոստ. 15ին Լոյս Նաւային Ընկերութեան Պօսիդոն նաւով և կ'ակնկալեմ Զմիւռնիա հասնիլ Սեպտմ. 1ին:

Վստահ ըլլալով որ ի պահանջել հարկին ձեր օգնութիւնը կրնամ վայելել, կը մնամ,

Ձերդ յարգանքով,

Ա. Մ. ՍԱՆԻԿԵԱՆ

**Letter to an American Consul in Smyrna Asking
Assistance at the Port.**

Alexandria, Egypt,

May 1, 1914.

Hon. _____,
American Consul,
Smyrna, Turkey.

Dear Sir:

As a citizen of the United States I respectfully request your assistance at the port of Smyrna in case Turkish officials offer difficulties to my landing.

I have in my possession the regular passport from the Government at Washington, and I am coming for a short visit to my parents and other relatives.

I shall sail from Alexandria, Egypt, on the steamer Posidon of the Lloyd Steamship Company, on August 15, and expect to arrive at Smyrna on the first day of September.

Trusting I may have your help in case of need, I am

Respectfully yours,

A. M. Sanikian.

ԸՆԿԱԼԱԿԻՐ ԱՄԲՈՂՁ ՊԱՀԱՆՁԻՆ

ՔԻԻ 20

Պօսթըն, Մէս., Յունվար 10, 1914

ՍՏԱՆՈՒԱՆ Է Պրն. Ռուբէն Արևեսէն երեք Հարիւր Եօթանասու
ունը Հինգ Տալէր (\$375.00) Ժինչև Քուսկանս ամբողջ պահանջես

դուստարը :

ՎԱՐԴ ՅՐԷՆԿԵԱՆ



RECEIPT IN FULL OF ALL DEMANDS .

RECEIVED of Reuben Arevian Three Hundred and Seventy-Five
Dollars (\$375.00), in full of all demands to date.

Vart Frenkian

ՎԱՔՍՈՒՆՕՐԵԱՑ ՆՕԹ ՎՃԱՐՆԻ ՊԱՆՔԻՆ

ԹԻԻ 67

Պոսթըն, Մէս., Յունվար 10, 1914

Թուականէս վաթսուն օր ետք, վասն ստացուած արժէքին, կը խոստանամ վճարել ի հրաման Մեկֆոն ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ Հարիւր Քսանը Հինգ Տալէր:

Շօմբ նէշընը Պանքին, Պոսթըն

\$125.00

.....



SIXTY-DAY PAYABLE AT BANK

NO. 67

Boston, Mass., January 10, 1914

Sixty Days after date, for value received, I promise to pay to the order of Melkon Kaloustian One Hundred and Twenty-Five Dollars, at the Shawmut National Bank, Boston, Mass.

\$125.00

.....

Ի ՏԵՍ ՔԱՇՈՒԱՅ ՓՈՌԱՆԱԿԱԳԻՐ ՄԸ

Պօսթքն, Մէս., Յունվար 10, 1914

ՏԵՍՈՐԻՆ ՎՃԱՐԷ Ի ՀՐԱՄԱՆ ՊՆ. Գ. Մ. Կարապետեանի Հարիւր
Յիսուն երկու Տալէր,

արժէքը ստացուած և անցուր հաշիւիս:

ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ԱՋԵԱՆ

Տիլատէլֆիս, Փէնսիլվանիս



A DRAFT ON SIGHT

Boston, Mass., January 10, 1914

AT SIGHT Pay to the order of Mr. K. M. Garabedian One
Hundred and Fifty-Two Dollars, Value received, and charge to
account of

To Mr. Armen Achian
Philadelphia, Pa.

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

ՖԵԱՐԲ Ս. ԵՒ ԸՆԿ.

Ի Հաշիւ J. R. JONES & Co,

1913

ՊԱՐՏԻՔ

Յոուլ.	1	Ապրանք, ըստ Հաշուի	\$275	—
Օգոս.	4	» » »	263	75
»	10	» » »	250	—
Հոկ.	5	» » »	300	—
Նոյ.	10	» » »	175	—
			<u>1263</u>	<u>75</u>

ՊԱՀԱՆՁ

Օգոս.	10	Կանխիկ	500	—		
Նոյ.	1	Ապրանք	351	61		
					<u>851</u>	<u>63</u>
		Մնացած Պարտքը			\$412	12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


	Էջ
ՅԱՌԱՋԱԲԱՆ	5
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	7
ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	13
Օգտակար Առաջարկ մը	14
Երկար Լռութիւնը Խզող Նամակ մը	16
Պատասխան	20
Նորեկի մը Տպաւորութիւնները	30
Անգործ Մնացողի մը Նամակը	34
Նորեկի մը Տպաւորութիւնները	
Ամերիկայի մասին	38
Պատասխանը՝ Ամերիկա Գալու Բաղձանք	
Կը յայտնէ	50
Յուսադրող Պատասխան մը	54
Պատասխանը	56
Բարեկամին Դրամ Կը Ղրկէ	60
Զբօսանքներու Մասին	62
Ամերիկայի Մասին Նոր Տեղեկութիւններ	66
Զուարթագին Նամակ մը	70
Շարժական Պատկերներու Առթիւ	72
Նամակ Գործէն Գոհ Անձէ մը	76
Ամերիկա Գալու Մասին Բարեկամին	
Կարծիքը Խնդրող Նամակ	82
Պատասխանը	84
Կէս Ճամբէն Բարեկամէն Օգնութիւն	
Խնդրող	88

Նամակ Գէշ Գործ Ունեցողէ մը	90
Անյաջող բայց Քաջ Պանդուխտի մը Նամակը	96
Հիւանդի մը Նամակը	98
Պատասխանը	102
Կաղանդի Նամակ մը	104
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	109
Նորեկի մը Նամակը Իր Հօրը	110
Նոյնը Իր Մօրը	112
Իր Քրոջը	114
Իր Հօրեղբօրը	116
Քեռիին Նամակը Իր Քրոջ	118
Քրոջ պատասխանը Իր Եղբօր	120
Հօր Պատասխանը	122
Մօր Պատասխանը	124
Քրոջ Պատասխանը	126
Հօրը Դրամ Կը Ղրկէ	128
Նամակ մը Եւս Քրոջը	130
Քրոջ Պատասխանը	136
Մօրը Դրամ Կը Ղրկէ Կաղանդէն Առաջ	138
Կաղանդի Նամակ	140
Մօրը Պատասխանը	142
Այդ Առիթով Քրոջ Պատասխանը	144
Երկար Անջատումէ Ետք Նամակ մը	146
Անգործ Մնացողի մը Նամակը Իր Հօր	148
Հօրը Պատասխանը	150
Քրոջ մը Նամակը Պանդուխտ Եղբօր	152
Եղբօր Պատասխանը	156
Քոյրը Ամերիկա Բերել Տալու Նամակ	162
Հօթհօրն Իր Պշտիկ Աղջկան՝ Բօզիին	166
Վիքթօր Հիւկօ Իր Պշտիկ Տիտինին	166
Հէնս Էնտրսընի Նամակը	178

ՅՈՐԴՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	183
Հօր մը Նամակը	184
Նորեկ մը Բարեկամէն Թելադրութիւններ Կը Խնդրէ	188
Բարեկամին Թելադրութիւնները	190
Մեծ Եղբայրը Պզտիկ Եղբօր	196
Լինքըն Գործէ Խուրափող Ազգականի մը	202
Նամակ մը Եւս Նոյնէն	206
Հէնրի Վան Տայք Շօթթրիճ Բարձ . Վարժարանի Երէց Կարգին	210
Նախագահ Լինքն Ձօր . Մէքլէլէնի	216
ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	222
Ճօրճ Ուաշինկթըն Պէննըմին Ֆրէնքլինի , Ամեր . Դեսպան Ի Ֆրանսսա	222
Լօրտ Պայրըն Մր . Մուրրէին	224
Ճէյմզ Լօուէլ Կը յանձնարարէ Հաուէլզը	226
ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	228
Համալսարանէ Շրջանաւարտ Բարեկամի մը	229
Մենդեան Տարեդարձի Առթիւ	230
Ամուսնութեան Առթիւ	230
Բարեկամի մը Ամուսնութիւնը	232
ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	235
Եղբօր մը Մահուան Առթիւ	236
Չաւկի մը Մահուան Առթիւ	236
Չարլզ Տիքընզ Մարք Լէմոնին՝ Չաւկի մը Մահուան Առթիւ	238
Լինքընի Նամակը Մօր մը Որ Իր Ամբողջ Չաւակները Կորսնցուցած Էր Քաղա- քային Պատերազմին մէջ	240

ԲՈՂՈՔԻ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ	242
ՄԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ	245
Երիտասարդ մը Կը փափաքի Ծանօթու- թիւն Մշակել Օրիորդի մը հետ	246
Պատասխանը	248
Քանիմը Թղթակցութիւններէ Ետք Սիրոյ Զգացում Կը Յայտնէ	250
Պատասխանը	252
Օրիորդը Կը Հրաւիրէ Ամերիկա Այցելել	254
Երիտասարդ մը Իր Նախկին Պաղընկերին	256
Մանկութեան Պաղի Ընկերին	258
Կ'առաջարկէ Ամուսնութեան Օրը Որոշել	260
Երկար Ատենուան Ծանօթի մը	262
Յաջող Պատասխան մը Ստանալու Առթիւ	264
Օրիորդի մը Հօրը	266
Պատասխանը	268
Նշանածին	270
Փանգատ Նամակ Զ'ստանալու Առթիւ	272
Նշանածին Ծննդեան Տարեդարձին Առթիւ	274
Սիրահարական Վէճ	276
Առևտրական Երիտասարդի մը Նամակը	278
Օրիորդի մը Զեռքը Խնդրող Նամակ	280
Յաջող Պատասխան	282
Երիտասարդ մը Իր Սիրած Օրիորդին	284
Սէրը Արտայայտող Նամակ	286
Նպաստաւոր Պատասխան մը	288
Կարծեցուած Անհոգութեան մը Լուսա- բանութիւնը	290
Երիտասարդի մը Զերմ Սիրոյ Արտայայ- տութիւնը	292

Երիտասարդ մը Ամուսնութիւն Կ'առաջարկէ	294
Օրիորդին Պատասխանը՝ Նպաստաւոր	296
Օրիորդին Հօրը	298
Հօրը Պատասխանը՝ Նպաստաւոր	300
Բօպէրթ Պըրնզի Սիրային Նամակներէն	302
Լօրտ Պայրընի մէկ Նամակը	312
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	318
Ուրիշ Զև մը	320
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	323
ԹՌՈՒՑԻԿ ՆՕԹԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ ՎՐԱՑ	325
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	327
Գործին Կառչելու Յորդորող Նամակ	330
Գործի Ընտրութիւն	332
Օֆիսի Տղայի Պաշտօնի Համար Դիմում	336
Հօթէլի մէջ Գործ Ուզող	338
Կօչիկի Գործարանի մը մէջ	338
Հաշիւ մը Բանալու Առաջարկ	340
Ապրանքի Մասին Դժգոհութիւն	342
Գրաւադրութեան մը Վճարումի Առթիւ	342
Դատարան Սպառնացող Նամակ	344
Վարկագիր	346
Հաշիւ Բանալու Առաջարկ մը	346
Ապրանք Ապսպրելու Համար	346
Ապսպրանք	348
Գանգատ Ապրանքի Յապաղման Համար	348
Գանգատ Ստորին Որակի Մասին	352



T

5.1